

ՊԱՐԻՍ Մ. ՀԵՐՈՒՆԻ



ՀԱՅԵՐԸ ԵՎ
ՀՆԱԳՈՒՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Պարիս Մ. Հերունի

**ՀԱՅԵՐԸ ԵՎ
ՀՆԱԳՈՒՅՆ
ՀԱՅԱՍՏԱՆԸ
(ՀԻՄՔԵՐԸ ՀԱՅՈՑ)**

ԱՐՔԱԵՕԱՍՏԴԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՆԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ, 2006

Giteliq.am

ԻՄ ՀՈՐԻ՝ ՄԻՍԱԿ ՄԱԹԵՎՈՍԻ ՀԵՐՈՒՆՈՒ (ՍԱՉՅԱՆ)

ԵԿ

ԻՄ ՄՈՐԻ՝ ՍԵՂԱ ՆԻԿՈՂՈՍԻ ՀԵՐՈՒՆՈՒ (ԱԶԱՏՅԱՆ)

ԼՈՒՍԱԿՈՐ ՀԻՇԱՏԱԿԻՆ ԵՄ ՆԿԻՐՈՒՄ

ԱՅՍ ԳԻՐՔԸ

Թարգմանություն անգլերենից՝
Մերի Սարգսյան

Համակարգչային շարվածքը՝
Տաթևիկ Մանուկյան

“Եթե ինձ հարցնեին, թե մեր մոլորակի վրա որտեղ կարելի է ամենից շատ հրաշքներ տեսնել, ես կասեի Հայաստանում:
...Ես սիրեցի ծեր երկիրը, նրա տաղանդաշատ մարդկանց:
Եվ հեռանալով, ես այստեղ թողնում եմ իմ սիրտը:”

ՌՈՔՈՒԵԼ ՔԵՆՏ

1962 [1]

Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Այս գիրքը հայոց ազգի մասին է, նրա նախապատմական և հնագույն իսկական պատմությունը վերականգնելու, նրա լեզվի, գիտելիքների, ազգային պետականության, քաղաքակրթության և զարգացման մասին է, սկսած ամենասկզբից մինչև մ.թ. 301թ., երբ Հայաստանում քրիստոնեությունն ընդունվեց որպես պետական կրոն:

Հայոց հնագույն պատմության վերականգնումը շատ կարևոր է նաև ողջ աշխարհի հին պատմության համար, որովհետև երկրագնդի հնագույն քաղաքակրթությունների պատմությունը մինչ այժմ լի է բազմաթիվ անհասկանալի և անբացատրելի փաստերով ու հանելուկներով: Դրանցից շատերի պատասխանը հայոց հնագույն պատմության մեջ է:

Ստացվում, որ այս գիրքը առաջին գիտական փորձն է բացահայտելու համար այն, որ Հայկական Լեռնաշխարհում ծագած հայկական քաղաքակրթությունը աշխարհում առաջինն է եղել և հանդիսացել է մնացած բոլոր քաղաքակրթությունների բնօրրանը:

Ես հասկանում եմ, որ այս նոր կոնցեպցիան կարող է շատ անսովոր թվալ (չնայած այն չի հակասում Աստվածաշնչին) և շատ դժվար կլինի այն ընդունել, որովհետև աշխարհի հնագույն պատմությունը այսօր շատ է աղավաղված, իսկ Հայաստանի հնագույն պատմությունը, հիմնականում ելնելով քաղաքական նկատառումներից, դուրս է նետվել, անտեսված է եղել: Հին Հայաստան, հայեր, հայոց լեզու հասկացությունները “մոռանալու” ամբիցիոզ ցանկությունները այժմ էլ կան (շարունակվում են): Օրինակ, հիմա “Արմենոիդ ռասայի” փոխարեն ավելի հաճախ օգտագործվում է “Առաջավոր ասիական ռասա”, “Հայկական մշակույթի” փոխարեն՝ “Քուռ-Արաքսյան մշակույթ”, “Հայկական Միջագետքի” փոխարեն՝

“Հյուսիսային Միջագետք”, “Հայկական Լեռնաշխարհի” փոխարեն՝ “Արևելյան Թուրքիա” և այլն: Նույնիսկ Արարատը վերանվանելու փորձ է արվել:

Բայց ես հավատում եմ, որ մի օր ճշմարտությունը կհաղթանակի: Մեկը պետք է սկսի պայքարը հանուն ճշմարտության և ես անում եմ այդ, գիտենալով, որ շատ կողմերից հակամարտություն է սպասվում:

Ես հասկանում եմ նաև, որ խնդիրը, որը ես ուզում եմ լուծել, շատ բարդ է գիտական առումով: Այն զուգակցվում է տարբեր մասնագիտական ուղղությունների հետ, ինչպիսիք են. պատմությունը, հնագիտությունը, անտրոպոլոգիան, լեզվաբանությունը, ազգագրությունը, աստղագիտությունը, մաթեմատիկան, երկրաբանությունը, հանքագիտությունը և այլն: Անհրաժեշտ էր ի մի բերել այդ բոլոր տվյալները: Վերջին 15 տարիների ընթացքում ես ուսումնասիրել եմ բազմաթիվ գրքեր, գրել հոդվածներ և կատարել հաշվարկներ: Հուսով եմ, այս գիրքը կլուսաբանի իրողությունը: Իհարկե, խնդիրը շատ ծավալուն է, և այս գիրքը առաջին քայլն է խնդրի լուծման ճանապարհին: Ես կարծում եմ, որ խնդիրն ավարտին կհասցնեն գիտնականների գալիք սերունդները: Այդ գործընթացը Հայաստանում արդեն սկսվել է:

Գրելով այս գիրքը, ես չեմ ձգտել փառքի, ոչ էլ ուզել եմ հեղափոխություն կատարել պատմագիտության մեջ: Իմ հիմնական գիտական ուղղություններում, որոնք են. ռադիոֆիզիկան, ռադիոտեխնիկան, ռադիոաստղագիտությունը, ես ունեմ լուրջ նվաճումներ մեծ անտենաների, ռադիոդիտակների, ռադիոհոլոգրաֆիայի, ռադիոլուկատորների, անտենային չափումների, արևի էներգետիկ սարքերի և այլ բնագավառներում, որոնք հայտնի են աշխարհում և կիրառվում են զարգացած երկրներում: Բայց լինելով հայ գիտնական, Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիայի իսկական անդամ, ես չեմ կարող անտարբեր լինել իմ երկրին, իմ ազգին վերաբերող իսկության ներկայիս մեծ խեղաթյուրումների նկատմամբ:

Իմ կոնցեպցիան պաշտպանող շատ փաստեր կան: Դրանցից գլխավորներն ու կարևորները ներկայացված են այս գրքի երեք հիմնական մասերում.

Մաս առաջին, “Քարահունջ: Նախապատմական հրաշալիք Հայաստանում” Աշխարհում հնագույն հզոր և զարգացած աստղադիտարանի մասին է, որն ակտիվ գործել է ավելի քան 7500 տարի առաջ:

Մաս երկրորդ, “Հայոց լեզվի վերլուծությունը”: Շատ ծավալուն, անհրաժեշտ ու հետաքրքիր տեղեկությունների մասին է, որոնք հնագույն ժամանակներից ի վեր պարունակվում են լեզվի մեջ:

Մաս երրորդ, “Հայաստանի հնագույն պատմությունը”: Ավելի քան 40 հազար

տարի առաջ Հայաստանում հայկական քաղաքակրթության սկզբնավորման ու զարգացման մասին է մինչև մ.թ. 301 թվականին քրիստոնեությունն ընդունելը:

Բարեբախտաբար, ես միայնակ չեմ, հայտնելով կարծիքս այն բանի մասին, որ աշխարհի հնագույն պատմությունը մեծապես խեղաթյուրված է: Բրիտանացի գիտնական Պրեհրմ Հենքոքը իր “Աստվածների հետքերը” գրքի սկզբում (Heineman, London, 1995) իր երախտագիտությունն է հայտնում 5 գիտնականներին (տալով նրանց անունները), “որոնք նկատել են, որ աշխարհի հնագույն պատմության մեջ ինչ-որ բան խիստ խեղաթյուրված է, և որոնք համարձակություն են ունեցել ընդդիմանալ այն բանին, ինչը անընդունելի էր իրենց բանականությանը, դրանով սկիզբ դնելով գիտելիքների շիտակ հիմնարար էվոլուցիայի անդառնալի գործընթացին, որն արդեն դարձել է անխուսափելի”:

Այս գիրքը գիտական է, բայց ես աշխատել եմ միևնույն ժամանակ այն հնարավորին չափ մատչելի դարձնել: Հուսով եմ, որ գիրքը հետաքրքիր կլինի շատ երկրների բազմաթիվ ընթերցողների համար:

ՄԱՍ 1

ՔԱՐԱՀՈՒՆՋ: ՆԱԽԱՊԱՏՄԱԿԱՆ ՀՐԱՇՔ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

“Per Aspera ad Astra”

(“Դժվարությունների միջով դեպի աստղերը”)

Հայաստանի Սիսիան քաղաքի մոտակայքում, Երևանից 200 կմ հեռավորության վրա կա նախապատմական մի հսկա Մոնումենտ, որը բաղկացած է հարյուրավոր կանգնած մեծ քարերից (Նկ.1): Այդ քարերից շատերը իրենց վերին մասում ունեն կլոր անցքեր: (Նկ. 2):

Հնագիտական պեղումները կատարվել են միայն Մոնումենտի մոտակայքում (շուրջը), որտեղ հայտնաբերվել են հնագույն դամբարաններ ու բնակավայր, որոնք թվարկվել են մ.թ.ա. 3-2-րդ հազարամյակներով [2-5]: Բայց ինքը քարե Մոնումենտը չի ուսումնասիրվել: Այդ քարերի բովանդակության մասին միայն ենթադրություններ են արվել, որոնք կապված են եղել նրանց սոսկ կրոնական [2], հոգևոր [3] կամ այլ նշանակության հետ: Սիսիանի բնակիչները Մոնումենտն անվանում են “Կանգնած քարեր” կամ “Ցից (տնկված) քարեր” ու պատմում են, որ դրանք, ըստ ամենայնի, կառուցվել են կրոնական կամ պաշտպանության նպատակներով, և ինչպես անցյալում մարդիկ այդ անցքերի միջից աստղերն են դիտել:

Մոնումենտի հնարավոր աստղագիտական դերի մասին առաջին ենթադրությունը (այլ ենթադրությունների հետ մեկտեղ) տպագրված է հնագետ Օ.Խնկիկյանի կողմից 1984թ. [5]:



Նկ. 1. Քարահունջ (մի հատված): Կանգնած քարերի շարք



Նկ. 2. Քարահունջ (մի հատված): Անցքերով քարեր



Նկ. 3. Քարահունջ, կենտրոնական մասը: Տեսարան ուղղաթիռից



Նկ. 4. Սալահատակ ուղի հարավային թևի քարերի երկայնքով



Նկ. 5. Արքայի ու կենդանիների (արջի, շան, առյուծի) նման քարեր




Նկ. 6. Դեպի Քարահունջ մեր գիտարշավների մշտական մասնակիցները



Նկ. 7. Աշխատանքային պահ 1994թ: Մեր առաջին գիտարշավի ժամանակ



Նկ. 8. Գիտարշավի մասնակից, պատմ.գիտ.թեկն. Պ.Գ.Սաֆյանը նուտեցել է պառկած քարերից մեկին



Նկ. 9. Մեր հյուր Հ.Պ. Կլայները (Շվեյցարիա) Քարահունջում, 1995թ.



Նկ. 10. Հ.Պ. Կլայների գտած հնագույն փոքր հատիչ օբսիդիանից



Նկ. 11. Մեր հյուր, պրոֆ. Ն.Գ. Բոջկարյովը Մոսկվայից Քարահունջում, 2001թ.



Նկ. 12. Ն.Գ. Բոջկարյովի գտած No 90ա Պերիսկոպ-Քարը



Նկ. 13. Անցքեր քարերում




Նկ. 14. Քար No 66 (Արծիվ), որի անցքի մեջ դրված է խողովակ



Նկ. 15. Քարերի անցքերից հանած՝ կավով ամրացված խողովակներ



Նկ. 16. Արևածագի պահը խողովակի միջով No 67 քարի անցքից, 22.09.1997թ.



Նկ. 17. Լուսնի ծագելու պահը խողովակի միջով No 79 քարի անցքից, 21.09.1997թ. (1- երկինք, 2 - քար, 3 - կավ, 4 - Լուսին, 5 - խողովակ)

ԳԼՈՒԽ 1.1. ԱՌԱՋԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ

Վստահելով իմ համոզմունքին, որ Մոնումենտը եղել է հնագույն հզոր աստղադիտարան, ես որոշեցի ինքս կատարել մանրակրկիտ հետազոտություններ, օգտագործելով աստղագիտական մեթոդները: 1994, 1995, 1996, 1997, 1999 և 2001 թվականներին Արևադարձի և Գիշերահավասարի օրերին ես (իմ սեփական միջոցներով) գիտարշավներ ձեռնարկեցի (8 հոգով 4-ական օրով յուրաքանչյուր անգամ):

Կազմվել է Մոնումենտի մանրամասն տոպոգրաֆիկ քարտեզը, չափվել է նրա աշխարհագրական լայնությունն ու երկայնությունը, տեղի մագնիսական շեղման անկյունը, ինչպես և կատարվել են հորիզոնին գտնվող լեռնաշղթաների անկյունային բարձրությունների չափումները 360⁰ ազիմուտների համար: Մանրակրկտորեն չափվել են քարերում եղած բոլոր անցքերի ուղղվածության ազիմուտները և տեղի անկյունները և այլ կարևոր բնութագրեր: Կազմվել է 223 քարերի լիակատար կատալոգը նրանց չափերի ու վիճակի նկարագրությամբ, և բոլոր այդ քարերը համարակալվել են: Կատարվել են երկնային աղբյուրների բազմաթիվ դիտումներ, Արևի և Լուսնի ծագելու, մայր մտնելու և կուլմինացիայի պահերի ֆոտոներ, նկարահանվել են վիդեոֆիլմեր: Ավարտվել է դիտումների և հաշվարկների միջոցով ստացված արդյունքների համեմատությունը:

Հայտնաբերվել են բազմաթիվ նախնադարյան աստղագիտական քարե գործիքներ և վորոշվել է նրանց ճշգրտությունը:

Ավելին, օգտագործելով երկրագնդի առանցքի պրեցեսիայի երևույթի օրինաչափությունները և աստղագիտական այլ օրենքներ, ես որոշեցի աստղադիտարանի տարիքը:

Քարահունջի ուսումնասիրության արդյունքները հրատարակվել են Հայաստանում [6, 8, 9, 10, 12, 13, 15], Ռուսաստանում [11, 17], Իտալիայում [7, 18], Կանադայում [14], Ֆրանսիայում [16], Արգենտինայում [19]:

Այս գրքում զետեղված են հնում աստղերի ծագման, մայրամուտի ու կուլմինացիայի պահերի բոլոր 6 գիտարշավների արդյունքներն ու համակարգչային բազմաթիվ հաշվարկները, որոնք կատարվել են Քարահունջի տարիքը ապացուցելու նպատակով:

Ես կարծում եմ, որ Քարահունջի մոնումենտը ունեցել է երեք հիմնական ֆունկցիա.

ա) հին Հայաստանի գլխավոր Աստված Ար-ի (Արև) և նրա “քարտուղար” գիտության, գրի և արվեստի հովանավոր Տիր աստծո տաճար:

բ) մեծ և զարգացած աստղադիտարան;

գ) համալսարան:

Այս գրքում ապացուցվում է, որ Քարահունջ աստղադիտարանը եղել է շատ զարգացած և ակտիվ գործել է ավելի քան 7500 տարի առաջ (մ.թ.ա. 6-րդ հազարամյակ): Նա անընդհատ գործել է ավելի քան 5500 տարիների ընթացքում (մինչև մ.թ. 1-ին հազարամյակի սկիզբը): Այնպես որ Քարահունջը աշխարհի ամենահին աստղադիտարանն է:

Ինձ համար ակնառու է նաև, որ Քարահունջը էլ ավելի խորը ու հիմնովին ուսումնասիրման կարիքն ունի, հատկապես հնագետների, աստղագետների և տարբեր այլ մասնագետների կողմից երկար տարիների ընթացքում:

ԳԼՈՒԽ 1.2. ՄՈՆՈՒՄԵՆՏԻ ՏԵՂԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Քարահունջի տեղի լայնությունը $39^{\circ} 34'$ է, իսկ երկայնությունը՝ $46^{\circ} 01'$: Նա գտնվում է ծովի մակերևույթից 1770 մ. բարձրություն ունեցող սարահարթում և զբաղեցնում է մոտ 7 հեկտար տարածք Որոտան գետի Դար վտակի ձորի ձախ ափին: Այնտեղ Մոնումենտից 5 կմ և Շաքի գյուղից 4 կմ հեռավորության վրա ստորգետնյա մի գետ է բխում ու 30 մ բարձրությունից թափվում է ցած (Շաքիի ջրվեժը), դառնալով Որոտան գետի վտակը :

Քարահունջ մոնումենտից 29 կմ դեպի արևելք (ուղիղ գծով) գտնվում է Քարահունջ անունով գյուղը, Գորիս նոր քաղաքի մոտ: Դեպի հյուսիս-արևելք 80-90 կմ հեռավորության վրա Լեռնային Ղարաբաղում կան ևս երկու գյուղ, որոնք կրում են նույն Քարահունջ անունը: Դրանցից մեկի մոտ ժայռերի մեջ հնուց անցքեր են բացված (դեռ չհետազոտված):

Ողջ Հայաստանում (ներառյալ պատմական Հայաստանը) կան շատ հնագույն մեգալիտիկ կառույցներ, մենհիրներ, քարե աստղադիտարաններ, հին համալսարաններ և այլն: Հատկապես Քարահունջ Մոնումենտի շրջանում կան հնագույն շատ մեգալիտներ, դամբարաններ ու համալսարաններ, ինչպիսիք են վաղ միջնադարի հռչակավոր Տաթևի, Գլածորի, Շուշիի համալսարանները և քրիստոնեական վանքերը: “Հայաստանը Երկրի գիրքն է, որով բան են սովորել առազին մարդիկ”, – գրել է Օսիպ Մանդելշտամը [125]:

Հայ պատմաբան Ստեփանոս Օրբելյանը (մ.թ. 13 – 14-րդ դար) իր “Սյունիքի պատմություն” գրքում (մ.թ. 1 – 12-րդ դար) հիշատակում է Քարունջ գյուղը [20], որը գտնվել է Հայկական Թզլուկի (Եվլախ) շրջանում Սյունիք կամ Սիսական

(այժմ Սիսիան) քաղաքի մոտ: Այդ անվանումը հայերեն նշանակում է «Քարե գանձ» կամ «Հիմնաքարեր»:

«Հունջ»-ը հայերեն նույն «հունջ»-ն է – ձայն, (կոչ), արձագանք, հնչյուն: Այսպիսով Քարահունջ նշանակում է «խոսող քարեր»:

Ելնելով վերը հիշատակված տվյալներից, ես անվանեցի Մոնումենտը «Քարահունջ», այսինքն «խոսող քարեր»: Իրոք, այդ քարերը հին ժամանակների աստղագետներին շատ հետաքրքիր և կարևոր տեղեկություններ են հայտնել Տիեզերքի մասին, ինչպես հիմա էլ մեզ են ասում (և դեռ կասեն) բազում նոր ու անսպասելի տեղեկություններ հնագույն ժամանակների մասին:


ՉԼՈՒՆ 1.3. ՔԱՐԱՀՈՒՆՋԻ ՔԱՐԵՐԸ

Քարահունջ մոնումենտը բաղկացած է հետևյալ մասերից. կենտրոնական շրջան, հյուսիսային թև, հարավային թև, հյուսիս-արևելյան քարուղի, լարագիծ, (որը հատում է շրջանը) և առանձին կանգնած քարեր (տես քարտեզը, Նկ. 18):

Քարահունջի կենտրոնական մասի ընդհանուր տեսարանը ուղղաթից ցույց է տրված Նկ. 3-ում:

Քարերի բարձրությունը (գետնից) տատանվում է 0,5-ից մինչև 3 մ, իսկ կշիռը մինչև 10 տոննա: Քարերը բազալտից են (անդեզիտ), ժամանակի ընթացքում էրոզիայի են ենթարկվել և ծածկված են մամուռով ու գույնզգույն մամուռով: Անցքերի ներքին մակերեսը շատ ավելի լավ է պահպանվել: Կան նաև շատ կտորատված ու չհամարակալված քարեր:

Քարերը հատվել բերվել են մոտակա Ղար գետի ծորի քարհանքից, բարձրացվել ու տեղափոխվել են հյուսված պարաններով լծկան կենդանիների (եզներ, ձիեր) միջոցով: Հետագայում, արդեն աստղադիտարանում, բացվել են քարերի անցքերը ու պատրաստվել են աստղագիտական գործիքները:



Նկ. 18. Քարահունջ Մոնումենտի քարտեզը

Մոնումենտը նախագծել, կառուցել ու օգտագործել են հայերը՝ տեղի բնակիչները, որոնք 40000 տարի առաջ հիմնել էին այստեղ իրենց քաղաքակրթությունը (տես ներքո, ՄԱՍ 2, 3):

Տեղեկությունները քարերի քանակության և 223 համարակալված քարերի վիճակի մասին բերված են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

ՔԱՐԱՀՈՒՆՁԻ ՔԱՐԵՐԸ									
	Համարներ	Ընդհանուր քանակը	Ընդամենը անցքերով	Կանգնած	Կանգնած անցքերով	Պառկած	Պառկած անցքերով	Թեքված	Վնասված
Կենտրոնական շրջան	1-39 +29ա	40	-	15	-	9	1	10	2
Լարագիծ	40-59	20	6	8	3	1	-	3	6
Հարավային թև	60-125, +90ա, +62ա, 64ա, 65ա	70	27	25	16	32	10	2	17
Հյուսիսային թև	126-196 214-222	80	49	28	18	35	30	3	21
Հյուսիսարևելյան քարուղի	197-199 208-212	8	2	2	-	4	2	2	3
Առանձին քարեր	200-202 207, 213	5	1	1	-	2	1	-	-
Ընդամենը		223	85	79	37	83	44	20	49

ՉՈՒՆ 1.4. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԸ

Կենտրոնական շրջանը կազմված է 40 քարերից, ունի ծվածն տեսք և սուր ծայրով ուղղված է դեպի արևմուտք: Շրջանի մոտավորապես կենտրոնում գտնվում է ավերակների մի կույտ (7x5)մ² չափերով, ուր շատ հնում, հավանաբար, եղել է ինչ-որ կրոնական տաճար: Հետաքրքիր է, որ նույն համաչափությունները ունի Երևանից 15 կմ հեռավորության վրա գտնվող Արևի Աստված Ար-ի հռչակավոր հին տաճարը Գառնիում (տես ՄԱՍ 3, Նկ. 65):

Ըստ ամենայնի, կենտրոնական շրջանն ու հյուսիս-արևելյան կարճ քարուղին, (որը ուղղված է արևածագի կետին ամառային Արևադարձի օրը), ծառայել են Ար Աստծուն նվիրված հանդիսավոր արարողություններին:

Հայաստանում գոհասեղաններ (քարեր) չեն եղել, ոչ էլ գոհաբերություն: Ար Աստվածը բարի է եղել բնության, մարդկանց՝ հայերի, իր գավակների նկատմամբ: Նա կյանք է շնորհել բոլորին շրայլորեն ու անվերապահորեն:

ԳՐՈՒՆ 1.5. ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԹԵՎԸ

Այն ձգվում է Կենտրոնական շրջանից դեպի հյուսիս ու բաղկացած է 80 (համարակալված) քարերից, որոնցից 49-ը անցքեր ունեն: Թևի երկարությունը 136մ է, նրա հյուսիսային վերջավորությունը արևմտյան և արևելյան քարուղիներ ունի, յուրաքանչյուրը 50 մ երկարությամբ:

ԳՐՈՒՆ 1.6. ՀԱՐԱՎԱՅԻՆ ԹԵՎԸ

Այն ձգվում է կենտրոնական շրջանից 75մ դեպի հարավ, հետո թեքվում է մոտավորապես դեպի արևմուտք - արևմուտք - հարավ ու շարունակվում է ևս ավելի քան 40մ: Այն բաղկացած է 70 (համարակալված) քարերից, որոնցից 26-ը անցքեր ունեն:

Հարավային թևի վերջավորությունից հետո կան շրջանաձև գերեզմաններ 3-8մ տրամագծով:

ԳՐՈՒՆ 1.7. ՀՅՈՒՍԻՍ - ԱՐԵՎԵԼՅԱՆ ՔԱՐՈՒԴԻ

Այն ունի 36մ երկարություն, 8մ լայնություն և ուղղված է մոտավորապես Արևի ծագման կետին ամառային Արևադարձի օրը: Ալեան պարունակում է 8 քար (դրանց թվում նաև պառկածները, համարակալված), որոնցից 2-ը (պառկածները) ունեն անցքեր: Ողջ հյուսիս-արևելյան ալեան մոտ 0,5մ բարձր է գետնի մակերեսից:

ԳՐՈՒՆ 1.8. ԼԱՐԱԳԻԾ

Լարը հատում է կենտրոնական շրջանը ու որպես հյուսիսային թևի շարունակություն, միացնում է այն հարավային թևի հետ: Լարը ընդգրկում է 20 (համարակալված) համեմատաբար փոքր քարեր, որոնցից 6-ը անցքեր ունեն:

ԳԼՈՒԽ 1.9. ԱՌԱՆՁԻՆ ԿԱՆԳՆԱԾ ՔԱՐԵՐ

Նրանք կանգնած են թևերի արևելյան, ինչպես նաև արևմտյան կողմերում մինչև 90 և ավելի մ հեռավորության վրա: Կան առնվազն 5 այսպիսի քարեր: Դրանցից մեկը (պառկած) ունի անցք: Հնարավոր է, որ առանձին կանգնած քարերը, ինչպես Կրնկաքարը Ստոունհենջում, օգտագործվել են որպես նշանառության հատիկ:

ԳԼՈՒԽ 1.10. ՈՐՈՇ ՔԱՐԵՐԻ ՄԱՍԻՆ

№ 50, № 71, № 85 քարերը ունեն երկուական անցք: № 90, № 92, № 125 պառկած քարերի անցքերը լրիվ բացված չեն (ավարտված չեն) և այդ քարերը շատ մամռտած չեն: Այս ակնարկում է այն մասին, որ աստղադիտարանում երկար ժամանակամիջոցում միաժամանակ և երկինքն են դիտել, և նոր գործիքներ են պատրաստել, և որ այդ բոլորը հանկարծակի ընդհատվել է:

Շատ քարեր թեքված են կամ գետնից դուրս հանած և զցած են: Շատ քարեր կոչորված են (հատկապես նրանց անցքերի մասերը):

ԳԼՈՒԽ 1.11. ՈՐՈՇ ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հյուսիսային և հարավային թևերը ունեն 1-1,5մ լայնությամբ ուղիներ, որոնք սալարկված են քարե սալիկներով (Նկ. 4): Ուղիների երկարությամբ քարերի հակառակ կողմից կան մանր քարեր, որոնք, ըստ երևույթին, դիտումների ժամանակ ծառայել են որպես նստարաններ: Նստարանները, հնարավոր է, որ փայտյա հավելվածներ են ունեցել դիտողի գլուխը ֆիքսելու համար:

Շատ քարեր նման են մարդկանց ու կենդանիների (Նկ. 5):

ԳԼՈՒԽ 1.12. ԳԻՏԱՐՇԱԿՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Նկար 6-ում մեր արշավների մշտական մասնակիցներն են. (ծախից աջ) նկարահանող՝ Մ.Ներսեսյան, խորհրդատու՝ Վ.Ազոյան, պատմաբան՝ Պ.Սաֆյան, Պ.Հերունի, զբոսաշրջային գործակալ՝ Օ.Բախշյան, ռեժիսոր՝ Ռ.Հովհաննեսյան,

վարորդ՝ Ս.Մանուկյան, մեխանիկ՝ Վ.Կարապետյան: Շատ աշխատանք են կատարել նաև տոպոգրաֆիստներ՝ Ս.Հակոբյանն ու Մ.Հովսեփյանը, լուսանկարիչ՝ Գ.Բաղդասարյանը, աստղագետ՝ Ռ.Մնացականյանը, ծրագրավորող՝ Լ.Թադևոսյանը և շատ ուրիշներ:

Նկար 7-ում պատկերված է մեր արշավախումբը աշխատանքի պահին Քարահունջում 1994թ:

Նկար 8-ում արշավախմբի անդամ պատմական գիտությունների թեկնածու Պ.Գ.Սաֆյանն է, որն առաջինը ուշադրություն դարձրեց №№ 207-222 քարերին Մոնումենտի հյուսիսային մասում (Նկ. 8):

ԳԼՈՒՆ 1.13. ՄԵՐ ՀՅՈՒՐԵՐԻ ԳՏԱԾ ՔԱՐԵՐԸ

Գիտությունների դոկտոր Հ.Պ.Կլայնեդը, (մասնագետ Շվեյցարիայից, որը ուսումնասիրել է նաև հնագիտությունը), մասնակցելով մեր 1995թ. գիտարշավին (Նկ.9), ուշադրություն դարձրեց № 68 քարին, որի փորված խորշի մեջ անծրևաջուր էր լցված: Ջրի մակերեսից արտացոլված արևի ճառագայթը № 69 հարևան քարի գագաթի հետ կազմում է որոշակի անկյուն: Նա նկատեց, որ հնարավոր է, որ առանձին կանգնած № 200 քարը, խաղացել է նույն դերը, ինչպես Ստոունհենջի հայտնի Կրնկաքարը: Նա նաև գտավ օբսիդիանից պատրաստած մի փոքր կտրիչ (Նկ. 10):

Պրոֆեսոր Ն.Գ.Բոչկարյովը (աստղագետ), Եվրասիական աստղագիտական միության նախագահ (Մոսկվա), որը մասնակցել է մեր 2001թ. գիտարշավին իր երկու ասպիրանտների հետ (Նկ. 11), հայտնաբերեց մեկ այլ՝ պերիսկոպ - քարը (№ 90ա), որն ընկած էր այլ ընկած քարերի միջև հարավային թևի № 90 քարի մոտ (Նկ. 12): “Քարահունջը շատ լուրջ աստղադիտարան է” – այսպիսին էր պրոֆ. Բոչկարյովի առաջին գլխավոր կարծիքը, հետագայում, կիրառելով այլ մեթոդներ, 2003թ. նա ևս հանգեց այն նույն եզրակացությանը, որ Քարահունջ աստղադիտարանի տարիքը կազմում է 7500 տարի և համաձայնվեց, որ Քարահունջը աշխարհի ամենահին աստղադիտարանն է [101]:

Քարահունջի 7500 տարեկան լինելու գաղափարին համաձայն է նաև հայ պատմաբան պրոֆեսոր Գ.Ա.Գալոյանը [80, էջ 12]:

ՉԼՈՒՆ 1.14. ՔԱՐԵՐԻ ՄԻՋԻ ԱՆՑՔԵՐԸ

Հատուկ անցքեր ունեցող Քարահունջի քարերը եզակի երևույթ են հնագույն մոնումենտներում (աստղադիտարաններում): Այդ հսկա քարերի մեջ արված անցքերը ապահովում են դեպի նպատակակետը ուղղվածության բարձր ճշգրտությունը և կայունությունը: Նկար 13-ում ցույց են տրված որոշ քարերի անցքերը: Քարի կշիռն ու ամրությունը դարձնում են նրան երկնային օբյեկտները դիտելու շատ կայուն հուսալի գործիք դարերի ընթացքում: Այս քարե աստղագիտական գործիքների հարատև կայունությունը նույնիսկ շատ ավելի է, քան ժամանակակից աստղադիտակներինը:

Անցքերի մեծ մասը ուղղված են իրական հորիզոնի տարբեր կետերին: Որոշ անցքեր ուղղված են հորիզոնից վեր և նայում են վերև, դեպի երկինք:

Մեր գիտարշավների ընթացքում 47 նորմալ կանգնած քարերի չկոտրված (կամ գրեթե չկոտրված) անցքերի ուղղվածության ազիմուտների ու տեղի անկյունների չափումների արդյունքները բերված են Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Ուղիղ կանգնած քարերի միջի չկոտրված անցքերի ազիմուտները և տեղի անկյունները

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԹԵՎԸ				
№ №	Քարի համարը	Ազիմուտ (աստիճանը)		Բարձրություն (աստիճանը)
		կողմնացույց	ճշգրտում	
1.	60	168	170	7.3
2.	62	180	181	50
3.	63	100	102	3
4.	64	265	267	5.5
5.	66	70	76	7.5
6.	67	90	94	4
7.	71	285	287	33
8.	76	125	125	18.5
9.	78	265	267	24
10.	79	90	94	2.5
11.	81	255	257	20
12.	84	325	327	15
13.	85	70	76	10
14.	89	80	85	3.5
15.	97	135	134	25
16.	98	135	134	10
17.	99	305	316	6
18.	108	230	232	2
19.	109	0	5	18
20.	110	135	134	5.5
21.	122	325	327	16

ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԹԵՎԸ				
№ №	Քարի համարը	Ազիմուտ (աստիճանը)		Բարձրություն (աստիճանը)
		կողմնացույց	ճշգրտում	
1.	126	40	43	6
2.	128	0	5	9
3.	129	110	111	7
4.	137	0	0	90
5.	138	290	291	23
6.	139	245	248	10
7.	143	25	28	8
8.	146	215	216	17.5
9.	147	135	146	10
10.	151	215	216	5.5
11.	152	0	5	5
12.	160	255	257	7
13.	161	60	65	4.5
14.	162	220	222	10
15.	163	230	232	5
16.	164	215	216	7
17.	165	250	252	10
18.	177	229	227	13
19.	181	335	338	7
20.	183	115	116	21.5
21.	187	60	64	7.5



ԱՄՐԱԳԻԾ				
№ №	Քարի համարը	Ազիմուտ (աստիճանը)		Քարծրություն (աստիճանը)
		կողմնացույց	ճշգրտում	
1	40	90	94	1.5
2	44	310	322	15
3	51	310	311	2.5
4	53	180	181	22.5
5	55	260	262	20

Աղյուսակ 2-ում. երբ $Az = 0^\circ$ – Հյուսիսն է,
երբ $Az = 90^\circ$ – Արևելքն է և այլն:

Անցքերն ունեն 4-5սմ տրամագիծ և գտնվում են քարերի զազաթներից 15-20սմ ներքև: Անցքերը երկու կողմերից կոնաձև լայնանում են տրամագծում մինչև 12սմ: Անցքերի ներսի կողմի մակերեսը մաքուր է և ողորկ, ասես հատուկ փայլեցված է եղել (Նկ.13): Անցքերը պատրաստվել են օբսիդիանի միջուկներ ունեցող թրձած կավե գործիքներով:

Քարերի մեջ եղած անցքերը պարզորոշ վկայում են, որ Քարահունջը եղել է աստղադիտարան: Անցքերը թույլ են տալիս բարձր ճշտությամբ հաշվարկել Քարահունջ աստղադիտարանի (նաև յուրաքանչյուր անցք ունեցող քարի) տարիքը, ինչպես այդ ցույց է տրված ստորև:

Եթե դիտողի աչքը 1մ տարածության վրա է անցքի գլանաձև մասի արտաքին եզրից, ապա հորիզոնը երևում է 2.86° անկյունային սահմաններում, որը = $172'$ (Նկ.19):



Նկ. 19. Քարի անցքի կառուցվածքի սխեման

Նկ. 20. Խողովակով անցքի սխեման

Ի նկատի ունենալով, որ Արևի կամ Լուսնի դիրքը կարելի է աչքով ֆիքսել անցքի կենտրոնում նրանց անկյունային տրամագծին (32') համապատասխանող ճշտությամբ, կստանանք նրանց դիրքի դիտման ճշտությունը, որը հավասար կլինի մոտավորապես $(172 - 32) : 2 : 20 = 3.5'$ (կամ ժամանակի 14 վայրկյան):

Ես ենթադրում եմ, այս ճշտությունը կարող էր ավելացվել, եթե դիտելու համար անցքի մեջ տեղադրվեր ու կավով ամրացվեր մի խողովակ, մոտ 10 մմ ներքին տրամագծով, որը, օրինակ, պատրաստված լիներ բամբուկից կամ եղեգից (Նկ. 20):

Մասնավոր դեպքում, ինչպիսին է արևածագը, անհրաժեշտ է խողովակի դիրքը ճշտել: Սա կարելի է անել այն պահին, երբ կավը դեռ փափուկ է: Հաջորդ օրը, երբ կավը չորանա և կարծրանա, այն կարելի է հանել անցքից (խողովակի հետ մեկտեղ) ու պահպանել հաջորդ տարվա (տարիների) նույն պահին օգտագործելու համար: Խողովակն օգտագործելիս հորիզոնի անկյունային սահմանը կլինի 34' և Արևի ու Լուսնի դիտման ճշտությունը այդ պարագայում նույն 1մ տարածությունից պետք է համապատասխանի մոտավորապես $(34 - 32) : 2 : 2 = 0.5' = 30''$, (կամ ժամանակի 2 վայրկյան, որը շատ բարձր ճշտություն է): Աստղերն ու մոլորակները դիտելու համար կարելի էր օգտագործել խողովակը հատող խաչ բարակ թելից, ինչի հետևանքով ճշտությունը կհամապատասխաներ $34' : 2 : 20 = 0.85' = 51''$ (կամ ժամանակի 3.4 վայրկյան):

Վերը հիշատակված բարձր ճշգրտությամբ աշխատելու համար անհրաժեշտ էր, որ դիտողի գլուխը (կզակը և ճակատը, հետևաբար՝ աչքերը անշարժ ֆիքսվեին դիտելիս) մի որևէ պարզ փայտյա հենակի միջոցով:

1997թ. աշնան Գիշերահավասարին և նրան մոտ օրերի ընթացքում մենք 1սմ ներքին տրամագիծ ունեցող խողովակներով Արևի և Լուսնի ծագելու ու մայր մտնելու պահերի դիտարկման հաջող փորձեր կատարեցինք, օգտագործելով №№ 66, 67, 79 և այլ քարերը: Նկար 14-ում ցույց է տրված № 66 քարը անցքի մեջ դրված խողովակով: Նկար 15-ում ներկայացված են կավի մեջ գետեղված անցքերից հանած մեր երեք խողովակները: Մեր դիտումների որոշ արդյունքները ցույց են տրված Նկ. 16-ում. Արևածագի պահը, որը 1997թ. սեպտեմբերի 22-ին խողովակով դիտվել է № 67 քարի անցքից և Նկ. 17-ում՝ Լուսնի ծագելու պահը 1997թ. սեպտեմբերի 21-ին խողովակով դիտվել է № 79 քարի անցքից: Այս փորձը ցույց է տալիս Քարահունջում խողովակների օգտագործման հնարավորությունը հազարավոր տարիներ առաջ:

Հօգուտ այն բանի, որ Քարահունջում օգտագործվել են խողովակները, վկայում է նաև այն կարևոր փաստը, որ բոլոր անցքերի ծայրերը կոնաձև

լայնանում են: Օգտագործելով Նկ. 20-ում ցույց տրված գծագիրը, կարող ենք հաշվարկել, որ 10մմ ներքին և 24մմ արտաքին տրամագիծ ունեցող խողովակը (բամբուկե խողովակի պատի հաստությունը կազմում է մոտ 7մմ), կարող է թեքվել անցքի առանցքի շուրջը $\pm 25^\circ$ ցանկացած ուղղությամբ: Այնպես որ դիտումների համար բարձր անկյունային (և ժամանակի) չափող հատկություն ունեցող նման խողովակը հնարավորություն է տալիս ֆիքսել խողովակը անցքում անկյունային ուղղությունների լայն տիրույթում և օգտագործել յուրաքանչյուր անցքը երկնային տարբեր աղբյուրներ դիտելիս, կամ որևէ մեկը՝ ժամանակի տարբեր պահերին: Այս է քարերի անցքերի կոնաձև լայնացնելու պատճառը:

Երկնքի որոշակի կետերին ուղղված նեղ (4 - 5 և 10մմ) տրամագծով անցքերի առկայությունը եզակի հնարավորություն է տալիս ճշգրիտ հաշվարկել Քարահունջ աստղադիտարանի տարիքը, օգտագործելով աստղագիտական մեթոդներ, նույնիսկ շատ ավելի բարձր ճշտությամբ, քան այդ հնարավոր է անել քաջ հայտնի ածխածնի մեթոդով:

ՉԼՈՒՆ 1.15. ԱՍՏՂԱԳԻՏԱԿԱՆ ՔԱՐԵ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Արևի, Լուսնի, աստղերի, մոլորակների և այլ երկնային աղբյուրների տարբեր դիտումներ կատարելու համար անցքեր ունեցող առանձին կանգնած կամ 2-3 հատից բաղկացած քարախմբերի (ներառյալ նաև առանց անցքերի) բոլոր քարերը եզակի աստղագիտական գործիքներ են:

Տարբեր գիտական նպատակներով այսքան հաստատուն, ճշգրիտ գործիքներ նախագծելու, կառուցելու և օգտագործելու համար նախքան Քարահունջը կառուցելը հարկավոր էր դեռ հազարամյակներ առաջ ունենալ նախապես կուտակված գիտելիքներ աստղագիտության, մաթեմատիկայի և տեխնոլոգիայի բնագավառներում, ունենալ գիր, մեծ փորձ դիտումներ ու հաշվարկներ կատարելու մեթոդներում:

Այն ժամանակ չկար մեկը, որից կարելի լիներ սովորել, այդ պատճառով հարկավոր էր գիտելիքներ կուտակել զերոյից, ինչը շատ ժամանակ պահանջող դանդաղ պրոցես է: Սա է գլխավոր պատճառը ինչու է հայկական քաղաքակրթության զարգացումը պահանջել 40 – 10 = 30 հազար տարի: Այլ քաղաքակրթությունների զարգացումը (Շումեր, Եգիպտոս, Հունաստան և այլք) տևել է ընդամենը մեկ հազարամյակ և ոչ ավելի, որովհետև նրանք ուսուցիչներ են ունեցել, որոնք եղել են հայերը:

Այս պատճառով հիմք կա ենթադրելու, որ աստղագիտությունը Հայաստանում ծագել է 25000 տարի առաջ և առաջին ու պարզ աշխատանքը պարզ գործիքներով Քարահունջում սկսվել է ավելի քան 20000 տարի առաջ: Հետո, 15000 տարի առաջ, կառուցվել են ավելի բարդ գործիքներ:

Այժմ Քարահունջում կան ավելի քան 80 աստղագիտական գործիքներ, որոնք կառուցվել և օգտագործման մեջ են եղել մոտավորապես 8000-ից մինչև 2000 տարի առաջ (տես ստորև):

Յուրաքանչյուր աստղագետ, որը դիտումներ է կատարել, օգտագործելով աստղագիտական գործիքներ, շատ լավ ծանոթ է հաճախ պատահող անհաջողությանը, երբ ամպերը գալիս ու ծածկում են դիտվող օբյեկտը շատ կարևոր պահի: Հատկապես այնպիսի պահի, որը պարբերաբար կարող էք ունենալ միայն մեկ տարի հետո (երբեմն էլ ավելի): Մենք էլ Քարահունջում մեր դիտումների ժամանակ հանդիպեցինք այդ պատճենչին Արևի, Լուսնի և աստղերի ծագելու և կուլմինացիայի պահերին: Ու ամեն այդպիսի պահի ես հիշում էի մի պարզ ու գեղեցիկ հայկական երգ, որը, համոզված եմ, եղել է հնագույն աստղագետների երգը: Ահա այդ երգը:

Մեղեդային

Ար - և, Ար - և եկ, եկ, սի - րուն քա - ռիս վեր եկ:

Աստղագետների հին հայկական երգ

Ամ - պեր, ամ - պեր հե - ու - ցեք, Ար - և - ին ճամ - փա բա - ցեք:

Քարահունջում իսկապես կա եռաբար մի գործիք, ուր ամեն Գիշերահավասարի կեսօրին Արևը գալիս իջնում է նրա քարերից ամենամեծի գագաթին (տես Գլուխ 1.28):

Այս երգն իսկապես գեղեցիկ է ու պարզ (այսինքը հին), միևնույն ժամանակ աղոթք է, ուղղված Բնությանն ու Աստծուն:

Ստորև ես ձեր դատին պետք է ներկայացնեմ Քարահունջի մի քանի եզակի աստղագիտական գործիք մեր դիտումների ու հաշվարկների հետ մեկտեղ:

ԳԼՈՒԽ 1.16. ԱՆՑՔԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՌԱՆՁԻՆ ՔԱՐԵՐ

Մեր գիտարշավների ընթացքում հետազոտվել են առանձին կանգնած քարե աստղագիտական բազմաթիվ գործիքներ: Դրանք օգտագործվել են Արևը, Լուսինը, մոլորակները և աստղերը դիտելու համար:

Արևը դիտելու համար 17 “Արևի քարեր” կան, ներառյալ Արևածագի №№65,161,187 քարերը՝ ամառային Արևադարձի համար; №№ 97, 98, 100 քարերը՝ ձմեռային Արևադարձի համար; №№ 52, 99 Արևամուտի քարերը՝ ամառային Արևադարձի համար; №№ 108, 169, 177՝ ձմեռային Արևադարձի համար և №№ 40, 55, 63, 64, 67, 79 քարերը՝ զարնան ու աշնան Գիշերահավասարի օրերի Արևածագի ու Արևամուտի պահերը դիտելու համար: Գիշերահավասարների օրերին Արևի կուլմինացիայի պահերը դիտելու գործիքի մասին ասվում է Գլուխ 1.28-ում:

Լուսինը դիտելու համար կան 14 “Լուսնի քարեր”, որոնցից են. Լուսնի ծագելու քարերը՝ №№ 161, 187 հակման կուլմինացիայի համար՝ $\delta = +18.7^{\circ}$; № 76, $\delta = -18.7^{\circ}$ համար; № 147 $\delta = +29^{\circ}$ համար; Լուսնի մայրամուտի քարերը՝ № 138 $\delta = +18.7^{\circ}$ համար; №№ 108, 163, $\delta = -18,7^{\circ}$ համար; №№ 44, 51, 99, $\delta = + 29^{\circ}$ համար; №№ 146, 151, 162,164, $\delta = - 29^{\circ}$ համար :

Մոլորակները դիտելու մասին տես Գլուխ 1.29:

Աստղերը դիտելու արդյունքների մասին տես 1.23, 1.24, 1.25 գլուխներում:

Մենք կատարել էինք նախնական հաշվարկներ և մի շարք դիտումներ, օգտագործելով “Արևի քարեր” գործիքները ու ստացել էինք շատ հետաքրքիր ու եզակի արդյունքներ: Այստեղ բերված են դրանցից մի քանիսը: Նկ. 21 պատկերված է Արևածագի պահը, որը դիտվել է № 67 քարի անցքից 22.09.1997 Գիշերահավասարի օրը: Նկար 22 պատկերված է Արևածագը № 63 քարի անցքից 22.09.1997 Գիշերահավասարի օրը: Նկար 23 պատկերված է Արևածագը № 66 քարի անցքից 23.06.2001 Արևադարձի օրը:

Քարահունջ աստղադիտարանում քարե առանձին կանգնած գործիքները ակտիվորեն օգտագործվել են շատ հազարամյակների ընթացքում:

ՉԼՈՒՆ 1.17. ՀՆԱԳՈՒՅՆ ՕՐԱՑՈՒՅՑ (ՀՀՕ ԵՎ ԱՀՕ)

Հայաստանում արևի օրացույցն օգտագործվել է բոլոր ժամանակներում: Եվ այդ հասկանալի է, քանի որ Արևը գլխավոր Աստվածն էր: Տեղեկություններ չկան, որ երբևէ օգտագործված լիներ Լուսնի օրացույցը, չնայած այն հայտնի էր, և Լուսնի Երկրի շուրջը պտտվելու պարբերությունը դժվար չէր հաշվել:

Նախնադարյան աստղագետները, դիտելով առանձին կանգնած “Արևի քարերից” որևէ մեկի անցքից (կամ օգտագործելով այլ հնագույն պարզ գործիքներ), կարողացել են ցանկացած օրը ֆիքսել Արևածագի (կամ Արևամուտի) ազիմուտի կետը (դիրքը հորիզոնի գծի վրա) և որոշել (նույնիսկ առանց խողովակի), որ այդ կետը Գիշերահավասարին մոտ օրերին օրէօր շարժվում է հորիզոնի գծով 30 աղեղնային րոպե արժեքով, ինչը համարյա հավասար է Արևի անկյունային տրամագծին (32’), ու վերադառնում է միևնույն դիրքին (միևնույն կողմից) 365 օր հետո, ինչն անում է մեկ տարի:

Ակներև է, որ այսքան պարզ դիտումը կարող էր կատարվել շատ ավելի առաջ, քան Քարահունցն է կառուցվել, երբ օրացույցի անհրաժեշտությունը ծագել էր գյուղատնտեսական և այլ աշխատանքներ կատարելու պահանջներից ելնելով: Մոտավորապես 23 հազար տարի առաջ էր, երբ հայոց հնագույն օրացույցը (ՀՀՕ) հաստատվեց, ըստ որի տարվա սկիզբը զարնան Գիշերահավասարին՝ Արեգի 1-ին (այժմ՝ մարտի 21-ին)* էր:

Հայտնաբերվել էր նաև, որ Սիրիուս աստղը ծագում է հենց Արևածագից առաջ տարվա մեջ մեկ անգամ ամառվա Արևադարձին, այսինքն ըստ Սիրիուսի էլ տարին 365 օր ունի, ինչպես և Արևային տարին: Այս տեղի է ունենում, որովհետև պրեցեսիան և Սիրիուսի սեփական շարժումը պատահաբար համընկնում են:

Արևի այս ՀՀՕ-ն եղել է այսպես կոչվող “շարժական”: Տոնական օրերը դանդաղ տեղափոխվում էին ողջ տարվա ընթացքում (1461 տարի պարբերականությամբ) որովհետև իրական արևային տարին մոտավորապես քառորդ օրով ավել է, քան 365 օրը ($365.25 : 0.25 = 1461$):

Քարահունց զարգացած աստղադիտարանը (7500 տարի առաջ) շատ ավելի լավ հնարավորություններ էր ապահովում դիտումների համար երկար տարիների ընթացքում շատ ավելի բարձր ճշտությամբ (30’’ կամ ժամանակի 2

* Ըստ երևույթին, այդ ժամանակ 22946թ. “ծնվել էր” Հայոց սիրելի հին Աստված Վահագնը (չարի և վիշապների ոչնչացնողը): 22946 տարիների թիվը գալիս է այն ենթադրությունից, որ այդ իրադարձությունը տեղի է ունեցել Հայոց թագավոր Հայկի 2492թ. հաղթանակից 14 “Հայկական շրջան” առաջ ($14 \times 1461 + 2492 = 22946$ թ.): Այդ պատճառով “Հայկական շրջանը” հետագայում կոչվել է նաև “Հայկյան շրջան”:

վայրկյան խողովակների կիրառմամբ): Այսպիսով, Քարահունջի ժամանակներում բացահայտվել էր, որ արևային տարին բաղկացած է մոտավորապես 365.25 օրից: Այնպես որ, “շարժական” օրացույցը “կանգնեցնելու”, այսինքն տոն օրերը տարվա ընթացքում ֆիքսելու և համապատասխանեցնելու համար Արևի իրական շարժման հետ, հարկավոր էր 4 տարին մեկ ավելացնել օրացույցին ևս մի օր: Այսպես Քարահունջում հայտնաբերվել ու մշակվել է “անշարժ” (ֆիքսված) օրացույց, ըստ որի տարին սկսվում էր գարնանային Չիչերահավասարի Արեգի 1-ի (21-ը մարտի) առավոտվա ժամը 6-ին (կամ էլ կեսօրին): Այսպես Քարահունջում հիմնվել է առաջին “անշարժ” Հայկական Օրացույցը (ԱՀՕ) և 1461 տարի ժամանակահատվածը կոչվել է “Հայկական շրջան”:

Հայերը ավելի քան 5000 տարվա ընթացքում զուգահեռ օգտագործել են և “շարժական”, և “անշարժ” օրացույցները (մինչև մ.թ. 19-րդ դարը) և սովորեցրել են դրանք օգտագործել այլ երկրների ժողովրդներին, մասնավորապես շումերներին ու եգիպտացիներին, որոնց քաղաքակրթությունները ծագել էին մ.թ.ա. 3-րդ հազարամյակում:

Օգտագործելով երկու օրացույցներն էլ, (ՀՀՕ-ն և ԱՀՕ-ն) շատ երկար ժամանակամիջոցում, հայ աստղագետները պարզել էին, որ այդ հավելյալ քառորդ օրը, որը կուտակվում է “շարժական” օրացույցում տարվա ընթացքում (365.25), արդյունքում յուրաքանչյուր 1461 տարին մեկ տալիս է մի ամբողջ տարի ($0.25 \times 1461 = 365.25$): Այդ 1461 տարվա ժամանակամիջոցը (կամ 1460՝ “անշարժ” օրացույցի դեպքում) կոչվել է “Հայկական շրջան” (կամ “Հայկական ցիկլ”): Նույն տևողությունն է ունեցել նաև “Սիրիուսի ցիկլը” կամ այսպես կոչվող “Սոտիսը” *:

Հետագա ճշգրտումից հետո պարզվել է որ Հայկական ցիկլը և Սիրիուսի ցիկլը քիչ՝ 12 օրով են տարբերվում իրարից, այսինքն 12 բուպեով տարեկան (0.002 %), որովհետև արևային տարվա տևողությունը (365.242 օր) Սիրիուսի տարվա տևողության համեմատությամբ (365.25 օր) մի քիչ կարճ է:

ԱՀՕ-ն, ինչպես նաև Հայկական ցիկլն ու Սոտիսը հայտնի էին և օգտագործվում էին նաև հին Եգիպտոսում [21]:

“Անշարժ” օրացույցն, անկասկած, ավելի հարմար էր օգտագործման համար: Հուլիոս Կեսարը այն մտցրել է օգտագործման մեջ Եվրոպայում նոր թվարկության 45 թվի հունվարի 1-ին (Եգիպտոսի աստղագետների միջնորդությամբ, ինչպես Սոսիգեն Ալեքսանդրացու): Այժմ հայտնի է “Հին տոմար” անունով, և ավելի ուշ՝

* Նշենք, որ այդ “Սիրիուս” կամ “Սոտիս” անունները հայերեն նշանակում են “Սուրբ մարդու տան սիրված էակը”, որտեղ սուրբ մարդը Հայոց թագավոր Հայկն էր: Հին Եգիպտոսում կար տոն օր, որը կոչվում էր “Սիրուսիս” (տես նաև նկ. 46):



Նկ. 21. Արևածագի պահը No 67 քարի անցքից, 22.09.1997թ.



Նկ. 22. Արևածագի պահը No 63 քարի անցքից, 22.09.1997թ.



Նկ. 23. Արևածագի պահը
No 66 քարի անցքից,
23.06.2001թ.



Նկ. 24. Նոր տեսակի Արեգակնային
ժամացույց - օրացույց
ՌԳՀԻ-ի գլխավոր շենքի
դիմաց



Նկ. 25. Քարահունցի քարերի մի մասը: Նկարիչ՝ Ս.Գ. Սաֆյան



Նկ. 26. No 137 Քար-Պերիսկոպը



Նկ. 27. Ջրով լի թաս No 137 քարի ներքևի մասում



Նկ. 28. Պրոֆեսոր Գ.Ս. Հուսիկյան



Նկ. 29. Ատոունիենը: Նկարիչ՝ Գ.Ս. Հուսիկյան




Նկ. 30. Եռաքար գործիք՝ տարվա սկիզբն ու տեղի լայնությունը չափելու համար



Նկ. 31. Նկ. 30-ի երկու գլխավոր քարերը տեղի լայնությունը չափելու համար



Նկ. 32. Արևի ճառագայթը No 63 քարի անցքուն տեղադրված հայելուց: Լուսանկար Հ. Բաղդասարյանի



Նկ. 33. Մ.թ. VII դարի հայ աստղագետ և մաթեմատիկոս Անանիա Շիրակացու արձանը երկրի գնդաձև մոդելը ձեռքին



ա - Ընդհանուր տեսարան



բ - Անցքով քար



գ - Քարերի վրա փորագրված հին խաչեր և բուրգեր


Նկ. 34. Կանգնած քարեր Արարատ լեռան մոտ [37]



ա - Ընդհանուր տեսարան ուղղաթից



բ - Երկրորդային հայելին



գ - Տեսքը գիշերով

Նկ. 35. Ուդիո - Օպտիկական աստղադիտակ ՌՕԴ - 54/2.6

1582 թվականին այն սրբագրվել է Գրիգոր III պապի կողմից (Լեհ աստղագետ Կոպեռնիկոսի օգնությամբ) և հայտնի է որպես “Նոր տոմար”, որը ցայժմ օգտագործվում է*:

Հայաստանը ընդունել է Հուլիանոսյան օրացույցը մ.թ. 122 թվին (Արտաշես II թագավորի ժամանակ):

ԳԼՈՒԽ 1.18. ՀԱՅԿ ԹԱԳԱՎՈՐԻ ՕՐԱՑՈՒՅՑԸ (ՀԲՏ)

Շատ ավելի բան է հայտնի հաջորդ հին “Հայոց բուն տոմար” (ՀԲՏ) անունով ֆիքսված հայկական օրացույցի մասին, որը ընդունվել է մ.թ.ա. 2492 թվականին Հայոց թագավոր Հայկի հրամանով, որը կրում էր “Կեսար” տիտղոսը, այսինքն՝ “Կես-ԱՐ”, “Կես Արև” “Կիսաստված”, քանի որ Հայոց թագավորը միաժամանակ եղել է նաև Գերագույն հոգևորականը կամ “Արևի Որդի” ու Գլխավոր Աստծո՝ Հայր ԱՐԻ ներկայացուցիչը Երկրի վրա: Այնպես որ Կեսարը հանդիսանում էր “Երկրային Աստվածը”: Հայկական “կեսար” բառը հետագայում Հունաստանից Եվրոպա է անցնում և օգտագործվում որպես “ցեզար” (Հռոմում և Բյուզանդիայում), որպես “կայզեր” (Գերմանիայում); որպես “ցար” (Ռուսաստանում) և այլն, բայց արդեն “կայսր” իմաստով:

Ինչպես պատմում է մ.թ. 5-րդ դարի հռչակավոր հայ պատմիչ Մովսես Խորենացին, նախարար (թագավոր) Հայկը հաղթանակ էր տարել Հայաստանը նվաճելու արշաված Բաբելոնի զորքի դեմ, նա ճակատամարտում հաղթեց, սպանելով Բաբելոնի թագավոր Բելին (Նեմրովդին) ու հրահանգեց ամեն տարի տոնել այդ օրը և տարվա ամիսները վերանվանել իր ուստրերի և դուստրերի անուններով [22]: Կեսար Հայկի մասին տես նաև ՄԱՍ 3-ում:

Մ.թ.ա. 2492 տարեթիվը վերականգնել է 19-րդ դարի հայ պատմաբան Ղևոնդ Ալիշանը [23]: Հայտնի էր, որ Նոր Տարին (1-ը Նավասարդի) մ.թ. 428 թվին հայկական արեգակնային “շարժական” օրացույցով համընկնում էր Հուլիանոսի օրացույցի օգոստոսի 23-ի օրվա հետ (կամ օգոստոսի 11-ի հետ այժմյան օրացույցով): Օգտագործելով այս փաստը, և 1460-ամյա “Հայկական ցիկլը”, նա հաշվարկել է, որ $1460 - 428 \text{մ.թ.} = 1032 + 1460 = 2492 \text{թ.}$: Ինչպես գրում է Ղ.Ալիշանը, միևնույն մ.թ.ա. 2492 թվականը համարել են որպես Բելի մահվան տարեթիվ նաև հին հեղինակներ՝ Աֆրիկանոսն ու Եվսեբիոսը [23]:

* Հին տոմարին վերադառնալու համար այժմ անհրաժեշտ է ավելացնել ամսաթվին 12 օր:

Հայոց բուն տոմարը (ՀԲՏ) բաղկացած է 12 ամիսներից, յուրաքանչյուրում 30-ական օր, այսինքն՝ 360 օր գումարած 5 հավելյալ (Նոր Տարին տոնելու) օրերը (կամ ֆիքսված ՀԲՏ-ով՝ 6 հավելյալ օր յուրաքանչյուր 4 տարին մեկ): Յուրաքանչյուր ամիսը և ամսվա յուրաքանչյուր օրը, ինչպես նաև 24 ժամից յուրաքանչյուր ժամը ունեն իրենց առանձին անունները՝ հայերեն բառերով: Մ.թ. 7-րդ դարի հայ գիտնական Անանիա Շիրակացին բերում է այդ անունները [24]: Այստեղ ես ներկայացնում եմ ՀԲՏ-ի ամիսների անունները և համադրում եմ այժմյան օրացույցի հետ.

Հ Բ Տ

Նոր տոմար

- | | |
|---------------------------------------|------------------------------|
| 1. Նավասարդ (Հայկի աղջիկը), 1-30..... | օգոստոս 11 – սեպտեմբեր 9 |
| 2. Հոռի (աղջիկը), 1-30..... | սեպտեմբերի 10 – հոկտեմբերի 9 |
| 3. Սահմի (աղջիկը), 1-30..... | հոկտեմբերի 10 – նոյեմբերի 8 |
| 4. Տրե (Հայկի տղան), 1-30..... | նոյեմբերի 9 – դեկտեմբերի 8 |
| 5. Քաղոց (տղան), 1-30..... | դեկտեմբերի 9 – հունվարի 7 |
| 6. Արած (տղան), 1-30..... | հունվարի 8 – փետրվար 6 |
| 7. Մեհեկան (աղջիկը), 1-30 | փետրվարի 7 – մարտի 8 |
| 8. Արեգ (աղջիկը), 1-30..... | մարտի 9 – ապրիլի 7 |
| 9. Ահեկան (հին անուն)*, 1-30..... | ապրիլի 8 – մայիսի 7 |
| 10. Մարերի (աղջիկը), 1-30..... | մայիս 8 – հունիսի 6 |
| 11. Մարգաց (աղջիկը), 1-30..... | հունիս 7 – հուլիսի 6 |
| 12. Հրոտից (տղան), 1-30..... | հուլիսի 7 – օգոստոսի 5 |
| 13. Ավելյաց, 1-5..... | օգոստոսի 6 – օգոստոսի 10 |

Հավելյալ 5 օրերը անվանվել են այն ժամանակ հայտնի մոլորակների անուններով [21] “անշարժ” ՀԲՏ-ում մեկ ավել օրը (4 տարին մեկ) նահանջ տարում ավելացվում էր Մեհեկան ամսին:

Ամսվա օրերն անվանվել են հայկական սրբազան սարերի, Արևի տաճարների ու աստվածների անուններով:

* Վերանվանված էին տարվա տասը ամիսների անունները, այսինքն երկու ամիսների անունները պահպանվել են իրենց հին անվանումներով: Ըստ երևույթին, Հայկ թագավորը ունեցել է 10 զավակ:

- | | |
|--------------|---------------|
| 1. Արեգ | 16. Մանի |
| 2. Հրանդ | 17. Ասակ |
| 3. Արամ | 18. Մասիս |
| 4. Մարգար | 19. Անահիտ |
| 5. Աիրանք | 20. Արագած |
| 6. Մազդեղ | 21. Գրգուռ |
| 7. Աստղիկ | 22. Կորդուիք |
| 8. Միիր | 23. Ծնակ |
| 9. Ջոպաբեր | 24. Լուսնակ |
| 10. Սուրց | 25. Ցրոն |
| 11. Երեզկան | 26. Նպատ |
| 12. Անի | 27. Վահագն |
| 13. Պարխար | 28. Սիս |
| 14. Վանատուր | 29. Վարագ |
| 15. Արամազդ | 30. Գիշերավար |

Օրվա սկիզբը համարվում էր առավոտվա ժամը 6-ը (իհարկե, Արևի ժամանակով):

Օրվա ժամերի անունները նույնպես հայերեն բառերից էին:

<u>Օրվա ժամերը</u>	<u>Գիշերվա ժամերը</u>
1. (Ա) Այգ, 6-7 ժ.	13. (ԺԳ) Խավարակ, 18-19
2. (Բ) Ցայգ, 7-8	14. (ԺԴ) Աղջամուղջ, 19-20
3. (Գ) Զորացեալ, 8-9	15. (ԺԵ) Սթացեալ, 20-21
4. (Դ) Ճառագայթեալ, 9-10	16. (ԺԶ) Շահավոտ, 21-22
5. (Ե) Շառավեղեալ, 10-11	17. (ԺԷ) Կամավոտ, 22-23
6. (Զ) Երկրատես, 11-12	18. (ԺԸ) Բավական, 23-24
7. (Է) Շանթարկող, 12-13	19. (ԺԹ) Խոթափեալ, 0-1
8. (Ը) Հրակաթ, 13-14	20. (Ի) Գիզակ, 1-2
9. (Թ) Հուրթափեալ, 14-15	21. (ԻԱ) Լուսակն, 2-3
10. (Ժ) Թաղանթեալ, 15-16	22. (ԻԲ) Առավոտ, 3-4
11. (ԺԱ) Արագոտ, 16-17	23. (ԻԳ) Լուսափայլ, 4-5
12. (ԺԲ) Արփող, 17-18	24. (ԻԴ) Փայլածու, 5-6

Հայաստանի Սանահին քաղաքի մոտ հայտնաբերվել է մեր թվարկությունից առաջ 2 հազարամյակի յոթորյա շաբաթի մի օրացույց-գոտի: Այդ օրացույց-գոտու օրերը անվանված են Արևի, Լուսնի և 5 մոլորակների հին հայկական անուններով [21, 25]:

1. Արև	Sun	- Sunday	(կիրակի)
2. Լուսին	Moon	- Monday	(երկուշաբթի)
3. Հրատ	Mars	- Tuesday	(երեքշաբթի)
4. Փայլածո	Mercury	- Wednesday	(չորեքշաբթի)
5. Լուսնթագ	Jupiter	- Thursday	(հինգշաբթի)
6. Արուսյակ	Venus	- Friday	(ուրբաթ)
7. Երևակ	Saturn	- Saturday	(շաբաթ)

Հետաքրքիր է, որ շաբաթվա օրերի երկու առաջին ժամանակակից անգլերենով ներկայացված անունները բացարձակորեն համընկնում են հայկական Արև և Լուսին անունների հետ և Saturday (շաբաթ) բառը, համընկնում է Սատուրն բառի հետ:

ՀԲՏ-ն մինչև հիմա էլ Հայաստանում օգտագործում ունի: Շատերը տոնում են նաև հին Նոր Տարին (Օգոստոսի 11): Ոչ ոք չի վերացրել Հայկ թագավորի մ.թ.ա. 2492-ի հրամանը:

Հին եգիպտական օրացույցը, (որը վերցված է ՀԲՏ-ից մ.թ.ա. 3-րդ հազարամյակում), ՀԲՏ-ի նման էր [21], բայց նրա ամիսների օրերն անուններ չունեին [21, 26]:

Բացի ՀԲՏ-ից Հայաստանում Քրիստոնեությունն ընդունելուց հետո այլ օրացույցներ էլ են գործել, որոնք կոչվել են “Հայոց մեծ թվական” (ՀՄԹ), որն սկսվել է մ.թ. 552 թվականի հուլիսի 11-ից; եկեղեցական օրացույցը; հայ գիտնական Հովհաննես Իմաստասերի “անշարժ” օրացույցը, որն սկսվում է մ.թ. 1085 թվականից և ըստ որի Նոր Տարին (Նավասարդ 1) Հուլիանոսի օրացույցով նշվել է օգոստոսի 11-ին:

ՀԲՏ-ն հնագույն գործող և ճշգրիտ օրացույցն է աշխարհում: 2008 թվականի օգոստոսի 11-ին կլրանա ՀԲՏ-ի 4500 ամյակը: Հուսանք, որ այդ փաստը միջազգային կազմակերպությունների միջամտությամբ կնշվի շատ երկրներում:

ԳԼՈՒԽ 1.19. ԱՐԵՎԻ ԺԱՍԱՑՈՒՅՑՆԵՐ ԵՎ ԱՐԵՎԻ ՕՐԱՑՈՒՅՑՆԵՐ

Ակներև է, որ Քարահունջ աստղադիտարանում արևի ժամացույցներն ու օրացույցներն օգտագործվել են հնագույն ժամանակներից: Բայց դրանք չեն պահպանվել: Գուցե դրանք հետագայում գտնվեն: Կարելի է ենթադրել, որ Քարահունջի № 63 քարը, որի անցքը մեջքին է, օգտագործվել է որպես արևի ժամացույց (տես նաև Գլուխ 1.28., էջ 64 և Նկ. 32, էջ 37):

Միևնույն ժամանակ ակներև է, որ հին Հայաստանում արևի ժամացույցները և օրացույցները օգտագործվել են լայնորեն: Մինչև օրս միջնադարյան քրիստոնեական եկեղեցիների մոտակայքում և պատերի վրա արևի շատ ժամացույցներ կան [25]: Դրանցից շատերը գտնվել են նաև պեղումների ժամանակ: Նրանց բոլորի սանդղակները ցույց են տալիս օրվա ժամերը առավուտվա ժամը 6-ից մինչև երեկոյան ժամը 18-ը:

Արևի ժամացույցները ժամանակն իրենց սանդղակներին ցույց են տալիս ցերեկը ծողի (որը կոչվում է գնոմոն) ստվերի միջոցով: Հին հայկական արևի ժամացույցները կոչվել են “գիտցող”: Նկար 36-ում պատկերված է Էջմիածնի մոտ գտնվող հայկական “Զվարթնոց” եկեղեցու պատի արևի ժամացույցը (մ.թ. 7-րդ դար):

Բացի արևի ժամացույցներից կաին արևի օրացույցներ, որոնք շնորհիվ իրենց ծողերի ստվերի երկարության սանդղակի վրա ցույց էին տալիս տարվա ամիսը: Հին հայկական արևի այդ օրացույցները կոչվում էին “ստվերաչափ”:

Մենք նախագծել ու պատրաստել ենք նոր տիպի երկու Արևային ժամացույց-օրացույցներ (ԱԺՕ “Գիտցող ստվերաչափ”), որոնք կառուցել ենք կարմիր տուֆից, մեկը՝ մեր Ռադիոֆիզիկական չափումների ինստիտուտի (ՌԶԻ) Արագածի գիտական կենտրոնում (Արագած սարի վրա) 1987-ին (4480-ին ՀՐՏ-ով) և մյուսը՝ Երևանում ՌԶԻ-ի գլխավոր շենքի դիմաց 1989-ին (4482-ին ՀՐՏ-ով) [6]: Դրանցից յուրաքանչյուրն ունի երեք գլխավոր սանդղակ (հորիզոնական, ուղղաձիգ և սֆերիկ) ու մի ընդհանուր ծող (գնոմոն), որը թեքված է 40° տակ (տեղի լայնությանը հավասար անկյան տակ), այսինքն, զուգահեռ է Երկրի պտտման առանցքին: Ձողը իր վրա ունի երեք փոքր խաչ՝ (մեկական յուրաքանչյուր սանդղակի համար), որոնց ստվերները յուրաքանչյուր սանդղակի վրա ցույց են տալիս ամիսները ու (մոտավոր կերպով) նրանց օրերը: Հորիզոնական սանդղակը բաժանված է (տիտանե կորագծերով) ըստ այժմ գործող օրացույցի ամիսների, ուղղահայացը՝ ըստ “Հայոց բուն տոմարի” (ՀՐՏ) և սֆերիկը՝ ըստ իրական արեգակնային ամիսների (ըստ Կենդանակերպի համաստեղությունների):



Նկ. 36. Արևի ժամացույց
Զվարթնոցի տաճարի պատին,
մ.թ. 7-րդ դար (15 կմ Երևանից)

ԱժՕ-ի նախագիծը կատարել են ես, ժամային գծերի և ամիսների կորերի հաշվարկները կատարել է Ֆ-մ.գ.թ. Վ.Օսկանյանը, իսկ քարի վրայի քանդակները կատարել է քանդակագործ Ս.Փանոսյանը: Ողջ աշխատանքը կատարվել է ՌԶԳՀ-ի (այժմ՝ ՌԳՀ) արհեստանոցներում:

Նկար 24-ում պատկերված է Երևանում ՌԶԳՀ-ի գլխավոր շենքի, Կոմիտասի պող. 49/4, դիմաց կառուցված նոր տիպի ժամացույց-օրացույցը:

ԳՆՈՒՄ 1.20. ԵՐԿՐԻ ԱՌԱՆՑՔԻ ԹԵՔՈՒԹՅՈՒՆԸ

Արդյոք Քարահունջի աստղագետները գիտե՞ին Երկրի առանցքի թեքության անկյան (ε անկյան կամ էկլիպտիկայի թեքվածության) մասին: Այո, որովհետև (տես Նկ. 37) նրանք կարողանում էին չափել Արեգակի բարձրությունը (h_1 տեղի անկյունը) նրա ամառային կուլմինացիայի օրը (ամառվա Արևադարձի, հունիսի 22-ի, ամենաերկար օրվա կեսօրին) և նրա բարձրությունը (h_2 տեղի անկյունը) ձմեռային կուլմինացիայի օրվա կեսօրին, այսինքն, դեկտեմբերի 22-ի, ձմեռային Արևադարձի ամենակարճ օրվա կեսօրին*: Հետո նրանք կարողացել են որոշել Արեգակի հակունը (δ) կուլմինացիայի օրերին (δ_c անկյունը), այսինքն.

$$\pm \delta_c = \frac{h_1 - h_2}{2} . \quad (1)$$

* Ստորև (Նկ. 30, 31, 42, ԳՆՈՒՄ 1.28) պատկերված է Քարահունջի 3 քարից բաղկացած գործիքը, որը կիրառվել է Արևի բարձրությունը Արևադարձի օրերին չափելու համար ($\delta = 0$, $h = 90 - \varphi$), ինչպես նաև տեղի լայնությունը (φ անկյունը) չափելու համար:

Իհարկե, նրանք նկատել են, որ տարվա ընթացքում Արեգակի տեղի բարձրությունը (h) փոփոխվում է $h_1 > h > h_2$ սահմաններում, իսկ հակումը՝ $-\delta_c < \delta < +\delta_c$ սահմաններում:


Կրկնելով այս չափումները երկար տարիների ընթացքում, և իհարկե հանգելով այն բանին, որ δ_c -ն գրեթե չի փոփոխվում, (և նույնիսկ կախված չի տեղի (φ) [այնությունից, տես ստորև], նրանք պետք է հասկանային, որ Արեգակի ուղղությունը Արևադարձին թեքվում է Երկրի հասարակածի հարթության նկատմամբ (կամ երկնային հասարակածի, $\delta = 0$) $\varepsilon = \delta_c$ անկյան տակ, այսինքն Երկրի առանցքը թեքված է իր նորմալից էկվիպտիկայի հարթության նկատմամբ $\varepsilon = \delta_c$ անկյան տակ: Եվ այդ է պատճառը, թե ինչու է Երկրի վրա ամառ ու ձմեռ լինում (արևադարձերով), գարուն ու աշուն (գիշերահավասարներով):

Նկար 38-ի միջոցով հեշտությամբ կարելի է գտնել ε , φ և A_s հորիզոնի գծին գտնվող Արևածագի (Արևամուտի) ազիմուտի կետի միջև եղած հարաբերությունը: Սրանից հետևում է.


$$A_s = \arccos \frac{\sin \delta}{\cos \varphi}. \quad (2)$$

Արևադարձի օրերի դեպքում, երբ $\varepsilon = \delta_c$, Արևածագի կետի համար ունենք.

$$A_s = \arccos \frac{\sin \varepsilon}{\cos \varphi}; \quad \varepsilon = \arcsin(\cos A_s \cdot \cos \varphi) \quad (3, 4)$$



Նկ.37. Արևի կուլմինացիաները



Նկ. 38. Արևի շարժման հետագծերը (տրայեկտորիաները) Երկնքի վրա.
 1 – Չիշերահավասար օրերը
 2, 3 – Արևադարձի օրերը
 A_s – Արևի ծագման ազիմուտի կետը Արևադարձի օրը

Արդյոք Քարահունջի աստղագետները գիտե՞ին, որ Երկրագունդը պտտվում է իր սեփական առանցքի շուրջը: Այո, որովհետև նրանք գիտեին, որ Երկիրը ունի պտույտի առանցք և գիտեին նույնիսկ նրա թեքման անկյան (ε) մասին և նրա պրեցեսիայի մասին (տես Գլուխ 1.22):

Ըստ Ջ.Հենքոքի Երկրագնդի առանցքի թեքվածությունը փոփոխվում է 22.1° -ից մինչև 24.5° սահմաններում 41 հազար տարի պարբերականությամբ [26]: Ըստ աստղագիտական տարեգրքի [27] այժմ էկվիպտիկայի թեքվածությունը հավասար է $\varepsilon = 23.44^\circ$ և դանդաղ նվազում է տարեկան 0.00013° ($0.47''$) արագությամբ*: Մենք կարող ենք արագության համար կիրառել նաև $\Delta \varepsilon = 0.013^\circ$ ($0.78''$) հարյուր տարվա ընթացքում, որովհետև այժմ գտնվում ենք սինուսիդալ օրենքով փոփոխվող թեքության ֆունկցիայի գծային մասում (Նկ. 39): Այնպես որ Արևադարձին Արևածագի կետի ազիմուտը (A_s) նույնպես նվազում է, իսկ $(90 - A_s)$ անկյունը, ինչպես նաև ազիմուտի շեղումը (ΔA_s), աճում է (տես Նկ. 37): Կիրառելով հավասարում (3)-ը, մենք կարող ենք հաշվել, որ երբ $\varepsilon = 23.44^\circ$, իսկ լայնությունը $\varphi = 39.5^\circ$ (Քարահունջ), $A_s = 58.97^\circ$ և եթե $\Delta \varepsilon = 0.013^\circ$, ապա $\Delta A_s =$

* Այստեղ հետաքրքիր է նշել, որ 17-րդ դարի հայ մի հեղինակ այդ անկյան արժեքը գնահատել է որպես 23.5° [21]: Սա եղել է շատ լավ արդյունք, որովհետև ճիշտ արժեքը պետք է լինի մոտ 23.445° :

= 0.018° կամ 1.1' 100 տարվա ընթացքում:

Դիտումները կատարելով 30" = 0.5' ճշտությամբ (խողովակի միջոցով) հին ժամանակների աստղագետները տեսականորեն կարող էին գտնել $\Delta A_s = 1.1'$ տեղաշարժ 50 տարվա մեջ, բայց գործնականում դա հնարավոր չէր, քանի որ խողովակներն այդքան երկար ժամանակամիջոցում պահպանելն անհնարին է: Բայց դիտելով անցքերից նույնիսկ առանց խողովակներն օգտագործելու, (և ունենալով 3.5' ճշտություն), նրանք կարող էին գտնել ΔA_s -ը մոտ 300 տարվա ընթացքում (քարե գործիքների կայունությունը շատ բարձր է): 1000 տարի անց շեղումը կարող էր լինել $\Delta A_s = 0.18^\circ$ կամ 11', ինչը 3 անգամ ավել է, քան այն ճշտությունը, որը հնարավոր է առանց խողովակների: Այս պարզաբանելով, նրանք կարող էին պատրաստել քարե նոր գործիքներ Արևածագի (Արևամուտի) դիտման համար Արևադարձի օրերին, որոնք կլինեին ուղղված մի նոր կետի, այսինքն որոշ ազիմուտալ շեղումով, որ կարողանային նորից որսալ Արևածագի կետը անցքի կենտրոնում:


Իրականում Քարահունջում, իրոք, մի շարք քարեր կան, որոնք Արևադարձերի օրերին ուղղված են մոտավորապես այժմյան Արևածագի (Արևամուտի) կետին և որոշ շեղում ունեն անցքերի ուղղությունից (որը մենք չափել ենք): Այսպիսով, մեզ հայտնի է Արևածագի այժմյան կետի և անցյալի կետերի միջև տեղի ունեցած շեղումը: Դա հնարավորություն է տալիս հաշվել քարերի, ինչպես և ամբողջ աստղադիտարանի տարիքը:

Եկեք վերադառնանք Նկ. 39-ին ու մի քիչ բացատրենք այն: Երկրի առանցքի թեքությունը տատանվում է $\pm 1.2^\circ$ սահմաններում ($\varepsilon = 23.3^\circ \pm 1.2^\circ$): Դա գործնականում չի ազդում Արևից դեպի Երկրի տրոպիկական, սուբտրոպիկական և բարեխառն գոտիները եկող տաքության ծավալի վրա: Սակայն ε -ի այդ դանդաղ փոփոխումները շատ զգալի են արկտիկական գոտիների մոտակայքում գտնվող տարածքների համար: Այսպիսով, Երկրի առանցքի թեքության փոփոխման (սինուսիդալ) օրենքը կարևոր դեր է խաղում Արկտիկայի մոտակայքում, որովհետև այնտեղ Արևի ճառագայթները շատ սուր անկյան տակ են ընկնում և դա նպաստում է լայնատարած սառցակալմանը, որը ծածկում է սուբարկտիկ գոտիները 41000 տարի պարբերությամբ:

Սառցակալման վերջին ժամանակաշրջանը սկսվել է 32000 և ավարտվել է 12000 տարի առաջ (տես Նկ. 39): Այդ ժամանակաշրջանի վերջին 2000 տարիների ընթացքում սառույցները շատ ավելի արագ էին հալչում և 12000 տարի առաջ տեղի ունեցավ Մեծ Ջրհեղեղը: Արդյունքում օվկիանոսի մակարդակը բարձրացել է 100 մետրով: Դա չափազանց վտանգավոր էր Միջագետքի և այլ

ցածր գտնվող դաշտավայրերի համար (որոնք ծածկվել էին ջրով), բայց ոչ Հայկական Լեռնաշխարհի համար, որի միջին բարձրությունը կազմում է 1700մ, առավել ևս Արարատ սարի համար, որի բարձրությունը կազմում է 5160մ: Այստեղ երկինքը պատած էր ամպրոպային ամպերով, կայծակներ էին ճայթում, անձրևներ տեղում, հորդանում էին գետերը և այլն, բայց մարդկանց, կենդանիների, բույսերի կյանքին լուրջ սպառնալիք չկար: Հայկական Լեռնաշխարհը իսկական Նոյան տապան էր, և քաղաքակրթությունը շարունակում էր այստեղ իր զարգացումը:

Մեր այժմյան ապրած ժամանակը գտնվում է Երկրագնդի առանցքի թեքության փոփոխությունների օրենքի գծային մասում, այնպես որ հաջորդ սառցուցյալ ժամանակաշրջանը կսկսվի 8500 տարի հետո, իսկ հաջորդ Մեծ Ջրհեղեղը կլինի 29000 տարի հետո (Նկ. 39):



Նկ. 39. Երկրի առանցքի թեքության փոփոխությունը և
 ժամանակաշրջանների փոփոխումը
 (Քժ – Քարահունցի ժամանակաշրջանը)

ԳԼՈՒԽ 1.21. ՔԱՐԱՀՈՒՆՋԻ ՏԱՐԻՔԸ: ՄԵԹՈԴ № 1

Նախնադարյան մոնումենտների (աստղադիտարանների) տարիքը որոշելու “Ազիմուտալ շեղման” մեթոդը (որը բացատրված է Գլուխ 1.20-ում), առաջին անգամ օգտագործել է Բրիտանական աստղագետ Ն.Լոքերը 1901թ. Ստոունհենջի տարիքը հաշվարկելու համար [29]: Նրա ստացած արդյունքն էր, որ Ստոունհենջը ստեղծվել է մ.թ.ա. 1880-ի և 1480-ի միջև, և այդ արդյունքը շատ լավն է, քանի որ Ստոունհենջ III-ի ստեղծման ճշգրիտ տարեթիվը մոտավորապես մ.թ.ա. 1850թ. է [26, 30, 31]:

Քարահունջի վերաբերյալ Ադյուսակ 3-ի երկրորդ տողում բերված են Արևի և Լուսնի ծագելու ու մայր մտնելու կետերի իսկական ազիմուտների հաշվարկները (Az^0), հաշվի առնելով հորիզոնի իսկական բարձրության ճշգրտումները, րեֆրակցիան և Լուսնի պարալաքսը: Մագնիսական դեվիացիայի ճշգրտումը ընդգրկված է անցքերի ազիմուտների արժեքներում (տող 4բ): Դրանից հետո արդյունքի թույլատրելի սխալը կազմում է մոտ $\pm 0.1^0$ կամ

$$0.1^0 \times 1000 : 0.18^0 = 550 \text{ տարի:}$$

4գ սյունակում բերված են (ճշգրտված և այժմյան ժամանակի համար հաշվարկված) ազիմուտի տեղաշարժերը (ΔAz^0) ազիմուտի և անցքերի չափված ուղղությունների միջև 17 “Արևային քարերի” և 12 “Լուսնային”-ների համար: Անցքերով քարերի համար ազիմուտի տեղաշարժերը տատանվում են 0.5^0 -ից մինչև 3^0 :

Ա Ր Ե Վ																								
Արևածագ										Արևամուտ														
			Ամառային Արևադարձ			Չմեռային Արևադարձ			Գարն., Աշն. Գիշերահավասար			Ամառային Արևադարձ			Չմեռային Արևադարձ			Գարն., Աշն. Գիշերահավասար						
1		Հսկում δ°	+23.44			-23.44			0			+23.44			-23.44			0						
2	Այժմ	Az°	59+4=63			122+9=131			90+3=93			302-1=301			239-5=234			270-2.5=267.5						
3	Անցյալում Az° եղել է		<63			>131			=93			>301			<234			=267.5						
4	ա)Քարի №		ա	բ	գ	ա	բ	գ	ա	բ	գ	ա	բ	գ	ա	բ	գ	ա	բ	գ				
	բ)Անցքի Az°		65	62.5	0.5	97	133	1	40	90	-3	99	303	2	108	232	2	64	264	3.5				
	գ)ΔAz° (տի- կոխությունը)		161	62	1	98	133	1	63	99	+6	52	302	1.5	169	233	1	55	260	7.5				
			187	61.5	1.5	100	130.5	0.5	67	90	-3				177	231	3							
Լ ՈՒ Ս Ի Ն																								
Ծագումը										Մայրամուտը														
1	+18.7		-18,7			+29			-29			+18.7			-18,7			+29			-29			
2	63+0.5=63.5		116.5+6.5= =123			129+6=135			51+6=57			294.6-4.6= =290			235.4-5.4= =230			309-2=307			123-8 =215			
3	<63.5		>123			>135			<57			>290			<230			>307			<215			
4	ա	բ	գ	ա	բ	գ	ա	բ	գ	ա	բ	գ	ա	բ	գ	ա	բ	գ	ա	բ	գ			
	161	62	1.5	76	124	1	147	137	2	-	-	-	138	289	1	108	229	1	44	309	2	146	214	1
	187	62	1.5													163	229	1	51	309	2	151	214	1
																					164	214	1	

Ազիմուտի գոյություն ունեցող տարբեր տեղաշարժերի առկայության երկու հիմնական հնարավոր պատճառ կա: Մեկն այն է, որ աստղադիտարանը (գործիքները) կառուցվել է շարունակաբար, աստիճանաբար տարբեր ժամանակների ընթացքում: Երկրորդ պատճառը պայմանավորված է բնական պայմաններով ու արհավիրքներով (երկրաշարժեր, սողանքներ և այլն), որոնք տեղի են ունեցել հազարամյակների ընթացքում, որոշ տեղաշարժի առիթ դառնալով: Երկրորդ դեպքում մեր խնդրի համար վտանգավոր են ոչ թե զուգահեռ տեղաշարժերը (անցքի առանցքի երկայնքով կամ լայնքով), այլ միայն անցքի պտույտը որևէ ուղղահայաց առանցքի շուրջ (ինչի հավանականությունը քիչ է): Այդուհանդերձ, այս երկրորդ պատճառը նվազագույնի հասցնելու նպատակով մենք տեղաշարժերի արժեքները միջինի բերեցինք:

Գիշերահավասարի օրերին Արևածագի (Արևամուտի) կետերի համար Az տեղաշարժեր չկան, այնպես որ ունենք 17- 6=11 “Արևային քար”:

Հաշվի առնելով այս ամենը, մենք (Աղյուսակ 3-ում) 11 “Արևային քարերի”

համար (բացառությամբ Պիշերահավասարի 6 քարերը), ունենք $\Delta Az = 15^\circ : 11 = 1.36^\circ$ միջին արժեքը: Ուրեմն տարիքը կլինի $1.36 \times 1000 : 0.18 = 7575 \pm 550$ տարի: Բացառությամբ 2 քարի, որոնցից յուրաքանչյուրի $\Delta Az = 0.5^\circ$ ու մի քարի, որի $\Delta Az = 3^\circ$: Որպես տեղաշարժի կրիտիկական արժեքներ ունեցող քարեր, մենք ունենք 8 “Արևային քար”, որոնց միջին $\Delta Az = 11^\circ : 8 = 1.37^\circ$, և տարիքը կլինի $1.37^\circ \times 1000 : 0.18^\circ = 7640 \pm 550$ տարի: “Ամենաերիտասարդ” երկու քարերի (№№65, 100) տարիքը, որոնց $\Delta Az = 0.5^\circ$, կլինի $0.5^\circ \times 1000 : 0.18^\circ = 2200 \pm 500$ տարի:

Աղյուսակ 3-ում ներկայացված 12 “Լուսնային քարերի” համար ունենք միջին $\Delta Az = 17^\circ : 12 = 1.42^\circ$ և այդ տարիքը կլինի $1.42^\circ \times 1000 : 0.18^\circ = 7870 \pm 550$ տարի:

Այսպիսով, Քարահունջ աստղադիտարանի տարիքը (երբ այն ակտիվ գործել է) կազմում է ավելի քան 7500 տարի (մ.թ.ա. 6-րդ հազարամյակի կեսը):


Որքա՞ն ժամանակ է գործել Քարահունջը: “Ամենաերիտասարդ” քարերը գործել են մոտ 2000 տարի առաջ, նշանակում է աշխատանքը տևել է ընդհուպ մինչև այդ ժամանակը, բայց անսպասելիորեն ընդհատվել է: Նույն բանն են վկայում (վերը, Չլուխ 1.10-ում հիշատակված) երեք պառկած քարերը, որոնց անցքերը բացված են մասամբ:

Այսպիսով, Քարահունջ աստղադիտարանը գործել է ավելի քան 5500 տարիների ընթացքում, սկսած ավելի քան 7500 տարի առաջ ընդհուպ մինչև 2000-ից պակաս տարի առաջ:


ՉԼՈՒՄ 1.22. ԵՐԿՐԻ ԱՌԱՆՑՔԻ ՊՐԵՑԵՍԻԱՆ

Երկրի առանցքը (որի թեքությունն այժմ կազմում է 23.44°) դանդաղ կոնաձև շարժում է կատարում 25929 տարի պարբերությամբ: Այդ երևույթը կոչվում է պրեցեսիա (Նկ. 40):

Պրեցեսիայի հետևանքով աստղերի դիրքը (նրանց կոորդինատները) երկնքում դանդաղորեն փոփոխվում են: Նկար 41-ում ցույց է տրված Հյուսիսային բևեռի կետի երկնքով տեղափոխվելու ուղին պրեցեսիայի մոտավորապես մեկ պարբերության ընթացքում:



Նկ. 40. Երկրի առանցքի պրեցեսիան



Նկ. 41. Հյուսիսային Բևեռի կետի շարժման ուղին երկնակամարով

Արևը դանդաղորեն շարժվում է երկնակամարով կենդանակերպի համաստեղությունների շարքով հակառակ իր տարեկան ընթացքի ուղղությանը նրանց նկատմամբ: Դրա արդյունքում գարնանային Պիչերահավասարի պահը տարեց տարի մի քիչ ավելի շուտ է գալիս (5.5 րոպե 100 տարում), և Արևը շարժվում է երկնակամարով աստղերի միջև 100 տարին $360^\circ : 25920$ տարով = $83.3'$ արագությամբ, լինելով կենդանակերպի յուրաքանչյուր համաստեղությունում $25920 : 12 = 2160$ տարի:

Արդյոք հնադարյան աստղագետները կարողացել են հայտնաբերել պրեցեսիան: Այո, որովհետև նրանք կարողանում էին չափել Արևի դիրքի շեղումը աստղերի նկատմամբ (օրինակ, Պիչերահավասարի օրերին՝ Արևածագի, Արևամուտի և կեսօրի պահերին, կամ այլ ֆիքսված պահերին): Այդ շեղման արժեքը կազմում է տարին $50''$ ($83.3' : 100 \times 60 = 50''$), ինչը նրանք կարող էին չափել Քարահունջում մոտավորապես 7 ամսվա ընթացքում:

Աստղագետների սերունդները, որոնք ուսումնասիրում էին երկինքը հարյուրավոր և հազարավոր տարիների ընթացքում, կարող էին իմանալ պրեցեսիայի մասին նույնիսկ Քարահունջից շատ հազարամյակներ առաջ: Ես կարծում եմ, այդ Հայաստանում արվել է դեռ 11-13 հազար տարի առաջ: Այնպես որ պրեցեսիայի երևույթը, որն այլ կերպ կոչվում է “Տիեզերական մեծ ժամացույց”, հայտնի է եղել Երկրի դեռ հին ժամանակների քաղաքակիրթ ժողովրդներին:

Գիտենալով պրեցեսիայի օրենքները, ինչպես նաև աստղերի այժմյան դիրքերը (կոորդինատները) և նրանց սեփական շարժումները, հնարավոր է հաշվարկել յուրաքանչյուր աստղի դիրքը անցյալի ցանկացած ժամանակի համար (ինչպես նաև ապագայի), այսինքն ասել, թե որտեղ է եղել յուրաքանչյուր տվյալ աստղը, որտեղից (հորիզոնի որ կետից) է նա ծագել (մայր մտել) հազարամյակներ առաջ, որտեղ է եղել նրա կուլմինացիան և այլն: Այդ հաշվարկները մենք կարող ենք անել, օգտագործելով հետևյալ հավասարումները [32].

$$\left| \begin{array}{l} \delta_2 = \arcsin[\cos\delta_1 \cdot \sin\theta \cdot \cos(\alpha_1 + \psi) + \sin\delta_1 \cdot \cos\theta] \\ \alpha_2 = z + \arcsin \frac{\cos\delta_1 \cdot \sin(\alpha_1 + \psi)}{\cos\delta_2}, \end{array} \right. \quad \begin{array}{l} (5) \\ (6) \end{array}$$

որտեղ $\delta_1 = \delta_0 + 100\mu_\delta \cdot T; \quad \alpha_1 = \alpha_0 + 100\mu_\alpha \cdot T$
 $\psi = 2305.7'' \cdot T + 0.302'' \cdot T^2 + 0.018'' \cdot T^3$
 $z = 2305.7'' \cdot T + 1.095'' \cdot T^2 + 0.018'' \cdot T^3$
 $\theta = 2003.87'' \cdot T - 0.427'' \cdot T^2 - 0.042'' \cdot T^3$

որտեղ α_0, δ_0 – տվյալ աստղի այժմյան դիրքն է (ուղղանկյուն հասարակածային կոորդինատները) [27];

μ_α, μ_δ – աստղի սեփական շարժումն է [27],

α_1, δ_1 – աստղի այժմյան դիրքն է սեփական շարժման ավելացմամբ,

α_2, δ_2 – տվյալ աստղի դիրքն է անցյալում (ապագայում),

$\pm T$ – ժամանակն է Հուլիանոսի հարյուրամյակներով:

Օգտագործելով (2) և (5) հավասարումները, կարելի է հաշվարկել տվյալ աստղի ծագելու A_r և մայրամուտի A_s պահերի ազիմուտները անցյալում.

$$A_r^\circ = \arccos \frac{\sin \delta_2}{\cos \varphi} \quad \text{և} \quad A_s^\circ = 360^\circ - A_r^\circ \quad (7)$$

Աստղի բարձրանալու (h) անկյունը կամ նրա բարձրությունը հորիզոնից կուլմինացիայի պահին հավասար է.

$$\left. \begin{aligned} h_2^\circ &= 90 - \varphi + \delta_2, & \text{երբ } \delta < \varphi, \\ h_2^\circ &= 90 + \varphi - \delta_2, & \text{երբ } \delta > \varphi \text{ և} \\ h_2^\circ &= \varphi + \delta_2 - 90, & \text{երբ } \delta > 90 - \varphi \end{aligned} \right\} \quad (8)$$

Երբ աստղը հատում է զենիթի $h_2 = 90^\circ$ ($\delta_2 = \varphi$) կետը:

ԳՆՈՒՆ 1.23. ԱՍՏՂԵՐԻ ԴԻՏՈՒՄ: ՊԵՐԻՍԿՈՊ - ՔԱՐԸ: ՄԵԹՈԴ № 2.

Քարահունջի հյուսիսային թևում կա ևս մի եզակի քարե գործիք № 137-ը: Նրա անցքը ուղիղ միջանցիկ չէ, այլ կես ճանապարհին թեքվում է դեպի վեր և դուրս է գալիս քարի վերևի հարթ մասից: Եթե անցքի թեքվելու հատվածում տեղավորենք հայելու մի կտոր (սև օբսիդիան), ապա կստացվի պերիսկոպ, որի միջոցով նստած դիրքից շատ հարմար է դիտել զենիթի կետը, քանի որ քարի բարձրությունը – 1.2մ է (տես Նկ. 26): Քարի հակառակ կողմում (դիտողից) ձեռքով փորված 20 սմ տրամագծով կլոր թաս կա: Այդ ջրով լցված թասը ծառայել է որպես հարթաչափ պերիսկոպի ուղղահայաց առանցքի դիրքը ստուգելու ու ճշտելու համար

հազարամյակների ընթացքում (Նկ. 27):

Իսկ զենիթում նրանք ի՞նչ էին դիտում, եթե Արևն ու Լուսինը այս լայնություններում երբեք չեն հատել զենիթի կետը (համեմայն դեպս, վերջին 10000 տարիների ընթացքում): Իհարկե, դիտել են աստղերը: Ու պայծառ աստղերը, որովհետև հայելին կատարյալ չէր: Կիրառելով վերը բերված Երկրի առանցքի պրեցեսիայի օրենքը, մենք կարող ենք որոշել, թե անցյալում որևէ աստղ անցե՞լ է արդյոք Քարահունջի զենիթի կետով, թե ոչ (ընդ որում, դրա հավանականությունը շատ փոքր է):

Ես հաշվարկեցի Քարահունջի երկնքի 21 ամենապայծառ աստղերից որևէ մեկի անցնելու հնարավորությունը անցյալում զենիթի կետով: Պարզվեց, որ այդ աստղերից չորսը անցյալի տարբեր ժամանակներում հատել են զենիթի կետը (տես Աղյուսակ 4): Սա աստղադիտարանի տարիքը հաշվարկելու մեր № 2 մեթոդն էր:

Աղյուսակ 4

ԱՍՏՂԵՐ: Պերիսկոպ – քար № 137				
Աստղի անունը	Համաստեղություն	Հնագույն ժամանակաշրջան		
		Տարի առաջ	Հակում	Բարձրություն
Ղենեք	Կարապի α	7630	39° 34'	90° 00'
Արկտուր	Եզնարածի α	3480	39° 35'	90° 00'
Վեգա	Քնարի α	3000	39° 35'	90° 01'
Կապելա	Կառապանի α	2330	39° 35'	90° 00'

Ղրանցից հնագույնը Ղենեք աստղն է (Կարապի համաստեղության α աստղը), որը անցել է զենիթի կետով 7630 \pm 10 տարի առաջ: Այս \pm 10 տարի ճշտությունը շատ բարձր է և բազմակի գերազանցում է հին մոնումենտների թվագրման բոլոր եղած մեթոդները: Հաջորդը Արկտուրն է (Եզնարածի α)՝ 3480 տարի առաջ, Վեգան (Քնարի α)՝ 3000 տարի առաջ և Կապելան (Կառապանի α)՝ 2330 տարի առաջ: Այդ աստղերը գտնվել են զենիթի կետից $\pm 0.5^\circ$ հեռավորության վրա ± 100 (մինչև ± 300) տարվա ընթացքում, այսինքն բավականին երկար ժամանակ կար, որպեսզի գործիքներ պատրաստեին ու դիտեին նրանց:

Ղենեքի դիրքի բարձրության շարժումը զենիթի կետի նկատմամբ ժամանակից կախված ցույց է տրված Աղյուսակ 4ա-ում:

ԴԵՆԵՐ: Պերիսկոպ – քար № 137

 $\angle 2000, \delta_0 = 45^\circ 28', \alpha_0 = 310^\circ 36', \varphi = 39^\circ 34'$

Տարի առաջ	Հակում	Ծագման ազիմ.	Մայրամուտի ազիմ.	Բարձրություն
7400	39° 03'	35° 10'	324° 49'	89° 29'
7500	39° 16'	34° 47'	325° 12'	89° 42'
7600	39° 30'	34° 23'	325° 36'	89° 56'
7630	39° 34'	34° 15'	325° 44'	90° 00'
7700	39° 44'	33° 58'	326° 01'	90° 10'
7800	39° 58'	33° 32'	326° 27'	90° 24'
7900	40° 13'	33° 05'	326° 34'	90° 39'

Աղյուսակ 4ա-ից երևում է, որ Դենեբի $\pm 0.5^\circ$ շարժումը զենիթի կետի նկատմամբ տեղի է ունեցել մոտ ± 200 տարվա ընթացքում: Հաշվարկված է նաև, որ հաջորդ աստղը, որը կանցնի Քարահունջի զենիթի կետով, կլինի Վեգան 640 տարի հետո:

Քարահունջի աստղագետները, տեսնելով աստղի դանդաղ շարժումը զենիթի կետի նկատմամբ, հասկացել են պրեցեսիան: Ունենալով դիտումների 30'' ճշտություն, նրանք կարող էին նկատել աստղի շարժումը 1.7 տարվա ընթացքում:

Թե Արկտուրը, Վեգան և Կապելան երբ են անցել զենիթի կետով, մեր համար մեծ հետաքրքրություն չի ներկայացնում Քարահունջի տարիքը որոշելու առումով, քանի որ այնտեղ շատ այլ քարեր կան, որոնց տարիքը 7500-ից ավել է ու հայտնի է նաև, որ 4492 տարի առաջ Հայաստանում ընդունվել է նոր ճշգրիտ Արեգակնային օրացույց (ՀԲՏ, տես վերը, Գլուխ 1.18): Այնպես որ մեր համար շատ ավելի կարևոր է Դենեբի, 7630 տարի առաջ, անցնելու ժամանակը: Այս ապացուցում է, որ Քարահունջ աստղադիտարանը ակտիվորեն գործել է մեզանից ավելի քան 7600 տարի առաջ:

ԳԼՈՒԽ 1.24. ԱՍՏՂԵՐԸ ԾԱԳՄԱՆ ՈՒ ՄԱՅՐԱՍՈՒՄԻ ԿԵՏԵՐՈՒՄ: ՄԵԹՈԴ № 3

Քարահունջի աստղադիտարանի գիտնականները, օգտագործելով առանձին (կանգնած) քարե գործիքները, սիստեմատիկ դիտումներ են կատարել հորիզոնի այն կետերում, որտեղից ծագում և մայր էին մտնում աստղերը: Սա լրացուցիչ հնարավորություն էր ընձեռում օրացույցը ճշգրտելու և պրեցեսիան հաշվարկելու համար: Միևնույն ժամանակ մենք ևս լրացուցիչ հնարավորություն ենք ստանում որոշելու (Մեթոդ №3) Քարահունջի տարիքը, օգտագործելով պրեցեսիայի հավասարումները (5-8, Գլուխ 1.22):

Մենք հաշվարկեցինք Քարահունջի երկնքի իննը պայծառ աստղերի անցյալում (4500, 6000 և 7500 տարիներ առաջ) ծագելու ու մայրամուտի ազիմուտները և գտանք (այն) քարերը, որոնք ուղղված են նրանց այն ժամանակների ազիմուտների կետերին: Նրանք բերված են Աղյուսակ 5-ում:

Այստեղ 31 քար կա, որոնց մի մասը օգտագործվել են 2-3 անգամ (տարբեր աստղերի համար), և նրանք բոլորն օգտագործվել են ավելի քան 50 նպատակներով: Իննը քարը օգտագործվել են 4500 տարի առաջ, տասներկուսը՝ 6000 տարի առաջ և տասնհինգը՝ 7500 տարի առաջ, քանի որ նրանց անցքերը ուղղված են տվյալ (հաշվարկված) համապատասխան ազիմուտներին $\pm 2^\circ$ անկյունային տիրույթում:

Այս հաշվարկները դեռ ավարտված չեն, և այստեղ մենք կարող ենք միայն ասել, որ Քարահունջն ակտիվ գործել է 7500-4500 տարի առաջ: Ստորև կպարզաբանվի, որ Քարահունջի ակտիվ շրջանի իրական տևողությունը եղել է 7500-2000 տարի առաջ (տես Գլուխ 1.25):

Աղյուսակ 5-ը ցույց է տալիս նաև, որ Քարահունջի աստղագետները մեծ հետաքրքրություն են ցուցաբերել Օրիոնի համաստեղության աստղերի նկատմամբ (14 քար՝ 5 աստղի համար), Դենեբ աստղի նկատմամբ՝ (6 քար), Մեծ Շան համաստեղության աստղերի նկատմամբ՝ (12 քար 2 աստղի համար), ներառյալ աստղ Սիրիուսը՝ (5 քար):

ԱՍՏՂԵՐ					
Աստղի անունը, համաստեղությունը	Հնագույն ժամանակաշրջան			Քարի №	
	Տարի առաջ	Ծագման ազիմուտ°	Մայրամուտի ազիմուտ°	Ծագում	Մայրամուտ
Սիրիուս Մեծ Շան α	4500	117.5	242.5	183	-
	6000	125.2	234.8	-	108
	7500	135.7	224.3	98, 110	162
Կապելա Կառապանի α	4500	51.5	308.5	-	51
	6000	63.2	296.8	161, 187	-
	7500	73.7	286.3	66, 85	71
Ռիգել Օրիոնի β	4500	120.7	239.3	-	-
	6000	132.3	227.7	98	-
	7500	146.2	213.8	147	151
Բետելիեյզե Օրիոնի α	4500	96.6	263.4	40	78
	6000	107.0	253.0	-	160
	7500	118.4	241.6	183	-
Ղենեբ Կարապի α	4500	39.9	320.1	126	-
	6000	38.9	321.1	126	44, 99
	7500	34.8	325.2	-	84, 122
Բելատրիքս Օրիոնի γ	4500	101.1	258.9	-	55, 160
	6000	112.0	248.0	-	139
	7500	123.6	236.4	76	163
Ալնիլամ Օրիոնի ε	4500	109.3	250.7	129	-
	6000	120.1	239.9	-	-
	7500	132.3	227.7	98, 110	177
Ալնիտակ Օրիոնի ξ	4500	109.7	250.3	-	-
	6000	120.4	239.6	-	-
	7500	132.6	227.4	98, 110	177
Սիրզամ Մեծ Շան β	4500	124.5	235.5	76	-
	6000	134.1	225.9	98, 110	177
	7500	147.0	213.0	147	151, 164

ՔՐՈՒՆ 1.25. ԱՍՏՂԵՐԻ ԿՈՒՆԻՆԱՑԻԱՆ: ՄԵԹՈՂ № 4

Կիրառելով պրեցեսիայի օրենքները՝ մենք կարող ենք պատասխանել այն հարցին, թե արդյոք Քարահունջի աստղագետները սլատրաստե՞լ և օգտագործե՞լ են աստղերի վերին և ներքին կուլմինացիաների պահերին դիտումներ կատարելու գործիքներ: Միևնույն ժամանակ մենք կարող ենք հաշվարկել, թե անցյալում երբ են կատարվել այդ դիտումները, այսինքն, վորոշել Քարահունջի տարիքը (Մեթոլ № 4): Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Քարահունջում այդպիսի աշխատանք էլ է կատարվել:

Աղյուսակ 6-ը ներկայացնում է 11 աստղից բաղկացած մի այլ խումբ, որոնք

նախապատմական ժամանակներում որոշակի անկյան տակ հատել են Քարահունջի տեղի միջօրեականը: Ակնհայտ է, որ Աղյուսակ 6-ում բերված վեց քարերի օգտագործմամբ դիտումներ են կատարվել 7500 տարի առաջ մինչև 2000 տարի առաջ եղած ժամանակաշրջանի ընթացքում (նրանցից 4 քարը 7500 տարվա տարիք ունեն): Քարերի անցքերի առանցքների ուղղվածության ճշտությունը աստղերի հաշվարկված բարձրությունների նկատմամբ նրանց կուլմինացիայի պահերին կազմում է $\pm 1^\circ$:

Աղյուսակ 6

ԱՍՏՂԵՐ					
Աստղի անունը	Հնագույն ժամանակաշրջան				Քարի №
	Տարի առաջ	Կուլմինացիան	Ազիմուտ ^o	Բարձրություն ^o	
Արկտուր, Եգնարածի α	7500	Ներքին	0	8.6	128
Ռիգել, Օրիոնի β	7500	Վերին	180	10.6	60
Ալիոթ, Մեծ Արջի ε	7500	Ներքին	0	18.2	109
Դաբեհ, Մեծ Արջի α	7500	Ներքին	0	5.6	152
Ալկաիդ, Մեծ Արջի η	2000	Ներքին	0	9.6	128
Ալնիլամ, Օրիոնի ε	7000	Վերին	180	~22	53
Ալնիտակ, Օրիոնի ξ	7000	Վերին			
Միրիուս, Մեծ Շան α	6500	Վերին			
Միրզամ, Մեծ Շան β	5000	Վերին			
Պրոցիոն, Փոքր Շան α	6000	Վերին	180	~50	62
Բետելգեյզե, Օրիոնի α	3500	Վերին			

Արդյունքում մենք կարող ենք հաստատել, որ Քարահունջը ակտիվ գործել է 7500-ից մինչև 2000 տարի առաջ ընկած ժամանակաշրջանում:

Կարևորագույն ուշադրությունը նորից հատկացվել է Օրիոնի (4 քար) նաև Մեծ Արջի (5քար) համաստեղություններին:

ՉԼՈՒՆ 1.26. ՔԱՐԱՀՈՒՆՋԻ ՏԱՐԻՔԻ ԹՎԱԳՐՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄԸ

Մենք դիտարկեցինք Քարահունջի տարիքը որոշելու չորս անկախ աստղագիտական մեթոդներ. Արևի և Լուսնի ծագելու ու մայր մտնելու ազիմուտների տեղաշարժը (Աղյուսակ 3), աստղերի անցնելը գեոհորիզի կետով (Աղյուսակ 4), աստղերի ծագելու և մայր մտնելու ազիմուտները (Աղյուսակ 5) և աստղերի կուլմինացիաների բարձրությունները (Աղյուսակ 6):

Չափազանց հետաքրքիր է, որ Քարահունջի տարիքը որոշելու համար բոլոր չորս մեթոդներն էլ նույն արդյունքն են տալիս. Քարահունջ աստղադիտարանը կառուցվել և գործել է ավելի քան 7500 տարի առաջ (մ.թ.ա. 6-րդ հազարամյակի կեսին):

Ակներև է, որ Քարահունջի կառուցումն ու գործելը (ավելի պարզ գործիքների առկայությամբ) սկսվել է շատ ավելի վաղ՝ ավելի քան 15000 տարի առաջ:

Քարահունջը շարունակապես գործել է ավելի քան 5500 տարվա ընթացքում մինչև 2000 տարի մեզանից առաջ, հնարավոր է, ընդհուպ մինչև մ.թ. 301 թվականը, երբ Մեծ Հայքի ողջ տարածքով քրիստոնեությունն ընդունվել էր որպես պետական կրոն Տրդատ III թագավորի* ժամանակ:

Քարահունջը հաստատում է, որ Հայաստանում ավելի քան 7500 տարի առաջ եղել է բարձր զարգացած քաղաքակրթություն: Ընդ որում, թույլ տվեք հիշեցնել, որ համարվում է, որ մինչև 5500-ից 5000 տարի մեզանից առաջ դեռ ոչ մի քաղաքակրթություն գոյություն չի ունեցել ոչ Միջագետքում, ոչ Եգիպտոսում, ոչ որևէ այլ տեղ:

ԳԼՈՒԽ 1.27. ԴՐՈՖԵՍՈՐ Զ. Ս. ՀՈՈԿԻՆՍԸ

1999 թվականի փետրվարին Քարահունջին վերաբերող իմ բոլոր նյութերը, այդ թվում նաև նրա տարիքի հաշվարկները՝ ես ուղարկեցի պրոֆեսոր Զ.Ս.Հոուկինսին (Վաշինգտոն), որը աստղագիտական մեթոդներով հնագույն մոնումենտների թվագրման խոշորագույն մասնագետն է աշխարհում և խնդրեցի նրան տալ իր կարծիքը: Ես շատ երախտապարտ եմ նրան, որ նա տվեց իր սիրալիր համաձայնությունը և մեծ աշխատանք կատարեց, ստուգելով իմ ստացած արդյունքներն ու բարձր գնահատականի արժանացրեց դրանք: Նկ.28-ում պրոֆեսոր Զ.Ս.Հոուկինսի լուսանկարն է:

1999 թվականի մայիսի 18-ի իր նամակում նա պատասխանում է ինձ [33].

“Քարահունջի հուշարձանը շատ հետաքրքիր է, և ես համախոհ եմ ձեր արտահայտած կարծիքներից շատերին”: Ու հետո.

* Առաջին անգամ քրիստոնեությունը ընդունվել է Հայաստանում մ.թ. 33թ. Փարամ Արամում (Հայկական “Արամի կրտսեր եղբոր երկրում”, այժմ՝ Միջագետք) նրա Արֆա մայրաքաղաքում (հետագայում՝ Էդեսա, Ուրֆա) Աբգար V Մեծ թագավորի (մ.թ. 12-50) կողմից, որը մ.թ. 33թ. նամակ էր ուղղարկել Հիսուս Քրիստոսին Երուսաղեմ իր քարտուղար և նկարիչ Հանանի հետ (հրավիրելով նրան Արֆա) և ստացել էր Նրա պատասխան նամակը, ինչպես նաև Հանանի նկարած Նրա դիմանկարը (հռչակավոր այսպես կոչված Մանդիլիոնը) տես ՄԱՍ 3:

... “Ես ծայր աստիճան տպավորված եմ ձեր կատարած մանրագնին ճշգրիտ աշխատանքով և հուսով եմ, որ դրա արդյունքներն, ի վերջո, իրենց տեղը կգտնեն գրականության մեջ”:

1999 թվականի հունիսի 28-ի իր նամակում նա գրել է, որ ես կարող եմ հրապարակել իր գնահատականը իմ հետագա հրապարակումներում, ինչը հիմա ես հաճույքով կատարում եմ.

“Մենհիրների շարքի քարուղին, որն սկսվում է քարերի կենտրոնական շրջանից (Քարահունջի – Պ.Հ.) համանման է Ստոունհենջի և Քալենիշի քարուղիներին: Առաջինը ուղղված է դեպի Արևածագի կետը, ամառային Արևադարձի օրը, մյուսները՝ Լուսնի մայր մտնելու կետին նրա կուլմինացիայի ժամանակ:

Երկուսն էլ վերաբերում են մ.թ.ա. 3-րդ հազարամյակին: Քարերի դասավորության կարգը Քարահունջում նույնն է: Քարե շրջանից գնացող քարուղին ուղղված է Լուսնի մ.թ.ա. 3-րդ հազարամյակում ծագման ամենահյուսիսային կետին նրա կուլմինացիայի օրը: Այդ քարուղին, ինչպես Ստոունհենջում և Քալենիշում, մոնումենտի երևելի ճարտարապետական առանձնահատկությունն է” [33]:

Շատ հատկանշական է, որ պրոֆեսոր Ջ.Ս.Հոուկինսը նմանություններ է գտնում Ստոունհենջի, Քալենիշի ու Քարահունջի միջև:

Պրոֆեսոր Ջ.Ս.Հոուկինսը նաև նկարիչ է: Նկար 29-ում պատկերված է նրա “Ստոունհենջ” նկարը:

ԳԼՈՒԽ 1.28. ԵՐԿՐԻ ԼԱՅՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՉԱՓԵՐԸ: ԵՐԵՔ ՔԱՐԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ ԳՈՐԾԻՔԸ

Քարահունջում դեռ առաջին գիտարշավի ժամանակ իմ ուշադրությունը գրավեց մի եզակի աստղագիտական գործիք: Դա №№ 60, 62, 63 քարերից բաղկացած անսամբլն է: Քարերը կանգնած են Հյուսիս-Հարավ ուղղությամբ և տեղավորված են հարավային թևի սկզբում: № 60 և 62 քարերի անցքերը ուղղված են բարձրության տարբեր անկյունների տակ, ու նրանց միջից երևում է № 63 քարի գագաթը (Նկ. 42, 30, 31):

Դա 1994 թվականի աշնանային Գիշերահավասարի օրն էր, առաջին գիտարշավի ժամանակ, երբ մենք № 62 քարի անցքի միջով դիտում էինք, ինչպես Արևը ճիշտ կեսօրին հայտնվեց № 63 քարի գագաթին: № 63 քարը (որն ի դեպ,

նման է խոյի, բայց գլուխ չունի), այդ պահին “գլուխ” ստացավ:

№ 62 քարի անցքի ուղղվածությունը դեպի № 63 քարի գագաթը կազմում է մոտ $39,5^{\circ}$ անկյուն ուղղահայացի նկատմամբ, այսինքն նույնքան, որքան տեղի լայնության անկյունն է:

Այսպիսով, օգտագործելով այդ գործիքը, Քարահունջի աստղագետները չափում էին տեղի աշխարհագրական լայնությունը ($30''$ ճշտությամբ): Նրանք հաշվարկում էին (2 վայրկյան ճշտությամբ) նաև տարվա սկիզբը (մարտի 21-ին), ինչպես նաև կեսօրը կամ Արևածագի պահը, օգտագործելով № 63 քարի մեջքին գտնվող անցքը, որը Արևադարձի օրը ուղղված է Արևածագի կետին:

Այդպես նրանք կարող էին հայտնաբերել, որ տարին մոտավորապես բաղկացած է 365,25 օրից ու ճշգրտումներ մտցնել օրացույցի մեջ (օրվա, ամսվա և տարվա տևողության վերաբերյալ) ու հանգել “անշարժ” օրացույցին: Բացի այդ նրանք կարող էին մեկ տարվա ընթացքում չափել նույնիսկ Արևադարձի կանխադիպումը ($0,83'$ տարում) և հայտնաբերել Երկրի առանցքի պրեցեսիայի երևույթը (տես Գլուխ 1.22):

№ 60 քարն օգտագործվում էր № 63 քարի կատարի դիրքի ստուգման ու ճշգրտման համար, որի երկարատև կայունությունը շատ կարևոր էր:


Հնարավոր է, որ № 63 քարն օգտագործվում էր նաև որպես օրացույց, Արեգակնային ժամացույց: 1997 թվականի սեպտեմբերի 21-ի Պիչերահավասարին մեր չորրորդ գիտարշավի ժամանակ № 63 քարի մեջքի անցքում տեղադրել էինք ու կավով ամրացրել հայելու մի կտոր: Այդ հայելուց արտացոլված արևի շողիկը քարից 10 մ հեռու գտնվող էկրանի վրայով անցնում էր մեկ րոպեում 4 սմ (Նկ. 32):

Այսպիսով, հնագույն ժամանակների աստղագետներն ի զորու էին մեծ ճշտությամբ չափել Արեգակի շարժումը ըստ ուղիղ վերելքի (α) և ըստ հակման (δ) սահմանափակ անկյունների համար:

Համոզված են, որ Քարահունջում եղել են հատուկ Արեգակնային ժամացույցներ (Պիտոցողներ) և օրացույցներ (Ստվերաչափ) հատուկ գնոմոններով, որոնք առայժմ գտնված չեն (կամ ավերվել և ոչնչացվել են):

Նկար 25-ում պատկերված է նկարիչ Սպարտակ Գ.Սաֆյանի վրձնի Քարահունջ Մոնումենտի մի հատված:

Քարահունջի աստղագետները գիտեին, որ Երկիրը գնդաձև է: Ղրանում 100% համոզված լինելու համար նրանք պետք է չափեին տեղի լայնությունը նաև տարբեր տեղերում, ցանկալի է Քարահունջի $\varphi = 39,5^{\circ}$ լայնությունից դեպի Հյուսիս և Հարավ նույն հեռավորությունների վրա ($\pm \Delta\varphi$):




Նկ. 42. Եռաբար գործիքը: Նրա աշխատանքի սխեման

Կան փաստեր, որոնք հաստատում են, որ նրանք այդ արել են $\Delta\phi$ -ն մինչև հավասար $\pm 10^\circ$, $\pm 16^\circ$ (տես ստորև Գլուխ 1.33): Այսպիսով, հայերը գիտեին, որ Երկիրը կլոր է ավելի քան 7500 տարի մեզանից առաջ:

Հռչակավոր հայ աստղագետ, մաթեմատիկոս և փիլիսոփա Անանիա Շիրակացին (մ.թ. 7-րդ դար) (Նկ. 33) իր “Տիեզերագիտություն և Ժամանակագիտություն” աշխատության մեջ գրում է, որ հայ հնագույն փիլիսոփաները պնդում էին, որ Երկիրը կլոր է, և մարդիկ ու կենդանիները ապրում են նրա բոլոր կողմերում [24]:

Այս հնագույն գիտելիքի շատ հետաքրքիր հաստատում է ծառայում մ.թ.ա. 5-րդ հազարամյակի Սևանա լճի մոտակայքում փորագրված ժայռապատկերը, տես Նկ. 43 [34]:



Նկ. 43. Երկիրը կլոր է և մարդիկ ապրում են նրա բոլոր կողմերում:

Ժայռապատկեր Սևան լճի մոտակա լեռներում (մոտավորապես մ.թ.ա. 5-րդ հազարամյակ)

Երկրի գնդաձևության մասին տեղեկությունը Եվրոպա է մտել միջնադարում Պյութագորասի (մ.թ.ա. 6-րդ դար) շնորհիվ: Պյութագորասը մինչև իր 50-ամյա տարիքը ապրել ու գիտելիքներ է ձեռք բերել Հայաստանում և հետո միայն վերադարձել է Հունաստան [36]:

Կարողանալով չափել տեղի լայնությունը և գիտենալով, որ Երկիրը կլոր է, հին ժամանակների հայ գիտնականները ունակ էին չափել նաև Երկրի չափերը: Ղրա համար նրանց բավական կլիներ չափել միջօրեականի երկարության մի մասը, ասենք, $\Delta\varphi = 1^\circ$ սահմաններում (կամ մոտ 110 կմ)* $\pm 1'$ ճշտությամբ (կամ մոտ 2 կմ), այսինքն, սխալը կկազմեր մոտ 2 %: Որ $\pi=3.14$, նրանք կարող էին հաշվարկել էքսպերիմենտալ ճանապարհով մոտ 1% սխալով**: Հետո նրանք կկարողանային հաշվել Երկրի շառավիղը, օրինակ.

$$360 \times 110 : 2\pi \approx 6300 \text{ կմ} \pm 3\% \approx \underline{6300} \pm 190 \text{ կմ},$$

ինչը շատ լավ արդյունք է (իրական արժեքն է մոտ 6370 կմ):

ՉԼՈՒՄ 1.29. ՄՈՒՈՐԱԿՆԵՐ: ՀԵՒՈՑԵՆՏՐԻԿ ՀԱՄԱԿԱՐԳ

Քարահունջ աստղադիտարանը հետազոտելիս մենք չենք ուսումնասիրել մոլորակները դիտելու կամ նրանց վերաբերյալ հաշվարկներ կատարելու խնդիրը:

* Հայաստանում երկարության հին միավորը եղել է “արմունկը” մոտավորապես 0,5 մ:
 ** Հայ մաթեմատիկոս Վ.Միրզոյանը վկայում է, որ π -ի մեծությունը հին Հայաստանում չափվում էր 0,01 % ճշտությամբ (և ավելի), օգտագործելով կավե սկավառակները, մոտ 1 մ տրամագծով, որոնք պեղվել են Կարմիր Բլուրում Երևանի մոտ [74]:

Ղա հարկավոր է կատարել ապագայում, որովհետև ես համոզված եմ, որ Քարահունջի աստղագետները հետաքրքրվել են նաև մոլորակներով: Հինգ մոլորակ է հայտնի եղել (Մերկուրի, Վեներա, Մարս, Յուպիտեր, Սատուրն), և նրանք ունեցել են իրենց հին հայկական անունները, որոնք բերված են Գլուխ 1.19-ում:

Հին աստղագետները, իհարկե, նկատել են մոլորակների արտասովոր շարժումը (աստղերի նկատմամբ): Ինքը “մոլորակ” բառը “դեգերող” է նշանակում, գուցե “մոլորված”, “պտտվող” ճամբորդ: Իրականում էլ նրանք երբեմն շարժվում են հակառակ ուղղությամբ, այնպես որ նրանց իսկական ուղին կռահելը այնքան էլ հեշտ բան չի:

Ահա թե ինչ գիտեին հին աստղագետները մոլորակների մասին (նույնիսկ առանց գործիքներ օգտագործելու)։

1. Մոլորակների շարժումը տարբերվում է աստղերի շարժումից. նրանք հատում են համաստեղությունները ու երբեմն շարվում են մի գծով (մոլորակների “շքերթ”):

2. Նրանք հայտնվում են Արևի տարբեր կողմերից, երբեմն՝ առավոտյան, արևածագից առաջ ու երբեմն՝ երեկոյան, Արեգակի մայր մտնելուց հետո, այնպես որ նրանք, ըստ ամենայնի, պտտվում են Արեգակի շուրջը:

3. Նրանց ընթացքի արագությունը երկնակամարի վրա շատ ավելի մեծ է, քան աստղերինը, այնպես որ նրանք երբեմն առաջ են անցնում աստղերից, երբեմն հակառակ ուղղությամբ են շարժվում, ու նրանք աստղերի պես չեն կայծկլտում, հետևաբար շատ ավելի մոտ են մեզ, քան աստղերը:

4. Նրանց պայծառությունը խիստ փոփոխվում է, այնպես որ նրանք մեզանից երբեմն մոտ տարածության վրա են, երբեմն՝ ավելի հեռու և նրանց ուղեծրերի հարթությունները գրեթե զուգահեռ են Երկրի էկլիպտիկայի հարթությանը:

5. Մութ գիշերներին սարերում, հնարավոր է, կարելի էր տեսնել Վեներայի, Յուպիտերի փուլերը և հասկանալ, որ նրանք իրենք լուսատու չեն, այլ լուսավորվում են Արեգակից, ինչպես Երկիրը և Լուսինը (Վեներայի և Յուպիտերի անկյունային մեծությունը երբեմն հասնում է մինչև 40"-50"; աչքի սովորական տեսողության վերլուծող ուժը կազմում է միջինը 1'=60", բայց մարդկանցից շատերը երկու անգամ լավ են տեսնում):

6. Մերկուրին և Վեներան ավելի մոտ են Արեգակին, քան Երկիրը, որովհետև Արեգակի շուրջ նրանց պտույտի պարբերությունը քիչ է Երկրի պարբերությունից, որը հավասար է 1 տարվա կամ 365,25 օրվա: Մերկուրիի պարբերությունը մոտ 29 երկրային ամիս է, Վեներայինը՝ 7,5 ամիս: Մարսի պարբերությունը կազմում է

մոտ 1,9 տարի, Յուպիտերինը՝ մոտ 11,8 տարի, Սատուրնինը՝ 29,5 տարի, այնպես որ վերջիններս Արեգակից ավելի հեռու են գտնվում, քան Երկիրը:

7. Քարահունջի հին աստղագետները կարող էին չափել մոլորակների պտույտի պարբերությունները, օգտագործելով քարեր, որոնց անցքերը ուղղված լինեին նրանց ծագելու (ու մայր մտնելու) հորիզոնի կետերին: Նրանք կարող էին նաև համեմատել Յուպիտերի 11-ամյա պտույտի պարբերությունը Արեգակի ակտիվության 11-ամյա պարբերության հետ: Ես կարծում եմ, որ նրանք Երկրի բնության, բուսական ու կենդանական աշխարհի վրա Արեգակի ներգործության մասին շատ ավելին գիտեին, քան մենք այժմ:

8. Արևը գլխավոր Աստվածն է , ու բնականաբար, շրջապատում ամեն ինչ գտնվում է Նրա իշխանության ու ազդեցության տակ և պետք է պտտվի Նրա շուրջը:

Գիտենալով այս ամենը (ու հաստատելով այս ամենը գործիքներով կատարվող դիտումներով)՝ Քարահունջի աստղագետները կարող էին ենթադրել, որ բոլոր մոլորակները պտտվում են Արեգակի շուրջը: Այսպիսով Արեգակնային հելիոցենտրիկ համակարգը առաջին անգամ (որպես վարկած) հայտնի է դարձել ոչ ուշ, քան մ.թ.ա. 6 – 5-րդ հազարամյակում: Այն ապացուցվել է Ն. Կոպերնիկոսի կողմից մ.թ. XVI դարում և ավելի ուշ հաստատվել է Գ. Գալիլեի դիտումներով (մ.թ. 17-րդ դար), Ի. Կեպլերի տեսությամբ (մ.թ. 17-րդ դար) և Ի. Նյուտոնի (մ.թ. 17 – 18-րդ դար) տեսությամբ:

ԳԼՈՒԽ 1.30. ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Իհարկե, Քարահունջի նման մեծ աստղադիտարանը բարձր մասնագիտացում ունեցող բազմաթիվ մասնագետների կարիքն ուներ, հատկապես՝ հարյուրավոր դիտողների, մաթեմատիկոսների և ծառայող անձնակազմի: Այսպիսով, Քարահունջը պետք է լիներ նաև կրթական կենտրոն, նույնիսկ եթե գիտելիքները հաղորդվում էին մարդկանց միայն սահմանափակ շրջանում (հորից՝ որդուն):

Որ Քարահունջը եղել է նաև համալսարանական կենտրոն, հաստատում են իրար մոտիկ կանգնած № 160 քարը, որի բարձրությունը 1.9 մ է, և № 161-ը, որի բարձրությունը 1 մ է՝ ուսուցչի և աշակերտի համար: Երկուսի անցքերն էլ նայում են միևնույն կետին մոտակա բլրի գագաթին ժամանակին գտնվող դիտակետ ծառայող մի որոշակի քարի:

Քարահունջում դասավանդվել են Արեգակի, Լուսնի, աստղերի դիտման մեթոդները, ներառյալ խողովակով (խաչաձևավոր գծերով), դիտումների արդյունքների գրանցումը ու դրանց ֆիքսումը, դրանց ճշտությունը որոշելը (մետրոլոգիա), աստղագիտություն, մաթեմատիկա և այլն: Ուսուցանել են նաև տիեզերագիտություն, ժամանակագրություն և հայոց լեզու:

Աստղադիտարանն իր այժմյան տեսքով մեզ վկայում է այբուբենի, գրավոր խոսքի առկայության մասին, թվերի, մաթեմատիկայի*, փիլիսոփայության և այլն, ինչպես նաև կայուն պետականության և կարգ ու կանոնի գոյության մասին շատ հազարամյակների ընթացքում: Քանի որ չորս բոլորը որևէ այլ քաղաքակրթություն չկար, չկար որևէ մեկը, ումից հնարավոր լիներ որևէ բան սովորել, միակ ճանապարհն էր երկար ու ծիգ հազարամյակների ընթացքում բազմաթիվ գիտնականների ջանքերով ձեռք բերել ու հետզհետե կուտակել (գերոյից սկսած) խոր գիտելիքներ և համակարգել դրանք:

Այնպես որ Քարահունջը (և հայոց լեզուն, տես Մաս 2) հաստատում են, որ հայկական քաղաքակրթությունը ի բնե գալիս է շատ ու շատ հին ժամանակներից, ավելի քան 30000-ամյա խորքից, հայկական աստղագիտությունը՝ ավելի քան 25000-ամյա պատմություն ունի, որովհետև գերոյի մակարդակից դեպի վեր զարգանալը (ինչպես եղել է 7500 տարի առաջ) շատ ավելի ժամանակ էր պահանջում, քան պատրաստի գիտելիքներ ստանալը այլազգի ուսուցիչներից:

ԳԼՈՒՆ 1.31. ԱՅԼ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՔԱՐԱՀՈՒՆՋՈՒՄ

Ունենալով իմ հավանությունը՝ Երևանի Քարի և սիլիկատների ինստիտուտի պրոֆեսոր Հ.Գ.Բաբայանը 1999թ. մի խումբ իր աշխատակիցների հետ մեկնեցին Քարահունջ: Այնտեղի քարերից վերծրած նմուշները նրանք մոտ կես տարի ուսումնասիրեցին Ինստիտուտի ֆիզիկական և քիմիական լաբորատորիաներում: Նրանք, իհարկե, չէին կարող որոշել քարերի բացարձակ տարիքը, բայց անելով ֆիզիկական և քիմիական փորձեր նմուշների հետ, նրանք գտան քարերի հարաբերական տարիքները (կամ տարբերությունը քարերի տարիքների միջև): Արդյունքը հետաքրքիր եղավ. այդ հարաբերական տարիքները համընկան այն

* Մատ • Ե • մատ • իկա՝ նշանակում է՝ մատը մատից հետո է գալիս, այսինքն, "հաշվել": Հին Հայաստանում օգտագործվել է հաշվի տասնական համակարգը "գերոյի" առկայությամբ (Այնինչ համարվում է, որ "գերոյի" գյուտը կատարվել է միջնադարյան Եվրոպայում): "Չերո" բառը հին հայերենով նշանակում է. "Այն սկիզբ է, բայց նյութական չի" (խորը փիլիսոփայություն):

տարբերությունների հետ, որոնք մենք գտել էինք մեր աստղագիտական մեթոդներով [15]:

Հետազոտողների մի այլ խումբ, օգտագործելով զգայուն մագնիսամետրեր, հայտնաբերեց, որ Քարահունջի կենտրոնական շրջանի ներսում բնական մագնիսական ուժագծերը պարույրի տեսք ունեն:

ԳԼՈՒԽ 1.32. ՔԱՐԱՀՈՒՆՋ ԱՆՈՒՆԸ

Ես համոզված եմ, որ Մոնումենտը հին ժամանակներում կոչվել է Քարահունջ (նաև Քարենիշ): Այդ անունը պահպանվել է Մոնումենտից ոչ հեռու գտնվող երեք Քարահունջ կոչվող գյուղերի անուններում: Դրանցից մեկը գտնվում է 30 կմ դեպի արևելք, այժմյան Գորիս քաղաքի մոտ, իսկ երկու մյուսները (60 և 90 կմ դեպի արևելք)՝ Արցախումն են (Լեռնային Ղարաբաղում):

12-րդ դարի հայ պատմաբան Ստեփանոս Օրբելյանը “Սյունիքի պատմություն” իր գրքում (մ.թ. 1 – 9-րդ դարեր) նշում է, որ Սիսիան քաղաքի մոտ եղել է Քարունջ գյուղը (այժմ գոյություն ունեցող այլ գյուղերի անունների հետ մեկտեղ) [20]: Ակներև է, որ դա նույն գյուղն է (ավանը) հենց Քարահունջ Մոնումենտի մոտ: Եվ հնարավոր է, որ Քարունջի բնակչությունը մ.թ. 301 թվականից հետո տեղափոխվել է դեպի արևելք ու ապրել է վերը ասված երեք գյուղերում, պահպանելով իրենց հին գյուղի Քարահունջ անունը:

Այս բառը բաղկացած է “քար” և “հունջ” (վերջինը նշանակում է ծայն, հնչյուն արձագանք) արմատներից, “հունջ” բառի վերլուծումը՝ հ • ու • ն • ջ, տալիս է “հաճելի է այն ու բարձր” նշանակությունը (տես ՄԱՍ 2, Աղյուսակ 10):

Այսպիսով, Քարահունջ նշանակում է “Հնչող քարեր” կամ “խոսող քարեր”: Իսկապես, նրանք շատ բան են պատմել հին աստղագետներին և շատ բան ունեն պատմելու մեզ այսօր:

Հետաքրքիր նմանություն կա Քարահունջ և Ստոունհենջ բառերի միջև: “Ստոուն” անգլերեն նշանակում է “քար”, իսկ ինչ է նշանակում “հենջ”-ը հայտնի չի, անգլերենում “հենջ” բառ չկա*: Այնպես որ Ստոունհենջ-ը նույն “խոսող քարեր”-ն են, և հին ժամանակներում, հնարավոր է, այն կոչվել է Քարահունջ: Անունը կտրել է ողջ Եվրոպան և պահպանվել է հազարամյակների ընթացքում: Բայց արդյո՞ք սա պատահական համընկնում է: Ոչ, որովհետև կան բազմաթիվ այլ համընկնումներ.

* Ես համաձայն չեմ այն որոշ հեղինակների հետ (ինչպես [31]), որոնք փորձում են բացատրել “հենջ”-ը որպես “հանգ” (անգլերեն “կախաղան”):

1. Իռլանդիայում նման հուշարձան կա, որը թվարկվում է մ.թ.ա. 2500թ., կոչվում է Նյու-Գրենջ, որը նույնն է, ինչ “հենջ”-ը (հունջ-ը): Եվրոպայում շատ “հենջեր” կան [31]:

2. Հյուսիս-արևմտյան Շոթլանդիայում Արտաքին Հերիդյան կղզիներից մեկի վրա Քարահունջի նման մի Մոնումենտ կա (բայց ավելի փոքր և քարերն առանց անցքերի են), որը կոչվում է Քալենիշ (մ.թ.ա. մոտ 2000 տարի): “Քալ”-ը գրեթե միևնույն “քար” հայերեն բառն է: “Նիշ” բառը (որը նույնպես բացակայում է անգլերենում) դա հայերեն “նշան” բառն է, այսինքն “Քալենիշը” հայերեն է և նշանակում է “Քարե նշան”: Այն կղզին, ուր Քալենիշն է, կոչվում է Լյուիս (հայերեն՝ Լույս), և նրա կողքին թերակղզի կա “Հարրիս” անունով: Հայերենում Արիսը ոչ միայն կենդանակերպի (Այծեղջյուր) առաջին համաստեղությունն է, այլ նաև այն մեծ, գեղեցիկ և հպարտ խոյը (քարայծը), որը առյուծի և արծվի հետ միասին, որոնք սկսվում են “ար” տառակապակցությամբ, եղել են Հայաստանում վեհ ու շատ բարի Գլխավոր ԱՐ (Արև) Աստծո խորհրդանիշները:

3. Ֆրանսիայի հյուսիս արևելքում, Բրետանում քարե մեծ Մոնումենտ կա, թվարկվում է մ.թ.ա. մոտավորապես 2000թ., որը (իր մոտակայքում գտնվող քաղաքի հետ միասին) կոչվում է Քարնակ: Այդ բառը բրետոներենով արտասանվում է “Քարնիխ”, այսինքն Քարնակ կամ Քարնիշ, նաև “հնչող քարեր” հայերենում:

4. Եգիպտոսում նույնպես Քարնակ կոչվող վայր կա, ուր գտնվում է Ամոն-Րայի տաճարը (Արև - Աստված), որը նույնպես կոչվում է Քարենիշ:

Շատ այլ օրինակներ էլ կան: Եվ այդ Մոնումենտները ոչ միայն լեզվաբանական նմանություն ունեն իրենց անուններով, այլ նաև բազմաթիվ ուրիշ նմանություններ (տես ներքո, Գլուխ 1.34):

ԳԼՈՒՄ 1.33. ՈՒՐԻՇ ՀԻՆ ԱՍՏՂԱԴԻՏԱՐԱՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Այժմ Հայաստանի Հանրապետությունը փոքր երկիր է հարավ Կովկասյան լեռներում պատմական Մեծ Հայկական լեռնաշխարհի հյուսիսային մասում: Այնուամենայնիվ, այդ փոքր Հայաստանի ժայռերին բազմաթիվ ժայռապատկերներ կան (տես օրինակ, [52]) և հին աստղադիտարաններ՝ Սևանա լճի մոտ, Վարդենիսի սարերում (Նկ. 44) [34], Մեծամորում (Արարատյան դաշտում), Սյունիքում, Ագարակում (Արագածի ստորոտին) և այլուր:



Նկ. 44. Աստղադիտարան, փորագրված ժայռի վրա Վարդենիսի լեռներում [34, 51]:

Շատ հետաքրքիր է, որ Քարահունջի նման մի ուրիշ աստղադիտարան (բայց ավելի փոքր) կա Խնձորեսկ գյուղի մոտ, Գորիս քաղաքից 30 կմ հեռավորության վրա դեպի Ստեփանակերտ [111]:

Համոզված եմ, որ նման հին շատ աստղադիտարաններ կան Հայկական Լեռնաշխարհում (այժմ՝ Թուրքիայում): Վան քաղաքի մոտ (Վանա լճի մոտ) տարբեր բարձրության կանգնած քարեր կան: Նրանցից երկուսը, այսպես կոչված “Հարս ու Փեսան”, պատկերված են Նկ. 45 [37]: Քարահունջի տեսակի անցքերով կանգնած քարեր կան Կազան կամ Կաղզվան գյուղի մոտ (այժմ Թուրքիայում), Սեօ Արարատից դեպի արևմուտք:



Նկ. 45. “Հարս ու փեսա”: Կանգնած քարեր Վան քաղաքի մոտ [37]:

Իմ հոլանդացի ընկեր Ջ.Աալտենը ուղարկել է ինձ լուսանկարներ (Նկ. 34), որոնք կատարել է Բ.Կորբինը 1998թ.՝ կանգնած քարերի (Նկ. 34ա), որոնցից մի մասը՝ անցքերով են (Նկ. 34բ), մյուսների վրա փորագրված են հին (նախաքրիստոնեական) խաչեր ու բուրգեր (Նկ. 34գ) [38]:

ԳԼՈՒԽ 1.34. ԱՌԱՋՆԱՅԻՆ ՄՏԱԿՈՐ ԿԵՆՏՐՈՆ

Շատ գիտնականներ գրում են, որ Մեծ Բուրգերը, Ստոունհենջը, Սֆինքսը և ուրիշ մեծ հին մոնումենտներ՝ Եվրոպայում, Եգիպտոսում, Ամերիկայում և այլ վայրերում, տեղի՝ բնակիչների մշակույթը չեն եղել (այն ժամանակ նրանք զարգացման այդքան բարձր մակարդակ ու գիտելիքներ չեն ունեցել), այլ ներմուծված են դրսից, գուցե Արևելքից, Միջերկրական ծովի ավազանից: Բայց ստույգ որտեղից և իրականում ում մտահղացմամբ են կառուցվել դրանք, դեռ հայտնի չի:

Մարդկության հին պատմության մեջ շատ այլ հանելուկներ ու հարցեր կան, որոնք դեռ պատասխան չունեն: Օրինակ, ինչու՞ էին մեծ մոնումենտները կառուցվել հենց այնտեղ, ուր հիմա նրանք կան (դրա համար հարյուրավոր կմ հեռավորությունից անհրաժեշտ էր բազմաթիվ քարեր քարշ տալ 50 և ավելի տոննա կշռով յուրաքանչյուրը), ի՞նչ նպատակով էին նրանք կառուցվել, ովքե՞ր են կարողացել կառուցել դրանք այդքան մեծ ճշտությամբ, ո՞վ կարող էր ավելի քան 6000 տարի առաջ գծագրել Անտարկտիդայի քարտեզն առանց սառցակալման: Այդ մ.թ. 1513թ. արտակարգ քարտեզի կապակցությամբ Ջ.Հենքոքը (և ուրիշ գիտնականներ) մտածում են, որ շատ հին ժամանակներում, ավելի քան 6000 տարի առաջ, Երկրագնդի վրա եղել է բարձր զարգացած քաղաքակրթություն, որի տեղը հայտնի չի դեռ, և որն ուսումնասիրել է գրեթե ողջ մոլորակը ու գիտելիքներ է տվել այլ ազգերին [26]:


Մենք կարող ենք պատասխանել այդ հարցերին, որովհետև Քարահունջն ապացուցում է, որ հնագույն ժամանակներում անհրաժեշտ գիտելիքներ (մտահղանալու ու կառուցելու այդքան մեծ ու ճշգրիտ մոնումենտներ) ունեցել են միայն հայերը: Փաստեր կան, որ հին մոնումենտներից շատերը իրական կապ ունեն Քարահունջի հետ, այստեղ են մտահղացված ու ծրագրված: Թույլ տվեք ինձ ներկայացնել այդ փաստերից մի քանիսը:

Եգիպտոսի Մեծ Բուրգի մեջ (մ.թ.ա. 2450թ., $\varphi = 30^{\circ}$) ոչ ոք չի եղել թաղված: Այդուհանդերձ, նրա ներսում, փարավոնի թաղման համար նախատեսված


սենյակի միջից (շինարարության ժամանակ) մի նեղլիկ (20սմ x 25սմ) լուսանցք է արված, որն ուղղված է Օրիոնի գոտու պայծառ աստղին (նրա այն ժամանակվա կուլմինացիայի կետին): Իսկ թագուի սենյակից կա մի ուրիշ անցք, որն ուղղված է Սիրիուս աստղի կուլմինացիայի կետին (բարձրությունը՝ 39.5°) այն ժամանակ (տես Նկ. 46) [39]:

Բայց այն ժամանակ Օրիոնի համաստեղությունը կոչվում էր Հայկի համաստեղություն [21] և Մեծ Բուրգը կառուցվել է հայոց թագավոր Հայկի ժամանակ (մ.թ.ա. 2493 – 2444): Հայկի համաստեղությանը միշտ (հիմա էլ) ուղեկցել է Սիրիուսը՝ (հայերեն իմաստը՝ “Սուրբ մարդու տան սիրված էակը”), Մեծ Շան համաստեղության Ալֆա աստղը:

Հաջորդ կարևոր փաստը, թագուի սենյակից Սիրիուսին ուղղված անցքի թեքության անկյունը, որը 39.5° է, ճիշտ համընկնում է Քարահունջի տեղի լայնությանը՝ 39.5° : Դա կարող է լինել միայն 30° լայնությունում, որտեղ գտնվում է Մեծ Բուրգը:



Նկ. 46. Մեծ Բուրգը եզիպտոսում [39]



Նկ. 47. Երեք Մեծ Բուրգերը եզիպտոսում [39]

Մեծ Բուրգի և Ստոունհենջի տեղերի լայնությունները Քարահունջի տեղի լայնությունից զրեթե հավասար հեռավորության վրա են ըստ լայնության ($39.5^\circ \pm 10^\circ$):

Ինչպես պատկերել է Ռ.Բլուվելը, Գիզայի երեք Մեծ Բուրգերի դիրքը կրկնում է Օրիոնի գոտու երեք աստղերի դիրքը, տես Նկ. 47 [39]:

7500-4500 տարի առաջ Քարահունջի աստղագետները մեծ հետաքրքրություն են ցուցաբերել Հայկի (Օրիոն) և Մեծ Շան (Սիրիուսի հետ միասին) համաստեղությունների նկատմամբ, այսինքն շատ ավելի առաջ այն ժամանակից, երբ կառուցվել են բուրգերը (տես 5 և 6 աղյուսակները 1.24 և 1.25 գլուխներում), և Մեծ Բուրգը անմիջական կապ է ունեցել հայ գիտնականների այդ հետաքրքրության հետ:

Ստողունհենջը (մ.թ.ա. 2000) գտնվում է $\varphi = 51^\circ$ տեղի լայնության վրա, որտեղ (և միայն այստեղ) Արեգակի և Լուսնի ուղեծրերի ծայրահեղ օրերին նրանց ծագման և մայրամուտի 4 կետերը հորիզոնի վրա կազմում են ուղղանկյուն [30]: Բացի այդ, Արեգակի բարձրությունը Ստողունհենջում Գիշերահավասարի օրերի կեսօրին համարյա համընկնում է Քարահունջի տեղի լայնության հետ. $90^\circ - 51^\circ = 39^\circ$ (տարբերությունը մոտ $0,5^\circ$ է):

Ստողունհենջի և Քարահունջի մոտ կան ստորգետնյա գետեր: Ստողունհենջի մոտակայքում և Ջվարթնոցի կլոր տաճարի ավերակների մոտ խոր (30 մ) ջրհորներ կան: Հայաստանում, Էջմիածնի մոտ գտնվող մ.թ. 7-րդ դարի այդ քրիստոնեական տաճարի տեղում, հնարավոր է, որ ավելի վաղ մի այլ Քարահունջ է եղել:

Քալենիշը գտնվում է Լուսնի արկտիկական շրջանի վրա [30], որի տեղի լայնությունը մոտավորապես $\varphi = 55.5^\circ$: Ուրեմն, $55.5^\circ - 16^\circ = 39.5^\circ =$ Քարահունջի տեղի լայնությանը:

Այժմյան Ասուանի* մոտ գտնվող հնագույն Եգիպտական աստղադիտարանի տեղի լայնությունը $\varphi =$ մոտ 23.5° ($23.5^\circ + 16^\circ = 39.5^\circ =$ Քարահունջի տեղի լայնությանը):

Ակներև է, որ այս չորս հնագույն մոնումենտները (Ստողունհենջն ու Մեծ Բուրգը, Քալենիշն ու Ասուանը) կառուցվել են հատուկ ընտրված լայնությունների վրա և սերտ կապի մեջ են Քարահունջի հետ ($39.5^\circ \pm 10^\circ$ և $39.5^\circ \pm 16^\circ$):

Իհարկե, հուշարձանի տեղն ընտրելիս հաշվի են առնվել նաև այլ անհրաժեշտ պայմաններ. կլիման, շատ բանվորների ներկայությունը, ջրի առկայությունը և այլն:

Այս ամենը վկայում է մեզ, որ սկզբնական մտավոր կենտրոնը (ՍՄԿ) եղել է Հին Հայաստանում, ուր ծրագրվել է տարբեր մոնումենտների կառուցումը մոլորակի վրա: Նրանք իմացել են աստղագիտություն, մաթեմատիկա, Երկրի գնդաձև լինելը, նրա չափերը, քարի մշակման տեխնոլոգիան և այլն ու ունեցել են

* "Ասու-ան" հայերեն նշանակում է "խոսող մարդ":

բավարար ճշտության անհրաժեշտ գործիքներ՝ կողմնացույց*, սեքստանտ, անկյունաչափ և ուրիշներ: Իհարկե, նրանք նախապես չափել էին շատ տեղերի լայնությունները: Նրանք առաջինն էին, ով բաժանեց երկինքը 12 մասերի (Կենդանակերպի համաստեղություններ) և 360 աստիճանների ($12 \times 30 = 360^\circ$), բաժանել են օրը 24 ժամի ($12 \times 2 = 24$), ժամը՝ 60 րոպեի ($12 \times 5 = 60$ րոպե = 1 ժամ), րոպեն՝ 60 վայրկյանի ($12 \times 5 = 60$ վայրկյան = 1 րոպե), ընդ որում, 1 վայրկյանը համարյա թե հավասար է մարդկային սրտի աշխատանքի ռիթմի մի փուլին: Արդյունքում երկինքը (այսինքն Երկիրը) ժամում պտտվում է 15 անկյունային աստիճան կամ 15 անկյունային րոպե րոպեում, կամ 15 անկյունային վայրկյան վայրկյանում, հեշտ է հիշելու համար:

ՄՄԿ-ում որոշված էր առաջին հերթին կառուցել Մեծ Բուրգը $\varphi = 30^\circ$ տեղի լայնության վրա, որ Սիրիուսի բարձրության ժայռահեղ կետը կուլմինացիայի ժամանակ անպայման հավասար լինի $39,5^\circ$, որը Քարահունջի տեղի լայնությունն է: Տարբերությունը կազմում էր $39,5^\circ - 30^\circ = 9,5^\circ$: Կառուցել Ստոունհենջը լայնության նույն գծին, այսինքն $39,5^\circ + 9,5^\circ = 49^\circ$, անհնարին էր, որովհետև դժբախտաբար, այնտեղ անգլյական նեղուցն էր (ևա Մանչը): Այնպես որ նրանք որոշեցին գնալ $\varphi = 51^\circ$, որն ապահովում էր լավ պայմաններ և այլ նմանություններ Քարահունջի հետ. Գիշերահավասարի կեսօրին Արեգակի բարձրության (մոտավոր) հավասարությունը Քարահունջի տեղի լայնության հետ:

Հետաքրքիր է նաև, որ Քարնակը (լայնությունը մոտավորապես 48°) Բրետոնում (Ֆրանսիա) կառուցված է եղել (մ.թ.ա.2000) Ստոունհենջի հետ մոտավորապես միևնույն ժամանակ, ու նրանց միջև եղած միջին լայնությունը հավասար է $39,5^\circ \pm 10^\circ = 49,5^\circ$: Իսկապես, $48^\circ + 51^\circ = 99^\circ : 2 = 49,5^\circ - 10^\circ = 39,5^\circ$, այսինքն դա Քարահունջի լայնությունն է (կամ, $51^\circ - 48^\circ = 3^\circ : 2 = 1,5^\circ$; $51^\circ - 1,5^\circ = 49,5^\circ - 10^\circ = 39,5^\circ$):

Հետո Քալենիչի և Ասուանի աստղադիտարանների տեղի լայնություններն ընտրվեցին ըստ $39,5^\circ \pm 16^\circ$ տեղի լայնության: Իհարկե, այդ տեղերում նրանք առաջին հերթին կառուցեցին պարզ աստղադիտարաններ, ինչպես օրինակ, Գոսեկի մոտի շրջանակը Գերմանիայում (մ.թ.ա. 4900թ. մոտավորապես 50° լայնության վրա) [109]:

Ես կարծում եմ, որ տեղերն ընտրվում էին այս սկզբունքով, չնայած այդ վայրերում մոնումենտներ կառուցելու համար անհրաժեշտ էր տիտանական աշխատանք կատարել, քարշ տալով հսկայական քարերը դեպի Ստոունհենջը և

* "Կողմնացույց" (կոմպաս) հայերեն այդ "կոմ"-ը "կողմն" է:

Մեծ Բուրզը հարյուրավոր կիլոմետրերի հեռավորությունից:

Ինչու՞ էին նրանք որոշել կառուցել այդքան հսկա մոնումենտներ, ի՞նչ կարևոր նպատակի համար:

Ես կարծում եմ, որ Մեծ Բուրզն ու Ստոունհենջը կառուցելու գլխավոր նպատակն էր պատմել, կարևորել, հասցնել, հաղորդել հեռու ապագայի սերունդներին այն մեծ հայտնագործության մասին, որն իրենք հայտնաբերել էին և գիտեին՝ Երկրի գնդաձև լինելու մասին:

Նրանք այնքան խելացի էին, որ հասկանում էին այն, որ այդ շատ կարևոր իրենց գիտելիքները կարող են մոռացվել, քանի որ Երկրի բնակչությունը այն ժամանակ հիմնականում դեռ քաղաքակիրթ չէր, չունեին գիր, այսինքն՝ երկարատև հիշողություն չունեին: Եվ նրանք արդարացի էին: Ու.Բուլվելը և Ա.Ջիլբերտը գրում են, որ բուրզերի կառուցումից 1000 տարի հետո, արդեն դժբախտաբար, մոռացվել էր, թե ով է կառուցել դրանք և ինչ նպատակով [39]: Ջ.Հոուկինսը նույնպես գրում է, որ Ստոունհենջի իսկական պատմությունը մոռացվել է [30]:

ԳՐՈՒՆ 1.35. ՄԵԾ ՍՖԻՆՔՍԸ

Հայերը Եգիպտոսում առաջին անգամ եղել են շատ ավելի վաղ, երևի մոտ 12000 տարի առաջ ու կառուցել են Մեծ Սֆինքսը:

Ըստ իս, Սֆինքսը կառուցվել է հավերժացնելու համար մի այլ մեծ գիտական հայտնագործություն՝ Երկրի առանցքի պրեգեսիայի երևույթը, որը հաճախ անվանում են Գիշերահավասարների տիեզերական Մեծ ժամացույց:

Մեծ Սֆինքսը Առույծ է հայկական Գլխավոր Աստծո, Արի (Արևի) խորհրդանիշն է, և նա նայում է ուղիղ դեպի Արևելք, հորիզոնի այն կետին, որտեղից ամեն Գիշերահավասարի օրը ծագում է Արեգակը: Ինչու՞ է նա ուղղված հենց այդ կետին: Այդ կողմնորոշման կարիքը ո՞րն էր: Ջ.Հենքոքը կարծում է, որ Սֆինքսը կառուցվել է այն պրեգեսիոն ժամանակաշրջանում, երբ Արեգակը գտնվել է կենդանակերպի Առյուծի համաստեղությունում, այսինքն, մ.թ.ա.10970 և 8810 թվականների միջև (13000 – 10800 տարի առաջ): Նա գրում է. “Առյուծը նայում էր Առյուծին” [26]: Ես կարող եմ ավելացնել. “Նաև ծագող Արեգակին՝ տարին երկու անգամ”:

Համաձայն ժամանակակից տվյալների Մեծ Սֆինքսը կառուցվել է բուրզերից շատ ավելի վաղ (ավելի, քան 6000 տարի նրանցից առաջ), և գուցե նույնիսկ Մեծ

Ջրհեղեղից առաջ, որովհետև քարերը, որոնցից կառուցված է Սֆինքսը, ավելի շատ են էրոզիայի ենթարկված, քան բուրգերը կամ մոտակա տաճարները [26]:

Թույլ տվեք ավելացնել, որ Առյուծի հաջորդ պրեցեսիոն ժամանակաշրջանը լինելու է մ.թ. 14950-ից մինչև 17110 թվականները, այնպես որ Մեծ Սֆինքսը իրոք նայում է դեպի շատ հեռավոր ապագան:

Այն հարցին, թե “Ո՞վ է կառուցել Սֆինքսը” ժամանակակից շատ գիտնականներ պատասխանում են, որ դա արվել է Երկրագնդի մի ինչ-որ շատ հին ու մեծ քաղաքակրթության կողմից, որի տեղը առայժմ հայտնի չի:

Ջ.Հենքոքը գրում է, որ ֆրանսիացի մաթեմատիկոս Ռ.Ա.Շվայեռ դե Լյուբիչն իր “Templ de l’Home”, “Roi de la theocratic Pharaonique” գրքերում (մ.թ. 20-րդ դար) նշում է, որ Եգիպտոսում գիտությունն ու կուլտուրան շատ ավելի զարգացած ու բարդ են եղել, քան կարծում են այժմյան գիտնականները [26]: Նա գրում է նաև, որ հայտնի երկրաբան Ջոն Ա.Ուեսթը իր “The Serpent in the Sky” գրքում ասում է, որ Եգիպտական քաղաքակրթությունը, հնարավոր է, որ լոկ Նեղոսի հովտի սահմաններում զարգացման արդյունքը չէ, այլ իրենից ներկայացնում է շատ ավելի հին, ավելի մեծ, բայց մինչ օրս անհայտ քաղաքակրթության ժառանգություն, որը նախորդել է տոհմիկ փարավոնական Եգիպտոսին և այլ հայտնի քաղաքակրթություններին հազարավոր տարիներ առաջ [26]: Ու նա ասել է նաև, որ այդ մեծ քաղաքակրթությունը, հնարավոր է, նախորդել է Մեծ Ջրհեղեղին, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ Սֆինքսը այն ժամանակ արդեն գոյություն ուներ [26]: Ջ.Հենքոքը բերում է նաև ամերիկացի հայտնի երկրաբան Ռ.Շոլսի կարծիքը. “Ես իմ քայլերն ուղղում եմ մի գիտության ճանապարհով, որն ինձ հանգեցնում է այն ամփոփմանը, որ Սֆինքսը ստեղծվել է շատ ավելի առաջ, քան կարծում են [26]:

Ես ուրախ եմ, որ այսպիսի կարծիքներ կան: Կարծում եմ, որ այսպես կոչված “դեռ անհայտ մեծ քաղաքակրթությունը” կարող է լինել միայն հին հայկական քաղաքակրթությունը Հայաստանում, որովհետև այստեղ գոյություն ունի 7500 տարեկան զարգացած Քարահունջը, և այլընտրանք չկա:

ԳՐՈՒՆ 1.36. ՏԻԵԶԵՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հին Հայաստանում տիեզերագիտությունը, փիլիսոփայությունը և աստվածաբանությունը զարգացել են համատեղ: Սա հնարավոր է բացատրել,

օգտագործելով հայոց լեզուն (տես ՄԱՍ 2), հատկապես մի շարք բառերով, օրինակ.

- **Տիեզերք** բառը հայերենում նշանակում է “Մարդկային տան (տեղի) եզրեր, ծայրեր” (տես Աղյուսակ 10): Տիեզերք իմաստով կա ևս մի հայերեն բառ, որը երևի ավելի հին է: Դա “աստ” բառն է, որը նշանակում է “Կյանքի գեղեցիկ տուն (տեղ)”: Այսպիսով, տիեզերքը սերտ կապի մեջ էր կյանքի հետ, մարդկային կյանքի համար էր, մարդիկ բնության մասն էին և ապրում էին ողջ տիեզերքում: Այս հնագույն կարծիքը ցնցող է, այդպես չէ՞:

- **Աստղ** բառը նշանակում է “տիեզերքի (նյութի) սեղմվածք, խտացում”, որովհետև “աստ”-ը տիեզերքն է և “ղ”-ն տարբեր նյութերի սեղմվածք, ինչպես օրինակ, “յուղ” բառում, որը կաթի խտացումն է: Խոր փիլիսոփայություն է:

- **Աստված** բառը նշանակում է “ամենուրեք”, որովհետև “աստ”-ը տիեզերքն է, “վ”-ն կրավորական ածանց է, “ած”-ը՝ բայի անցյալ կատարյալ ժամանակը ցույց տվող ածանց է, տվյալ դեպքում տեղի, դիրքի իմաստով, ինչպես օրինակ, **դրված, սփռված, կանգնած** և շատ այլ բառերում: Այսպիսով, Աստվածը ողջ տիեզերքով սփռված էությունն է (կամ՝ ներկա է ամենուրեք), ինչը Նրա գլխավոր բնույթն է:

Այսպիսով, հին հայերի գլխավոր Աստվածությունը, գլխավոր Աստվածը ողջ տիեզերքն էր, ողջ բնությունը: Արևը (ԱՐ-ը) Գլխավոր Աստվածն էր Երկրի, կամ գուցե և ողջ Արեգակնային համակարգի:

ԳԼՈՒՆ 1.37. ԱՍՏՂԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հին Հայաստանում գիտության, լեզվի և մշակույթի բարձր զարգացածության մակարդակ լինելու մասին իմ կարծիքը եզակի չի:


20-րդ դարի գերմանացի հայտնի պատմաբան Ի.Մաունդերը, հնագետ Շվարցը [40] և բրիտանական հռչակավոր աստղագետ ու աստղագիտության պատմաբան Վ.Օլբրոքը [41] գրում են, որ առաջին մարդիկ, որոնք բաժանել են երկինքը համաստեղությունների ու անվանել են դրանք, ապրել են ոչ թե Եգիպտոսում, ոչ թե Բաբելոնում, այլ Հայկական Բարձրավանդակում (Եփրատ գետի հովտում) և Արարատ սարի շուրջը 36⁰ մինչև 41⁰ տեղի լայնություններում, և այդ պրոցեսն ավարտվել է մ.թ.ա. 3-րդ հազարամյակում: Շատ Վ.Օլբրոքի այս հետևությունները հաստատվում են նաև պատմական ու հնագիտական տվյալներով:

Ի.Մաունդերը գրում է նաև. “Եգիպտացիները, որոնց մոնումենտների վրա

հայտնաբերվել են կենդանակերպի տասներկու նշանները, խոստովանում են, որ աստղերի մասին այդ գիտելիքները նրանք փոխառել են հալդերից (այսինքն՝ հայերից, տես ստորև, Պ.Հ.), որոնք, իրենց հերթին, եղել են հույների ուսուցիչները Ֆալեսի ու Պյութագորասի ժամանակներում” [40]:

Կենդանակերպի նշանները, որոնք կիրառվում են մինչև օրս, կենդանակերպի համաստեղությունների հին հայկական հիերոգլիֆներն են, որոնք մինչև մեր օրերը պահպանվել են Հայաստանում, օրինակ, Մեծամորի Մոնումենտում (հնագույն մեծ ձուլարան-գործարան և աստղադիտարան մ.թ.ա. 5-րդ հազարամյակի Արարատյան դաշտում) [42], ժայռերի վրա հին գրերում [34, 35], հայոց Մատենադարանների հին ձեռագրերի էջերի վրա (Նկ. 70):

Որպես Երկիր մոլորակի խորհրդանիշ (մարդկանցով բնակեցված)՝ ժամանակակից աստղագիտությունը (հնուց) օգտագործում է շրջանագիծը վերևը դրված խաչով: Ռա Երկրագնդի հին հայկական նշանն է. շրջանագիծ, վրան

կանգնած մարդով , որն ավելի պարզ ու ավելի հին է, քան Նկ. 43 պատկերված պետրոգլիֆը: Նույն կառուցվածքն ունեն հռչակավոր հայկական հազարավոր խաչքարերին քանդակված զարդանկարները, որոնք ստեղծվել են նախքան քրիստոնեությունը (Նկ. 34գ) և հատկապես այն ընդունելուց հետո (Նկ. 101):

Ֆրանսիացի հռչակավոր աստղագետ և փիլիսոփա Կ.Ֆլամարիոնը [43], բրիտանացի գիտնական Ա.Բերրին [44] և այլոք նշում են, որ նախապատմական ժամանակներում Հայկական Բարձրավանդակում աստղագիտությունը բարձր մակարդակ է ունեցել:

Ամերիկացի գիտնական, Ստոունհենջի և Քալենիչի հանրահայտ հետազոտող Ջ.Ս.Հոուկինսը 1970-ականներին գրել է Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիայի պրեզիդենտ Վ.Հ.Համբարձումյանին, որ Ստոունհենջը եզակի չի ու նման աստղագիտական մշակույթի առկայությունը պետք է հայտնաբերվի Հայաստանում [4, 33]: Քարահունջը և այս գրքի ՄԱՍ 1-ը Ջ.Ս.Հոուկինսի իրավացիության վառ ապացույցն են:

Քարահունջը հանդիսանում է նաև վերը նշված կարծիքների հաստատումը հին Հայաստանի բարձր զարգացած մշակույթի և աստղագիտության մասին:



ԳԼՈՒԽ 1.38. ԱՍՏՂԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԱՅԺՄՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ասղագիտությունը Հայաստանի Հանրապետությունում զարգացած է նաև այժմ:

Բյուրականի հռչակավոր աստրոֆիզիկական աստղադիտարանում (ԲԱԱ), որը ղեկավարում էր ակադեմիկոս Վ.Հ.Համբարձումյանը, ձեռք են բերվել բարձր մակարդակի գիտական նվաճումներ, ինչպես իր, այնպես էլ պրոֆեսորներ. Բ.Մարգարյանի, Գ.Գուրգադյանի, Մ.Առաքելյանի, Լ.Միրզոյանի, Է.Խաչիկյանի, գ.թ. Հ.Բադալյանի և ուրիշների կողմից: Հետաքրքիր արդյունքներ են նվաճվել շնորհիվ պրոֆեսոր Ե.Թերզյանի հետ համագործակցությանը (Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիայի արտասահմանյան անդամ, Կոռնելի (Նյու-Յորք, ԱՄՆ) Համալսարանի աստղագիտության դեպարտամենտի տնօրեն,):

ԲԱԱ-ում հայտնաբերվել են աստղային ասոցիացիաներ (կուտակումներ), որոնցում այժմ էլ շարունակվում է նոր աստղերի ծնման պրոցեսը; նոր տիպի գալակտիկաներ ուլտրամանուշակագույն ճառագայթմամբ (Մարգարյանի գալակտիկաները); գալակտիկաների միջուկների ակտիվությունը; ստեղծվել է առաջին տիեզերական “Օրիոն” աստղադիտակը և այլն:

Հայաստանում առաջին ռադիոաստղագիտական դիտումները կատարվել են ԲԱԱ-ում 1950-ականներին գ.թ. Վ.Սանամյանի և ուրիշների կողմից:

Երևանի Պետական համալսարանի պրոֆեսորներ. Գ.Սահակյանը և Դ.Սեդրակյանը ստացել են կարևոր տեսական արդյունքներ նեյտրոնային գերխիտ աստղերի բնույթի մասին, պրոֆ. Բ.Թումանյանը հետաքրքիր գործեր է կատարել հին օրացույցների վերաբերյալ և այլն:

Երևանի Ֆիզիկայի ինստիտուտում (Երևանում և Արագած սարի վրա) ակադեմիկոս Ա.Ալիխանյանի ղեկավարությամբ ստեղծվել են նոր տիպի դիտակներ բարձր էներգիա ունեցող տիեզերական մասնիկների հետազոտման համար և շատ հետաքրքիր արդյունքներ են նվաճվել:

Ռադիոֆիզիկական գիտահետազոտական ինստիտուտը (ՌԳՀԻ) հիմնադրել է Երևանում 1968-1970թթ. և մինչ օրս ղեկավարում է ակադեմիկոս Պ.Հերունին:

Ինստիտուտի հիմնադրման հիմնական նպատակը եղել է ստեղծել Հայաստանում նոր սիստեմի բարձր էֆեկտիվ հզոր ռադիոաստղադիտակ, որը թույլ կտար համատեղել ռադիոաստղադիտակի Մեծ անտենայի հետ նաև Մեծ օպտիկական աստղադիտակ, այսինքն, ստեղծել աշխարհում առաջին հզոր

Ռադիո-Օպտիկական Աստղադիտակը (ՌՕԴ): Նշենք, որ Մեծ օպտիկական աստղադիտակի այդպիսի համատեղությունը հնարավոր չի կատարել եղած ոչ մի մեծ անտենային համակարգի հետ:

ՌՕԴ-ի ստեղծման գաղափարը, տեսությունը, նախագծումը և կառուցումը պատկանում է նրա գլխավոր տեսաբան և գլխավոր կոնստրուկտոր՝ Պ.Հերունուն:

Ի տարբերություն եղած սիստեմներից ՌՕԴ-ը շատ ավելի ճշգրիտ է, կարճալիք, շատ զգայուն:

ՌՕԴ-ը բաղկացած է անշարժ սֆերիկ գլխավոր հայելուց և շարժական փոքր հայելուց (Արտոնագիր՝ “Հերունու Հայելային Ռադիոաստղադիտակ” [47]):

ՌՕԴ – 54/2.6-ի անշարժ կիսասֆերիկ մեծ հայելին ունի 54 մ տրամագիծ և 70 միկրոն ճշտություն, փոքր հայելու տրամագիծը 5 մ է, ճշտությունը՝ 50 միկրոն, իսկ օպտիկական հայելու տրամագիծը՝ 2.6 մ է:

1960-1962թթ. նախագծվել և կառուցվել է ՌՕԴ – 54/2.6-ի գործող մոդելը՝ “Երկհայելանի անտենային համակարգ” (ԵԱՀ–5) անտենայի մեծ հայելու տրամագիծը 5 մ, փոքր հայելունը՝ 0.64 մ [45-47] միլիմետրանոց ռադիոալիքների համար [46]: Այն ժամանակ դա աշխարհում ամենամեծ անտենան էր կարճ միլիմետրանոց ալիքների տիրույթում: ԵԱՀ–5-ի միջոցով կատարվել են Արեգակի, Լուսնի և մոլորակների ռադիոճառագայթման դիտումներ [46]:

1960-ականներից մինչև 1970-ականները ՌՕԴ–54/2.6-ի և նրա բոլոր համակարգերի նախագծերը լիովին պատրաստվեցին ՌԳՀ-ում Արագած լեռան լանջին (1700մ բարձրության վրա) կառուցման համար հատուկ ընտրված տեղին համապատասխան:

1972թ. հիմնադրվեցին ՌԳՀ-ի փորձարարական “Ալիք” գործարանը Երևանում և ՌԳՀ-ի Արագածի գիտական կենտրոնը (ԱԳԿ) 100 հեկտար տարածքով Արագած լեռան լանջին: Կառուցվեցին նաև ճանապարհը դեպի ԱԳԿ 5 կմ երկարությամբ, Ամբերդ գետի ձորի միջով առաջին ջրմուղը և այլն:

ՌՕԴ–54/2.6-ի կառուցումը սկսվել է 1976թ. ՌԳՀ-ի, “Ալիք” գործարանի և ԱԳԿ-ի միացյալ կոլեկտիվի ուժերով: Շինարարական-մոնտաժային աշխատանքները ավարտվեցին 1985թ., իսկ բոլոր համակարգերի համալրումը տևեց ևս 2-3 տարի:

Մա նույնպես եզակի դեպք է աշխարհում, որ Մեծ անտենա կառուցելու հսկա և ճշգրիտ գործը կատարվել է միայն մեկ ինստիտուտի ուժերով (հարյուրավոր կազմակերպությունների փոխարեն):

ՌՕԴ–54/2.6-ի նախագծման, կառուցման և համալրման աշխատանքներում մեծ լուծա են ներդրել ՌԳՀ-ի առաջատար մասնագետներ. Մաթևոս

Խորասանջյանը, Հովահաննես Դոլբակյանը, Հենրիկ Բաղդասարյանը (տեխնոլոգիա և պատրաստում), Ռոբերտ Ադամյանը, Էդվարդ Ղազարյանը, Ալբերտ Պողոսյանը (կոնստրուկտորներ), Մառլեն Առաքելյանը, Ջորայր Աստվածատրյանը, Գեորգի Ասլանյանը (մեխանիզմներ, մոնտաժ և նրանց համալարումը), Սերգեյ Սարգսյանը, Աշոտ Ներսեսյանը, Անդրանիկ Մովսեսյանը, Սիրան Բաղայանը (ավտոմատիկ կառավարման համակարգեր), Արշակ Անտոնյանը, Յակով Թադևոսյանը (շինարարական աշխատանքներ), Վահե Օսկանյանը, Էռնեստ Բարխուդարյանը, Արա Օսկանայնը (օպտիկական աստղադիտակ), Գրիգոր Ութունջյանը, Միշա Այվազյանը, Վանիկ Հովհաննիսյանը, Բաբկեն Համայակյանը, Վարդան Հովհաննիսյանը, Լևոն Կարապետյանը (բարձր որակի վարպետներ), Նորայր Խաչատրյանը, Նորայր Յուլյանը (ռադիոընդունիչներ), Ստեփան Բարսեղյանը (ատոմային ժամացույց), Սերգեյ Շահինյանը, Ռազմիկ Գարսևանյանը, Լեոնիդ Բորիսովը (էլեկտրասնման և կապի համակարգեր) և ՌԳՀ-ի ողջ կոլեկտիվը:

ՌՕԴ-54/2.6-ի ստեղծումը էապես նպաստեց ԱԳԿ-ին հարևան Օրգով և Տեղեր գյուղերի բարգավաճմանը:

ՌՕԴ-54/2.6-ի միջոցով (նրա դեռ կիսավարտ վիճակում) երկնային ռադիոաղբյուրների առաջին դիտումները կատարվեցին դեռ 1985թ.: Երկվորյակների համաստեղության էտտա աստղի վրա (որը կարմիր հսկա աստղ է մեզանից 250 լուսատարի հեռավորության վրա) առաջին անգամ հայտնաբերվեց հզոր բռնկում մոտ 15 րոպե տևողությամբ: Այդպիսի հզոր բռնկում կարմիր հսկա տիպի աստղերի վրա դիտվել է առաջին անգամ [49]:

1986-87թթ. ընթացքում ՌՕԴ-54/2.6-ի բոլոր համակարգերի համալարման աշխատանքներն ավարտվեցին: 1987-1988-ին սկսվեցին երկնային աղբյուրների սիստեմատիկ դիտումները: ՌՕԴ-54/2.6-ի ընդհանուր տեսքը տես Նկ. 35 ա, բ, գ:

1988թ. ընթացքում կատարվեցին ՌՕԴ-54/2.6-ի բնութագրերի չափումները: Դրանցից հիմնականները ներկայացված են Աղյուսակ 7-ում: Բնութագրերի մեծ մասը և նրանց համեմատությունը աշխարհի խոշորագույն անտենաների (ռադիոաստղադիտակների) բնութագրերի հետ ներկայացված է Աղյուսակ 8-ում:

ՌՕԴ-54/2.6 մեծ անտենայի պարամետրերը գերազանցում են աշխարհի ցանկացած մեծ անտենաների պարամետրերը, հատկապես միլիմետրանոց ալիքների տիրույթում (մինչև այժմ): Դա ամենաճշգրիտ, կարճալիքային, նեղ ուղղվածությամբ, անաղմուկ, գերզգայուն և բարձր արագություններ ունեցող մեծ անտենան է աշխարհում:

Օգտագործելով այս եզակի ժամանակակից աստղագիտական գործիքը, մենք (տ.գ.թ. Արևիկ Սարգսյանի, ֆ.-մ.գ.թ. Վահե Օսկանյանի, տ.գ.թ. Վլադիմիր Պանչենկոյի, ֆ.-մ.գ.թ. Նորայր Խաչատրյանի և ուրիշների հետ) կատարեցինք սիստեմատիկ դիտումներ և հայտնաբերեցինք մի շարք նոր երկնային ռադիոաղբյուրներ, ստացանք և այլ արդյունքներ ռադիոալիքների հետևյալ երկարությունների վրա. 2 մմ, 3 մմ, 8 մմ, 3 սմ, 10 սմ, 20 սմ:

Անտենայի սեփական աղմուկների շատ ցածր մակարդակի շնորհիվ (2.8 Կելվին) ապացուցվեց, որ "ռելիկտային" ճառագայթման ֆոնը (2.7 Կելվին) տիեզերքում բացակայում է, այսպիսով ցույց տրվեց, որ արդի տիեզերագիտական տեսությունն այն մասին, որ տիեզերքը ծագել է "Մեծ Բռնկման" հետևանքով, սխալ է [48-50]:

ՌՀԳԻ-ում պատրաստվեցին նաև այլ ռադիոդիտակներ. ՌԴ-18-ը՝ 18մ տրամագիծ ունեցող պարաբոլիկ անտենայով 3 սմ-ից մինչև 1 մ ալիքային տիրույթի համար; ՌԴ-3.2-ը՝ սֆերիկ երկհայելանի 3.2մ տրամագիծ ունեցող անտենայով (ձշտությունը 7 միկրոն) գերկարձ (0.1 մմ-3 սմ) ալիքների տիրույթի համար, որը տեղադրված է Արագածին, 3200 մ բարձրության վրա և ուրիշներ:

ՌՕԴ - 54/2.6

ՌՕԴ-ի գլխավոր բնութագրերի չափումների արդյունքները

Աղյուսակ 7

N	Ալիքի երկարությունը, մմ	200	30	8	3	2	1
		(սպասվելիք)					
1.	Բնութագիրը						
1.	Ճառագայթի լայնությունը, անկյունային վայրկ.	25'	3.7'	1'	22"	14"	7"
2.	Էֆեկտիվ մակերեսը, մ ²	560	560	540	520	482	450
3.	Ուժեղացման գործակիցը, անգամ	2x10 ⁵	8x10 ⁶	10 ⁸	7x10 ⁸	1.5x10 ⁹	4.4x10 ⁹
4.	Մակերեսի օգտագործման գործակիցը	0.7	0.7	0.67	0.65	0.6	0.5
5.	Սեփական աղմուկները, Կ	5	4	2.8	3	չի չափվել	
6.	Զգայունությունը (էֆեկտիվ մակերեսը/սեփական աղմուկներ)	112	140	193	173	չի չափվել	
7.	Տեսողաշտը, քառակուսի աստիճան	2.8	(± 1 0 x 10 ճառագայթների լայնությունները)			չի չափվել	

Բնութագիր \ Անտենա	ՈՍՍ Հայաստան	Նորեման Ճապոնիա	Պիլո ղի Կլետտ Իսպանիա	Էֆելսերոգ գերմանիա	Կրեյբի ԼՄՆ	Եվկատրիա Ուկրաինա	Մեդվեժի օգյուրա Ռուսաստան	ՌԱՏՍՆ 600 Ռուսաստան
1. Լրիվ տրամագիծը, մ	54	45	30	100	305	70	64	7.4x580
2. Օգտագործվող տրամագիծը, մ	32	45	30	100	260x213	70	64	74 x 320
3. Օգտագործվող բացվածքի երկրաչափական մակերես, մ ²	804	1590	707	7854	43514	3848	3217	2368
4. Հայելիների միջին քառակուսային սխալը, մմ	<u>0.08</u>	0.2	0.13	1.2	7.5	1	1	1
5. Ամենակարճ ալիքի երկարությունը, մմ, Ամենամեծ հաճախականությունը, ՉՀց	<u>2</u> <u>150</u>	3.3 9.4	3 10	30 1	37 0.81	30 1	30 1	30 1
6. Մակերեսի օգտագործման գործակիցը (ամենակարճ ալիքի դեպքում)	<u>0.6</u>	0.4	0.4	0.4	0.5	0.4	0.4	0.4
7. Էֆեկտիվ մակերեսը, մ ² (ամենակարճ ալիքի դեպքում)	482	636	283	3142	21760	1539	1287	947
8. Էլեկտրական տրամագծի չափը /10 ³ , λ (ամենակարճ ալիքի դեպքում)	<u>16</u>	14	10	3.3	6.4	2.3	2.1	0.25x11
9. Սեփական աղմուկների ջերմաստիճանը, Կ	<u>3</u>	35	35	40	35	35	35	50
10. Զգայունությունը, մ ² /Կ (Էֆեկտ. մակերես / սեփական աղմուկ)	<u>161</u>	18	8	79	622	44	37	19
11. Ճառագայթի լայնություն, աղեղնային վրկ ² (ամենակարճ ալիքի դեպքում)	<u>14</u>	17	24	72	41x34	103	112	22x900
12. Ճառագայթի հատույթը (հորիզոնական կտրվածքում), աղեղնային վրկ ²	<u>196</u>	289	576	5184	1095	10609	12544	19800
13. Ուժեղացման գործակից/10 ⁶ (ամենակարճ ալիքի դեպքում)	<u>1514</u>	780	395	44	200	21	18	13
14. Տեսողաչտի անկյունը, աստիճան	120	120	120	120	22	150	150	150
15. Աշխարհագրական լայնություն, աստիճան	40	36	37	50	18	45	56	44
16. Երևացող աղբյուրների հակումը, աստիճան	<u>-35</u> <u>+85</u>	-24 +75	-24 +75	-10 +75	+24 +46	-30 +90	-19 +90	-30 +90
17. Տեսողաչտի անկյունը դիտվող աղբյուրի հակման ուղղությամբ, աստիճան	120	99	99	85	22	120	109	120
18. Աղբյուրի դիտման տևողությունը, ժամ	8	6.6	6.6	5.7	1.5	8	7.3	8
19. Աղբյուրին հետևելու ճշտությունը, աղեղնային վայրկյաններ	2	2	2	10	10	?	?	?
20. Համատեղված օպտիկական աստղադիտակի տրամագիծ, մ	<u>2.6</u>	-	-	-	-	-	-	-

ԳԼՈՒԽ 1.39. ՄԱՍ 1-ի ԱՄՓՈՓՈՒՄ:
ՔԱՐԱՀՈՒՆՋԸ՝ ՆԱԽԱՊԱՏՄԱԿԱՆ ՀՐԱՇՔ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Քարահուճը նախապատմական քարե Մոնումենտ է Հայաստանում, Սիսիան քաղաքի մոտ: Այն բաղկացած է հարյուրավոր կանգնած քարերից (կան նաև պառկած ու կոտրածներ), որոնցից 223-ը մենք համարակալել ենք: Դրանցից 84 քարերի մեջ բացված են ճշգրիտ պատրաստած 4-5 սմ տրամագծով անցքեր, որոնք նայում են տարբեր ուղղություններով, հիմնականում՝ իրական հորիզոնին:

Մոնումենտի միջնամասում քարերը կազմում են կենտրոնական շրջանը 35x45 մ չափերով, որից դեպի Հյուսիս և Հարավ ուղղություններով ծավում են 110-150մ երկարությամբ քարե թևերը, ինչպես նաև կարճ՝ Հյուսիս-Արևելյան քարուղին: Մոնումենտի տարածքը կազմում է մոտ 7 հեկտար:

Սկսած 1994 թվականից մենք հետազոտում ենք Քարահուճը, օգտագործելով աստղագիտական մեթոդներ և արել ենք ստորև բերվող հետևությունները:

1. Քարահուճը եղել է հայկական հնագույն Գլխավոր Ար Աստծո (Արևի) շատ հին տաճար՝ կենտրոնական շրջանը, շատ մեծ ու զարգացած աստղադիտարան՝ թևերը և մեծ համալսարան:

2. Քարահուճը բաղկացած է մոտ 80 քարե աստղագիտական գործիքներից, որոնց ճշտությունը մինչև 30" է կամ ժամանակի 2 վայրկյան Արևի ու Լուսնի դիտումների համար, և 51" կամ 3.4 ժամանակի վայրկյան՝ աստղերն ու մոլորակները դիտելու համար:

3. “Քարահուճ” անունը նշանակում է “խոսող քարեր”:

4. Կիրառելով Երկրագնդի առանցքի թեքության փոփոխությունների ու նրա պրեցեսիայի երևույթի օրենքները և օգտագործելով հին աստղագիտական գործիքներով Արևի, Լուսնի ու աստղերի ծագելու, մայր մտնելու ու կուլմինացիայի պահերի մեր դիտումների արդյունքները, ինչպես նաև հենվելով չորս անկախ աստղագիտական մեթոդների կիրառմամբ մեր հաշվարկների արդյունքներին, մենք ապացուցում ենք, որ.

– Քարահուճ աստղադիտարանը ունեցել է բարձր զարգացած գիտական մակարդակ և ակտիվ գործել է ավելի քան 7500 տարի առաջ,

– Շարունակաբար գործել է ավելի քան 5500 տարիների ընթացքում, ըստ երևույթին, մինչև մ.թ. 301 թիվը, երբ քրիստոնեությունը Մեծ Հայքում ընդունվեց որպես պետական կրոն:

5. Քարահունջը ամենահին ու ամենամեծ աստղադիտարանն է աշխարհի բոլոր հայտնի հին աստղադիտարանների միջև: Այն Ստոունհենջից հին է 3500 տարով, Մեծ Բուրգերից՝ 3000 տարով և Շումերի ու Եգիպտոսի հնագույն քաղաքակրթություններ ծագելուց 2500 տարով:

Քարահունջը հիմնադրվել է մոտ 15000 տարի առաջ, իսկ աստղագիտությունը Հայաստանում սկիզբ է առել մոտ 23000 տարի առաջ:

6. Հայաստանի քաղաքակրթությունը ամենահինն է աշխարհում:

7. Քարահունջի ժամանակներում նախապատմական հայ գիտնականները գիտեին հետևյալը.

– Երկիրը գնդաձև է ու նրա շառավիղը մոտավորապես 6300 կմ է;

– Երկիրը պտտվում է իր սեփական առանցքի շուրջը մի օրվա պարբերությամբ և Արեգակի շուրջը՝ մոտավորապես 365.25 օր պարբերությամբ; հնագույն “չարժական” օրացույցը (որը օգտագործվել է մոտ 23000 տարի առաջ) փոխարինվել է առաջին “անշարժ” օրացույցով ավելի քան 7500 տարի առաջ; Հայկական ցիկլը 1460 տարուց ճշտվել է ու դարձել 1461 տարի;

– Երկրի առանցքը էկլիպտիկայի մակերեսի նկատմամբ ուղղահայացից թեքված է մոտ 24° և այդ անկյունը շատ դանդաղորեն փոփոխվում է փոքր սահմաններում;

– Երկրի առանցքը կատարում է նաև դանդաղ կոնաձև շարժում (որը այժմ կոչվում է պրեցեսիա) 25920 տարի պարբերությամբ, որի արդյունքում ցարնան Գիշերահավասարի օրվա Արեգակի ծագման պահը տարեց տարի ավելի շուտ է գալիս՝ մոտ 50", կամ 3.3 ժամանակի վայրկյանով (այսպես կոչվող Գիշերահավասարի կանխավությունը); Արեգակը դանդաղ շարժվում է երկնքով (աստղերի նկատմամբ) 83' կամ 5.5 ժամանակի ընթացքում արագությամբ, այսինքն կենդանակերպի յուրաքանչյուր համաստեղությունում մնում է 2160 տարվա ընթացքում: Պրեցեսիան Քարահունջում հայտնագործվել է գուցե շատ ավելի վաղ, մոտ 12000 տարի առաջ (այսպես կոչվող “Տիեզերական մեծ ժամացույց”);

– Քարահունջի աստղագետները հատուկ հետաքրքրություն են ցուցաբերել Օրիոնի (նրա գլուխ) և Մեծ Շան (Սիրիուս աստղի) համաստեղությունների աստղերի նկատմամբ ու երկարամյա դիտումներ են կատարել, օգտագործելով բազմաթիվ քարե հատուկ պատրաստած գործիքներ, որոնց անցքերը ուղղված էին ասված աստղերի ծագելու, մայր մտնելու և կուլմինացիայի պահերի կետերին 7500-4500 տարի առաջ ժամանակաշրջանում; նրանք բացահայտել են նաև

Սիրիուսի ցիկլը (Սոտիսը), որը շատ մոտ է Հայկական ցիկլին (տարբերությունը տարում 12 րոպե է);

– Իմացել են Արեգակի շուրջը պտտվող 5 մոլորակների ու նրանց շարժման պարբերությունների մասին. Մերկուրին՝ մոտ 3 ամիս, Վեներան՝ մոտ 7.5 ամիս, Մարսը՝ մոտ 2 տարի, Յուպիտերը՝ մոտ 11 տարի, Սատուրնը՝ մոտ 30 տարի: Այսպիսով, Արեգակի հելիոցենտրիկ համակարգը հայտնի էր Հայաստանում ավելի քան 8000 տարի առաջ մինչև Ն.Կոպեռնիկոսը, Գ.Գալիլեյը, Ի.Կեպլերը և Ի.Նյուտոնը;

– Քարահունջն ապացուցում է, որ 7500 տարի առաջ Հայաստանում գոյություն է ունեցել զարգացած մաթեմատիկա, տեխնոլոգիաներ, գիր (այբուբեն), ինչպես նաև պետականություն (թագավորություն)՝ օրենք և կարգ ու կանոն հազարամյակների ընթացքում:

8. Մենք հասկանում ենք, որ Քարահունջի հայ գիտնականները այդքան բարձր գիտելիքների են հասել սխտեմատիկ աշխատանքի շնորհիվ շատ հազարամյակների ընթացքում: Քարահունջում մենք գտանք զարգացած աստղագիտական գործիքներ, որոնք նախագծվել և պատրաստվել են 7500 տարի առաջ, օգտագործելով նախորդ տարիների ընթացքում կուտակված բարձր գիտելիքները: Սա նշանակում է, որ նախքան այս աստղագիտական գործիքները եղել են ավելի պարզ գործիքներ: Ե՞րբ էր այդ սկիզբը:

Այս հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է հաշվի առնել այն բանը, որ հայերը, լինելով առաջին քաղաքակիրթ ժողովուրդը, որևէ մեկից գիտելիք ստանալ, մի բան սովորել չէին կարող, որովհետև չկար որևէ այլ քաղաքակրթություն: Կար միայն մի աղբյուր, դա բնությունն էր: Նրանք Արևի զավակներն էին, բնության զավակները և գիտելիքները հավաքում էին քայլ առ քայլ, սկսելով զերոյից: Իհարկե, սա շատ դանդաղ պրոցես էր, որը պահանջել էր շատ հազարամյակներ:

Հնարավոր է, որ հայոց լեզուն, մշտաբնակ կենսաձևը, գյուղատնտեսությունը, պետականությունը, այսինքն քաղաքակրթությունը, սկիզբ են առել Հայաստանում մոտավորապես 40 հազար տարի առաջ (ինչը կապացուցվի նաև ՄԱՍ 2-ում և 3-ում); երկնակամարի առաջին դիտումները և օրացույցի ստեղծումը տեղի են ունեցել մոտավորապես 23 հազար տարի առաջ; առաջին աստղադիտարանների ստեղծումը, պրեցեսիայի հայտնագործումը, նախնական այբուբենի կազմավորումը կատարվել է 15-10 հազար տարի առաջ;

9. Քարահունջի և այլ հին մոնումենտների միջև նմանության անվիճելի շատ փաստեր կան.

- Ստոունհենջն ու Քալենհիշը ունեն կենտրոնական շրջաններ, քարուղիներ դեպի Հյուսիս-Արևելք ու թևեր (Քալենհիշ), ինչպես ունի Քարահունջը;
 - Ստոունհենջն ու Մեծ Բուրգը կառուցված են Քարահունջի լայնության (39.5°) նկատմամբ մոտավորապես $\pm 10^{\circ}$ լայնությունների վրա;
 - Քալենհիշն ու հին Եգիպտական Ռա (Ար) Աստծո տաճարն ու հնագույն աստղադիտարանը (այժմյան Ասուանի մոտ) կառուցված են Քարահունջի լայնության նկատմամբ $\pm 16^{\circ}$ լայնությունների վրա;
 - Մեծ Բուրգի ներսում գտնվող նեղ անցքը (որը պատրաստվել է կառուցման ընթացքում և ունի մոտ 60 մ երկարություն) գնում է թագավորի թաղման սրահից դեպի Բուրգի հարավային կողմը և ուղղված է դեպի Օրիոնի գոտու պայծառ աստղը, նրա այն ժամանակվա, մոտ 4500 տարի առաջ, կուլմինացիայի պահի կետին: Իսկ Օրիոնը այն ժամանակ կոչվում էր Հայկի համաստեղություն (Հռչակավոր հայոց թագավոր Հայկի անունով, մոտավորապես մ.թ.ա. 2493-2444 թթ.):
 - Մի ուրիշ, նույն տեսակի անցք գնում է թագուհու թաղման սրահից և ուղղված է Սիրիուսին (որը Օրիոնի մոտ է) նրա կուլմինացիայի (այն ժամանակվա) պահի կետին: Այդ անցքի թեքությունը կազմում է 39.5° , ինչը ճիշտ համընկնում է Քարահունջի լայնության հետ: Սա կարող էր լինել միայն 30° լայնության վրա, ուր և կառուցված է Մեծ Բուրգը;
 - Ստոունհենջում Արեգակի բարձրության անկյունը Գիշերահավասարի օրերի կեսօրին նույնպես հավասար է մոտավորապես 39.5° , որը Քարահունջի լայնությունն է: Այս կարող էր լինել միայն 51° լայնության վրա, ուր և կառուցված է Ստոունհենջը;
 - Քալենհիշը կառուցվել է մոտավորապես 56° լայնության վրա, որը մոտավորապես Հյուսիսային բևեռային գոտին է հանդիսանում Լուսնի համար; Հին Քարնակ աստղադիտարանը Եգիպտոսում (Ասուանի մոտ) կառուցվել է մոտավորապես 23.5° լայնության վրա, որը մոտ է գտնվում Արեգակի Հյուսիսային մերձարևադարձային գոտուն:
- Այսինքն, Քալենհիշը և Քարնակը գտնվում են Քարահունջի լայնությունից $\pm 16^{\circ}$ հեռավորության վրա ըստ իրենց տեղերի լայնությունների:
- “Ստոունհենջ” բառը նույնն է, ինչ որ “Քարահունջ”-ը, որովհետև “քար”-ը և “սթուն”-ը նույն բանն են նշանակում, իսկ “հենջ”-ը, (նման բառ անգլերենում չկա), շատ նման է “հունջ”-ին: Այնպես որ “Ստոունհենջ”-ը, ինչպես և “Քարահունջ”-ը նշանակում է նույն “Խոսող (ինչող) քարեր”:

- “Քալենիչ” բառը շատ նման է, ինչպես և “Քարահունջ”-ը հայերեն “Քարենիչ” բառին, ուր պահպանված են “քար” և “նիչ” արմատները: Այսինքն Քալենիչ նշանակում է “քարե նշան”: Կղզին, ուր կառուցված է Քալենիչը, կոչվում է “Լուլիս”, այսինքն հայերենով՝ “լուլիս”:

- Քարնակր Բրետանում (Ֆրանսիա), որի անունը հին բրետոներենով գրվել է “Քարնիխ” կամ “Քարնիչ” հայերեն, նույն “Քարե նշանն” է: Նույնը վերաբերվում է Եգիպտական Քարնակին:

10. Կերը հիշատակված այս փաստերը (կան նաև այլք) խոսում են այն մասին, որ Քարահունջի և այլ մոնումենտների միջև գոյություն ունեցող նմանությունները պատահական չեն, ինչը նշանակում է, որ գրեթե բոլոր հին մոնումենտները ծրագրվել են Հայաստանում գտնվող միևնույն “Սկզբնային ուղեղային կենտրոնում”: Ի՞նչ նպատակով:

Եղել է երկու գլխավոր նպատակ.

- Առաջինը եղել է հավերժացնել մեծ գիտական հայտնագործությունները: Մեծ Աֆինքսը կառուցվել է (մոտ 12000 տարի առաջ) ի փառս արեցեսիայի երևութի հայտնագործության, Մեծ Բուրգը և Ստոունհենջը, ինչպես նաև Քալենիչն ու Ասուանը, կառուցվել են ի փառս Երկրի գնդածև լինելու հայտնագործության:

- Երկրորդ նպատակը հայկական քաղաքակրթության մեծ ու վեհ դերն էր. քաղաքակրթել այլ ցեղերին ու ազգերին: Հայերը երբեք ագրեսիվ չեն եղել: Նրանք եղել են բարի և առատածեռն ու անշահախնդրորեն գիտելիքներ են շնորհել, ինչպես իրենց գլխավոր Աստված Արը շնորհում է կյանքը:

11. Գոյություն ունեն բազմաթիվ ազգերի միանման լեգենդներ (շումերական, եգիպտական, հունական, Կենտրոնական Ամերիկայի բոլոր ազգերի), որոնք պատմում են, որ շատ հին ժամանակներում իրենց երկիր եկել են ձերմակամորթ մոռուքավոր բարի աստվածներ և սովորեցրել են իրենց լինել բարի, չկատարել մարդկային զոհաբերություններ: Նրանք գիտեին ամեն ինչ և սովորեցնում էին իրենց իմացածը: Շումերների մոտ եկած աստվածների առաջնորդի անունը Օվաննես էր, որը տղամարդու հայկական Հովհաննես անունն է: Հայաստանը գիտելիքներ է տվել Շումերին, Եգիպտոսին, Բաբելոնին, Կրետեին, Միկենին, Դելփին, Հունաստանին, Իրանին, Հնդկաստանին և այլն (տես ՄԱՍ 3):

12. Քարահունջի իմ այս ուսումնասիրությունը առաջինն է և իհարկե, այն պետք է շարունակվի: Ես համոզված եմ, որ Քարահունջը շատ հետաքրքիր ու բարդ օբյեկտ է ու պետք է որ այստեղ նորանոր արդյունքներ նվաճվեն բազում այլ մասնագետների, ասղագետների, երկրաբանների, պատմաբանների և հնագետների կողմից:

13. Քարահունջը պատկանում է ողջ մարդկությանը որպես վկայություն շատ հին ժամանակներից եկող նրա բարձր գիտելիքների մասին:

P.S. Հայաստանի Հանրապետության Կառավարության 2004թ. հուլիսի 29 №1095 որոշման համաձայն Հայաստանի Սիսիան քաղաքի մոտ գտնվող հնագույն քարե Մոնումենտն անվանվել է “Քարահունջ աստղադիտարան”:

2004թ. օգոստոսի 11-ին այդ որոշումը վավերացվել է ՀՀ նախագահ՝ Ռ.Քոչարյանի կողմից:

ՄԱՍ 2

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

“Նժույզ՝ նա ուժեղ է և գեղեցիկ”

Լիովին հայտնի չի, թե լեզվի մեջ ինչքան տեղեկություն է պահպանված հին ժամանակների մասին: Դա ճիշտ է, հատկապես հայոց լեզվի վերաբերյալ, որը շատ հին է և առաջին լեզուն է՝ “աստվածների” լեզուն: Այնպես որ, հայոց լեզվի վերլուծությունը կարող է տալ հրաշալի ու անսպասելի արդյունքներ, որոնք ես Ձեզ համար կբացահայտեմ այս Մաս 2-ում:

ԳԼՈՒՆ 2.1. ՀԱՏ ՀԻՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

Պեղումների ժամանակ Հայաստանում (այժմյան և պատմական հողերում) հայտնաբերվել են վաղ պալեոլիտի մշակույթի հետքեր (500/300-50 հազարամյակ առաջ), շատ բնակատեղեր և քարանձավներ օջախներով, քարե գործիքներով և կավե ամանեղենով [37, 73, 98]: Հայաստանում պալեոլիտի դարաշրջանում ապրող մարդիկ՝ ազոխեցիները և կրոմանյոնցիները, եղել են հայերի նախնիները (տես ՄԱՍ 3):

Հայ ազգը սկսել է ձևավորվել մոտավորապես 50-40 հազարամյակ առաջ, երբ Հայաստանում արդեն գոյացել էր հոմո սապիենս (մտածող մարդ) տեսակը: Հայոց լեզվի սկիզբը նույն տարիքն ունի:

Եթե Դուք կարծում եք, որ հոմո սապիենսը խոսել չգիտեր, ապա սխալվում եք: Նրանք խելոք են եղել և զգացմունքային, ինչպես և մենք: Եվ ես համոզված եմ, որ արդեն մի քանի սերունդ հետո նրանք ունեին բավարար լեզու, ի տարբերություն կենդանիների, որոնք կարող են արտաբերել միայն առանձին ձայներ:

Եկեք պատկերացնենք առաջին մարդուն նրա բանականության արթնանալու արշալույսին: Նա տեսնում էր և զգում իր շրջակա ողջ բնությունը. Արևը, Լուսինը, աստղերը, ծիածանը, սարերը, ջուրը, օդը, և այլն: Նա ուզում էր կիրառել իր

կարողությունները, հաղորդել իր ընկերներին իր զգացմունքները: Նա Բնության մի մասնիկն էր, զգում էր նրա բոլոր դրական և բացասական ուժերը: Հիմնական ստեղծագործ և արարիչ ուժի աղբյուրը Արևն էր, որը տալիս էր լույս, ջերմություն և կյանք: Նա սիրում էր Արևը, հարգում Նրան և ապա պաշտում Նրան: Արևը նրա բարի Աստվածն էր, և նա ինքը Նրա արիացի զավակն էր (Արիացի նշանակում է “Արևոտ տեղերից”, “Արևի ժողովուրդ”):

Առաջին հայերը տարբերում էին Բնության հիմնական չորս տարերքները: Տարերքները նրանք անվանել էին ամենապարզ բառերով: Եվ այդ բառերը պահպանվել են ժամանակակից հայերենում գրեթե առանց փոփոխությունների.

	Բնության չորս տարերքները			
<i>հին հայերեն</i>	(h) օղ	(h) օղ	(h) օվ	(h) ուր, (h) ար, Ար
<i>արդի հայերեն</i>	հող (երկիր)	օղ (երկինք)	ջուր (հով, ծով, օվկիանոս)	հուր (արև, կրակ)

Հետագայում պատկերացումները այդ չորս տարերքների մասին հաղորդվել են այլ երկրներ ու ժողովուրդների:

Հայոց լեզուն արագորեն զարգանում էր և իհարկե, ամենասկզբից այնտեղ եղել են կարևոր շատ բառեր, որոնք սկսվում էին “ար”-ով. Ար (Արև), արմատ, արյուն այր, արդար, արտ, արոր, առագաստ, արարիչ, արահետ, արգանդ, արվեստ, արագիլ, արի, արիացի (արևի երկրում ծնված) և այլն:

Նույնիսկ հնագույն ժամանակներում հայոց լեզուն հարուստ էր բարդ գիտական, փիլիսոփայական և հոգևոր նշանակություն ունեցող բառերով: Լոկ երկու օրինակ. “աստղ” տիեզերական նյութի խտացում”, “Աստված” “ողջ տիեզերքով տարածված”, “ամենուրեք”:

Հայոց առաջին գրերը (պատկերներ, խորհրդանիշեր, հիերոգլիֆներ) ծագել են Հայաստանում մոտավորապես 25000 տարի առաջ և կիրառվել են բազում հազարամյակների ընթացքում: Մինչ այժմ էլ նրանք պահպանվել են հին մոնոլիթների վրա [34, 42, 51, 52, 53]:

Հայաստանի ժայռերին հարյուրավոր կիլոմետրերով շատ հին ժայռապատկերներ կան (պետրոգլիֆներ): Դրանցից մեկը ուղղահայաց գծիկ է, զագաթին մի կետ (|): Այն նշանակել է “տղամարդ”, “մարդ”, “ես”, “իմ”, “մեկ”: Այդ նշանը, որի կետը գծիկից մի քիչ բարձր է (i), պահպանվել է եվրոպական լեզուներում: Անգլերենում այն արտասանվում է “այ”: Եթե դրան ավելացնենք “h”

կիսահնչյունը, կատացվի “հայ”: Անգլերեն “I am”-ը (“ես եմ”), ինչպես և անգլերեն “who come” հայերենի Արցախի բարբառով նույնպես է հնչում. “Հու քյամե”:

Հետագայում “ մարդ, ես, մեկ” խորհրդանիշը զարգացել է ու վերածվել հետևյալ նիշերի.

՚, †, ‡, †, ‡, ա,

որոնք իրենցից ներկայացնում են աղոթող մարդիկ: Ծագեցին նաև ԱՐ-ի (Արևի Աստծո) երեք խորհրդանիշերը (անվանումները). Առյուծ, Արծիվ, Արիս (խոյ), երեքն էլ ար-ով: Այդ ժամանակներից “երեք” թիվը մեզ է հասել որպես սրբազան թիվ և “ա” նիշը դարձել է հայոց այբուբենի առաջին տառը: Ինձ թվում է, որ ի սկզբանե երկու խորհրդանիշ է եղել. Առյուծն ու Արծիվը, բայց ժամանակի ընթացքում, Մեծ Ջրհեղեղից հետո, ավելացվել է նաև Արիսը՝ խոյը, որովհետև այդ մեծ, գեղեցիկ կենդանին անշարժ կանգնում էր ժայռերի կատարին ու չէր վախենում ամպրոպից: Այդ Արիսը, խոյը հետագայում դարձավ կենդանակերպի առաջին համաստեղության անվանումը (և նիշը), իսկ նրա պարուրածն եղջյուրների տեսքը Հայաստանում վերածվեց զարդանկարի ու կյանքը, Արևը, հավերժությունը արտահայտող խորհրդանիշի (Նկ. 48 ա, բ, գ).



ա) Պարուրածն զարդանկար



բ) Կյանք, Արև, Հավերժություն



գ) Կենդանակերպի խոյի համաստեղության նշանը

Նկ. 48. Հայկական հնագույն նշաններ

Հայոց լեզուն ապացուցում է, որ հայերը Հայաստանում են ապրում և ապրել են բոլոր ժամանակներում: Դա ակնհայտ է նաև նրանից, որ Հայաստանում շատ աշխարհագրական անվանումներ, տղամարդկանց ու կանանց անուններ սկսվում են “ար”-ով, օրինակ.

աշխարհագրական անուններ. Արմենիա (Ար • մեն • իա – “արևային (արիական) ժողովրդի երկիր”), Արարատ (Ար • ար • ատ – “նախապես ստեղծված” կամ “Աստծո ապրելու տեղը”), Արագած, Արեգունի (սարեր), Արաքս, Արածանի, Արփա (գետեր), Արցախ, Արագածոտն, Արմորիկա (տարածքներ), Արաբկիր, Արմավիր, Արտաշատ (քաղաքներ) և այլն:

տղամարդկանց անուններ. Արման (Ար • ման – “Արևի մարդ”, “արիացի”), Արմեն, Արմենակ, Արշակ, Արա (Արայիկ), Արսեն, Արտաշես, Արտավազդ, Արեգ, Արթին, Արիս, Արտակ, Արշամ և այլն;

կանացի անուններ. Արև (Արևիկ), Արուս (Արուսյակ), Արաքս, Արշալույս, Արփի (Արփինե, Արփիար), Արմինե, Արմենուիի, Արեգնազ և այլն:


Համաձայն անտրոպոլոգիական տվյալների հայկական անունները (և ազգանունները) չեն փոփոխվել, համենայն դեպս, վերջին 9 հազար տարիների ընթացքում [54]:

Առաջին (Նախնական) հայկական այբուբենը, որն ուներ 19 տառ, ծագել է մոտավորապես 15-12 հազար տարի առաջ (տես ներքո):

Զարգացած այբուբենը իր 34 տառով գոյություն է ունեցել մ.թ.ա. 6-րդ հազարամյակում (Քարահունջի ժամանակ): Ղա եղել է համընդհանուր հայկական այբուբեն, որը կիրառվել է նաև Կիլիկիայում ու Փյունիկայում և այլ հայկական թագավորություններում (տես ներքո): Այդ այբուբենը հիմք է ծառայել աշխարհի բոլոր այբուբենների համար (տես ներքո, Աղյուսակներ 5, 9, 18):

Այսպիսով, հնդեվրոպական բոլոր լեզուների հիմքը սկիզբ է առել մոտ 7000 տարի առաջ: Ու դա եղել է հայոց լեզուն և հայոց այբուբենը:

Մոսկվացի լեզվաբաններ Տ.Պամկրելիձեն և Վ.Իվանովը գրում են, որ հնդեվրոպացիների և հնդեվրոպական լեզուների օրրանը գտնվել է պատմական Հայաստանում, որտեղից նրանք տարածվել են տարբեր ուղղություններով (Նկ.49) [55]:



Նկ. 49. Հնդեվրոպացիների ու նրանց լեզուների օրրանը եղել է Հայկական Լեռնաշխարհը [55]:

Նման կարծիք են հայտնում նաև եվրոպական գիտնականները (մասնավորապես հայերի ու կելտերի մասին), օրինակ Դ.Լանգը իր «Հայաստանը քաղաքակրթության օրրանն է» գրքում [56]:

ԳԼՈՒԽ 2.2. ՀԱՅՈՑ ԱՅԲՈՒԲԵՆԻ “ԶՔԱՆԱԼԸ”

Հայաստանում մ.թ. 301թ. քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունելուց անմիջապես հետո տեղի է ունեցել մեծ աղետ. բոլոր նախաքրիստոնեական տաճարները (բացի մեկից՝ Գառնու տաճարից, որը թագավորի ամառանոցն էր) և արձանները քանդվել էին ու ջարդվել, բոլոր գրքերը այրվել էին ու ոչնչացվել [22, 57, 60]: Հայկական այբուբենը, որպես հեթանոսական, արգելված էր: Մոտ մեկ դարի ընթացքում Հայաստանում օգտագործվում էին միայն հունական և սիրիական այբուբեններն ու գրքերը, չնայած այն բանին, որ Հունաստանը (նաև Սիրիան) քրիստոնեությունն ընդունել են Հայաստանից հետո ու նրանց այբուբենները փոխառված են հայկականից (մ.թ.ա. 9-րդ դարում և ավելի ուշ):

Հայկական այբուբենը վերականգնվել է մ.թ. 406թ. Մեսրոպ Մաշտոցի կողմից համաձայն Վռամշապուհ թագավորի և կաթողիկոս Սահակի որոշման: Սակայն բոլորին ասվում էր, որ դա նոր այբուբեն է Հիսուս Քրիստոսի կողմից ի վերուստ հայերին տրված, չնայած հայոց տառերը փորագրված էին ժայռերին հին ժամանակներից և հայտնի էր (ու հայտնի է), որ հայոց այբուբենը գոյություն է ունեցել Մաշտոցից առաջ (ինչպես օրինակ, այսպես կոչվող Ղանիեյան այբուբենը) [22, 58]: Դժբախտաբար, իրողության այս խեղումները շարունակվում են առ այսօր, և նույնիսկ այնպիսի հանրահայտ սովետական լեզվաբան, ինչպիսին էր Հ.Աճառյանը, գրում էր, որ հայերը մինչև քրիստոնեությունն ընդունելը գիր չեն ունեցել [59]:

Այս ամենը (հատկապես տաճարների քանդելը և բոլոր գրքերի ու հուշարձանների ոչնչացումը 301թ.-ին և ավելի ուշ), սարսափելի կործանիչ հարված է եղել (և է) հայոց հին պատմությանը, գիտությանը, մշակույթին: Եվ այդ ամենը հնարավորություն է տվել օտարերկրյա անմաքուր շատ “գիտնականներին” չարաշահելու և խեղաթյուրելու հայոց պատմությունը (տես ներքո): Այս ամենում, անկասկած, մեծ մեղք ունեն իրենք հայերը, հատկապես Մեծ Հայքի առաջին քրիստոնեական թագավոր Տրդատ III-ը և I-ին կաթողիկոս Գրիգորը. որոնք պարթև էին, (հայ չէին) որոնք հասել էին պետության, եկեղեցու և

հշխանության բարձունքին ու զրկել էին հայ ժողովրդին նրա մեծ հին պատմությունից: Բայց այդ նրանց համար անպատիժ չանցավ. ավելի ուշ (մ.թ. 338թ.) Տրդատ III-ին թունավորեցին, իսկ Գրիգորն իր կյանքն ավարտեց քարանձավներում (մ.թ. 332թ.): Այս փաստերը հիշատակվում են գրեթե բոլոր հայ հին պատմիչների կողմից:

Քրիստոնեությունը քաղաքակիրթ ժողովուրդների մեծ կրոնն է, և հայերը երբեք չեն ընդդիմացել քրիստոնեությանը, որն իր բնույթով իրոք եղել է բարի ԱՌ Աստծո (Արևի) կրոնի շարունակությունը: Նրանք այժմ էլ հպարտանում են, որ Հայաստանը առաջին քրիստոնեական պետությունն է եղել: Բայց խնդիրն այն է, որ հին Հայաստանի պատմությունը պետք է վերականգնվի:

ԳՐԱՆՈՒՄ 2.3. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ: ՀԱՅՈՑ ԳՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ*

Եթե այսօրվա Հայաստանում հարցնեք որևէ մեկին (մանուկներից մինչև պրոֆեսորները) թե ո՞վ է եղել Մաշտոցը, յուրաքանչյուրը կպատասխանի. «Նա եղել է հայոց անբուբենի գյուտարարը և ստեղծողը», որովհետև բոլոր գրքերում, դասագրքերում, հանրագիտարաններում ասվում է նույնը: Սակայն դա սխալ է: Իրականում Մեսրոպ Մաշտոցը տիտանական աշխատանք է կատարել՝ վերականգնելով հայոց գիրը: Նկար 50-ում պատկերված է Մեսրոպ Մաշտոցի արձանը Երևանում:

Քրիստոնեության ընդունումը Հայաստանում մեծագույն պատմական իրադարձություն է և իհարկե, ունեցել է խոր քաղաքական, տնտեսական և սոցիալական արձատներ ու պատճառներ:

Մ.թ. 3-րդ դարի սկզբում Հռոմի կայսր Կարակալան որոշեց Հայաստանն իրեն ենթարկել: Մ.թ. 215թ-ին նա Հայոց Թագավոր Խոսրով I Արշակունուն հրավիրեց Հռոմ, անօրինաբար բանտ նետեց նրան, (ուր նա մահացավ) և Հայաստան ուղարկեց լեգիոններ Ֆոլոկրիտի հրամանատարությամբ: Բայց լեգիոնները ջախջախվեցին: Հայոց թագավոր դարձավ Տրդատ II-ը (մ.թ. 215-255թթ.), Խոսրով I-ի որդին:

* Այս գլխում բերված նյութը գրված է եղել դեռ 1987թ. (30 էջ ռուսերեն), բայց չի տպվել: Աշխատությունը հիմնվում է սոսկ աղբյուրների վրա [22, 57, 58, 60 և այլք]: Այստեղ ներկայացված է կրճատված և խմբագրված տարբերակը:



Նկ. 50. Սուրբ Մեսրոպ Մաշտոցի արձանը (աշակերտի հետ)
Մատենադարանի մոտ, Երևան

Մի այլ վտանգ վրա հասավ Արևելքից, Իրանից, ուր մ.թ. 226թ. իշխող դինաստիայի փոփոխություն էր տեղի ունեցել: Իրանական Արշակիդների դինաստիան, որոնք հայկական Արշակունի թագավորների բարեկամն էին, կործանվել էր Սասանիդների կողմից: Իրանի պետական կրոնը փոխարինվեց զորոաստրիզմով: Իրանի թագավոր Արտաշիր Սասանիդը մ.թ. 230թ. խուժեց Հայաստան, բայց ջախջախվեց: Մ.թ. 252թ. Շապուհ I-ը հաղթանակ տարավ և Հայոց գահին նստեցրեց իր որդի Որմիզդին: Բայց մ.թ. 279թ. Հայաստանը հաղթանակ տարավ և Հայոց թագավոր դարձավ Խոսրով II Մեծը, Տրդատ II-ի տղան: Մ.թ. 298թ. Անակ Պարթևը սպանեց Խոսրով II-ին և (298-330 թթ.) թագավոր դարձավ Տրդատ III Մեծը, Խոսրով II-ի որդին:

Հայաստանին անդադար վտանգ էր սպառնում բոլոր կողմերից, այնպես որ անհրաժեշտ էր մտահոգվել անվտանգության մասին: Բացի այդ Հայաստանը ֆեոդալական երկիր էր և կենտրոնական իշխանությունն այնքան ուժեղ չէր, ինչպես ճորտատիրական երկրներում: Այնպես որ ըստ Տրդատ III-ի մ.թ. 301թ. քրիստոնեությունն ընդունելը եղավ ամենամեծ իրադարձություններից մեկը, որը պետք է պահպաներ Հայաստանը արտաքին սպառնալիքից և ապահովեր նրա անվտանգությունը: Ավելին, հայ ժողովուրդը պատրաստ էր ընդունել քրիստոնեությունը որպես իր բարի Արև-Աստծո կրոնի շարունակությունը (տես ՄԱՍ 3): Տրդատ III-ը եկեղեցուն շնորհեց մեծ իրավունքներ և հողեր (ավելի շատ, քան ունեին իշխանները), որ այն ուժեղ լինի և ի վիճակի լինի սատարել թագավորի կենտրոնական իշխանությանը:

Բայց Հայաստանում քրիստոնեությունն ընդունելու արդյունքում հայկական հին պատմությունը, մշակույթը և գիրը ուրիշ մեծ արհավիրք ապրեցին:

Մեր թվարկության 3-4-րդ դարերի հռչակավոր հայ պատմաբան Ագաթանգեղոսը, Տրդատ III թագավորի քարտուղարը, որը եղել է քրիստոնեությունն ընդունելու իրադարձությունների ականատեսը, գրում է [57, պարբերություններ 777, 778, 784, 786 և այլն] .

“Այնուհետև թագավորի ու իշխանների հետ, նախարարներով ու զորքով հանդերձ, (Գրիգորը) հավանության խորհուրդ առավ (ի նկատի ունի Աստծուց, Պ.Հ.) ընդհանուրի խաղաղության համար՝ գայթակղությունը քանդելու, կործանելու և մեջտեղից վերացնելու ու ջնջելու նպատակով, որ այլևս ոչ ոքի արգելք ու խոչնդոտ չլինի և չխանգարի վերին ազատությանը հասնելու:

Ապա թագավորը իսկույն տիրաբար հրաման տվեց, ամենքի հավանությամբ, գործը երանելի Գրիգորի ձեռքը հանձնելու, որպեսզի նախկին հայրենի , հնամենի և նախնիների ու իր կողմից Աստված անվանված չաստվածները անհիշատակ

դարձնի, մեջտեղից ջնջի: Ապա ինքն իսկ թագավորը, ամբողջ զորքով հանդերձ, Վաղարշապատ քաղաքից շարժվեց գնաց Արտաշատ քաղաքը, ավերելու այնտեղ Անահիտ* դիցուհու բազիլը և այն, որ Երագամույն կոչված տեղերում էր գտնվում: Նախ ճանապարհին հանդիպեցին քրմական գիտության դպիր, Որմզդի գրչի դիվան կոչված, երագացույց, երագահան պաշտամունքի Տիր աստծու (գիտության և գրի Աստված, Պ.Հ.) իմաստության ուսման մեխյանը և ամենից առաջ սկսեցին այն քանդել, այրել, ավերել:”

“... Գնաց հասավ Ղարանաղյաց գավառը, որպեսզի այնտեղ ևս կործանեն սուտ աստվածների բազիլը, որը Թորդան գյուղում էր, սպիտակափառ Բարշամինա անվանված աստծու մեխյանը: Նախ այն կործանեցին ու նրա արձանը փշրեցին և բոլոր գանձերը, ոսկին ու արծաթը ավարի մատնեցին...

Ղրանից հետո ելան սահմանակից Եկեղյաց գավառը... սուրբ Գրիգորը թագավորով հանդերձ, փշրեցին Անահիտ դիցուհու ոսկե արձանը, ամբողջ վայրը քանդեցին, փչացրին, ոսկին ու արծաթը ավարի տվին: Այնտեղից Գայլ գետի վրայով այն կողմ անցան ու քանդեցին Արամազդի դստեր Նանեի մեխյանը Թիլ ավանում: Երկու մեխյանների գանձերը ավարելով՝ Աստծու սուրբ եկեղեցու ծառայությանը նվեր թողեցին տեղերով հանդերձ:”

Նույնը գրել են նաև մ.թ. 5-րդ դարի հայ պատմիչներ Խորենացին [22], Կորյունը [58], Բյուզանդը [60] և ուրիշները: Հայաստանի հին մշակույթը փլուզված էր, բոլոր հայերեն գրքերը ոչնչացվել էին: Հռչակավոր նախաքրիստոնեական տաճարների քանդված հիմքերին կառուցվել էին քրիստոնեական եկեղեցիներ, այդ թվում նաև կենտրոնական մայր աթոռ եկեղեցին Էջմիածնում: Հայկական այբուբենն ու գիրը ոչնչացվեցին, և այդ ժամանակվանից նույնիսկ եկեղեցիներում ազդոթք անելու համար գործածության մեջ մտան հունական ու սիրիական տառերն ու լեզուները**:

Բայց հարյուր տարի անց Հայաստանի թագավոր Վռամշապուհը (մ.թ. 389-417թ.թ.) հանգեց այն եզրակացությանը, որ պետությունը չի կարող նորմալ գործել առանց սեփական գրի: Կաթողիկոս Սահակն էլ համոզվեց այն բանում, որ ժողովուրդը չի կարող լավ հասկանալ քրիստոնեությունը, քանի եկեղեցիներում ծառայությունը կատարվում էր հունարեն և սիրիական լեզուներով: Ու նրանք որոշեցին վերականգնել հայոց գիրը (բայց բոլորին ասացին, որ այն շնորհվել է

* Այդ արձանի գլուխը պահվում է Բրիտանական թանգարանում (տես Նկ. 67):

** Քրիստոնեությունն ընդունելուց հետո Գրիգորը հրավիրեց Հայաստան 400 հույն և սիրիացի վանական, շնորհեց նրանց եպիսկոպոսների կոչում և կարգեց նրանց բոլոր հայկական եկեղեցիների ղեկավար:

հայերին ի վերուստ Հիսուս Քրիստոսի կողմից): Նրանք հանձնարարեցին Մեսրոպ Մաշտոցին, որը թագավորի անձնական թարգմանիչն էր, վերականգնել հայոց գիրը: Իհարկե նրանք գիտեին, որ հայոց այբուբենը գոյություն ուներ շատ հին ժամանակներից, և ես համոզված եմ, որ նրանք այն ունեին (դեռ նաև մի կրկնօրինակ ևս, որը Սիրիայից բերվեց եպիսկոպոս Դանիելի մոտից [22, 58, 60]): Սակայն նրանք չէին կարողանում օգտագործել այն, որովհետև չէին հիշում, թե ինչպես են հնչում տառերից շատերը: Կորյունը* գրում է [58], որ Մաշտոցը սկզբից նույնիսկ փորձում էր գրել, թարգմանել և դասավանդել հայոց լեզուն, բայց չէր կարողանում:

Ինձ համար ակներև է, որ տառերի հնչյունային արտասանությունը պարզաբանելու համար անհրաժեշտ էր գտնել գոնե մի հայկական գիրք: Բայց դժբախտաբար, նրանք բոլորն այրվել էին հարյուր տարի առաջ: Բայց, որպես բացառություն, գոնե մի գիրք կարող էր գաղտնի պահված լինել որևէ մեկի կողմից: Մաշտոցը երկու տարուց ավել փնտրում էր որևէ մի գիրք Հայաստանի տարբեր գավառներում, բայց չգտավ: Ի՞նչը չգտավ: Կորյունը չի կարողանում ասել «գիրք» բառը, որովհետև չի համարձակվում՝ այդ արգելված էր; հայկական գրքերի գոյության հնարավորությունը ինքնըստինքյան արդեն մեծ գաղտնիք էր: Կորյունն ասում է. «Մաշտոցը փնտրեց, փնտրեց շատ գրկանքներ կրեց, բայց չգտավ»: Եվ ոչ ոք այժմյան պատմաբաններից չի մտածում ու չի կարողանում հասկանալ, թե ինչ էր փնտրում Մաշտոցը ու չէր կարողանում գտնել Հայաստանում:

Ես հարցրեցի պատմաբան պրոֆեսորից Երևանում.

– Ինչո՞ւ Մաշտոցը պետք է արտասահման մեկներ, որ “հորիներ այբուբենը”: Եվ ինչո՞ւ էր նա ճանապարհորդում իր մի խումբ աշակերտների հետ: Նստեր տանը ու աներ իր գյուղը:

Պատասխանն այս է.

– Ես կբացատրեմ Ձեզ: Նա մեկնեց արտասահմանյան խոշոր քաղաքներ, ուր կային մեծ գրադարաններ՝ Էդեսա և այլուր, որտեղ ուսումնասիրեց հունական, ասորական և այլ այբուբենները ու քաղելով նրանցից լավագույն հատկանիշները, ստեղծեց հայոց այբուբենը:

Ես ասացի.

– Դա անհեթեթություն է:

– Ինչո՞ւ:

* Կորյունը Մաշտոցի աշակերտն էր:

– Որովհետև Մաշտոցը, Սահակը և շատ ուրիշներ Հայաստանում շատ լավ գիտեին այդ լեզուներն ու այբուբենները: Հայաստանում կային հունական դպրոցներ և Մաշտոցը ավարտել էր դրանցից մեկը: Կարդացե՛ք Կորյունին: Հարյուր տարի չորս հարյուր հույն և սիրիացի եպիսկոպոսներ կարդում էին իրենց գրքերը Հայաստանում իրենց լեզուներով: Այնպես որ անհրաժեշտություն չկար արտասահման գնալու (այն էլ աշակերտների խմբով), որպեսզի ուսումնասիրեն այդ այբուբենները:

– ? (լռություն)

– Ես գիտեմ, թե նա ինչու՝ գնաց արտասահման (այն էլ աշակերտների հետ):

– Ինչու՞:

– Որովհետև նա ուզում էր իմանալ, թե ինչպե՞ս են հնչում հայկական բոլոր տառերը (նրանցից յուրաքանչյուրը) ու դրա համար ուզում էր գտնել գոնե մի հայերեն գիրք: Հայաստանում նա չկարողացավ գտնել որևէ մի հայերեն գիրք, այնպես որ թագավորի և կաթողիկոսի որոշմամբ մեկնեց արտասահման աշակերտների հետ, որ հայերեն մի գիրք գտնի մեծ գրադարաններում, քանի որ այնտեղ հայկական գրքերը չէին այրվել, ինչպես այստեղ Հայաստանում: Ու նա այդպիսի գիրք գտավ Սամոսատ* քաղաքում: Ես նույնիսկ գիտեմ, թե ո՞ր գիրքն է նա գտել:

– Ո՞րը:

– Ըստ ամենայնի, Ազաթանգեղոսի “Հայոց պատմությունն” է եղել, որովհետև դա կարևոր և հռչակավոր գիրք է՝ Հայաստանում քրիստոնեությունը ընդունելու մասին: Սա է նաև պատճառը, թե ինչու՞ հայկական եկեղեցին 1700 տարիների ընթացքում պահում է այն արտագրելով մոտ հարյուր տարին մեկ անգամ և ինչու՞ է այն թարգմանվել եվրոպական շատ լեզուներով:

– Բայց կարծիք կա անգամ, իբրև թե Ազաթանգեղոսը ապրել է մ.թ. 5-րդ դարում:

– Դա սխալ կարծիք է: Ազաթանգեղոսն ապրել է մ.թ. 3-4-րդ դարերում և, ինչպես ինքն է գրում, ականատես է եղել Հայաստանում 301 թվին քրիստոնեությունն ընդունելուն: Դա կեղծ կարծիք է կեղծ “գիտնականների”, որոնք ասում են, որ մինչև Մաշտոցը հայոց այբուբենը և գիրը գոյություն չեն ունեցել: Որովհետև Ազաթանգեղոսի գիրքը փայլուն ապացույցն է այն բանի, որ հայոց այբուբենն ու գիրը Հայաստանում առնվազն հարյուր տարի գոյություն են ունեցել

* Էդեսան և Սամոսատը եղել են հայկական մայրաքաղաքներ Հայկական Միջագետքի և Կոնստանդնուպոլսի հայկական թագավորություններում (տես ՄԱՍ 3):

նախքան Մաշտոցը:

Կորյունը գրում է, որ Սամոսատում Մաշտոցն իր երազում տեսնում է հայոց տառերը փորագրված ժայռերի* վրա (Մաշտոցն ու Կորյունը գիտեին, որ տառերը փորագրված են Հայաստանում, ժայռերի վրա հինավուրց ժամանակներից): Հետո Սամոսատում նա տառերը տվեց գեղագրության մի վարպետի, որպեսզի նա թեթևակի շտկի դրանք:

Երբ Մաշտոցը վերադառնում է Հայաստան, թագավորը, կաթողիկոսն ու ժողովուրդը նրան մեծ հանդիսությամբ են դիմավորում: Ղա եղել է մ.թ. 406-ին: Հայաստանում բացվում են գրավոր լեզվի դպրոցներ, թարգմանվում են բազմաթիվ գրքեր, ներառյալ Աստվածաշունչը: Հետո 4-րդ և 5-րդ դարերում “անգրագետ” Հայաստանում, ուր “չկար” որևէ գիտնական մինչև Մաշտոցը, հանկարծակի ծագում են բազմաթիվ հայտնի ականավոր գիտնականներ (պատմիչներ, փիլիսոփաներ, մաթեմատիկոսներ): Արդյունքում ամեն ինչ լավ էր, բացի այն անախորժ փաստից, որ այն ժամանակներից մինչև այսօր ժողովուրդը կարծում է, որ Հայաստանում մինչև Մաշտոցը, որը “հորինել է” տառերը, այբուբենն ու գիր չի եղել:

Կան շատ այլ պատմական փաստեր, որոնք հաստատում են, որ հայոց այբուբենն ու գիրը գոյություն են ունեցել Մաշտոցից շատ ավելի առաջ և քրիստոնեությունն ընդունելուց առաջ: Բերում ենք դրանցից մի քանիսը.

1. Ագաթանգեղոսը [57, 12 -14 պարբերություններ], պատմում է, որ Տրդատ III թագավորի ժամանակ գրչության արվեստը տարածված էր Հայաստանում. “Արդ, հրաման է հասել ինձ՝ Ագաթանգեղոսիս... Տրդատ Մեծ արքայից (ի նկատի ունի Տրդատ III-ին, մ.թ. 298-330, Պ.Հ.) կարգով գրի առնել ժամանակի դեպքերը, պատմելով: ... Արդ, մեր այս գրված օրինակի մեջ, ոչ թե հին ավանդություններից տեղեկանալով, այս (թուրը) կարգով մատենագրել ենք, այլ մենք ինքներս ականատես ենք եղել անձնավորություններին և ներկա հոգևոր գործերին...”:

2. Կորյունը [58], Խորենացին [22] և ուրիշներ հաստատում էին, որ հայոց այբուբենը գոյություն է ունեցել մինչև Մաշտոցը, նույնիսկ Սիրիայում, եպիսկոպոս Ղանիելի մոտ: “Ղանիելյան” այբուբենը չի պահպանվել, և տարբեր հեղինակներ բերում են այդ այբուբենի տառերի քանակության մասին տարբեր կարծիքներ.¹⁷

* Ես կարծում եմ, որ Մաշտոցը ուներ իր մոտ հայոց այբուբենը, բերված Հայաստանից (“Ղանիելյան” կոչվող այբուբենի պատճենի հետ միասին), ինչպես նաև հայոց տառերը փորագրված Հայաստանի ժայռերի վրա մոտավորապես մ.թ.ա. 3-րդ հազարամյակից, որոնք ներկայացված են հաջորդ 2.4. Գլխում (Աղյուսակ 9):

19, 22, 24 և 29 տառ:

3. Պատմիչ Վարդանը գրել է, որ հայերի այբուբենը ունեցել է 22 տառ դեռ շատ հին ժամանակներում [59, էջ 50]:

4. Ֆիլոսոփատը (մ.թ. 175-249) կայսր Կարակալայի պատմիչը իր “Ապոլոնի Ղիանան” գրքում պատմում է, որ Հայկական Տավրոսում մի մեծ հովազ են բռնել ոսկե օղակապը վզին, որի վրա հայերենով գրված է եղել. “Հայոց թագավոր Արշակից (մ.թ.ա. 127-114, Պ.Հ.) Ղիոնիս Աստծուն” [61, 70]:

5. Հայ պատմաբան Ինչիկյանը [70, էջ 239-240] գրում է, որ մ.թ. 1788թ. ինքը Ստամբուլում (սուլթան Համիդ I-ի օրոք) տեսել է Անգլիայի դեսպան Ինգրլի հավաքածուն, որը պարունակում էր Փոքր Ասիայում հավաքած հարյուր հազար հին մետաղադրամներ և գտել է դրանց մեջ Ռուբինյանների (Հայկական Կիլիկիայի թագավորական դինաստիա) 12 տեսակի մետաղադրամներ հայերեն հստակ տառերով. կ, ճ, պ, տ և այլն:

Ինչիկյանը գրում է նաև [70, էջ 75], որ նույն այդ Ինգրլի հայտնի հավաքածուում նա տեսել է Հայոց թագավոր Պարթև Արշակունու (մ.թ.113-114, Պ.Հ.) հարյուրավոր մետաղադրամներ: Դրամների մի երեսին պատկերված է կրակով սեղան, մյուս կողմում՝ թագավորի դիմանկարը և դրամի արտաքին եզրով գրված են հայերեն բառեր հստակ հ, տ, պ, կ, ճ և այլ տառերով:

6. Հայ լեզվաբան, պատմաբան և երաժշտագետ Մինաս Բժշկյանը (1777-1851) հայկական եկեղեցիներից մեկում, որը գտնվում է Օդեսա քաղաքի հարավային մասում (Օդեսան հիմնել են հայերը Սև ծովի ափին, գալով Էդեսիայի Հայկական թագավորությունից) գտել է մ.թ.ա. 7-րդ դարի մի հայատառ գիրք [71]:

7. Հայտնի է, որ հիքսոսները (որոնք հայեր էին) մ.թ.ա. 17-րդ դարում այբուբեն են ունեցել (որի տառերը գրեթե լիովին համընկնում են հայկականների հետ):

8. Հայկական Միջագետքի թագավոր Աբգար V Երվանդունին (մ.թ. 12-50թ.) նամակ է ուղարկել Հիսուս Քրիստոսին Պաղեստին (Իսրայել), հրավիրելով նրան գալ ու ապրել իր մայրաքաղաք Էդեսայում և ստացել է Նրա պատասխանը (տես ՄԱՍ 3): Կարծիք կա, որ այդ նամակները այսպես կոչված արամեերեն լեզվով էին: Բայց դա սխալ է: Նամակները հայերեն էին ու հայատառ, որովհետև (տես հաջորդ կետը):

9. Գլուխ 2.15-ում ես ցույց եմ տալիս, որ այսպես կոչված արամեերեն (կամ արամեերեն) լեզուն և այբուբենը իրականում հայկականն են և հայոց թագավոր Արտաշես I-ը (մ.թ.ա.189-160թ.) Հայաստանի իր հողաբաժան քարերի արձանագրությունները գրել է հայոց լեզվով, հայերեն տառերով Մաշտոցից

մոտավորապես 600 տարի առաջ (բայց ոչ այսպես կոչված արամեերենով, ինչպես շարադրում է սխալ կարծիքը): Այսպիսով, այսպես կոչված արամեերեն (սեմիտական) լեզուն և այբուբենը երբեք գոյություն չի ունեցել և բոլոր “Արամեական” արձանագրությունները (իսկ նրանցից շատ կան) հայերեն են, գրված են հայերեն տառերով (տես Գլուխ 2.15):

Հայաստանում Արշակիդ-Արշակունիների պարթև-հայկական դինաստիայի օրոք (մ.թ. 62-428թ.թ.) Հայաստանը կորցրեց ոչ միայն իր հին պատմությունը, այլ նաև իր անկախությունը (մ.թ. 428թ.), երբ Մեծ Հայքը բաժանվեց Պարթիայի և Բյուզանդիայի միջև (Մաշտոցի “այբուբենը հնարելուց” ընդամենը 22 տարի հետո և այդ 5-րդ դարը այժմ անվանում են ոսկեդար, Պ.Հ.):

Մեծ Հայքի անկախությունը վերականգնվեց մ.թ. 885թ. Աշոտ I Բագրատունի թագավորի կողմից (մ.թ. 885-890):

ԳԼՈՒԽ 2.4. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՅԲՈՒԲԵՆԸ ՈՒ ԼԵԶՈՒՆ

Այժմյան հայոց այբուբենը մ.թ. 406 թվականի Մաշտոցի նույն այբուբենն է և ունի 36 տառ, գումարած երեք ավելի ուշ լրացուցիչ (և, օ, ֆ) տառերը, որոնք դրված են այբուբենի վերջում, այնպես որ ընդամենը 39 տառ է:

Վերլուծությունը ցույց է տալիս (տես ներքո), որ “օ” տառը հայկական հին այբուբենում եղել է, բայց Մաշտոցն այն վերացրել է, գուցե որպես “(հեթանոսական) ոգի” նշանակությունն ունենալու պատճառով և փոխարինել է այն “ո” տառով: Նա նաև տեղափոխել է “ր” տառը երկրորդ տեղից, որը այն գրավում էր հին այբուբենում որպես “ԱՐ” (Արև) բառի կարևոր մասը, իր այբուբենի վերջից հինգերորդ տեղը:

Աղյուսակ 9-ում բերված են ժամանակակից հայոց այբուբենը (տառադարձություններով [62, 63]) և ժայռերի վրա փորագրված հայկական տառերը, որոնց հնությունը հազարամյակներով է չափվում [51, 52], ինչպես նաև փյունիկյան՝ մ.թ.ա. 13-9-րդ դարեր [64] և այսպես կոչվող “արամեական”՝ մ.թ.ա. 10-րդ դար [59] այբուբենները: Կարող ենք տեսնել, որ բոլոր տառերը նույնն են

կամ ունեն գրեթե նույն կառուցվածքը*:

Հայոց այբուբենը հարուստ է (ունի 39 տառ), հարուստ է նաև նրա հնչյունային կազմը (այնպես որ կարող է օգտագործվել որպես միջազգային հնչյունային տառադարձություն՝ տրանսկրիպցիա):

Ժամանակակից հայոց լեզուն զարգացել է շատ հազարամյակների ընթացքում (այն սկիզբ է առել ավելի քան 40 հազար տարի առաջ) և հարուստ է: Այն պարունակում է ավելի քան 10 հազար բուն արմատներ, 150 հազար բառ և ունի մոտ 60 բարբառ: “Ար”- ով սկսվող բառերը կազմում են լեզվի բոլոր բառերի մի մեծ մասը՝ մոտ 3%-ը [77], այսպիսով “ար”-ը հայկական բառերի գլխավոր արմատն է:

Հարուստ է նաև հայոց քերականությունը: Օրինակ, գոյականներն ունեն յոթ հոլով, բայերը՝ 14 ժամանակ և այլն:

Որոշ բարբառներ այժմ գրեթե մոռացված են: Նույնիսկ Անատոլիայի (Փոքր Ասիայի) հայկական բնակչության որոշ բարբառներն են գրեթե մոռացվել հայերի ցեղասպանության արդյունքում, որը տեղի է ունեցել Թուրքիայում մ.թ. 19-րդ դարի վերջում և 20-րդ սկզբում: Արաբկիրի (մեծ հայկական քաղաք, այժմ՝ Թուրքիայի տարածքում) գրեթե մոռացված բարբառի մասին մի հետաքրքիր գիրք կա Մ.Ս.Զուրիկյանի հեղինակությամբ, որը լույս է ընծայվել 1993թ. Ռուսաստանում [68]: Այդ գրքում հայերեն, ռուսերեն, անգլերեն նույնանման շատ բառերի օրինակներ կան:

* Տ.գ.դ. Ս.Մարտիրոսյանը այս գրքի տեքստը հավաքելիս նկատել է, որ “Word, Microsoft” համակարգչային ծրագրում “Font name: Aramean, File name: ARAMIAN.TTF” վերնագրի տակ գտնվում է ժամանակակից հայոց այբուբենը (տես աղյուսակներ 9 և 9ա):

Աղյուսակ 9ա

Font name: Aramian, File name: ARAMIAN.TTF
ա բ գ դ ե զ է ը թ ժ ի յ խ ծ կ հ ձ ղ ճ յ ն շ
ռ չ պ ջ ռ ս վ տ ր ց ու փ ք և օ ֆ
Ա Բ Գ Դ Ե Զ Է Ը Թ Ժ Ի Լ Խ Ծ Կ Հ Գ Դ Ճ Կ Ն Շ
Ո Ծ Պ Ջ Ռ Ս Վ Տ Բ Ց Ռ Ի Փ Բ Օ Ֆ

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Ա Յ Բ Ո Ւ Բ Ե Ն Ը							
Ժամանակակից տառերը	Ժայռերի վրա փորագրված տառերը (մ.թ.ա. III հազ-ից)	Փյունիկյան տառեր (մ.թ.ա. XIII-IX դարեր)	"Արամեական" տառեր (մ.թ.ա. X դար)	Ժամանակակից տառերը	Ժայռերի վրա փորագրված տառերը (մ.թ.ա. III հազ-ից)	Փյունիկյան տառեր (մ.թ.ա. XIII-IX դարեր)	"Արամեական" տառեր (մ.թ.ա. X դար)
Ա, ա	Աա	𐤀	𐤁	Յ, յ	𐤄	𐤅	𐤆
Բ, բ	բ	𐤂	𐤃	Ն, ն	𐤆	𐤇	𐤈
Գ, գ	գ	𐤄	𐤅	Ե, շ	𐤈	𐤉	𐤊
Դ, դ	դ	—	𐤇	Ո, ո	𐐀	—	𐐁
Ե, ե	Ե	𐤅	𐤆	Չ, չ	—	—	—
Զ, զ	զ	𐤆	𐤇	Պ, պ	𐤊	𐤋	𐤌
Է, է	է Կ	Կ	հ	Զ, ջ	—	—	—
Ը, ը	—	—	—	Ռ, ռ	𐐁	—	𐐂
Թ, թ	թ	—	—	Ս, ս	𐐂	𐐃	𐐄
Ժ, ժ	ժ Ե	Կ	ց	Վ, վ	𐐄	𐐅	𐐆
Ի, ի	ի	ի	ի	Տ, տ	𐐅	𐐆	𐐇
Լ, լ	Լ Ն	Լ	Լ	Ր, ը	𐐆	𐐇	𐐈
Խ, խ	խ	—	#	Ց, զ	𐐇	𐐈	𐐉
Օ, օ	օ	—	—	Ու, ու	𐐈	—	—
Կ, կ	կ	կ	կ	Փ, փ	𐐉	𐐊	—
Հ, հ	Հ հ	հ	Հ հ	Բ, բ	𐐊	𐐋	𐐌
Ձ, ձ	Ձ	—	—	Եվ, Լ	—	—	—
Ղ, ղ	Ղ	—	Ղ	Օ, օ	𐐋	𐐌	𐐍
Ճ, ճ	Ճ	—	—	Ֆ, ֆ	𐐌	𐐍	—
Մ, մ	Մ	Մ	Մ	39	35	25	28

ՉԼՈՒՆ 2.5. ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԿԵՐԱԿՆՈՒԹՅՈՒՆ: ՄԵԹՈԴ № 1

Հայոց լեզուն իր զարգացման նախնական շրջանում, այսինքն բազում հազարամյակների ընթացքում եղել է միակը: Շուրջ բոլորը այլ լեզուներ չկային, որ հնարավոր լինեին նրանցից բառեր փոխ առնել: Այնպես որ նոր բառերը ստեղծվում էին արդեն գոյություն ունեցող, մատչելի և արդեն օգտագործության մեջ եղածների հիման վրա, որոնք առավել պարզ հնչողություն ունեին ու պարզ հասկացություններ էին արտահայտում: Այսպիսով, լեզվի զարգացումը ընթանում էր համաձայն հայտնի “պարզից դեպի բարդը” օրենքով: Զարգացումն ընթանում էր հաջորդականորեն, բառ առ բառ:

Եթե այս բոլորը ճիշտ է, ապա մենք կարող ենք թափանցել անցյալը և ստուգաբանել այժմյան բազմաթիվ բառերի բաղկացուցիչ մասերի և նույնիսկ յուրաքանչյուր տառի, այսինքն խոր հնությունից եկող առաջին պարզ հնչյունների իմաստն ու նշանակությունը: Ես փորձեցի այդ անել, և արդյունքը գերազանց եղավ:

Հայոց տառերի նշանակության, իմաստի պարզաբանման հիմնական մեթոդն է՝ ընտրել որոշ քանակությամբ առավելապես կարճ (այսինքն հին) բառեր, որոնք պարունակում են տվյալ տառը և գտնել այդ բառերի մեջ գոյություն ունեցող նմանությունը, այսինքն, տվյալ տառի նշանակությունը:

Թույլ տվեք այստեղ բերել այդ մեթոդի կիրառման մի օրինակ “ծ” տառի համար: Ընտրենք այդ տառը պարունակող բառերի խումբ.

- | | | |
|---------|---------|-------------|
| 1. ծի | 6. ձեռք | 11. ձագար |
| 2. ծու | 7. ծոր | 12. տանձ |
| 3. ձայն | 8. օձ | 13. ընծուղտ |
| 4. ծող | 9. ձգել | 14. սանձ |
| 5. ծուկ | 10. ձոն | 15. բարձր |

Ի՞նչ ընդհանուր, հիմնական որակ կամ իմաստ (նմանություն) ունեն այս բառերը: Ինչու՞մն է նրանց գլխավոր նմանությունը:

Դուք կարող եք նկատել, որ այդ բառերի հիմնական նմանությունը դա “երկար, երկարուկն” է, այսինքն՝ երկարավուն, երկար տեսակի, ձգված տեսք, ձև ունեցող: Իրոք, օրինակ, ձին երկարավուն կենդանի է, ունի երկարուկ դունչ, երկար վիզ, մարմին, երկար պոչ, ոտքեր և այլն: Այնպես որ “ծ”-ի նշանակությունն է “երկար, երկար տեսակի”: Հիմա կարող ենք հասկանալ նաև, որ ընծուղտը

նշանակում է “երկարավիզ ուղտ”:

Այսպես շարունակելով կարելի է հայտնաբերել յուրաքանչյուր տառի նշանակությունը: Այն փաստը, որ բոլոր տառերը իմաստ ունեն, գալիս է մեզ ասելու, որ հայոց լեզուն շատ հին է և զարգացել է աստիճանաբար պարզ տարրերից (հնչյուններից) մինչև ավելի ու ավելի բարդ բառերը:

Երկու կամ երեք տառերից բաղկացած կոմբինացիաները նույնպես նոր իմաստ են ծեռք բերում, որը կարելի է որոշել օգտագործելով նույն մեթոդը: Օրինակ, “ակ” բառի նշանակությունն է. “ակունք, աչք, շրջան, ցիկլ, անցք”: “Ատ”-ի նշանակությունն է. “կտրել, անջատել”, “ամ”-ի նշանակությունն է. “ուտել, մանուկ”, այսինքն, “ատամ” բառի նշանակությունն է. “կտրել ուտելու համար”: “լիզ”-ի նշանակությունն է. “մաքուր ջուր, աղբյուր”:

ՉՈՒՆ 2.6. ՏԱՐՐԵՐԻ (ՏԱՌԵՐԻ) ԲԱՌԱՐԱՆ (SSP)

Բոլոր հայկական տառերի և երկու, երեք տառերից բաղկացած տառակապակցությունների գտնված նշանակությունները ներկայացված են Աղյուսակ 10-ում՝ Տարրերի (տառերի) բառարանում (SSP): Սա SSP-ի ստեղծման առաջին փորձն է, և ապագայում, իհարկե, այն կարող է ճշգրտվել և լրացվել:

“Տարր” և “տառ” բառերը մեր լեզվում շատ նման են, այնպես որ Աղյուսակ 10-ը կարելի է անվանել “Տարրերի բառարան (SP)”:

SP-ն իր մեջ պարունակում է հայոց այբուբենի բոլոր 39 տառերը, նաև 86 երկտառանի կապակցություն և 37 եռատառ տառակապակցություն; ընդամենը՝ 162-ն են:

SP-ն զարմանալի է, եզակի ու մոգական: Այն թույլ է տալիս հասկանալ, բացատրել ու պարզաբանել շատ ու շատ բառերի ու անունների ստուգաբանությունը: Օրինակ, ատամ = ատ • ամ = “կտրել ուտելու համար”, Արամ = Ար • ամ = Արևի որդի:

SP-ն ու նրա կիրառումն ապացուցում են, որ հայոց լեզուն շատ հին է, զարգացել է անկախ և օտար լեզուները հայերենից շատ բառեր են փոխառել: Անկասկած, SP-ն կիրառելի է նախ և առաջ հին հայկական բառերի նկատմամբ (որոնք ժամանակակից հայերենի գերակշռող մասն են կազմում) և հարմար չի նորաստեղծ երկար ու ավելի ուշ ժամանակներում օտար լեզուներից փոխառած բառերի համար (սկսած մ.թ.ա. 1-ին հազարամյակից):

Տ Ա Ր Ր Ե Ր Ի (Տ Ա Ռ Ե Ր Ի) Բ Ա Ռ Ա Ր Ա Ն (Տ Տ Բ)

Տառեր	Նշանակությունը	Տառեր	Նշանակությունը
ա	կյանք, հավերժ, տաք, առաջին, մարդ	մ	մարդ, մեծ, մուտք, մեջ, իմ, ինձ, մեկ
բ	բերք, բարիք, բերել, բարձր, բարի, երկու	յ	ես, մարդ, յուր, քո
գ	գեղեցիկ, գերազանց, գլուխ, ավել, մաս, խելացի; նշան՝ ⊕	ն	նա, այն, բան, ներքև
դ	դեպի, դու, ուղիղ, դիմաց, ձգտել; նշան՝ ⊖	շ	շատ
ե	ես, մենք, արի, լինել, ելք, գետ, հաջորդ, էություն	ը	հոգի, ոգի, սուրբ, օր, որդ
զ	սկիզբ, առաջ, դեմք, վեր, գենիթ	չ	փոքր, թույլ, վատ, չէ, ոչ
է	էակ, կա, է	պ	կլոր, շրջապատում, պտույտ, բոլոր, պարույր, տարածք, պատրաստ, ընտրված
ը	ընկեր, միասին, հետ, բարեկամ	ի	հաճելի
թ	ունակ, կարող, համար, պես, թույլ; նշան՝ ⊙	ռ	հանգիստ, դանդաղ, մեծ
ժ	ուժ, ուժեղ, բռնցք, սպառնալ	ս	մոտիկ, սեր, սիրել, զավակ, իմը, սիրուն, այս, սա, սիրտ
ի	մարդ, իսան, մարմին, ինձ, իմ, ինքը, իր, բան	վ	դեպի, մեջ, վրա, որպես
լ	լավ, լայն, մեծ, արագ, ճիշտ, լրիվ, լույս; նշան՝ ⊕	տ	հիմք, տեղ, վայր, տուն, բուն, փակ, ավարտված
խ	վիճակ, գեղեցիկ, բարձր աստիճան	ր	անել, տալ, տեր, կրել, զույգ
ծ	ծիլ, ծայր, ազատ, ծագել, աճել, վեր	ց	մինչև, հաջորդ
կ	մաս, կտոր, կես, փոքր, զույգի մեկը, թայր, կեր, կայուն, կանգնած	ու	ունենալ, ունի, տվյալ, ու, ույ
հ	հարել, դեպի, պաշտել, բարձր, նման	փ	համարյա, մի քիչ, փուչ, վատ, փիս, հավասար
ծ	երկար, երկարուկ; նշան՝ ⊗	ք	ամուր, հերոս, քաջ, տաք, ապահով, հուսալի, կարողություն, կայուն; նշան՝ ⊗
դ	կենտրոն, խտացվածք, կորիզ	և	(տես <u>եվ</u>)
ճ	ավելի, առավել, անշարժ, լիքը	օ	կլոր, կետ, ոչինչ, գերո (նաև տես <u>ը</u>)
		ֆ	ետև, ֆոն, թիկունք, ծածկված, բովանդակություն

Տառեր	Նշանակությունը	Տառեր	Նշանակությունը
ազ	առաջին, ազատ, ազգ	եվ	գումար ⊕, եղավ
աժ	ցածր	եստ	տուն գալ, հետք
ալ	կարմիր, պայծառ, փայլ, ողջ, ամբողջ, տաք	էջ	կին, գեղեցիկ
ախ	վիշտ, դարդ	ըն	միացում
ած	արված, վիճակ	ժա	բարձր
ակ	սկիզբ, ակունք, աղբյուր, աչք, կլոր, անցք, անիվ, հոսել, գործել	իա	իա, յան, երկիր
ահ	վախ, վտանգ, հրեշ, մահ, վատ	իգ	(տես էգ)
աղ	խտացված, գտած, սեղմված, կորիզ, մաքուր	իզ	հետք, ուղի, պարզ
ամ	ուտել, երեխա, փոքր, տարի, ամամ, ուտելիք	ին	մարդ, ինքը
այ	ես	իս	ես, մարդ, իսան, իմ
ան	որևէ առարկա, յան, կողմ, ուղղություն, բան, այն, նա	իվ	քայլել, գնալ
ապ	թռնել, գնալ, հասնել	իտ	միտք, մտածող
աջ	լավ	իր	իրավատեր
առ	աճել, երկարել	լա	փոքր
աս	այս, սա, ես, խոսել, առաջնային	լե	ցածր, տափակ, իջնել
ավ	լավ, մեծ, տեր	լի	ջուր (կանգնած), լցնել
ատ	կտրել, կտոր, մաս, հատ, հատիկ, ատոմ	լս	լսել
ար	Ար, արև, պայծառ, ապրել, աշխարհ, բախտ, արարիչ	լվ	լվալ, ջրել
աց	հաց, յաց	կա	կարող, վարպետ
բա	բարի, բարձր	կը	շուն (փոքր ընկեր)
բի	երկու, կրկնակի, շատ	կի	կես, երկու նմաններից մեկը
բն	բուն, բնություն	կո	այստեղ, հրես
գի	գիր, գիրք, գիտելիք	հա	այո, դրական
գն	գնալ առաջ	հո	աղոթք
գր	գեր, գրել, գրիչ	մա	կերակրել, մայր, մամա
դժ	ժխտել, բացասական	մե	ինձանից
դր	դրական	մու	մուգ, մութ, մուտք
դու	երկու, կրկնակի, դու	յա	ես, յան, կողմ, յա, երկիր
ել	ելնել, բարձրանալ	յո	հոգս
եղ	(տես աղ)	յու	դուք, յուր, քո
եռ	երեք, աշխույժ	ու (օլ)	գունդ, պտույտ, հոլ
		ող (օղ)	օղակ, գունդ, գլոր, լիարժեք
		ոս (օս)	բարձր, հոգիս
		սա	(տես սս)
		սու	ցածր, ցավ
		վա	վայր, վայրի
		տի	անչափ, անեզր
		րա	առաջնորդ

Տառեր	Նշանակությունը	Տառեր	Նշանակությունը
ուլ	կիսապտույտ, խոյ, այծ	զատ	ջոկած
ուկ	(տես <u>ած</u> , <u>ված</u>)	զին	զենք ուղղված առաջ
ում	լույս, լուսավոր	զոր	բանակ
ուն	հիմնական	իդա	աղջիկ
ուպ	ընկնել	իկա	գալ, գտնել, գումար, ջոկել
ուռ	ծուռ, կոր	լիզ	մաքուր ջուր
ուս	բարձր, հասուն	լիկ	դեմք, պատկեր
ուր	այլ, ուրիշ, հեռու, դուրս, ցուրտ	լիվ	լվացվել, լվանալ
օր	լրիվ, ամբողջ, ցիկլ, օր	ծան	երկար
ով (օվ)	ջուր (շարժվող), ծով, հեղուկ (կաթ)	կար	պինդ, ամուր, կարծր
ոմ	մեծահոգի	կամ	լուսաբաց
ոտ	ոտքի թաթը	հատ	հատիկ
պա	պար	հետ	հայր, գլուխ, մազեր
պու	նեղ, կետ	յան	կողմ
ռու	ուղիղ	պատ	չորս կողմից պատած տարածք
— . —			
ազե	ծնող, մայր	պար	պարիսպ
ալք	ալիք, ծալք	պել	հավաքել
աղե	ասել, խոսել	սան	որդի, կնքաորդի
ալտ	տաք	սել	տանել
այա	մայր	ված	առարկայի վիճակը՝ դրված, բերված, սփռված
այր	ես անեմ, տղամարդ	վող	գնդածև
անտ	նախ, դեմ	տեր	ամենի հիմքը
ասպ	թամբած և զինված ձի	տիր	ամենի տերը
աստ	տիեզերք, ետև, ֆոն	ույս	բարձր
արա	հավերժ անել	ույր	մարդ, էակ
երկ	զույգ, անջատ	քար	ամուր

Ես համոզված եմ, որ ՏԲ-ն հայտնի է եղել հին Հայաստանում: Ավելի ուշ, հատկապես 301 թվականին քրիստոնեությունը Հայաստանում որպես պետական կրոն ընդունելուց հետո այն մոռացության է տրվել որպես “հեթանոս” քրմերի գաղտնիքներից մեկը:

ՏԲ-ն ու նրա կիրառումը ապացուցում են, որ հնդեվրոպական լեզուները շատ արմատներ ու բառեր են վերցրել հայերենից, բայց հակառակ գործընթաց հին

ժամանակներում գրեթե տեղի չի ունեցել:

Միևնույն ժամանակ հնդեվրոպական և այլ լեզուներում շատ բառեր ու անուններ կարող են վերծանվել շնորհիվ ՏԲ-ի: Դա նշանակում է, որ այդ բառերը վերցված են հայերենից կամ կառուցված են ՏԲ-ի կիրառմամբ:

Ցավոք, շատ հայեր չգիտեն, որ ժամանակակից հայերենի օտարամուտ բառերից (և անուններից) շատերը, որոնք փոխառված են եվրոպական լեզուներից, իրականում հին հայկական բառեր են: Օրինակ, ատոմ, անտենա, լիտր, գենիթ, մաթեմատիկա, գերո և այլն: Այդ բառերի հայերեն նշանակությունները ներկայացված են Աղյուսակ 11-ում:

Աղյուսակ 11

Բառ	Նշանակություն
ատոմ, ատ • ոմ, հատ	կտրած, կտոր, մասնիկ (ոմ-հետագա հունական վերջավորություն է)
անտենա, այն • տենա	հեռվից երևացող (նավի կայմը)
լիտր, լի • տ • ը	թարմ (անալի) ջրի աման
գենիթ, գ • Ե • ն • ի • տ	մտավոր վերը լինող կետն է
մաթեմատիկա, մատ • է • մատ • իկա	մատը մատին գա (հաշվել)
գրո, գ • ը • ո	սկիզբ տվող (բայց) աննյութական
Լիզա (Եղսապետ) լի • զ • ա	վերին ջրի կյանք (մաքուր մարդ)
Մարքարիտ (Մարգո) մար • քար • ի • տ	ծովի քարե տան ապրողը

Այս (ինչպես և այլ) հին հայկական բառերն ու անունները, որ բերված են Աղյուսակ 11-ում, ընդօրինակվել են նախ հունարենում հետո՝ լատիներենում: Հետագայում միջնադարի և հաջորդ դարերի գիտնականները (ֆիզիկոսները, աստղագետները, տեխնոլոգները և այլոք) իրենց հայտնագործությունների ու գյուտերի համար անվանումներ փնտրելիս հաճախ վերցրել են հունարեն ու լատիներեն բառեր: Այնպես որ հին հունարենն ու լատիներենը խաղացել են “տերմիններ մատակարարող” լեզուների դերը: Կերը ասվածը նշանակում է, որ ավելի հին ժամանակներում այդ դերը կատարել է հայերենը: Այսպիսով, առաջին

հայացքից շատ տարօրինակ թվացող այն իրավիճակը, երբ ՏԲ-ն տալիս է “ոչ հայկական” բառերի հայկական նշանակությունները, հասկանալի է դառնում: Այդ բառերը ձևավորվել են հայերենից ՏԲ-ի օգտագործմամբ: Օրինակ.

“Փարիզ” = “փառքի իզ (ուղի)”;

“Չեվս” = զ • և • ս = “(Նա) դառնում է առաջինը (Աստված)”;

“Յուպիտեր” (Աստված) = Յ • ու • պ • ի • տեր “Ես մեծ տարածքի տերն եմ” (Հռոմի կայսերական գոռոզություն);

“Ամերիկա” = Ա • մ • ե • ռ • իկա = “Ես առաջին մարդն եմ, որ եկել եմ” (հնարավոր է, որ դա Կոլումբոսի խոսքն է եղել; հայտնի է, որ նրա նավում մի քանի հայ վաճառականներ են եղել ու մի վանական):

ԳԼՈՒՆ 2.7. ՏԲ-ի ԿԻՐԱՌՈՒՄԸ

Այստեղ պետք է բերեմ ՏԲ-ի կիրառման մի շարք օրինակներ: Որոշ հին բառեր կամ նրանց մասերը անհրաժեշտ է կարդալ (բացատրել) աջից ձախ կամ, հնարավոր է, մեջտեղից, որովհետև հիմա մենք օգտագործում ենք տառերի այլ դասավորում: Եթե որոշ բառերի բացատրությունից անհիմաստ, անկապ արդյունք է ստացվում, դա նշանակում է, որ այդ բառերը հին հայկական չեն:

ա. Մարդիկ

- մարդ (անձ) = մ • ար • դ = արևին ձգտող մեկը
- այր (տղամարդ, կին) = այ • ռ = ես անեմ
- արի, արիացի = ար • ի = ԱՐ-ի մարդ (ազնվացեղ) = ա • ռ • ի = կյանք տվող մարդ
- հայր = հ • այր = բարձր (գլխավոր) մարդ
- մայր = մ • այր = մեծ (իմ գլխավոր) մարդ, հ • այր և մ • այր բառերի կառուցվածքը վկայում է տղամարդու և կնոջ հավասարության մասին հին Հայաստանում (ի դեպ, նույնը անգլերենումն է. fa • ther, mo • ther; “ther” – “տեր” հայերենում)
- զավակ = զ • ա • վ • ա • կ = աչքիս վրա կյանքի սկզբից
- որդի = ո • ռ • դ • ի = ոգի տվող (ոգևորող) դեպի ինձ
- տղա = տ • դ • ա = կյանքի կենտրոնական հիմք
- դուստր = դ • ու • ս • տ • ռ = տվյալ տան տիրոջ սիրելին
- աղջիկ = աղ • ջ • ի • կ = մաքուր, հաճելի փոքրիկ

- եղբայր = եղ . բ . այր = մաքուր, բարի այր
- քույր = քու . յր = հուսալի մարդ
- տաղանդ = տաղ . ան . դ = երգող (այարող) մարդ; (ինչպես և կշռի հին չափ = 30 կգ = 60 մին)
- մի, մին = մ . ի, մ . ին = մեկ մարդ, առաջին, միակ, միայնակ (ինչպես և կշռի հին չափ = 0.5 կգ)
- յար = յ . ար = իմ արևը
- սիրտ = ս . ի . ր . տ = տեղ (որ) կրում է մարդու սերը
- սիրել = ս . ի . ր . ել = այս մարդուն վեր հանել
- արյուն = ա . ր . յ . ուն = իմ կյանքի հիմք տվողը
- ասպետ = ասպ . պետ = թամբած, զինված ծիու տեր
- արմունկ = ար . մ . ուն . կ = ապրողի (մարդու) մի հիմնական մասը (նույնպես երկարության հին չափ = 0.5 մ)

բ. Կենդանիներ: Թռչուններ

- ծի = ծ . ի = երկարուկ մարմնով (կենդանի): Հայերենում “ծի” հասկացությանը վերաբերող տասը բառ կա: Ձիերին առաջին անգամ Հայաստանում են ընտանի դարձրել
- նժույգ = ն . ժ . ույ . գ = նա ուժեղ է ու գեղեցիկ
- ասպ = աս . պ = սա պատրաստ (թամբած, զինված), այստեղից՝ ասպետ
- երիվար = եր . ի . վար = ինձ ցած գցող
- հովատակ = հ . ով . ատ . ակ = (ծի) կաթի աղբյուրից կտրած
- մատակ = մ . ատ . ակ = մեծ (ազնիվ) մասի (ցեղի) սկիզբ (հիմնադիր)
- զամբիկ = զ . ամ . բ . իգ = առաջին ճուտ բերող էգ (հղի ծի)
- քուռիկ, քուռակ = քու . ռակ = սկզբից ամրացող
- մտրուկ (մատղաշ էգ ծի) = մ . տր . ու . կ = տան մեջ եղած փոքրիկը
- ջորի = ջ . որ . ի = օրվա հաճելի կենդանի
- առյուծ = ա . ռ . յու . ծ = դու կյանքդ անում (վարում) ես ազատ
- արջ = ար . ջ = ապրող հաճելի
- վագր = վ . ա . գ . ր = գեղեցիկ կյանք վարող
- կով = կ . ով = հեղուկ ուտելիք (կաթ տվող)
- արիս = ար . իս = (ինչպես) իմ սիրելի արևը
- օվան (կետ) = օվ . ան = ծովային կենդանի
- արծիվ = ար . ծիվ = արևի թռչուն
- արագիլ = ար . ա . գ . ի . լ = ճիշտ իմ գլխին մի արև

- ծիտ = ծ • ի • տ = իր վերին բնում աճող
- շուն = շ • ուն = շատ հիմնական (կենդանի)
- հավ = հ • ավ = հարող տիրոջը

գ. Աստղագիտություն

- Ար (Արև) = ա • ր = կյանք տվող
- Արեգակ (գիտ.) = ար • ե • գ • ակ = պայծառ (լինող) գեղեցիկ կլոր
- Լուսին = լուս • ին = նա իմ լույսն է)
- մոլորակ = մոլոր • ակ = մոլոր (-աձև) շարժվող (լույսի) աղբյուր
- Փայլածո = փայլ • ա • ծ • ո = փայլուն և տաք ծագման օրը
- Արուսյակ = ար • ուս • յ • ակ = ես արևի բարձր աչքը
- Աստղիկ = աստղի • կ = աստղի կեսը
- Լուսաբեր = լուս • ա • բեր = լույս (ցերեկ) բերողը
- Հրատ = հր (հուր) • ատ = կրակի կտոր
- Լուսնթագ = լուսն • թագ
- Երևակ = երևա • ակ = երևա կլորով (անիվով)
- աստ = ա • ս • տ = սա կյանքի (հավերժ) տեղը (Տիեզերք)
- աստղ = աստ • ղ = տիեզերքի (նյութի) խտացվածք
- գեմիթ = գ • ե • ն • ի • թ = մտավոր նա վերը լինողն է
- նադիր = նա • դ • ի • ր = նա իր դիմացի (-նի) գույզը
- վեր = վ • եր = դեպի երկինք
- վար = վ • ար = դեպի արև (հարավ)
- հորիզոն = հ • որ • իզ • ո • ն = դեպի ցերեկվա լրիվ ներքևի ուղին
- թագ = թ • ա • գ = (նրա) գլխի համար հավերժ
- Քարահունջ (աստղադիտարան) = քար • հ • ու • ն • ջ = հնչող քարեր կամ խոսող քարեր: Հնարավոր է, որ “հունջ” բառը հին ժամանակներում գրվել է “ջ” տառով (հունջ), որովհետև “ջ”-ն “դուրեկան” է նշանակում, իսկ “չ”-ն ժխտական (բացասական) նշանակություն ունի:

դ. Բնություն

- Երկիր (մոլորակ) = ե • ր • կիր = մեզ կրողը
- սար = ս • ա • ր = սիրուն կյանք տվող
- քար = ք • ա • ր = ամուր (երկար) կյանք ունեցող
- ջուր = ջ • ու • ր = հաճույք ունի տալ (հաճույք պատճառող)
- լիճ = լի • ճ = կանգնած ջրով լիքը

- գետ = գ • ետ(ք) = գեղեցիկ հետք (հոսք)
- ծայն = ծ • այն = երկար է այն
- ծով = ծ • ով = ազատ ջուր
- օվկեան = (ծ)ովք • է • այն = ծովք (ծովեր) է այն
- ծիածան = ծ • ի • ա • ծ • ան = իմ առաջ ծագած (մի) ազատ բան
- բազալտ = բ • ազ • ալ • տ = ցեղի բարձր տաք տուն (քարայր բազալտե ժայռերում)
- գրանիտ = գ • ր • ան • ի • տ = մարդու տունը սիրունացնող
- օբսիդիան = ապ • սա • դա • ան = սատանայից դուրս թռած (սատանայի եղունգ)
- տուֆ = տ • ու • ֆ = ծածկված տեղում է
- ազատ = ա • գ • ատ = հավերժ գույներ կտրվածքում
- զմրուխտ = զ • մ • րուխտ = գեղեցկացնում է մարդու արտաքինը
- մարքարիտ = մար • քար • ի • տ = ծովի քարե տան (ապրող) մարմին
- ադամանդ = ա • դ • ամ • ան • դ = նա ձգտող դեպի հավերժ տարիներ
- գոհար (շողակն, բրիլիանտ) = գ • ո • հ • ար = գեղեցիկ հոգի նման արևին

Ե. Տղամարդկանց հայկական անուններ

- Արամ = ար • ամ = ԱՐ-ի զավակ
- Արման = ար • մ • ան = ԱՐ-ի մարդը
- Արմեն = ար • մեն (ք) = ԱՐ-ի մարդիկ
- Արա = ար • ա = ԱՐ-ի (տված) կյանք
- Արեգ = ար • ե • գ = ԱՐ (-ի նման) լինել գեղեցիկ
- Արամա(յ)իս = ար • ամ • ա • իս = իմ կյանքը՝ ԱՐ-ի զավակից
- Արտավազդ = ար • տավ • ա • զդ = դու ԱՐ-ի տված առաջինը
- Արշակ = ար • շ • ակ = արևով լի աչք
- Տիգրան = տ • ի • գ • ր • ան = նա մարդկանց տունը (կյանքը) գեղեցկացնող մարդ
- Ղալիթ = դ • ա • վ • ի • թ = ունակ մարդ ուղիղ կյանքի մեջ
- Վահան = վ • ահ • ան = նա դեպի վտանգը (պաշտպան)
- Վահե = վ • ահ • ե = դեպի վտանգը ելնող (ասպետ)
- Վահագն = վ • ահ • ա • գն = դեպի վտանգը (նրա բունը) գնացող (հերոս, չարի ոչնչացնողը)
- Մինաս = մին • աս = արտոնյալ խոսող (նախագահ)
- Ազատ = ազ • ատ = ի սկզբանե անջատ (անկախ)
- Հովաննես = հ • ով • ան • ես = նման ջրային (ծովային) (մեծ) կենդանու

- Հաբեթ = հա • բ • ե • թ = միշտ բարի լինել կարող
- Նար = ն • ար = նա արև, առաջնորդող

գ. Հայկական կանացի անուններ

- Արև, Արևիկ = ար • եվ = ծագած Արև
- Արուս, Արուսյակ = ար • ուս = Արևի ուսին (առջևից)
- Արինա = ար • ի • նա = նա ԱՐ-ի մարդ
- Արփի, Արփինե = ար • փ • ի = նա համարյա արև
- Արաքս, Արաքսյա = ար • ա • ք • ս = արևոտ կյանք, տաք և սիրելի
- Արմինե, Արմիկ = ար • մի • նե = նա իմ արևը
- Ալվարդ = ալ • վարդ = ալ վարդ
- Ազնիվ = ազնիվ
- Սեդա = ս • ե • դ • ա = սիրով ելավ դեպի կյանք
- Լիզա, Եղսապետ = լի • զ • ա = վերին (մաքուր) ջրի (պես) կյանք
- Մարքարիտ, Մարգո = մար • քար • ի • տ = ծովի քարե տան ապրողը
- Անժելա = ան • ժ • ել • ա = նա ուժեղ (վեր) ելնող մեկը
- Անուշ = ան • ու • շ = նա ունի շատ (քաղցր), նա շատ քաղցր է
- Լիա, Լիլիա = լի • ա = ջրային կյանք (ծաղիկ)
- Ջարա, Ջարուհի = զ • ար • ա = սկզբի (ծագող) արևի կյանք
- Անահիտ = ան • ա • հ • ի • տ = նա կյանք է բարձր մարդու տանը
- Մար = մ • ար = Արևի մայրը (ծով, օվկեան)
- Մարե = մար • ե = ծովի էակ
- Մարի = մար • ի = ծովի դուստր, (ծովինար)
- Մարիամ = մար • ի • ամ = ծովի դստեր զավակ, փոքրիկի մայր
- Մարինե = մար • ի • նա = նա ծովի (ծովային) կին
- Նարա, (Նարինե) = ն • ար • ա = նա արևի ծնունդ
- Նահրա = նա • ի • ռ • ա = նա կյանք անող մարդ
- Թամար = թ • ամ • ար = փոքրիկ արևի պես

է. Հայաստանի աշխարհագրական անվանումներ (հին և ժամանակակից)

- Արմենիա = ար • մեն • իա = Արևի մարդկանց յան (ապրելավայր)
- Հայաստան = հայ • աստան = հայերի երկիր
- Արարատ = ար • ար • ատ = ստեղծված հատուկ
- Արագած = ար • ա • գ • ած = նա գեղեցկացնում է ԱՐ-ի (մարդկանց) կյանքը
- Արագածոտն = արագած • ոտն = Արագածի փեշեր (շրջանը)

- Վան = վ • ա • ն = նա կյանքի մեջ (է)
- Սեվան = ս • ե • վան = նա կյանքի հաջորդ սիրտը
- Կապուտան, Ուրմիա = կապու(յ)տ • ան; ուր • մի • ա = նա կապույտ մի կյանք ունեցող
- Սիփան = ս • ի • պ • ան = ինքը սիրուն կլոր սար
- Եփրատ = ե • փր • ատ = մասերը (երկրի) հավասարեցնող (կապող, միացնող) ելք, (կյանքի գետ)
- Տիգրիս = տ • ի • գ • թ • ի • ս = սիրելի իմ զույգ (կազմող), գեղեցիկ իմ տեղ
- Արագ, Արաքս = ար • ագ = (հոսող դեպի) առաջին արև (արևելք)
- Երասխ, Արաքս = եր • աս • խ = սա երկար ու գեղեցիկ (գետ)
- Արցախ = ար • ցախ = արևոտ անտառ
- Արտաշատ = ար • տ • ա • շատ = շատ արևոտ կյանքի տեղ
- Արմավիր = ար • մ • ա • վիր = արևի մարդկանց կյանքի վայր
- Տավր = տ • ա • վ • ռ = (իր) վրա է կրում կյանքի տեղերը ((եռնաշղթա)
- Կիլիկիա = կի • լի • կի • ա = (իմ) կեսը ջուր (ծով), կեսը կյանք (ցամաք)
- Փյունիկիա = փ • յ • ու • ն • ի • կի • ա = հավասար ես ունեմ՝ այն (ծովային) կեսը և (մյուս) կեսը կյանք (ցամաքը)

ՉԼՈՒՍ 2.8. ՏԱՌԵՐԻ “ԾԱՌԵՐ”: ՄԵԹՈՂ № 2

Հայոց լեզվի վերլուծության №2 մեթոդը ցույց է տալից, որ հայերեն բառերի մեծ մասը զարգացել է սկսած սլարվ հնչյուններից, (առանձին տառերից) դեպի ավելի բարդ բառերը: Մենք արդեն գիտենք յուրաքանչյուր տառի և որոշ երկու, երեք տառերից բաղկացած տառակապակցությունների նշանակությունները (Աղյուսակ 10):

Այժմ մենք կարող ենք տեսնել բառերի զարգացումը ամենապարզից դեպի ավելի բարդերը ուրիշ նոր տառեր ավելացնելու միջոցով: Աղյուսակ 12-ում ներկայացված են յուրատեսակ “ծառեր” (միայն մեկ “ճյուղ”) “գ” տառի համար և Աղյուսակ 13-ում՝ “կ” տառի համար:

1→	2→	3→	4→	5→	6
զ (սկիզբ)	ազ, զա (առաջին)	զան, զանել (հարված) զանազան	զանգ	զանգակ	զանգակատուն
				զանգված	զանգվածային
			զազան զազանանոց	զավազան	զավազանակոթ

1→	2→	3→	4→	5
կ	կա	կար	կարծր	կարծիք
		կաթ	կաթիլ	կաթել
		կամ	կամք	կամքով(ի)
		կավ	կավիճ	կավճուտ
			սակավ	սակավաթիվ

Այս գործողությունը հնարավոր է կատարել յուրաքանչյուր հայոց տառի հետ: Ու այսպիսով կարելի է տիրապետել հայերենին: Աղյուսակներ 10, 11, 12 և 13-ը ապացուցում են, որ հայոց լեզուն տրամաբանորեն է զարգացել, աստիճանաբար ու միայնակ, և որ այն շատ հին է: Այն ժամանակներում (բազում հազարամյակներ առաջ) անհնարին էր որևէ բառ փոխառնել այլ լեզուներից, որովհետև դրանք բացակայում էին: Այնպես որ հայերենը ամենահին լեզուն է Երկրի երեսին, որը ծագել է ավելի քան 40 հազար տարի առաջ, երբ Հայաստանում ի հայտ եկավ հոմո սապիենսը:

ՉԼՈՒՄ 2.9. ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՎԵՐԾԱՆՈՒՄԸ

Երբ ես կազմում էի ՏԲ-ն ու նրա կիրառման ձևը, ես անընդհատ մի արտակարգ զգացում ունեի, որ հնագույն ձեռագրեր կամ պետրոգլիֆներ են վերծանում, որոնք շատ կարևոր են ու խորհրդավոր: Ես ՏԲ-ն (մտովի, ինքս ինձ) նույնիսկ “կախարդական բառարան էի” անվանել:

Եվ իրոք, ՏԲ-ն ու նրա կիրառումը, հասկանալի են դարձնում շատ բաներ սկսած պալեոլիտի ու նեոլիտի (քարե դար) ժամանակաշրջանից մինչև մեր օրերը.

մարդկանց բոլոր բառերը, մտքերը, անունները ու զգացումները, նրանց վերաբերմունքը բնությանը ու մեկմեկին, նրանց սերը գեղեցիկի ու բարունկատմամբ:

Աղյուսակներ 10, 11, 12, 13-ը ապացուցում են, որ հայոց լեզուն և այբուբենը առաջինն են եղել, զարգացել են ինքնուրույն և առանձին և ծագել են շատ վաղուց:

Հայերը հնագույն ժամանակներից և առ այսօր խոսել են և խոսում են միմյանց հետ իրենց գլխավոր աստված Արի (Արևի) և ուրիշ աստվածների հետ հայերեն, որը երկրի վրա ամենահինն է, Աստծո լեզուն է, որը սկիզբ է տվել հնդեվրոպական բոլոր լեզուներին և այբուբեններին:

ԳԼՈՒՆ 2.10. ՀԱՅՈՑ ԼԵԶՈՆ ԵՎ ԱՅԼ ԼԵԶՈՆՆԵՐԸ: ՄԵԹՈԴ № 3

Հայերենը հնդեվրոպական բոլոր լեզուների հիմքն է: Այնպես որ շատ հարյուրավոր բառեր կան, որոնք նույնն են (կամ գրեթե նույնն են) հայերենում և այլ լեզուներում: Այդ բառերն ընդօրինակված են հայերենից:

Եթե որոշ բառեր նույնն են տարբեր լեզուներում, այդ նշանակում է, որ այդ բոլոր բառերը փոխառնվել են այդ լեզուներից մեկից: Ո՞ր մեկից: Այն լեզվից, ուր այդ բառերը ունեն իմաստ:

Աղյուսակ 14-ում բերված են մի շարք բառեր, որոնք նույնն են հայերենում, անգլերենում և ռուսերենում* և ընդօրինակված են հայերենից:

Աղյուսակ 14-ի որոշ բառեր վերծանված են վերը 2.6 և 2.7 Գլուխներում:

Աղյուսակ 14-ը զարմանք չի հարուցում, քանի որ հայերենից շատ բառեր են անցել հնդեվրոպական լեզուները: Օրինակ, անգլերենը իր բառապաշարի 55% փոխառել է ֆրաներենից, որն իր հերթին, փոխառվել է կելտերից, որոնք եղել են հայեր (տես ՄԱՍ 3) և 10%-ը՝ լատիներենից, որը ծագել է էտրուսկներից (որոնք հայեր են եղել) և հին հունարենից, որը ձևավորվել է բազմաթիվ փոխառություններ կատարելով հայերենից: Աղյուսակ 14-ում բերված են որոշ եվրոպական անուններ նրանց հայերեն (ծագումնաբանական) ստուգաբանությամբ:

Շատ հայերեն բառեր են փոխ առել նաև ոչ հնդեվրոպական լեզուները, օրինակ, հին եգիպտերենը, արաբերենը, թուրքերենը և այլ լեզուներ: Աղյուսակ

* Ցավոք, ես գիտեմ միայն երեք լեզու: Սակայն ես գիտեմ, որ կան շատ հայերեն բառեր, որոնք նույնն են տարբեր շատ լեզուներում (Աղյուսակ 14), օրինակ, օվկիանոս, մայր, հերոս, կեսար, արիացի, կարպետ, սապոն, մաթեմատիկա, անտենա, լիտր, ատոմ, կատու, գերո, ամեն (վերջ) և այլն:

14-րում բերված են հրեական մի շարք անուններ, որոնք փոխառնված են հայերենից:

Եթովպական տառերը մինչև այժմ էլ գրեթե նույնն են ինչ հայերենները:

Աղյուսակ 14

№	Հայերեն	Անգլերեն	Ռուսերեն	№	Հայերեն	Անգլերեն	Ռուսերեն
1.	օվկիան (ոս)	ocean	океан	30.	նոր	new	новый
2.	նավագնացություն	navigation	навигация	31.	կատու	cat	кот
3.	մայր	mother	мать	32.	քաթան	cotton	вата
4.	հեր (հայր)	father	(отец)	33.	կոկորդիլոս	crocodile	крокодил
5.	հերոս	hero	герой	34.	վագր	tiger	тигр
6.	կեսար	caesar	царь	35.	պատկեր	pattern, portrait	портрет
7.	փարավոն	pharaoh	фараон	36.	բերդ	fort (berth)	форт
8.	պատրիարք	patriarch	патриарх	37.	Արբիոն	Albion	Альбион
9.	ակ(ն)	eye	око (окно)	38.	արք ...	arch...	архи ...
10.	սանիկ	son	сын	39.	ամեն	amen	аминь
11.	դուստր	daughter	дочь	40.	որք (ան)	orphan	(сирота)
12.	արիացի	aryan	ариец	41.	զերո	zero	зеро
13.	կին	queen	женщина	42.	թումբ	tomb	тумба
14.	կարպետ	carpet	ковер	43.	սատանա	satan	сатана
15.	կարմիր	carmine	кармин	44.	հոլ	to hole	юла
16.	միս	meat	мясо	45.	կ(ը)կու	cocoo	кукушка
17.	կով	cow	корова	46.	պարկ	park	парк
18.	դուռ	door	дверь	47.	ես եմ (այ եմ, հայ եմ)	eom, I am	есъм, я есть
19.	տուն	town (home)	дом	48.	կորիզ	core	косточка
20.	ստամոքս	stomach	(желудок)	49.	հավք (բազե)	hawk	сокол
21.	քար (կոշտ, պինդ)	carat (character)	карат (характер)	50.	պորտ	port	порт
22.	քարտեզ	chart	карта	51.	գինի	wine (gin)	вино
23.	կառք	car	каре́та	52.	շաքար	sugar	сахар
24.	մաթեմատիկա	mathematics	математика	53.	մարմար	marble	мрамор
25.	անտենա	antenna	антенна	54.	դեվ (դև)	devil	дьявол
26.	ատոմ	atom	атом	55.	նանի	nanny	няня
27.	լի (ջուր)	liquid, lymph	ливень, лимфа	56.	էթեր	ether	эфир
28.	լիտր	litre	литр	57.	զեփյուռ	zephyr	зефир
29.	լիզել	lick	лизать	58.	պուտ	spot	пятно
				59.	կողմնացույց	compass	компас
				60.	ծուռ	curve	кривая

№	Հայկական անուններ	Ծագումը (տես Աղյուսակ 10)	Եվրոպական անուններ
1.	Ալեքսան	ար . ե . ք . ս . ան = նա գեղեցիկ է ուժեղ և հուսալի (ինչպես) ծագող արևը	Ալեքսանդր
2.	Արտուր	ար . տ . ու . ր = (նա) ունի արևոտ տուն	Արտուր
3.	Արսեն	ար . ս . ե . ն = նա գալիս է ինչպես գեղեցիկ արևը	Արսեն
4.	Անդրեաս	ան . դ . ր . ե . ա . ս = գեղեցիկ կյանքը գալիս է իրեն ընդառաջ	Էնդրյու
5.	Հրանդ	գ . ր . ան . տ = գեղեցկացրեցիր նրա տունը	Գրանտ
6.	Դավիթ	դ . ա . վ . ի . թ = ընդունակ մարդ չիտակ կյանքում, կյանքում ունակ մարդ	Դավիթ
7.	Հակոբ	հ . ա կ . ո . բ = (նա) պաշտում է ակունքը բարի հոգու	Ջեյկոբ, ժակ
8.	Սամվել	ս . ա . մ . վ . ել = (նա) գեղեցիկ կյանք է ծնում մեզ համար	Սեմյուել
9.	Ստեփան	ս . տ . ե . փ . ան = նա գրեթե մեր տան հոգին է	Ստեֆան
10.	Գասպար	գ . ա ս . պ . ար = նա գեղեցիկ (է) ինչպես արևը	Կասպեր
11.	Գրիգոր	գ . ր . ի . գ . ո . ր = մարդ, որը սեր է անում հիանալի հոգու հետ	Գրեգորի
12.	Անահիտ Աննա	ա . ն ա . հ . ի . տ = նրա կյանքը հարում է դեպի իմ տունը ան . ն ա = այդ նա է	Աննա Էնն
13.	Եղիսապետ	եղ . ս ա . պ ե տ = նա գլխավոր կենտրոնն (է) (մաքրության, անմեղության)	Էլիզաբեթ
14.	Ելենա (Հեղինե)	ել . է . ն ա = գնա նրա մոտ (նա լավն էր)	Հելեն
15.	Մարքարիտ	մար . քար . ի . տ = (նա) ապրում է ծովի քարե տանը	Մարգարետ

№	Հայկական անուններ	Նրանց բացատրությունը, իմաստը (տես Աղյուսակ 10)	Հրեական անուններ
1.	Աբրամ, Աբրահամ	Ա . բ . ր . ամ = դեպի լավ կյանք առաջնորդող տղա	Աբրամ, Աբրահամ
2.	Սահակ	ս . ա . հ . ակ = իմ կյանքով պաշտում եմ աղբյուրը = ես պաշտում եմ արևը	Իսահակ
3.	Հակոբ	հ . ակ . ո . բ = (նա) պաշտում է աղբյուրը բարի հոգու = պաշտել արևը	Յակով
4.	Մովսես	մ . ո . վ . ս . ես = ես սիրով դեպի սուրբ մարդը	Մոիսեյ
5.	Իսրայել	իս . ր . ա . ել = ելավ կյանք անող սիրուն մարդը	Իսրայել
6.	Դավիթ	դ . ա . վ . ի . թ = մարդ, որն ունակ է շիտակ կյանքի	Դավիթ
7.	Սողոմոն	ս . ող . ո . մ . ո . ն = նա սուրբ մարդ, սուրբ սրտով, սուրբ կյանքով	Սոլոմոն
8.	Լեվոն	լ . եվ . ո . ն = նա եկավ դեպի մեզ (որպես) աստծո որդի	Լևոն, Լևան
9.	Ահարոն	ա . հա . ր . ո . ն = նա (ինչպես) սուրբը անում է դրական կյանք	Ահարոն
10.	Եփրեմ	ե . փ . ր . ե . մ = մարդ, որն անում է հաջորդ հավասար էությունը	Եփիմ, Եֆիմ
11.	Ջարա, Ջարուհի	զ . ար . ա = կյանք ինչպես արևածագ	Սարա
12.	Լիա, Լիլիա	լի . ա = ջրի կյանք (ջրի ծաղիկ)	Լիա
13.	Իրա, Իրինա	ի . ր . ա = կյանքում առջնորդող կին	Իրա

ԳԼՈՒՏ 2.11. ՀԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԵՎ ՋԱՐԳԱՑԱԾ ԱՅԲՈՒՐԵՆՆ ՈՒ ԹՎԵՐԸ: ՄԵԹՈԴ № 4

Քարահունջն ապացուցում է (տես ՄԱՍ I), որ Հայաստանում ավելի քան 7500 տարի առաջ եղել է այբուբեն և գիր: Առանց դրանց առկայության Քարահունջի նման բարձր զարգացած աստղադիտարանը չէր կարողանա գործել այդքան երկար ժամանակամիջոցում, ստանալով այդքան հիանալի արդյունքներ, որոնք

դարեր տևող դիտումներ են պահանջել: Առանց գիր ունենալու հնարավոր չէր լինի ֆիքսել աշխատանքների արդյունքները, կուտակել գիտելիքները և գիտության մեջ հասնել բարձր մակարդակի:

Իհարկե, առաջին այբուբենը Քարահունջի ժամանակներից շատ ավելի վաղ է ծագել ու ավելի պարզ է եղել, բաղկացած տառերի նվազագույն քանակից, որը հնարավորություն է տվել արտահայտել հիմնական հասկացությունները: Այդ Նախնական այբուբենը ծագել է մոտ տասնյոթ հազար տարի առաջ (մ.թ.ա. 15-րդ հազարամյակ) և բաղկացած է եղել 20-ից պակաս տառերից: Հետագայում, քայլ առ քայլ զարգանալով, այդ այբուբենը մոտ 7000 տարի անցնելուց հետո աճեց ու վերածվեց Զարգացած այբուբենի` 34 տառով (մ.թ.ա. 8-րդ հազարամյակ) և կիրառվել է Քարահունջի ժամանակներում (մ.թ.ա. 6-րդ հազարամյակ): Այդ տառերը ցույց են տրված 2.4 Գլխում (Աղյուսակ 9) և փորագրված են Հայաստանի ժայռերին (թվագրվում են մ.թ.ա. 3-րդ հազարամյակով):

Արդյոք կարո՞ղ ենք վերականգնել նախնական այբուբենը: Եկեք փորձենք: Մենք պետք է կիրառենք հետևյալ կարևոր սկզբունքները (Մեթոդ № 4).

1. Հին տառերը պետք է համարյա համապատասխանեն զարգացած այբուբենի տառերին, որոնք ներկայացված են Աղյուսակ 9-ում:

2. “ր”, “լ”, “ռ” տառերը նման են արտասանվում, այնպես որ այս հնչյունների համար կարող էր լինել մեկ հին տառ:

3. Հայոց այբուբենում տառերի մի քանի խումբ կա, որոնց մեջ մեկը մյուսին նման հնչերանգներով երեքական տառ է պարունակվում: Դրանք են. “գ, կ, ք”; “ղ, տ, թ”; “բ, պ, փ”; “ծ, ծ, գ”; “ու, վ, ֆ”; “ժ, շ, չ”: Մենք կարող ենք ընտրել մեջտեղի տառերը:

4. Նախնական այբուբենի յուրաքանչյուր հերթական տառը կարող ենք ընտրել, ելնելով այն բանից, թե նրա հավելումով առավելագույն քանակությամբ որքան նոր բառ կարող է գոյանալ: Կարծում եմ, որ դա եղել է նոր տառի գոյանալու անհրաժեշտ պայմանը:

5. Առաջին տառը պետք է լիներ “ա” տառը, որովհետև այն նշանակում է “առաջին, մեկ” (տես Աղյուսակ 10), բացի այդ ծայնավոր է և ամենաշատն է օգտագործվում հայերենում:

4-րդ կետը ամենադժվարն էր: Ես ձևավորում էի շատ բառեր, օգտագործելով տարբեր տառեր որպես հաջորդը: Երկրորդ տառը “ր”-ն էր, որովհետև “ա”-ի հետ կապակցվելով այն տալիս է ԱՐ=Արև և այդ զույգը հայոց լեզվում ամենատարածվածն է (բոլոր բառերի մոտ 3%-ը):

Հետո ի հայտ եկավ և ապացուցվեց, որ այդ երկու տառերը երկու այլ տառերի՝ “հ” և “յ” կիսահնչյունների հետ տալիս են մոտ 30 բառ (և շատ “կարևոր” բառեր):

Օրինակ՝ հայ, այր, այ, հա, ահ, յար, արա, յարա և այլն:

Հաջորդը ըստ արդյունավետության եղան “է” (ե)-ն և “ն”-ն, որոնք տալիս են լրացուցից ավելի քան 35 բառ և անուն, հետո՝ “տ” տառը հարակից “դ”, “թ” հնչյուններով, որոնք տալիս են լրացուցրչ ավելի քան 40 բառ, հետո՝ “մ” տառը, որն ավելացնում է ավելի քան 50 բառ, հետո՝ “կ”-ն “գ”, “ք” հնչյուններով, որն ավելացնում է ավելի քան 120 բառ և այլն:

Այս կատարելով, ես ընտրեցի տասնինը տառ, որոնցով կազմվում են հազարավոր բառեր (մի ամբողջ լեզու): Ահա այդ տառերը. ա, ր, յ, հ, ե, ն, տ, մ, կ, օ, պ, ի, ծ, ս, վ, ը, խ, շ, ջ: Ես տեղավորեցի դրանք երկու շարքով, տասը և ինը տառերով (տես Աղյուսակ 15):

Աղյուսակ 15

ՀԱՅՈՑ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՅԲՈՒԲԵՆԸ (և ԹՎԵՐԸ), մ.թ.ա. 10 հազարամյակ									
1	2	3	4	5	6	7	8	9	0 (10)
ա	ր	յ	հ	ե	ն	տ	մ	կ	օ
(i)	լ	Յ	է	դ	թ	գ	ք	ն	
կյանք	տվողին	ես	պաշտեմ	էությունը	նրա	հիմքն է	իմ (և)	գույգը	հոգևոր
պ	ի	ծ	ս	վ	ը	խ	շ	ջ	-
բ	փ	ծ	գ	զ	ու	ֆ	ժ	է	ճ
բոլոր	մարդկանց	ծիլերը	սիրո	դեպի	միացման	նշանը	շատ	հաճելի	-

Այդ անելուց հետո ես շատ զարմացա ստացված երկու հայտնություններով.

① Տառերի այդ երկու շարքը կազմում էին երկու ավարտուն նախադասություն հայերենով (տես Աղյուսակներ 10 և 15), ահա նրանք.

- Կյանք տվողին ես պաշտեմ, էությունը Նրա հիմքն է, իմ գույգը հոգևոր:
- Բոլոր մարդկանց ծիլերը սիրո՝ դեպի միացման նշանը շատ հաճելի:

Սա, իրոք, հրաշալի կանչ է առ բարի Աստված հանուն սիրո, միասնության, որը հասել է մեզ տասներկու հազարամյակների հեռվից:

② Այս տառերի ձևերը (կառուցվածքը) գրեթե համընկնում են այժմյան տասը թվերի ձևերին (0, 1, 2, 9), տես Աղյուսակ 15:

Դա նշանակում է, որ այդ տառերը կիրառվել են նաև որպես թվեր, և զարգանալով ստացել են այժմյան թվերի կոնֆիգուրացիաները:

Այս ամենը հաստատում է հետևյալը.

1. Մեթոդ № 1-ը և հայոց տառերի նշանակությունների ստուգաբանությունը (տես ՏԲ, Աղյուսակ 10) ճիշտ է;

2. Մեթոդ № 2-ը (տառերի “ժառեր”, տես Աղյուսակ 12) ճիշտ է;

3. Մեթոդ № 4-ը և նախնական հայկական այբուբենի վերականգնումը ճիշտ է;

4. Այժմյան թվերը և հաշվի տասնական համակարգը (զերոյով) ծագել են Հայաստանում մոտ 10 հազար տարի առաջ: Ըստ երևույթին, դա գաղտնիք է եղել և չի ընդօրինակվել (խոսքը հույների կողմից ընդօրինակվելու մասին է մ.թ.ա. 1-ին հազարամյակում), իսկ հետո, քրիստոնեության ժամանակ, հաշվի տասնական համակարգը զերոյի հետ միասին մոռացվել է և այժմ համարվում է, որ զերոն և հաշվի տասնական համակարգը “հայտնագործվել” է միջնադարյան Եվրոպայում:

5. Աղյուսակ 15-ից երևում է, որ Նախնական (տասներկու հազար տարի առաջ) և Ջարգացած (մ.թ.ա. 6-րդ հազարամյակ) հայոց այբուբեններում միևնույն տառերն են օգտագործվել, ինչպես արդի հայկական այբուբենում:

Հաշվի տասնական համակարգը երկար ժամանակով մոռացվել էր: Մինչդեռ այն եղել է (և կա) շատ պարզ ու հարմար համակարգ, որը հեշտ է ընկալվում, ուսուցվում, հիշվում և կիրառվում: Հիշենք, որ երեխաները հաշիվը սովորում են իրենց տասը մատների վրա, և “մաթեմատիկան”-ն հայերենում նշանակում է “մատ • ե • մատ • իկա”, այսինքն՝ “մատից մատ” կամ՝ “մատը մատից հետո է գալիս (հաշիվը)”: Լավ է, որ այդ բառը չի մոռացվել:

Աղյուսակ 15-ից երևում է նաև, որ ամենասկզբում, ամենավաղ ժամանակներում տառերն օգտագործվել են նաև որպես թվեր: Այնպես որ հնարավոր է, որ նրանք օգտագործվում էին աղյուսակի ձևով, ինչպես ցույց է տրված այստեղ՝ Աղյուսակ 15ա-ում, որը պարունակում է 19 տառ ու թվեր, սկսած 0-ից մինչև 90000: Աղյուսակ 15ա-ի միջոցով թվաբանական գործողություններ կատարելն ավելի հեշտ է, քան ներքո բերված Աղյուսակ 17-ի միջոցով: Որպես գործողության նշաններ, հնարավոր է, կիրառվել են հետևյալ տառերը. “գ”-ն կամ “և”-ը ⊕ համար, “դ”-ն ⊖ համար, “ծ”-ն ⊗ համար, “թ”-ն ⊙ համար և “լ”-ն որպես ⊕ նշան (տես Աղյուսակ 10), ընդ որում, այդ տառերը բացակայում են 15 և 15ա աղյուսակներում:

	0	1	2	3	4	5	6	7	8	9
միավորներ	օ	ա	ր	յ	հ	ե	ն	տ	մ	կ
տասնավորներ	օ	աօ	րօ	յօ	հօ	եօ	նօ	տօ	մօ	կօ
հարյուրավորներ	օ	պ	ի	ծ	ս	վ	ը	խ	շ	ջ
հազարավորներ	օ	պօ	հօ	ծօ	սօ	վօ	ըօ	խօ	շօ	ջօ
տասնյակ հազարավորներ	օ	պօօ	հօօ	ծօօ	սօօ	վօօ	ըօօ	խօօ	շօօ	ջօօ

ԳՐԱԽ 2.12. ԹՎԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ԻՄԱՍՏԸ

Ի սկզբանե, մոտ 10 հազար տարի առաջ նախնական այբուբենի առաջին 10 տառերի շարքը օգտագործվել է որպես թվերի տասնական համակարգ (տես Աղյուսակ 15ա): Տառերի և թվերի միջև եղած նմանությունը գոյություն ունի ոչ միայն առաջին շարքի տառերի համար, այլ նաև երկրորդ շարքի համար (տես Աղյուսակներ 15 և 15ա):

Ավելի ուշ թվերի ձևերը մի քիչ փոխվել են (որ տարբերություն լինի թվերի ու տառերի միջև), և թվերը ստացել են իրենց այժմյան ձևը: Միևնույն ժամանակ հին թվերը ստացել են անվանումներ, որոնք օգտագործվում են մինչև հիմա:

Թվերի հայերեն այդ հին անվանումները կարելի է վերծանել օգտագործելով ՏԲ-ն. Աղյուսակ 10: Եվ արդյունքը շատ հետաքրքիր է: Թվերի անվանումներն իսկապես ունեն իրենց սեփական իմաստը, որը բերված է “Թվերի անվանումների իմաստը” Աղյուսակ16-ում: Այդ հանգամանքը կրկին ապացուցում է, որ այժմյան թվերը հայկական ծագում ունեն:

ԹՎԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

հիմնական տառեր	տառի նշանակությունը (տես Աղյուսակ 10)	թիվը, նրա անվանումը	թվի անվանման նշանակությունը
օ (ո)	կեստ, ոչինչ	0 զ • եր • ո →	սկիզբ սվողը, (բայց) հոգևոր (աննյութական)
ա (ա)	մեկ, առաջին	1 մ • ե • կ	իմ լինի կեսը (ես ինքս)
ր (հ)	զույգ	2 երկ • ու • ս	զույգ ունեցանք մոտիկ (կպած)
Յ յ (ծ)	ես (երկարեցի)	3 եր • ե • ք	հաջորդն եղավ ամրացնող
հ (ս)	հարել դեպի	4 չ • օր • ս	սա (դեռ) ոչ լրիվ (հինգ մատ)
ե է (վ)	ես եմ	5 հ • ին • գ	մարդու գլխի նման (ավարտված)
ն (ը)	այն	6 վ • ե • ց	իմ հաջորդ (ծեռքի) վրա
տ (խ)	հիմք	7 յ • ո • թ	մարդու հոգու համար
մ (շ)	մարդ	8 ու • թ	(սա) ունի կարողություն
կ (զ)	մաս	9 ի • ն • ը	նա մարդու ընկերն (է)
ո (օ)	մեծ	10 տ • ա • ս	իմ կյանքի տունը (ավարտած)

Նշումներ

1. Առաջինը, ինչն աչքի է զարնում այս աղյուսակում, այն է, որ թվերի անվանումներն այնպես են ընտրված եղել հնում, որպեսզի, որքան հնարավոր է, հեշտ լինի դրանց հիշելն ու սովորելը:

2. Հնարավոր է որ Մեսրոպ Մաշտոցը ինչ որ բան գիտեր տառերի հին անվանումների իմաստի մասին, քանի որ տառերը որպես թվեր օգտագործելիս, նա 10 թվի համար վերցնում է "ժ" տառը (ուժ, ուժեղ), 100-ի համար՝ "Ճ" տառը (առավել), 1000-ի համար՝ "ռ" տառը (մեծ):

20
ք • ս • ա • ն

նա կյանքի զավակ (է) կայուն

30
եր • ես • ուն

երեք (տասնյակ) ես ունեցա

40
քառ • աս • ուն

չորս (տասնյակ) ես ունեցա

50
հի • ս • ուն

(նա) հինգ զավակ (տասնյակ) ունի

100
հ • ար • յուր

հարող ձեր արևին

1000
հ • ազ • ար

հարող ազգի արևին

ԳՆՈՒՆ 2.13. ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԹԻՎ - ՏԱՌԵՐԸ

Վաղ միջնադարից մինչև այժմ հայկական տառերը երբեմն օգտագործվել են թվերի փոխարեն: Նույնը եղել է Եվրոպայում: Աղյուսակ 17-ում ներկայացված են Մաշտոցյան հայկական 36 տառերը ու նրանց օգտագործումը որպես թվեր՝ 1-ից մինչև 9000-ը: Մ.թ. 7-րդ դարում հայ մաթեմատիկոս և աստղագետ Անանիա Շիրակացին կազմել է գումարման, հանման, բազմապատկման ու բաժանման առաջին աղյուսակները այդ տառերով [24]:

Աղյուսակ 17

	1	2	3	4	5	6	7	8	9
միավորներ	Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ
տասնավորներ	Ժ	Ի	Լ	Խ	Ծ	Կ	Հ	Ձ	Ղ
հարյուրավորներ	Ճ	Մ	Յ	Ն	Շ	Ո	Չ	Պ	Ջ
հազարավորներ	Ռ	Ս	Վ	Տ	Ր	Ց	Ու	Փ	Ք

Ակներև է, որ այդ թիվ-տառերի համակարգը զերո չունի ու հաշվի “իննական” համակարգ է, (տասնական չի), ինչը շատ դժվար է օգտագործման համար: Ղա ցույց է տալիս, որ հին հայկական տասնական համակարգը զերոյով իսկապես մոռացված է եղել, որովհետև Աղյուսակ 17-ը շատ ավելի դժվար է օգտագործման համար, քան վերը բերված Աղյուսակ 15-ն:

ԳՆՈՒՆ 2.14. ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՅԲՈՒԲԵՆՆԵՐԸ

Ամենքս սովորել ենք դպրոցում և համալսարանում, որ բոլոր այբուբենները վերցված են (փոխառված են) փյունիկյանից և դրանցից մի քանիսը մասնավորապես՝ այսպես կոչված արամեականից: Ու բոլորը սովորել են որ հին Հունաստանի բարձր մշակույթը գալիս է Կրետե-Միկենյանից: Ու գրեթե բոլոր երկրները արագ ընդօրինակել են փյունիկյան այբուբենը մ.թ.ա. I հազարամյակում:


Բարձր մշակույթը և այբուբենը հնարավոր չէ, որ զարգանային փոքր երկրներում կամ կղզիների վրա, առավել ևս՝ կարճ ժամանակահատվածում: Բարձր մշակույթը և այբուբենը զերոյից կուտակելու և զարգացնելու համար անհրաժեշտ են բարձր գիտելիքներ, տեխնոլոգիաներ, շատ բարբառներ ունեցող մեծ ժողովրդի հսկայական փորձ է հարկավոր և հազարավոր տարիներ:

Քարահունջը, հայոց լեզվի վերլուծությունը և շատ այլ գործոններ (տես ՄԱՍ 3), հաստատում են, որ անհրաժեշտ պայմանները և զարգացած գիտելիքները, տեխնոլոգիաները, այբուբենը, գոյություն ունեին միայն հին Հայաստանում իր բազմաթիվ թագավորություններով, ներառյալ Արարատյանը, Կիլիկյանը, Փյունիկյանը և այլ հայկական թագավորությունները: Գերմանացի պատմաբան Մ.Ռիմշնայդերը ասում է, որ ողջ հունական մշակույթը վերցված է Կիլիկյանից, Փյունիկյանից, Հեթիթականից, Հալդականից (Ուրարտու)՝ Արարատյան թագավորության բնակիչներից [65]: Բոլոր այդ չորս երկրները եղել են հայկական թագավորություններ (տես ՄԱՍ 3): Մ.Ռիմշնայդերը ասում է նաև, որ հունական այբուբենը փոխառվել է Կիլիկիայից [65]: Ես կարծում եմ, որ դա ճիշտ է, որովհետև Կիլիկյան ավելի մոտ էր Հունաստանին, քան Փյունիկյան, և Կիլիկյան այբուբենը նույն Փյունիկյան հայկական այբուբենն էր:

Հայկական այբուբենը ծագել է Մեծ Հայքում մոտավորապես 15-12 հազար տարի առաջ: Այն փաստը, որ Փյունիկյան այբուբենը նույն հայկականն է, ցույց է տրված Ադյուսակ 9-ում: Փյունիկյան 26 տառերից 12-ը համընկնում են հայկականների հետ (46 %), 12 տառ նման են (46 %) և միայն 2 տառ տարբերվում են (8 %) հայկականներից. “զ”-ն և “ս”-ն:

Ադյուսակ 18-ում ցույց է տրված հայոց և այլ այբուբենների զարգացման “ծառը”:

Աղյուսակ 18. Հայոց և այլ այբուբենների զարգացումը



**ՉԼՈՒՆ 2.15. ՀԱՅՈՑ ԵՎ ԱՅՍՊԵՍ ԿՈՉՎԱԾ “ԱՐԱՄԵԱԿԱՆ”
ԱՅԲՈՒԲԵՆԸ: ՄԵԹՈԴ № 5**

Այդուսակ 18-ը ցույց է տալիս, որ բոլոր այբուբենները ծագել են հայոց այբուբենից: Գրականության մեջ ասվում է, որ բոլոր այբուբենները ծագել են փյունիկյանից, ներառյալ այսպես կոչված “արամեական” այբուբենը [64]:

Փյունիկյան, ինչպես նաև Կիլիկյան, Հեթթական թագավորությունները և արևմտյան Ասիայի ու Անատոլիայի շատ ուրիշ երկրներ եղել են հայկական թագավորություններ ու շատ հնուց խոսել են հայերեն և օգտագործել են հայոց այբուբենը: Այդուհանդերձ, 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբում կարծիք կար, որ հեթթերենը սեմիտական լեզու էր: Սակայն անցյալ դարի 20-ական թվականներին Անատոլիայում հեթթական մայրաքաղաքի պեղումների արդյունքները ապացուցել են, որ նրանց լեզուն հնդեվրոպական է եղել:

Ովքե՞ր էին արամեացիները (կամ արամայեցիները): Ասում են [64], որ նրանք եղել են սեմիտական ցեղ ու եկել են Արաբիայից և մ.թ.ա. 14 – 11-րդ դարերում բնակվել են Մերձավոր Ասիայում: Բայց “Արամը” տիպիկ (շատ հնուց և այժմ) հայկական անուն է (“Արևի որդի”), և հայերը ապրել են (ու խոսել հայերեն) Մերձավոր Ասիայի հայկական թագավորություններում շատ ավելի վաղ, քան այսպես կոչվող “արամեացիները”: Տպավորությունն այնպիսին է, որ “արամեացիները” իրենց սեմիտական ծագումով ու լեզվով միտումնավոր հորինված ցեղեր են: Ինչի՞ համար է այդ արվել:

“Հայ ժողովրդի պատմության” համալսարանական երկու դասագիրք կա՝ հայերենով [67, էջ 43] և ռուսերենով [66, էջ 38], ուր լուսանկարներում պատկերված են փորագրված գրություններով սահմանային (հողաբաժան) երկու տարբեր քար: Այդ լուսանկարների տակ գրված է. “Արտաշես Առաջինի հողաբաժան քար: Արամեերեն լեզվով”:

Արտաշես I Բարին եղել է Մեծ Հայքի թագավորը մ.թ.ա. 189-160թթ.: Նա Արաքս գետի ափին Արարատյան դաշտավայրում (մ.թ.ա. 188) կառուցեց Արտաշատ մայրաքաղաքը և բերդը հռչակավոր զորավար Հաննիբալի օգնությամբ, որը հռոմեացիների ձեռքով կատարված Կարթագենի կործանումից (մ.թ.ա. 146) հետո վերադարձել էր իր հին հայրենիքը:

Ինձ տարօրինակ թվաց, թե ինչու՞ պիտի հայոց թագավորը հայ ժողովրդի համար Հայաստանում քարերի վրա փորագրեր օտար լեզվով (այսպես կոչվող “արամեերենով”): Այդպես չէր կարող լինել: Ինչու՞ են պատմաբանները հավատում, որ ոմն “արամեական” ցեղեր, (որոնք գոյություն են ունեցել ընդամենը

երեք դար ու նույնիսկ երկիր չեն ունեցել), այբուբեն ունեցել են, իսկ մեծ ու հին հայոց թագավորությունը՝ ոչ: Ես կարծում եմ, որ “արամեացիները” երբեք գոյություն չեն ունեցել: Դրանք հայերն էին, որոնք ապրում էին Մերձավոր Ասիայի հայկական թագավորություններում և օգտագործում էին, բնականաբար, հայոց լեզուն ու այբուբենը: Որպեսզի ապացուցեմ այս բոլորը, ես որոշեցի կարդալ այդ քարերի վրա գրվածը հայերեն: Եվ արդյունքը գերազանց եղավ:

Ես արտագրեցի քարերի վրայի տառերը (այնպես, ինչպես նրանք կան) ու տեսա, որ մեծամասնությունը նման են ժամանակակից հայոց տառերին: Առավել հաճախ կրկնվող տառը “ա”-ն է, որովհետև այդ բնորոշ է հայոց լեզվին:

Որոշ գրքերում, ներառյալ ակադեմիկոս Հ. Աճառյանի “Հայոց գրեր”-ը [59, էջ 514], ես գտա “արամեական” այբուբենը ու շատ զարմացա: Տառերի աղյուսակում “արամեական” տառերը, որոնք նույնանման են հայերեն տառերին, չէին տեղադրված իրենց համապատասխանող հայերեն տառերի դիմաց: Օրինակ “արամեական” “պ” տառը, որը նույնն է, ինչ հայկական “պ” տառը, դրված է հայկական “մ”-ի դիմաց, “լ”-ն դրված է “ղ”-ի դիմաց, “ղ”-ն՝ “հ”-ի դիմաց, “փ”-ն ու “տ”-ն՝ “կ”-ի դիմաց, “ի”-ն՝ “ծ”-ի դիմաց և այլն:

Ես հասկացա այդ խառնաշփոթության պատճառը: Քրիստոնեությունն ընդունելուց հետո հայկական բոլոր գրքերը այրել էին, բայց քարերի վրա փորագրված գրությունները անհնարին էր ամենուրեք ոչնչացնել, իսկ հետո, քանի որ սկզբից ասվել էր, որ հայերը մինչև Մաշտոցը գիր չեն ունեցել, հորինել են “արամեական” (սեմիտական) լեզուն, և այբուբենի տառերի կարգը միտումնավոր կերպով անկանոն խառնել են իրար, որ հին հայկական փորագրված գրությունները հայերենով կարդալն անհնարին դառնա:

Ես շարեցի “արամեական” (ինչպես նաև փյունիկյան) տառերը, ճիշտ համապատասխանեցնելով դրանք աղյուսակում հայոց տառերին, ըստ նմանության (տես Աղյուսակ 9, Պլուխ 2.4) ու հայտնաբերեցի, որ “արամեական” 28 տառից 17-ը նույն հայկականներն են (61%), 7 տառը նման են (25%) և չորսը տարբերվում են (14%): Ահա այն հայկական տառերը, որոնց համապատասխանում են “արամեականները”: Ահա դրանք.

- Տառեր, որոնք նույնն են՝ ա, գ, զ, ի, լ, կ, հ, ղ, մ, ո, պ, ռ, տ, ը, ց, ք, օ (չորս ծայնավոր);
- Տառեր, որոնք նման են՝ դ, ե, է, ժ, յ, շ, վ (երկու ծայնավոր);
- Տառեր, որոնք տարբերվում են՝ բ, խ, ն, ս (ծայնավոր չկա):

Դրանից հետո ես հեշտությամբ կարդացի այդ գրությունները (մ.թ.ա. 2-րդ դար) հայերենով:

Նկար 51-ում պատկերված է քարի լուսանկարը այդ [66] գրքից, Ադյուսակ 19-ում տեղավորված են նրա վրա փորագրված հին հայերենով օրհգինալ տեքստը (2200 տարի առաջ) և նույն տեքստը ժամանակակից հայերենով: Նկար 52-ում պատկերված է մյուս քարի լուսանկարը [67] գրքից, իսկ 20-րդ Ադյուսակում բերված է գրության տեքստը:



Նկ. 51. Գրություն քարի վրա ([66] գրքից)



Նկ. 52. Գրություն քարի վրա ([67] գրքից)

Գրությունների վերծանում

Ադյուսակ 19 (տես նկ. 51)

Ադյուսակ 20 (տես նկ. 52)

Հին հայերենով	Ժամանակակից հայերենով
Ակ ք* դոռիեն Արտախտ՝ ավ է հողի այս գահապան հապ	Սկսած (այս) կանգնած քարից Արտախտ՝ տերն է հողի այս թագավորը հապ

Հին հայերենով	Ժամանակակից հայերենով
Ք* դոռիեն տի ավելք գ՝ հո[ղ]եր գահապանքա	(Այս) կանգնած քարից մինչև վերջ** (արևելք) հողերն (են) թագավորի

Այս բոլորը նշանակում է, որ հայոց գիրը (այբուբենը) գոյություն է ունեցել

* “ք” տառի իմաստը ըստ Ադյուսակ 10-ի “կանգնած” է:
 ** Ես կարծում եմ որ “վերջը” նշանակում է Սևանա լիճը, որովհետև այդ քարը կանգնեցված է Սևանա լճի ավազանում:

Մաշտոցից 600 տարի առաջ (մեզանից մոտ 2200 տարի առաջ), և այսպես կոչվող բոլոր “արամեական” գրությունները հայկական են ու հայոց լեզվով:

Ժամանակակից հայերեն տառերի համեմատությունը հին հայկականների (փյունիկյան և “արամեական”) տառերի հետ (Աղյուսակ 9) ցույց է տալիս, որ նրանց մեծ մասը նույնն են: Միննույն ժամանակ հարկավոր է հիշել, որ ժամանակակից տառերի կոնֆիգուրացիան ուղղվել-փոփոխվել է մի քանի անգամ, իսկ ժայռերի ու քարերի վրա փորագրված հին տառերը երկար ժամանակ բացօդյա են գտնվել և դրանից խիստ վնասվել են:

Հայոց թագավոր Արտաշես Առաջին Բարու (մ.թ.ա. 189-160թթ.) գրությունները սահմանաքարերին հայերեն են ու գրած են հայոց տառերով:

ԳԼՈՒԽ 2.16. ՄԱՍ 2-ի ԱՄՓՈՓՈՒՄ

Հայոց լեզուն ծագել է Հայաստանում սկսած հոմո սապիենսի ժամանակներից 40-45 հազար տարի առաջ:

Նա զարգացել է քայլ առ քայլ՝ պարզ հնչյուններից մինչև բառերը, որոնցից շատերը սկսվել են (և սկսվում են) “ար”-ով (Արև, որը հայերի հին Գլխավոր Աստծո անունն է):

Այս բոլորը հաստատվում է հայոց լեզվի վերլուծությամբ:

Առաջին գիրը (խորհրդանշեր, պատկերներ, հիերոգլիֆներ) սկիզբ է առել մոտ 25 հազար տարի առաջ: Այս նշաններից շատերը հասել են մեզ ու մինչև այժմ էլ կիրառվում են Հայաստանում և ուրիշ երկրներում (օրինակ, կենդանակերպի նշանները), ինչը նույնպես ապացուցում է հայոց գրի առաջնությունը:

Այն փաստը, որ հայերը բոլոր ժամանակներում բնակվել են Հայաստանում, հաստատում է նաև այստեղ եղած աշխարհագրական անվանումների մեծ քանակը, ինչպես նաև տղամարդկանց ու կանանց բազմաթիվ անունները, որոնք սկսվում են “ար”-ով: Բոլոր հայկական հիմնական անունները դեռ պալեոլիտի ժամանակներից (ավելի քան 10 հազար տարի) պահպանվել են ու առանց որևէ փոփոխությունների հասել են մեր օրերին:

Այն փաստը, որ Հայաստանը (Հայկական Բարձրավանդակը, Արարատ սարը) հանդիսացել են հնդեվրոպացիների և հնդեվրոպական լեզուների օրրանը և որ վաղնջական ժամանակներից (ավելի քան յոթ հազար տարի առաջ) այստեղ եղել է բարձր զարգացած աստղաբաշխություն, հաստատվում է եվրոպացի շատ հեղինակների կողմից [55, 56, 40, 41 և այլն], ինչպես նաև Քարահունջով (ՄԱՍ 1): Դա ապացուցվում է նաև այն բանով, որ արդի հայոց լեզվում բազմաթիվ բառեր կան, որոնց նշանակությունն ու իմաստը բացատրվում են հենց հայերենով, որոնք անցել են այլ լեզուներ ու կիրառվում են (տես Աղյուսակ 14):

Առաջին, Նախնական այբուբենը (19 տառ) Հայաստանում ծագել է ավելի, քան 12 հազար տարի առաջ (մ.թ.ա. 10-րդ հազարամյակում): Դա աշխարհում առաջին այբուբենն էր: Առաջին այբուբենի հետ միասին ծագել են ու կիրառվել տասը թվերը (գերոյով), հաշվի տասնական համակարգը և մաթեմատիկական (այդ բառը հայերեն նշանակում է “հաշիվը մատից մատ է գալիս”): Հետագայում տասնական համակարգը և գերոն մոռացվել են ու նորից հայտնաբերվել միջնադարյան Եվրոպայում:

Զարգացած հայկական այբուբենը (34 տառ) սկիզբ է առել մ.թ.ա. 6-րդ հազարամյակում, և այդ տառերը օգտագործվում են մինչ այսօր (որոշ

փոփոխություններով): Աշխարհի մյուս բոլոր այբուբենները ծագել են այդ այբուբենից (Աղյուսակ 18):

Այդ այբուբենի գոյությունը մեկ դար տևողությամբ ընդմիջվել է մ.թ. 301 թվականին Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունելուց հետո: Հետո, մ.թ. 406 թվականին Մեսրոպ Մաշտոցը վերականգնել է հայոց գրի գոյություն ունեցող այբուբենը (36 տառ): Հետագայում գումարվել է ևս երեք տառ, այնպես որ ժամանակակից հայոց այբուբենը ունի 39 տառ:

Հայոց այբուբենի և լեզվի վերլուծությունը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր հայկական տառը ունի նաև որոշակի իմաստ, նշանակություն (որոնք գալիս են հին ժամանակների խորքից), ինչը ցույց է տրված Աղյուսակ 10-ում՝ “Տարրերի (տառերի) բառարանում” (ՏԲ): ՏԲ-ի կապակցման մեթոդը ցույց է տրված Գլուխ 2.5-ում: ՏԲ-ի կիրառումով գրեթե յուրաքանչյուր հայերեն բառը (և նույնիսկ շատ օտար բառեր ու անուններ) դառնում են հասկանալի ու բացատրելի: Տառերի նշանակությունները կիրառվել են Հայաստանում և այլ երկրներում, ըստ ամենայնի, ընդհուպ մինչև մ.թ. 1-ին հազարամյակը, իսկ հետագայում մոռացվել են:

Հայոց լեզվի հաջորդաբար և տրամաբանական զարգացումը, այսինքն նոր բառերի գոյացման, ձևավորման պրոցեսը նոր մասի (մասերի) ավելացման միջոցով գոյություն ունեցող բառերին, ապացուցվում է ՏԲ-ով և տառերի “ծառերի” առկայությամբ, որոնցից երկու օրինակներ բերված են Աղյուսակ 12 և 13-ում:

Այս ամենը ապացուցում է նաև այն, որ հայոց լեզուն և այբուբենը առաջինն են եղել, զարգացել են միայնակ (չկար մեկը, որից կարելի լիներ բառեր փոխ առնել), ու մեզ են հասել խոր հնությունից:

Կարծում են, որ ինձ հաջողվել է վերականգնել հայոց Նախնական այբուբենը 19 տառից (տես Գլուխ 2.11), որը մեզ է հասել մ.թ.ա. 10-րդ հազարամյակից (Աղյուսակ 15): Առաջին 10 տառը, որոնք վերձանվել են ՏԲ-ի միջոցով, տալիս են հետևյալ նախադասությունը. “Կյանք տվողին ես պաշտեմ, էությունը Նրա հիմքն է, իմ գույզը հոգևոր”: Հաջորդ ինը տառերը տալիս են մի այլ նախադասություն. “Բոլոր մարդկանց ծիլերը սիրո՝ դեպի միացման նշանը շատ հաճելի”: Սա մեծ անակնկալ էր ինձ համար: Ու այդ նշանակում էր, որ 10 և 15 անկախ Աղյուսակները ճիշտ են:

Երկրորդ մեծ անակնկալը եղավ (Աղյուսակ 15-ի առաջին և երկրորդ շարքերի) տառերի ու մինչև այժմ օգտագործվող՝ 1, 2, 3, ...0 (10) թվերի միջև եղած նմանությունը:

Այս բոլորն ապացուցում է, որ Աղյուսակներ 10-ը (ՏԲ) և 15-ը ճիշտ են, ու ժամանակակից թվերը և տասնական հաշիվը գերոյով գալիս են տասներկու

հազարամյա Նախնական Հայոց այբուբենից: Այդ նույնը հաստատվում է նաև Աղյուսակ 16-ով, քանի որ թվերի այժմ գոյություն ունեցող անվանումները որոշակի իմաստ (բացատրություն) ունեն հայերեն: Այս ամենը խոսում է այն մասին որ տառերը , որոնք կիրառվել են Նախնական և Ջարգացած այբուբեններում, նույնն են եղել, ինչպես ժամանակակից հայոց տառերը:

Ես կարողացել եմ նաև հայերեն կարդալ հայոց թագավոր Արտաշես Առաջին Բարու (մ.թ.ա.189-160թթ.) գրությունները հողաբաժան քարերի վրա: Տարբեր գրքերում ասվում է, որ այդ գրությունները արված են եղել սեմիտական արամեերեն լեզվով:

Գրությունների հայերեն ընթերցումն ապացուցեց, որ.

– Հայոց այբուբենը գոյություն է ունեցել մինչև Մաշտոցը (ամենապակասը 600 տարի առաջ)

– Այսպես կոչվող “արամեացիները”, “արամեական” լեզուն և այբուբենը իրականում եղել են հայերը, հայոց լեզուն և այբուբենը (Աղյուսակներ 15, 19, 20):

Հայոց լեզուն եղել է աշխարհի առաջին լեզուն, Աստծո լեզուն, հնդեվրոպական բոլոր լեզուների հիմքը և միջազգային լեզու մինչև մ.թ.ա. 2-1-ին հազարամյակները:

Հայոց այբուբենը եղել է առաջին այբուբենը, որից սկիզբ են առել մյուս բոլոր այբուբենները:

ՄԱՍ 3

ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

“Ex Oriente Lux!”
(Լույսն Արևելքիցն է)

ԳԼՈՒՆ 3.1. ՆԱԽԱԲԱՆ

Քրիստոնեական Հայաստանի պատմությունը նրա թագավորների, կաթողիկոսների ու գիտնականների անուններով հանդերձ լայնորեն լուսաբանված է բազմաթիվ ձեռագրերում, գրքերում, փաստաթղթերում և մոնումենտներում: Սակայն հին Հայաստանի պատմությունը շատ թույլ և հսկայական աղավաղումներով է ներկայացված:

Այս գիրքը հին Հայաստանի իսկական պատմությունը շարադրելու առաջին համառոտ գիտական փորձն է, սկսած ակունքներից և ընդհուպ մինչև մ.թ. 301թ. քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունելը:

Այս ՄԱՍ 3-ին որպես հիմք են ծառայում. ՄԱՍ 1-ը (Քարահունջ), ՄԱՍ 2-ը (Հայոց լեզվի վերլուծություն), այլ գիտական ուղղություններով կատարված բազմաթիվ պեղումների, ուսումնասիրությունների արդյունքները, և շատ այլ գիտնականների կարծիքը:

3.1(1). ԱՆՏՐՈՊՈՒՈՂՈՒԳԻԱԿԱՆ ՏԿՅԱԼՆԵՐ

Անտրոպոլոգիան (մարդաբանությունը) ճշգրիտ գիտություն է, որը չափելով պեղված դամբարանների գանգերը ճիշտ վորոշում է ռասան (տեսակը):

Որոս անտրոպոլոգ Վ.Վ.Բունյակը իր “Grania Armenica” (“Հայկական գանգ”, Պ.Հ) գրքում 1927, [69, էջ 263] գրում է. “Արմենոիդ տեսակը (ռասան) հայտնի է ամենահին ժամանակներից և լայն տարածում է ունեցել Միջագետքի բոլոր տարածքներում, սկսած նրա հարավային մասից մինչև Տիգրիսի և Եփրատի ակունքները, և տարածված է եղել մինչև Անատոլիական թերակղզու արևմտյան

ծայրը մի կողմից և Իրանի ներքին շրջանները՝ մյուս կողմից: Այնտեղ Մերձավոր Ասիայի հնագույն բնակչության մեջ որևէ այլ ռասայի պատկանող տարրեր չեն եղել: Այդ ռասայի ձևավորումը Մերձավոր Ասիայում ավարտվել է եվրոպական և ասիական ցեղերի ծագումից առաջ (թրակիացիների, հելլենների, թուրքերի), որոնք, ըստ ամենայնի, ոչ մի կերպ չեն ազդել բնակչության անտրոպոլոգիական տիպի վրա և լուծվել են հաստատապես ձևավորված արմենոիդ ռասայում”:

Ուրիշ անտրոպոլոգներ՝ Յա.Յա.Ոոգինսկին և Մ.Գ.Լեվինը “Անտրոպոլոգիա” գրքում, 1978, [72, էջ 528], տես նաև [54, էջ 28, 29] գրում են. “Ինչպես հայտնի է, Հայկական Լեռնաշխարհը Երկրագնդի վրա այն տեղերից մեկն է, ուր տեղի է ունեցել ժամանակակից մարդու ձևավորման պրոցեսը: Ակներև է, որ Նեոլիտի ժամանակաշրջանում արմենոիդ ռասան ձևավորվել է Մերձավոր Ասիայում և Կովկասում: Այդ են ապացուցում Միջագետքում, Փոքր Ասիայում և այլ տարածքներում կատարված պեղումների արդյունքները: Մ.թ.ա. 4-րդ հազարամյակում, և հնարավոր է ավելի վաղ, նրանք ունեցել են եվրոպեոիդ ռասայի վառ արտահայտված գծեր”:

Ն.Հ. Քոչարը իր “Հայերի անտրոպոլոգիան” գրքում 1989, [54, էջ 92], գրում է. “Խորանալով դեպի հայ ժողովրդի անցյալը, ... տեսնում ենք, որ արմենոիդ ռասան արդեն ձևավորվել էր ամենապակասը 9000 տարի առաջ... Հայկական Լեռնաշխարհում և հետո տարածվել է Մերձավոր Ասիայի և Կովկասի տարածքներում”:

ՄԱՍ 2-ում հիշատակված Մ.Մ.Զուրիկյանը [68, էջ 25-28] մեջբերում է Զ.Մալբերտի կարծիքը, որը հիմնվելով հնագիտական տվյալներին, իր “Հին Արևելքի հնագույն քաղաքակրթությունները” գրքում [86, էջ 79-109] գրում է, որ նախապատմական մշակույթը ծագել է թուրքական Միջագետքում (պետք է լինի՝ Հայկական Լեռնաշխարհում, Պ.Հ.) և Անատոլիայի հարավային մասում (այսինքն, Կիլիկիայում, Պ.Հ): Նեոլիտի քաղաքակրթությունը, որը հայտնաբերվել է Չաթալ Հիոյուկում, նա անվանել է “գերնոր (աստղ) գորշ գալակտիկայում”:

Սովետական հանրագիտական բառարանում (Մոսկվա, 1987) ասված է. “Արմենոիդ ռասան – Մերձավոր Ասիայի ռասան է, որը որոշ անտրոպոլոգներ անջատում են մեծ եվրոպեոիդ ռասայի ներսում՝ ի նկատի ունենալով Հայաստանի ու նրան հարող Փոքր Ասիայի մասերի և Սիրիայի բնակչությունը:

Առանձնահատկություններն են. տղամարդկանց առատ աճող մորուքը, քթի փոքրիկ կորությունը, գրեթե տափակ ծոծրակը” [92, էջ 76]:

3.1(2). ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԸ

Հին Հայաստանի բնաշխարհը կազմում են.

1. Կովկասը` հարավային Կովկասով (Անդրկովկասով) և Արարատ ու Արագած սարերի շուրջ գտնվող տարածքներով; Սյունիքի, Արցախի, Վարդենիսի և այլ շրջաններով; Փոքր Կովկասի Հայկական Պարի, Գեղամա, Արեգունու և այլ լեռնաշղթաներով; Սևանա լճով, Արաքս, Քուռ, Հրազդան և այլ գետերով և Սև ու Կասպից ծովերի ափերով:

2. Հայկական Լեռնաշխարհը` Միփան, Նեմրուք, Նպատ և այլ սարերով; Քարուտի, Տայքի, Կորդուքի, Հայկական Տավրոսի, Բարձր Հայքի և այլ լեռնաշղթաներով; Կապուտան (Ուրմիա) և Վան լճերով, Եփրատ, Արածանի, Տիգրիս, Արաքս, Չորոխ և այլ գետերով:

3. Միջագետքը` Եփրատ, Տիգրիս գետերով, Բաբելոնի, Շումերի, Փյունիկյայի տարածքներով, Պարսից ծոցի ու Միջերկրական ծովի ափերով:

4. Փոքր Ասիան (Անատոլիա)` Բարձր Հայքով, Փոքր Հայքով, Կիլիկիայով, Կիլիկյան Տավրոսի սարերով, Սև, Միջերկրական ու Էգեյան ծովերի ափերով:

5. Միջերկրական ծովի արևելյան մասը` Փյունիկիայով, Պաղեստինով, Լիբանանով և Սիրիայով:

Հայերը (արմենոիդ ռասան) ծագել են ի սկզբանե Հայաստանում` Արարատ սարի, Սևանա լճի շուրջը և Հայկական Լեռնաշխարհում, Վանա լճով, հետո տարածվել են ողջ Կովկասով, Միջագետքով ու Փոքր Ասիայով և ամենասկզբից եղել են այդ բոլոր տարածքների միակ բնակչությունը (50-ից 40 հազար տարի առաջ) մինչև մ.թ.ա. 4 – 3-րդ հազարյամյակները:

Բոլոր նշված տարածքներում հայերն ապրում են մինչև այժմ: Հայկական Հանրապետության այժմյան տարածքը շատ փոքր է, մոտ 30000 քառակուսի կմ (պատմական Հայաստանի տարածքի մոտ 5%-ը):

Այսօր գործածության մեջ գտնվող բազմաթիվ տերմիններ աղավաղված են: Օրինակ, Հայկական Միջագետքը իր մայրաքաղաք Արհանով (Ուրֆա, Օրդան, Էդեսա), որը հնագույն ժամանակներից մ.թ.ա. 312թ. մինչև 216թ. պատմական ժամանակաշրջանը հայտնի է եղել որպես Հայկական թագավորություն, այժմ կոչվում է Հյուսիսային Միջագետք: Հայկական Լեռնաշխարհը անվանում են Արևելյան Թուրքիա (նրանք ուզում էին փոխել նույնիսկ Արարատ սարի անունը):

Այժմ արմենոիդ ռասայի փոխարեն օգտագործում են եվրոպեոիդ, կովկասոիդ և նույնիսկ Առաջնաասիական ռասա ձևակերպումները:

3.1(3). ԲՆԱԿԱՆ ԵՎ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Մարդկության զարգացումը, հատկապես վաղ շրջանում, կախված է շրջապատող միջավայրից (պայմաններից):

Հին Հայաստանի աշխարհագրական լայնությունները գտնվել են հյուսիսային լայնության մոտավորապես 41⁰ մինչև 30⁰ սահմաններում:

Վաղ ժամանակաշրջանում (սկզբից) հայերն ապրել են հարավային Կովկասում և Հայկական Լեռնաշխարհում մոտավորապես 36⁰-41⁰ լայնությունների վրա և 37⁰-49⁰ երկայնություններում, 400 հազար քառ.կմ. ընդհանուր տարածքում, որը այժմ կրում է պատմական Հայաստան անունը, և ուր զարգացել են հայկական թագավորությունները (տես նաև [98, էջ117]):

Պատմական Հայաստանը մի Լեռնաշխարհ է, որի միջին բարձրությունը կազմում է մոտ 1700 մ բազմաթիվ հանգած հրաբխային լեռնաշղթաներով:

Հայկական Լեռնաշխարհի աշխարհագրական անվանումով (տերմինով) են կոչվում Սև, Կասպից և Միջերկրական ծովերի միջև գտնվող տարածքները իրենց առանձին լեռնաշղթաներով:

Հայկական Լեռնաշխարհի հյուսիս-արևմտյան մասը ներառում է Բարձր Հայքի լեռնաշղթաները ու տարածվում է մինչև Սև ծովի ափերը; հյուսիսային և հյուսիս-արևելյան մասերը ներառում են Արարտյան դաշտը և Հայկական պար լեռնաշղթան, որոնք ձգվում են մինչև Ռիոն և Քուռ գետերն ու Կասպից ծովը; հարավ-արևելյան մասը (Ուրմիա լճով) տարածվում է մինչև Իրանական սարահարթը; հարավ-արևմտյան մասը՝ մինչև Հյուսիսային (Հայկական) Միջագետքը ներառյալ; և արևմտյան մասը՝ մինչև Փոքրասիական սարահարթը:

Ամենաբարձր սարը Արարատն է (Մեծ Արարատը՝ 5165մ բարձրությամբ ծովի մակերևույթից և Փոքր Արարատը՝ 3925մ), որը գեղեցկորեն իշխում է Արարատյան դաշտի վրա (մոտ 900 մետր) Արաքս գետով և գրեթե հավասար հեռավորության վրա է գտնվում Սևան, Վան և Ուրմիա լճերից, ինչպես նաև Սև, Կասպից և Միջերկրական ծովերից: Արարատ սարը Արարատյան դաշտով պատկերված է Նկ.Նկ. 61, 62, 63:

Երկինքը Հայաստանում սովորաբար կապույտ է, արևաշող: Հաճախ լինում են արևի գեղեցիկ մայրամուտներ, ինչպես պատկերված է Նկ. 64:

Վան նաև շատ այլ բարձր հանգած հրաբուխներ, ինչպիսին է քառագագաթ Արագած սարը (4095մ, հսկա խառնարանով գագաթների միջև), Սիփանը՝ 4434մ, Խաչքարը՝ 3937մ, Կապուտջուղ՝ 3917մ, Չեմադան՝ 3609մ, Իշխանասար՝ 3552մ, Թոնդրակ՝ 3542մ, Արտոս՝ 3475մ, Ումբասար՝ 3373մ, Մռավասար՝ 3343մ, Սամսար՝

3285մ, Խուստուփ՝ 3216մ, Սարմանտս (Բյուրակն)՝ 3189մ, Մնծուր՝ 3188մ, Մայմեխ՝ 3109մ, Նեմրութ՝ 3050մ, Մարութասար՝ 2967մ և շատ այլ սարեր [73]:

Հայաստանի սարերը հսակայական քանակությամբ օգտակար հանածոներ են պարունակում. քարեր (գրանիտ, բազալտ, տուֆ, օբսիդիան, ագաթ), մետաղներ (երկաթ, պղինձ, ոսկի, անագ, մոլիբդեն և այլն): Կան նաև բազմաթիվ մեծ ու փոքր գետեր, շատ աղբյուրներ սառնորակ, մաքուր ջրով: Դաշտերում, սարերի լանջերին մեծ անտառներ կան ու շատ ծաղիկներ: Թույլ տվեք հիշեցնեն, որ այստեղ է գտնվել Աստվածաշնչյան դրախտը:


Կլիման բավականին բարեխառն է, ոչ շատ շոգ ամառով (20° - 30° C) և ձնառատ, բայց ոչ շատ ցուրտ ձմեռով (-5° - 15° C): Օդը մաքուր է, շատ արևային օրեր կան (մոտ 360 օր տարվա մեջ), երկինքը պարզ է ու գիշերներն՝ աստղալից:

Կենդանական աշխարհը հարուստ է. առյուծներ, վագրեր և հովազներ (անցյալում), մարալներ (պախրա), արջեր, աղվեսներ, այծյամներ, եղնիկներ, գայլեր և այլն, ինչպես նաև արծիվներ, արագիլներ, կռունկներ, ծիծեռնակներ, աղավնիներ և այլն: Լճերում և գետերում կան շատ ձկներ:

Պատմաբան Խ.Սամվելյանը գրում է, որ քարե դարում (պալեոլիտ) Հայաստանում ապրել են նույնիսկ մամոնտներ, որոնց ոսկորները հայտնաբերվել են պեղումների ժամանակ Լոռիում՝ Դեբեդ և Փամբակ գետերի միացման տեղի մոտակայքում, Գյումրիում (տես Նկ. 53 և 54) ու պահվում են Երևանի Երկրաբանական թանգարանում; մի այլ կմախք պեղվել է Խնուս գյուղի մոտակայքում ու պահվում է Բրիտանական թանգարանում “Elephas Armenniacus” անվան տակ [37, էջ 108, 109]: Հայաստանի բնությունը իր լեռնային ռելիեֆով, փոփոխական կլիմայով (ամառ-ձմեռ), բնական հարուստ հանածոներով և այլ պայմաններով բարենպաստ են եղել քարե դարի մարդու կյանքի ու զարգանալու համար և նպաստել են նրա կուլտուրայի արագ զարգացմանը:




Նկ. 53. Մամոնտի կմախք, որը պեղված է Հայաստանում [37]




Նկ. 54. Քարե դարի մարդու նկարած մամոնտը [37]

**ԳՐՈՒՆ 3.2. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՇԱՏ ՀԻՆ ԺԱՄԱՆԱԿ
(300 - 50 ՀԱԶԱՐ ՏԱՐԻ ԱՌԱՋ)**

Հին Հայաստանի և մասնավորապես Հայկական Լեռնաշխարհի տարածքը եղել է քարե դարի մարդու և նրա ծագման ու արագ զարգացման բարենպաստ վայրը: Այդ տարածքում կատարված հնագիտական պեղումները, մասնավորապես ժամանակակից Հայաստանում, հայտնաբերել են քարե դարի մարդու բազմաթիվ բնակավայրեր ու իջևանատեղեր նրա հազարավոր քարե գործիքներով (օբսիդիանից, բազալտից), կավե ամանեղենով, օջախներով, ոսկորներով և այլն: Նկար 55-ում ցույց են տրված քարե մուրձեր, որոնք հայտնաբերվել են հին Նախիջևանի աղի հանքերում, Նկ. 56-ում ներկայացված են օբսիդիանե գործիքներ, որոնք պեղվել են Չամ-Մեղրիում և Խաչագում [37]: Այդ գործիքները կիրառվում էին Հայաստանում քարե դարում: Պեղումների ժամանակ



Նկ. 55. Հայաստանում պեղված քարե դարի մուրձեր [37]



Նկ. 56. Հայաստանում պեղված քարե դարի օբսիդիանից պատրաստված գործիքներ [37]

ժամանակակից Հայաստանում պալեոլիտի մշակույթի շատ բնակավայրեր են հայտնաբերվել Արարատյան դաշտավայրում, Արթին սարին (Արագածի հարավ-արևմտյան լանջին), Ազոխի քարանձավներում, Հրազդանի կիրճում՝ Երևանի և Արզնու մոտ, Լուսակերտ ու Շաննիդար գյուղերի մոտակայքում և այլն: Պատմական Հայաստանում նման բնակավայրեր պեղվել են Կանա լճի ավազանում, Եփրատ և Արածանի գետերի հովիտներում Հայկական Տավրոսի ժայռածերպերի լանջերին, Խարբերդի (Քարբերդ) հովտում և այլն [73, էջ 5]:

Համաձայն “Հայկական հանրագիտարանի” ժամանակակից Հայաստանում պեղումների ժամանակ Աշեյան կուլտուրայի (500-100 հազար տարի առաջ) բնակավայրեր են հայտնաբերվել Աատանի դարում, Արեգունիում, Բլուրում, Հարավային Բլուրում, Լուսակերտում, Կարմիր Ջրաբերում, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Ազոխ գյուղի մոտակայքում (ավելի քան 300 հազար տարի առաջ): [75, հատ. 1, էջ, էջ 122, 123, 465; 1974]:

Հայ պատմաբան Շ.Մկրտչյանը պատմում է, որ Ազոխ գյուղի մոտակայքում մի հսկայական, 3000 քառ. մ չափերի, քարանձավ է պեղվել (մինչև 7մ խորության) քարե դարի մարդու մեծ իջևանատեղով: Գլխավոր հայտնաբերությունը եղել է քարե դարի մարդու ներքևի ծնոտը, այդ մարդն ապրել է 100-50 հազար տարի առաջ: 1979թ, հնագետների միջազգային խումբը նրան անվանել է “Ազոխացի” և ասվել է, որ Ազոխը “Մարդկային քաղաքակրթության հնագույն բնակավայրի նշանավոր հայտնաբերումն է” [76]:

Մինչ այդ նեանդերտալյան մարդու հետքեր են հայտնաբերվել չորս այլ վայրերում. Մարոկկոյում, Պերմանիայում, Մեծ Բրիտանիայում և Իտալիայում: Ազոխացին շատ հետաքրքիր է, որովհետև նա անցումային մարդն է Սինանտրոպի (400 հազար տարի առաջ) և Նեանդերտալցու (200-35 հազար տարի առաջ) միջև, ինչպես նաև նեանդերտալցուց դեպի կրոմանյոնցին, որը արդեն հանդիսանում է այժմ գոյություն ունեցող մարդու՝ հոմո սապիենս տեսակը [76]:

Բացի այդ, Ազոխի քարանձավում հայտնաբերվել են 43 տեսակի տարբեր կենդանիների 20 հազարից ավելի ոսկորներ, մոտ 6 հազար քարե գործիքներ, կավե շատ ամաններ և իրեղեն, շատ օջախներ, ժայռապատկերներ, մշակված քարեր և այլն [76]:

Այսպիսով, Հայաստանում սկսած հնագույն ժամանակներից (ավելի քան 300 հազար տարի առաջ) և մինչև 50-40 հազար տարի առաջ ապրել են քարե դարի մարդիկ. սինանտրոպներ, նեանդերտալցիներ և վերջապես կրոմանյոնցին (հոմո սապիենսը), որը եղել է հայերի նախնին:

3.2(1). ԳԼՆԱԿՈՐ ԱՐ - ՀԱՅՐ ԱՍՏՎԱԾԸ ԵՎ ՄԱՅՐ - ԱՍՏՎԱԾ ՀԱՅԱՆ

Ամենասկզբից (50-40 հազար տարի առաջ) հայերը շատ լավ զգում ու գիտակցում էին, որ ապրում են բնության գրկում ու հանդիսանում են նրա մասնիկը: Լինելով սերտ կապի մեջ բնության հետ, նրանք միշտ զգացել են նրա թե բարությունը, թե դաժան ուժը:

Նրանց կյանքում (ինչպես նաև բոլոր կենդանիների ու բույսերի կյանքում) բարության և ուրախության ֆենոմենը եղել է Արևը, որը պարզևս էր լույս ու տաքություն, ինչից կախված էր նրանց կյանքը: Այնպես որ բնական էր, որ նրանք հարգում ու սիրում էին Արևը ինչպես իրենց հորը, որպես բարի, առատաձեռն ու անշահախնդիր Արարիչ: Նրանց հարգանքն ու սերն Արևի նկատմամբ աճեց, վերածվելով հավատքի ու պաշտամունքի Արևի հանդեպ, որպես Հայր - Աստծո:

Նրանք դիմում էին Արևին (Ար-ին), խնդրելով օգնել, երբ իրենք դժվարության մեջ էին, ու շնորհակալ էին նրան: Նրանք խոսում էին Արևի հետ հայերեն, որն առաջին լեզուն էր, Աստծո լեզուն:

Արև - Աստվածը եղել է հայերի հայրը, **Ար - Հայր Գլխավոր Աստվածը** և հայերը Նրա զավակներն էին, արիացիները. “Ար-յան” = (մարդիկ) Արևի երկրից: Նրանք գիտեին նաև, որ Արևը լույս է տալիս, տաքություն ու կյանք բոլոր մարդկանց, կենդանիներին ու բույսերին, այսինքն Արարիչն է ողջ Երկրի, Գլխավոր Աստվածն է: Նրա լրիվ անունը եղել է **“ՄԵԾՆ ՈՒ ԱՐԻ ԱՐ - ՀԱՅՐ ԱՍՏՎԱԾ”**:

Փաստորեն հայերը միշտ հավատացել են մի Աստծո, Ար-ին: Այլ հայկական աստվածները շատ ավելի ուշ են ծագել ու եղել են Ար-ի զավակները կամ Նրա օգնականները:

Հայ պատմաբան Լ.Շահինյանը գրում է, որ ըստ հայերի հավատքի, Ար-ը եղել է Երկնքի ու Երկրի Արարիչը, գլխավոր Աստվածը և մնացած աստվածների հայրը [82, էջ 4]:

Այստեղ անհրաժեշտ է նշել, որ ավելի ուշ, երբ գիտելիքներ էին հավաքվել աստղերի և համաստեղությունների մասին (գուցե Քարահունջի ժամանակից առաջ, երևի 15-10 հազարամյակ առաջ), երբ հայերը հասկացել էին, որ գոյություն ունի մի ամբողջ տիեզերք, Աստծո կոնցեպցիան ընդլայնվել էր, տարածվելով ողջ Տիեզերքի վրա: Սա արտահայտված է “Աստված” հին հայերեն բառով, ուր “Աստ”-ը նշանակում է ամենուր, այսինքն՝ Տիեզերք և “-ված”-ը նշանակում է տարածված, սփռված: Այսպիսով, Աստվածը մի էություն է, որը սփռված է ողջ

Տիեզերքով, ամենուրեք է: Արևը Տիեզերքի մի մասն է, Տիեզերքի մեզ ամենամոտիկ գտնվող և զորեղ ներկայացուցիչը (օբյեկտը):

Համաձայն հին առասպելների հայերը հավատեցել են, որ իրենց ստեղծել (ծնել) է Տիեզերական Հայր-ԱՍՏՎԱԾ ԱՐ-ը Երկրի - Ջրի - Մայր -ԱՍՏՎԱԾՈՒՀՈւ հետ: Նրա անունը եղել է «ՀԱՅԱ»: Հայերեն այդ անունը նշանակում է. «Ես հայ-ուհի (եմ)»:

Հին ժամանակներից հայերն իրենց երկիրն անվանում են Արմենիա (ու նրա բնակիչներին՝ արմեններ) և Հայաստան (հայեր): Այս երկու անվանումները համագոր են և նշանակում են «Ար • մեն • իա» = «Արևի (ԱՐ-ի) մարդկանց երկիր» և Հայա-ստան = «Մայր հողի երկիր» կամ «Հայ • յա • ստան = իմ հայկական երկիր»: Այսպիսով, այս երկու անվանումները գալիս են Ար - Հայր (Հայրենիք) և Հող - Մայր (մայր հող) անուններից: Սա ևս մի ապացույց է այն բանի, որ Հայաստանում տղամարդն ու կինը հին ժամանակներից (մինչև այժմ) հավասար են եղել: Ցավոք շատ հեղինակներ սխալ կարծիք ունեն այն մասին, որ հայերն իրենց երկիրը անվանում են Հայաստան, իսկ Արմենիա անունը օգտագործում են այլ երկրների մարդիկ: Դա իհարկե սխալ է, որովհետև.

ա) երկու անվանումն էլ, ինչպես վերը ասվեց, գալիս են հայոց լեզվից՝ հայկական հին աստվածների անուններից;

բ) բոլոր երկրներում չէին կարող անվանել միևնույն անունով (Արմենիա), այլ կօգտագործեին տարբեր անուններ, այն անունները, որոնք իրենք կոչեին: Այսպիսով, եթե ամենուրեք օգտագործվել է միևնույն անունը, դա նշանակում է, որ անվանումը վերցված է մի տեղից (երկրից):

գ) անվանումը գալիս է այն երկրից, որի լեզվում այն ունի իմաստ, կարող է բացատրվել;

դ) ինչպես վերը ասվեց, երկու անվանումն էլ հայերենով ունեն համապատասխան բացատրություն: Ուրեմն «Արմենիա» և «Հայաստան» բառերը հայերեն են:

Ավելի ուշ Հայա անունը հայերենում ձևափոխվել է ու դարձել Գայանե և այլ լեզուներում՝ «Գեա» (հույների Երկրի Աստվածուհին է), «Եվա» - Աստվածաշնչում և այլն:

Հայերի համար մոր կոնցեպցիան այնքան վեհ է եղել, որ համարվում էր, որ նույնիսկ Արևը ամեն օր արևամուտին գնում էր հանգստի իր մոր մոտ (մայր է մտնում), այսինքն՝ հայկական սարերի ետև կամ ծովի, օվկիանոսի մեջ: Այստեղից է գալիս նաև «Արմորիկա» բառը ֆրանսիայի հյուսիս-արևմուտքում գտնվող Բրետան թերակղզու հին հայկական անվանումը, ուր բնակվում էին

բրետոնացիները = կելտերը = հայերը (տես ստորև): “Ար • մոր • իկա” նշանակում է. “Արևը մոր մոտ է գալիս”, որովհետև մարդիկ ամեն օր տեսնում էին, ինչպես է Արևը նստում Ատլանտիկ օվկիանոսը:

Մեծ հարգանքն ու սերը դեպի հայրն ու մայրը հայերը պահպանում են մինչև այժմ, և դա հայկական ավանդության գլխավոր գծերից մեկն է: Հայերը, գուցե միակ ազգն են աշխարհում, որոնք մինչև հիմա երգվում են Արևով. “Հորս արև”, “Մորս արև”, “Արևս վկա”, ուր Արևը նշանակում է նաև նրանց կյանքը:

Բարի Արև - Աստծո կրոնը հայերը հետագա հազարամյակների ընթացքում տարածել են շատ ուրիշ ցեղերի ու ժողովուրդների մեջ: Հայերը պահպանել են Արև-Աստծո կրոնը մինչև քրիստոնեությունը որպես պետական կրոն մ.թ 301թ. ընդունելը:

Իրականում Արևի պաշտամունքը այժմ էլ է շարունակվում, քանի որ քրիստոնեությունում Հայր Աստվածը նույն հայկական հին Ար-Հայր Աստվածն է, որի զավակն է Հիսուս Քրիստոսը, որը բարության Իր ուսմունքով Հայր-Աստծո՝ նույն հին հայկական Արև-Հայր-Աստծո որդին է: Այնպես որ Հիսուս Քրիստոսը հայ է եղել (և է):

Քրիստոնեությունը, այդ մեծ ու քաղաքակիրթ կրոնը, չէր կարող ծագել մի օրվա մեջ: Քրիստոնեությունը զարգացել է երկար ժամանակամիջոցում, խոր են ու մեծ նրա արմատները ու ակունքները, որոնք սկիզբ են առնում հնագույն հայկական Արև -Հայր -Աստծո բարի կրոնից:

Այսպիսով, Արևի կրոնը հեթանոսական կամ կռապաշտական անվանելը ճիշտ չի: Արևի հին կրոնում չկան կուռքեր, ֆետիշներ, կրակ, զոհաբերություններ, ինչպես նաև վայրի պարեր: Դա եղել է հին ու քաղաքակիրթ ժողովրդի՝ հայերի մարդկային ու բարի կրոնը: Ու մինչև հիմա քրիստոնեությունում էլ Հայր-Աստվածը Արևն է (ԱՐ-ը):

Այս բոլորը չի նշանակում, որ ես ուզում եմ վերադարձնել Արևի պաշտամունքը, ես ուզում եմ պարզաբանել ու պատմել պատմական իրողությունը, ինչպես այն եղել է:

Արիական Մեծ Արև-Հոր Գլխավոր Աստված ԱՐ-ի պաշտամունքը Հայաստանում եղել է մոտ 50 հազար տարիների ընթացքում: ԱՐ-ը եղել է գլխավոր Աստվածը բոլոր հայկական թագավորություններում, իսկ հետո ընդունվել է բազմաթիվ այլ երկրներում: Անգլիացի պատմաբան Արչիբալդ Սեյսը գրում է. “Արա”-ի (ԱՐ-ի) պաշտամունքը ծևավորվել է Հայկական Լեռնաշխարհում, ապա հետո տարածվել է հին աշխարհի շատ ցեղերի ու ազգերի մեջ” [78, էջ 13]:

Եվ իրոք, այլ երկրներում գլխավոր աստվածներն էին. ՐԱ-ն՝ Եգիպտոսում,

ԱԱՐԱ-ն՝ Ասորեստանում, ԱՐԻԱ-ն՝ Բաբելոնում, ԱՐԱՄԱԶԴ-ը (ՈՐՄԻԶԴ)՝ Իրանում, ԱՐԵՍ-ը, ԱՊՈԼՈՆ-ը՝ Հունաստանում, ՅԱՐ-ը (ՅԱՐԻԼՈ)՝ սլավոնական երկրներում, ԱՐԱԼԻ-ն՝ Վրաստանում, ԱԼԼԱՀ-ը՝ Իսլամի երկրներում և այլն:

Ուսումնասիրությունների արդյունքը ցույց է տալիս, որ հնդեվրոպացիների կուլտուրան ծագել է միևնույն, միակ աղբյուրից: Այդ հաստատվում է նաև հին հայկական “Սասնա ծռեր” էպոսի, հնդկական վեդերի, Իրանական “Ավեստայի” միջև եղած նմանությամբ: Այդ նմանությունը իր հերթին հաստատում է, որ արիացիները Հայկական Լեռնաշխարհից տարածվել են դեպի Սուներ (Շուներ) մ.թ.ա. 4-րդ հազարամյակում և դեպի Հնդկաստան, Հունաստան, Իրան մ.թ.ա. 3 – 2-րդ հազարամյակներում [78, էջ 11]:


Ամերիկյան գիտնականներ Լիթլ Ռոբինսոնը ու Էդգար Քեյսը կարծում են, որ տարբեր երկրների (Եգիպտոսի, Ասորեստանի, Պարսկաստանի, Հունաստանի, Յուկատանի, Մեքսիկայի, Մայայի և այլն) հնագույն մշակույթները (սֆինքսները բուրգերը) “զարմանալիորեն նման են” և “ընդհանուր ակունքներ ունեն”: Լ.Ռոբինսոնի գրքում ասված է. “Ռե կամ Րա անունը կապված է եղել Արևի Աստծո հետ՝ բոլոր աստվածներից գլխավորի անվան հետ: Այն կարող էր Կովկասից եկած լինել” [79, էջ 73]:

Այժմ հին Հայաստանի տարբեր մասերում Գլխավոր ԱՐ Աստծո անունը նույնպես աղավաղված է: Օրինակ, Վանա լճի շուրջ (Հայկական Լեռնաշխարհ) ապրող հայերն իրենց անվանել են ՀԱՐԴԵՐ, ինչը նշանակում է Հ • ԱՐ • Դ = արևապաշտներ = հայեր: Բայց հիմա այդ անունը օգտագործվում է որոշ աղավաղումով՝ Հալդ կամ Չալդ ու շատ հեղինակներ օգտագործում են այդ անունը նաև որպես Հալդերի (Չալդերի) Գլխավոր Աստծո անունը:


Այժմյան Հայաստանում՝ Վարդենիսի, Սյունիքի (Զանգեզուր), Արագածի լեռնային շրջաններում, Եղեգիս, Արփա, Որոտան գետերի ակունքներում և այլուր քարերի վրա քանդակած հսակայական քանակությամբ ժայռապատկերներ կան: Հատկապես շատ, ավելի քան 2000 հատ ժայռապատկերներով քարեր են հայտնաբերվել Ուխտասարի վրա, Սիսիանի մոտակայքում, 3300 մետր բարձրության վրա: Ժայռապատկերների մի այլ ստեղծագործ կենտրոն կա էլի Սիսիանի մոտ գտնվող Ջերմաջուր սարի վրա և այլն:

Հայ պատմաբաններ Գ.Հ.Կարախանյանը և Պ.Գ.Սաֆյանը “Սյունիքի ժայռապատկերները” գրքում ներկայացրել են ժայռապատկերների խմբաւտեսակների 342 աղյուսակ [52]: Այստեղ կան հին ժամանակների կենդանիներից մեծ մասի մ.թ.ա. 5 – 3-րդ հազարամյակների ժայռապատկերներ, ինչպես և որսի տեսարաններ՝ այծեր, մուֆլոններ, վիթեր, եղնիկներ, վայրի ցուլեր (զուբրեր),

ծիեր, շներ, գայլեր, շնագայլեր, հովազներ, արջեր, առյուծներ: Կան նաև փորագրած շատ նկարներ, որոնք պատկերում են արևածագը, տես Նկ. 57, 58: Այդ երկու՝ 57 և 58 նկարների համեմատությունը թույլ է տալիս ենթադրել, որ անիվը հայտնագործված է Հայաստանում մ.թ.ա 5-րդ հազարամյակից շատ ավելի վաղ, որպես Արևի նկարի մոդելը:



Նկ. 57. Արևածագի (երկու պահի) ժայռապատկեր (մ.թ.ա. 5-րդ հազարամյակ) [52]



Նկ. 58. Եզներով լծած քառանիվ սայլի ժայռապատկեր (մ.թ.ա. 4-րդ հազարամյակ) [52].

Հայաստանում եղել են նաև Արևի Աստծուն նվիրված բազմաթիվ տաճարներ՝ Էջմիածնում, Ջվարթնոցում, Քարահունջում, Գառնիում և այլն: Գլխավոր տաճարը գտնվել է Ղարանաղյաց շրջանի, Անիի ամրոցում, ուր գլխավոր քուրմի կենտրոնն էր: Ղոբախտաբար, քրիստոնեությունն ընդունելուց հետո բոլոր տաճարները (բացի Գառնու տաճարից) քանդվել են, և նրանց հիմքերին կառուցվել են քրիստոնեական եկեղեցիներ: Նկար 65 պատկերված է ԱՐ-Հայր Աստծո տաճարը Գառնիում, ժամանակակից Հայաստանում (մ.թ.ա. 1 – 2-րդ դար):

Նկար 66 պատկերված է ԱՐ Աստվածը առյուծի վրա կանգնած: Այդ ֆրեսկան (որմնանկարը) հայտնաբերվել է Էրեբունի հին ամրոցի (Երևան) պեղումների և վերականգնողական աշխատանքների ժամանակ նրա ներքին պատերից մեկի վրա (մ.թ.ա. 8-րդ դար) [78]:

Վանա լճից դեպի արևմուտք, Եփրատ գետի աջ ափին Նեմրուք սարի լանջին՝ պատմական Հայաստանի երկրամաս Գամիրքում (Կապադովկիայում, այժմ Թուրքիա) մի եզակի հին հուշարձան կա մեծ, 9 մետր բարձրություն ունեցող արձաններով (գահերին բազմած). հայոց Գլխավոր Աստված ԱՐ-ի, Նրան նման ԿԵՍԱՐԻ (հայոց թագավորների տիտղոսը), ԱՆԱՀԻՏ Աստվածուհու, ՎԱՀԱԳՆ Աստծո, ՏԻՐ Աստծո, ինչպես նաև ԱՐ Աստծո խորհրդանիշներ՝ Առյուծի և Արծվի:

Ցավոք, այդ եզակի հուշարձանը քանդել են: Նկար 59 պատկերված են այդ արձանների գլուխները [73, էջ 21]: Ավելի մանրամասն այդ հուշարձանի մասին տես Բաժին 3.2(3):



Նկ. 59. Եզակի հայկական քանդված Մոնումենտ Գամիրքում (Կապադովկիայում, այժմ Թուրքիա) աջից ձախ՝ ԱՐ Աստծո, ԱՆԱՀԻՏ Աստվածուհու, Արծվի, ՎԱՀԱԳՆ Աստծո, Հայոց ԿԵՍԱՐԻ, Արծվի, Առյուծի գլուխներով [73]:

Քրիստոնեությունը, որպես քաղաքակիրթ ազգերի բարի, մարդասիրական կրոն հայերն ընդունել են ավելի վաղ, քան այլ ազգերը, որովհետև այն եղել է նրանց Արև - Հոր բարի և մարդասիրական կրոնի շարունակությունը, ինչպես նաև այն պատճառով, որ քրիստոնեական Հայր - Աստվածը (մինչև այժմ) նույն հայոց ԱՐ - Հայր Գլխավոր Աստվածն է:

3.2(2). ՀԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՅԼ ԱՍՏՎԱԾՆԵՐ

Մեծ արիական Արև - Հայր Գլխավոր ԱՐ Աստծո պաշտամունքը Հայաստանում ծագել է մոտ 50 հազար տարի առաջ:

Բացի ԱՐԻՑ և Հայայից հայերը ունեցել են նաև ուրիշ աստվածներ:

ԱՆԱՀԻՏ աստվածուհին ԱՐԻ դուստրն է, Նա շատ հարգված ու սիրված է եղել Հայաստանում, Նրան կոչել են “Մայրության Աստվածուհի”, նաև “Ոսկե Մայր” և “Ոսկե ծնունդ”:

Նրա գլխավոր տաճարները գտնվել են. Բարձր Հայքի Եկեղյաց շրջանում, Երիզավանում (հետագայում՝ Երզնկա), Տարոնի Աշտիշատում (Վանա լճից դեպի արևմուտք), ուր գտնվել է “Անահիտի աթոռը”, ինչպես նաև Արտաշատում, Բազարանում և այլուր:

Նրա գլուխը (կտորած արծանի մի մասը) պահվում է Բրիտանական թանգարանում, պատկերված է Նկ. 67-ում:

ՆԱՐ կամ ՆԱՆԵ Աստվածուհին ԱՐ-ի դուստրն է, իմաստության Աստվածուհին: “Նար” հայերեն նշանակում է “առաջնորդող, առաջնորդ”: “Նանե (Նանի)” նշանակում է “մայր, տատ”, ինչպես նաև “ստնտու, սնող”:

Նրա տաճարը գտնվում էր Ղարանաղյաց շրջանի Թիլ քաղաքում:

ՎԱՀԱԳՆ, պատանի Քաջն Վահագնը կամ Վահագն Վիշապաքաղը՝ Չարի ու վիշապներին ոչնչացնողը: Նրան ջերմորեն սիրում էին, համարում էին արիության, խիզախության, ուժի, հերոսության, կայծակի ու (ավելի ուշ) պատերազմի Աստված:

Նրա “ծննդյան” ենթադրյալ տարեթիվը մ.թ.ա. 22946 թվականի Արեգի 1-ն է (մարտի 21), երբ սկսվել է առաջին հայկական (արևային) օրացույցը (տես ՄԱՍ 1, Գլուխ 1.17): Նկար 68-ում պատկերված է նրա ծննդյան պահը (տես նաև էջ 176):

Նա իր կնոջ, ԱՍՏՂԻԿԻ հետ ապրում էր ամրոցում, Վանա լճի ափին: Նրան նվիրված գլխավոր տաճարները գտնվում էին Աշտիշատում (Տարոնի շրջան), Վանա լճի մոտ, Վասպուրականում և Բարձր Հայքում: ՎԱՀԱԳՆԻ արձանը Երևանում ներկայացված է Նկ. 69-ում: Նրա գլխի հին արձանը (որը, ըստ ամենայնի, ստեղծված է մինչև Մեծ Զրիեղեղը, տես Բաժին 3.1(9), ներկայացված է Նկ. 59-ում (պատանի Աստված):

ԱՍՏՂԻԿ Աստվածուհին, ԱՐ-ի դուստրը և ՎԱՀԱԳՆԻ կինը, եղել է հայերի կողմից շատ սիրված երկնային լույսի, ջրի, սիրո և գեղեցկության Աստվածուհին: Նրա անունը հին Հայաստանում դրվել է Արևից ու Լուսից հետո երկնային ամենապայծառ մարմնին՝ Արուսյակին (Վեներային): “Վարդավառի” տոնին նրան վարդեր էին նվիրաբերում: “Աստ” հայերեն նշանակում է “Տիեզերք”, “Աստղ” (տիեզերական նյութի խտացում) - այսինքն՝ “աստղ”, “Աստղիկ”` “փոքր աստղ”:

Նրա տաճարները գտնվել են Տարոնի մարզի Աշտիշատում և Վանա լճի ափին:

Նրա անունը ընդօրինակել են այլ ժողովուրդներ, տալով իրենց աստվածուհիներին. Աստարտ, Իշտար, Իսիդա, ինչպես նաև միջազգային “աստրոնոմիա - աստղագիտություն” և “ստար - աստղ”: Հայերենում “աստղ” բառը ծագել է ԱՍՏՂԻԿԻՑ (կամ ընդհակառակը):

ՏԻՐ Աստվածը Գրի Աստվածն է, ԱՐ-ի գրագիր-օգնականը (քարտուղարը), գրավոր խոսքի, գիտության և արվեստի պահպանողը: Նա ուներ “սպիտակ” ու “սև” մեծ գրքեր, որոնց մեջ գրանցում էր մարդկանց լավ և վատ արարքները: Նա նաև բացատրում էր երազները:

Նրա տաճարները գտնվում էին Արարատի շրջանի Երազամույնում (Զվարթնոց), Քարահունջում, Կաղզվանում, Արագածում, Վանում և այլն:

ՏԻՐ հին Աստծո առկայությունը վկայում է նաև այն մասին, որ հին Հայաստանում գիր է եղել:

ՄԻՀՐ Աստվածը (Մարդուկ) Արի զավակն է, լույսի, կրակի Աստվածը, արդարության ու ճշմարտության պահապանը: Նրա պաշտամունքը, ըստ ամենայնի, ծագել է մ.թ.ա. 3-րդ հազարամյակի սկզբին:

Նրա տաճարները գտնվել են Դերջյանի մարզի Բազառիձում, Փոքր Հայքում և այլ վայրերում:

ՎԱՆԱՏՈՒՐ Աստվածը ԱՄԱՆՈՐԻ տոն օրով (Նոր Տարի), պտղաբերության, հյուրասիրության, բերքի, խաղողի, երջանկության (ուրախության) Աստվածն է: Այդ տոնը նշվում էր յուրաքանչյուրի տանը ամեն Նոր Տարուն:

Նրա տաճարը գտնվում էր Բագրևանդի մարզի Բագավանում:

Հայ ժողովուրդը աստվածացրել է նաև իր սիրելի ու հերոսական որոշ կեսարներին (արքա-գլխավոր քուրմերին)՝ Արամ I-ին, Հայկին և Արա Պեղեցիկին.

– ԱՐԱՄ I (Ար • ամ = Արևի որդի) կամ ավելի ուշ՝ ԱՐԱՄԱԶՂ (Ար • ամ • ազդ = Արևի առաջին որդին) եղել է Հայաստանի առաջին թագավորը (Կեսարը), որն ապրել է մ.թ.ա. մոտավորապես 40 հազար տարի առաջ: Նա եղել է Աստծո ստեղծած առաջին մարդը Երկրի վրա (Աստվածաշնչյան Ադամը):

– ՀԱՅԿ, որը հաղթել է Բելին (Նեմրոզին), որը Բաբելոնի զորքով եկել էր Հայաստանը տիրելու (մ.թ.ա. 2492), կառուցել է Բաբելոնի աշտարակը և Մեծ Բուրգը:

Նրա անվամբ է կոչվել Հայկի համաստեղությունը (այժմ Օրիոն): Հայկ կեսարի՝ հաղթողի և հզոր նետաձիգի Երևանում գնտվող արծանի լուսանկարը ներկայացված է Նկ. 71-ում:

– ԱՐԱ ՊԵՂԵՑԻԿ կեսարը, որը եղել է հայրենիքի և ընտանիքի պահապանը ու պաշտպանը: Նա ընկավ հանուն Հայրենիքի (մ.թ.ա. 2-րդ հազարամյակ) Երկիրն իրեն ենթարկելու նպատակով Հայաստան խուժած ասորական բանակի ու նրա դաժան ու նենգ թագուհի Շամիրամի դեմ մղված ճակատամարտում:

Հին հայկական բոլոր աստվածների անունները մինչև հիմա պահպանվել են, ինչպես նաև օգտագործվում են որպես տղամարդկանց ու կանանց անուններ ու ազգանուններ:

Հայկական հին աստվածներն իրենց անուններով (կամ նրանց աղավաղված տեսակով) ու իրենց ֆունկցիաներով հետագայում անցել են այլ ժողովուրդների աստվածների պանթեոնները: Օրինակ, Եգիպտոսում՝ ԱՐ (ՐԱ), Հայա (Իսիդա), Արամ (Գոռ), Հայկ (Օսիրիս, Օրիոն); Պաղեստինում՝ Վահագն (Վահալ) և Աստղիկ (Աստարտ); Իրանում՝ Արամ, Արամազդ (Որմիզդ); Հունաստանում՝ ԱՐ (Զևս), Անահիտ (Արտեմիս), Աստղիկ (Աֆրոդիտե), Տիր (Ապոլոն), Վահագն Հերակլ) և այլն:

3.2(3). ՍՐԲԱՎԱՅՐ ԳԱՄԻՐՔՈՒՄ (ԿԱՊԱՂՈՎԿԻԱՅՈՒՄ)

Պատմական Հայաստանի երկրամաս Գամիրքում (այժմյան Կապադոկիայում), Նեմրուք սարի (բարձրությունը 2150մ) լանջին, որը գտնվում է Եփրատ գետի աջ ափին, հին քաղաք Սամոսատի մոտակայքում (ներկայիս Ադիյամանի մոտ, այժմ Թուրքիայում) կա քարե մեծ հին Մոնումենտ- սրբավայր, նվիրված հայկական աստվածերին՝ մեծ 9 մետրանոց արձաններով (գահերին նստած): Ղրանք աստվածների արձաններն էին.

ԱՐ (Արև) – հայերի գլխավոր Աստվածը;

ԿԵՍԱՐ – ԱՐ-ի նմանությամբ կեսարների (հայ թագավորների) կերպարը;

ԱՆԱՀԻՏ – ԱՐ-ի դուստրը;

ՎԱՀԱԳՆ – պատանի Աստված, Չարի ոչնչացնողը;

ՏԻՐ – երիտասարդ Աստված, ԱՐ-ի “քարտուղարը”,

ինչպես նաև (ավելի փոքր գահերին նստած) ԱՐ-ի խորհրդանիշը հանդիսացող Առյուծն ու Արծիվը: Կան այնտեղ նաև քարե բարելեֆներ:


Ցավոք, այդ եզակի հուշարձանը այժմ վայրագաբար քանդված է, բոլոր արձանների գլուխները պոկված են, դեմքերը վնասված են և այլն: Որոշ գլուխներ առանձին ընկած են (տես Նկ. 59):

Ավելի մանրամասն տեղեկություն Մոնումենտի այժմյան վիճակի մասին մենք ստացանք ինտերնետից [105]: Մոնումենտի սխեման բերված է Նկ. 60-ում: Մոնումենտը բաղկացած է երեք մասից, որոնք տեղավորված են Նեմրուք սարի լանջին գտնվող երեք արհեստական մեծ դարատափերի վրա (տեռասների). արևելյան, արևմտյան և հյուսիսային: Մոնումենտի արևելյան և արևմտյան մասերը (դարատափերը) գրեթե նույնն են: Նրանք բաղկացած են հինգ մեծ և չորս ավելի փոքր գահերից, յուրաքանչյուրը՝ մեկ նստած մեծ արձանի համար: Հինգ գահերը աստվածների համար են և չորսը՝ ԱՐ-ի խորհրդանիշ՝ Առյուծների ու Արծիվների համար:

Ցավոք, արձանների ոչնչացնելու պրոցեսը շարունակվում է մինչև այժմ: Օրինակ, արևելյան դարատափի լուսանկարին (Նկ. 73), որն արվել է 1883թ., երևում են աստվածների քանդված արձաններ, բայց Անահիտ Աստվածուհու արձանը դեռ գլուխ ունի: Նկար 74-ում բերված է նույն արևելյան դարատափի մի ուրիշ լուսանկար (որն արված է 1995թ.), ուր Անահիտ Աստվածուհու արձանն ու գլուխը արդեն բացակայում են:

Նկար 75-ում պատկերված է արևմտյան դարատափը դատարկ գահերով և ԱՐ-ի, Վահագնի ու Տիրի պոկված գլուխներով: Նկար 76-ում պատկերված է

Առյուծի բարեկեֆը արևմտյան դարաստալին (1883թ. լուսանկար), իսկ Նկ.77-ում՝ Առյուծի նույն բարեկեֆն է վնասված դեմքով ու մարմնով (1996 թ. լուսանկար):



Նկ. 60. Գամիրքի Մոնումենտի սխեման:

Նեմրութ սարի վրայի Մոնումենտին վերաբերող բոլոր պատմական նյութերը (Նկ. 59, 60, 73-75) նույնպես աղավաղված են: Հին հայկական աստվածների անունները փոխարինված են հունական աստվածների անուններով [105]: Կեսարի արձանի մասին ասված է, որ դա Անտիոք I է (Կապադովկիայի թագավորը) և որ իբրև ողջ Մոնումենտը նա է կառուցել մ.թ.ա. 1-ին դարում:

Այս ամենը սխալ է, որովհետև.

1. Կապադովկիան հնագույն ժամանակներից Մեծ Հայքի Գամիք մասն է եղել (տես Գլուխ 3.4(2).): Մ.թ.ա. 2-րդ դարում կարճ ժամանակով Կապադովկիան եղել է Հռոմի կայսրության տարածքում, բայց մ.թ.ա. 1-ին դարում Տիգրան II Մեծը այն վերադարձրել է Մեծ Հայքի սահմանները:

2. Անտիոք I երբեք չէր հանդգնի կանգնեցնել իր արձանը ԱՐ-ի (կամ Ջևահ, եթե հավատ ընծայենք Թուրքիայից վերը բերված տեղեկությանը) դեմքով: ԱՐ-ին նման կարող էին լինել միայն հայկական Մեծ Հայքի կեսարները, որոնք թագավոր էին, և քուրմ միաժամանակ: Կեսար բառը հայերեն նշանակում է “Կիսաստված” կամ “Կես Ար”, այսինքն, Երկրի վրա “Արևին հավասարը”:

3. Առյուծն ու Արծիվը ԱՐ-ի խորհրդանիշներն էին միայն Հայաստանում: Ավելի ուշ, ենթադրաբար Մեծ Ջրհեղեղի ժամանակ, ևս մի խորհրդանիշ է ավելացել. խոյը (միևնույն ժամանակ՝ կենդանակերպի համաստեղություններից առաջինի անունը): Այնպես որ մենք կարող ենք ենթադրել, որ Նեմրութ սարի Մոնումենտը կառուցվել է մինչև Մեծ Ջրհեղեղը և, իհարկե, հայերի ծեռքով:

4. Այդ եզակի և գերաշխատատար Մոնումենտը կառուցելու համար անհրաժեշտ էր կատարել հսկայական հողային աշխատանքներ, այդ ի գորու կլինե՞ր կատարել միայն մեծ երկրի, ինչպիսին էր Հայաստանը, հզոր թագավորը:

ԳԼՈՒԽ 3.3. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԻՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ (մ.թ.ա. 50 - 20-րդ ՀԱԶԱՐԱՄՅԱԿՆԵՐՈՒՄ)

Հայաստանի բնակլիմայական բարենպաստ պայմանները նպաստել են մարդկանց և նրանց գիտելիքների, տեխնոլոգիաների, փորձի ու մշակութային, սոցիալական ու մարդկային հարաբերությունների արագ զարգացմանը: Ամռանը մարդիկ գիտեին, որ նորից պիտի ծմեռ գա, այսինքն անհրաժեշտ է նախապատրաստվել. տաք հագուստ պատրաստել կենդանիների կաշվից, չորացնել մրգերը, միս ապխտել, վառելափայտ հավաքել, կառուցել տաք և բնակվելու համար ավելի հարմար տներ և այլն: Մարդիկ շատ աշխատանք

ունեին, որն անհրաժեշտ էր անել: Շուտով նրանցից շատերը սովորեցին որոշ աշխատանքներն ավելի լավ և արագ կատարել: Այդ ընթացքում փորձ ձեռք բերվեց, զարգացան գիտելիքները, տեխնոլոգիաները, գործիքներն ու պարզ դազգահները, ինչպես նաև լեզուն և մարդկային հարաբերությունները: Զուգընթաց զարգանում էին անասնաբուծությունն ու գյուղատնտեսությունը: Հայ (արմենոիդ) ռասան ծնավորվել է սրանից մոտավորապես 45-40 հազար տարի առաջ: Այդ ժամանակ չորս կողմը որևէ այլ ռասաներ չկային:

Հայերն սկսեցին ապրել բնակավայրերում ու գյուղերում՝ անցնելով նստակյաց կյանքի: Նրանք արդեն ցեղեր չէին, այլ խմբակցություններ, որոնք հետզհետե վերածվում էին փոքր պետությունների, ունեին իրենց առաջնորդները. իշխանները, հետո՝ թագավորը, որը նաև գլխավոր քուրմն էր:

Հայ ազգը իր լեզվով, մշակույթով և երկրով ծնավորվել է մ.թ.ա. մոտավորապես 40-րդ հազարամյակում, և ավարտվել է հայկական պետության (երկրի վրա առաջին պետության) ծնավորումը:

ԱՐՄԵՆԻԱ - ՀԱՅԱՍՏԱՆ պետությունը ծագել է Հարավային Կովկասում, Արարատ սարի և Վանա լճի շուրջը գտնվող տարածքներում (Հայկական Լեռնաշխարհում): Այն եղել է առաջին քաղաքակրթությունն աշխարհում:

Այս գույգ անվանումները՝ Արմենիա-Հայաստան (և արմեններ-հայեր) գալիս են շատ հին ժամանակներից, ԱՐ - Հայր Գլխավոր Աստծո և Երկրի, օրի, Մայր-Աստվածուհու՝ Հայայի անուններից (տես Գլուխ 3.5.): “Արմենիա” բառը հայերեն նշանակում է “Ար • մեն • իա”= Արևի մարդկանց երկիր”: “Հայաստան” բառը նշանակում է “Հայայի եկիր”, “Հայա • ստան = հայ մարդկանց երկիր”, “Հայերի երկիր”:

“Արմենիա” բառի վերջին “-իա (յան)” մասը դարձել է հայերի ազգանունների մեծ մասի վերջավորությունը* (գումարվելով հայկական անուններին), ինչը ցույց է տալիս անձի պատկանելությունը տվյալ տեղին, կողմին: Օրինակ, Արամ - Արամյան, Արշակ - Արշակյան, Գրիգոր - Գրիգորյան, Մովսես - Մովսիսյան, Տիգրան - Տիգրանյան և այլն:

Ավելի ուշ, շատ հազարամյակներ հետո, “Արմենիա” և “Հայաստան” անվանումների վերջավորությունները, այսինքն, “իա” (կողմ) և “ստան” (երկիր) փոխառնվել են շատ այլ լեզուների կողմից իրենց երկրի անունները ստեղծելիս. օրինակ, Բրիտանիա, Բրազիլիա, Ավստրալիա, Բուլղարիա, Իտալիա, Պակիստան, Ավղանստան, Հնդկաստան և այլն:

* Կան որոշ հայկական ազգանուններ, որոնք ավարտվում են “ունի”-ով, օրինակ, Բագրատունի, Ռշտունի, Ամատունի, Մարգպետունի և այլն:



Նկ. 61. Արարատ լեռը (դեռ Թուրքիայում) և Արարատյան դաշտավայրը: Տեսարան Հայաստանից




Նկ. 62. Արարատ: Տեսարան Հայաստանի մայրաքաղաք Երևանից



Նկ. 63. Արարատն ու Արարատյան դաշտավայրն Արագած լեռից: Չմեռ: Առավուտ: Նկարիչ՝ Պ. Հերունի



Նկ. 64. Արևամուտն Արագած լեռան վրա: Նկարիչ՝ Պ. Հերունի



Նկ. 65. ԱՐ-Հայր Աստծո տաճարը Գառնիում, Հայաստան



Նկ. 66. ԱՐ-Հայր Աստվածը առյուծի վրա: Որմնանկար Էրեբունի (Երևան) հին ամրոցի պատին (մ.թ.ա. VIII դար)




Նկ. 67. ԱՆԱԿՒՏ Աստվածուհին: Ոսկե արծանի գլուխը (բրոնզե պատճենը): Գտնվում է Բրիտանական թանգարանում




Նկ. 68. ՎԱՀԱԳՆ Աստծո ծնունդը (չարի և վիշապների ոչնչացնողը): Նկարիչ՝ Պ. Հերունի



Նկ. 69. ՎԱՀԱԳՆԻ արծանը Երևանում



Նկ. 70. Մատենադարանի շենքը՝ հայ հնագույն գիտնականների արձաններով: Երևան



Նկ. 71. Հայոց Կեսար ՀԱՅԿԸ (մ.թ.ա. 2493-2444): Արծան
Երևանում: Քանդակագործ՝ Կ. Նուրիջանյան




Նկ. 72. Հայոց թագավոր Տիգրան II Մեծը: Արքայաց Արքա:
Նկարիչ՝ Վ. Ռարիբյան




Նկ. 73. Հին Հայկական հսկա Մոնումենտ Եփրատի ափին, Նեմրուժ սարի վրա, Գամիրքուն (Կապադոկիայում, այժմ Թուրքիայում):

Արևելյան դարատափը: Լուսանկար, 1882թ.: Աստվածների արձանները քանդած-փշրած են, բայց ԱՆԱՀԻՏ Աստվածուհու արձանը դեռ գահին է և գլուխ ունի: (Արձանների բարձրությունը 9 մետր է)



Նկ. 74. Նեմրուժ սարի արևելյան դարաստափ, լուսանկար, 1995թ.: ԱՆԱՀԻՏ Աստվածուհու արձանի գլուխն արդեն բացակայում է



Նկ. 75. Նեմրութ սարի արևմտյան դարաստափը դատարկ գահերով և ԱՐ, ՎԱՀԱԳՆ ու ՏԻՐ աստվածների վնասված գլուխներով



Նկ. 76. Նեմրուք սարի արևմտյան մաս: ԱՐ-ի սինվոլ Առյուծի քանդակը, ֆոտո 1983թ.



Նկ. 77. Նույն Առյուծի քանդակը՝ կոտորված դեմքով և մարմնով, ֆոտո 1996թ.

Մեծ Հայքի առաջին թագավորը (և գլխավոր քուրմը, այսինքն կեսարը) երևի եղել է ԱՐԱՍ I (Ար • ամ = Արևի որդի), և Արամյան դինաստիան գոյություն է ունեցել մ.թ.ա. 40-ից մինչև 10-րդ հազարամյակը:

Արամը հնագույն հայկական անունն է, առաջին հայոց կեսարի անուն է և նշանակում է Արևի որդի: Այդ անունը Աստվածաշնչում հնչում է “Ադամ” – առաջին մարդու անունը, որին Աստված (-Հայրը) ստեղծել էր դրախտում, որը համաձայն Աստվածաշնչի նույնպես գտնվում է Հայաստանում, Վանա լճի մոտակայքում, որտեղից սկիզբ են առնում չորս գլխավոր գետերը. Արաքսը (ար • սկ • ս = Արևի սքանչելի աղբյուր = դեպի սքանչելի Արևելք գնացող), Արածանին՝ (Եփրատի վտակը), Եփրատը (կոչվում է նաև հայկական գետ), Չորոխը (կամ Գալիս = Եկող) և ոչ հեռվում հոսող նաև Տիգրիսը:



Ադամ ու Եվա Այն փաստը, որ առաջին քաղաքակիրթ մարդիկ եղել են հայերը (արմենոիդ ռասա), հաստատվում է նաև շատ հնագույն հայկական լեգենդներով: Այդ են վկայում հայոց լեռների վրա փորագրված հազարավոր հնագույն ժայռապատկերները:

Դրանց թվումն է Սյունիքի լեռներում գտնվող հնագույն ժայռապատկերը առաջին մարդկանց՝ Ադամի ու Եվայի մասին Նկ. 78:

Ժայռապատկերին Ադամն ու Եվան են դրախտում, խնձորի ծառի մոտ: Հսկա օձի կերպարանքով Սատանան, մարդկանցից շատ ավելի մեծ, ներշնչում է Եվային քաղել պտուղը (ինչն արգելված էր Աստծո կողմից): Եվան պարզել է ձեռքը ու քաղում է պտուղը, իսկ Ադամը կանգնած է ծառի մյուս կողմը և դեռ տեղյակ չի, թե ինչ է կատարվում:

Այս ժայռապատկերի սյուժեն ծանոթ է բոլորիս Աստվածաշնչից և վկայում է, որ աստվածաշունչը գրողները “մոռացել են” հիշատակել, որ սա հնագույն հայկական լեգենդ է, ինչպես և տղամարդուն անվանել են Ադամ Արամի փոխարեն:

Ինչպես վերը ասվեց, Արամ հայերեն նշանակում է Արևի որդի, իսկ Եվա նշանակում է. Ե • վ • ա = “ելավ դեպի կյանք”:

Արամի ու Եվայի մասին ժայռապատկերը հայտնաբերել, պատճենահանել և ուղարկել են ինձ Սիսիանի բնակիչներ՝ Հերման Ավագյանը և Գուրգեն



Նկ. 78. Հին հայկական լեգենդ՝ Արամն ու Եվան դրախտում

Վարդանյանը [126]*:

Ժայռապատկերի տարիքը ըստ հնագետների (Ա. Ավետյան և ուրիշներ) 7-8 հազար տարի է:



Թույլ տվեք նշել, որ հին հարևան ժողովուրդների լեգենդներում առաջին մարդը նույնպես ներկայացված է որպես հայ, օրինակ, շումերական առասպելներում առաջին մարդու անունը Հի կամ ՀԱՅ է եղել, այսինքն այնպես, ինչպես մենք մեզ անվանում ենք: Ջորդաստրի կրոնում (Իրան) առաջին մարդու անունը ՀԱՅՈՍԱՐԴ է եղել, այսինքն՝ “հայ • ո • մարդ = սուրբ հայ մարդ”: Այս բոլոր համընկնումները պատահական չեն:

Հայերն իրենց պետության մեջ ապրել են բարության, հավասարության, ազատության և առաջընթացի մթնոլորտում: Դա եղել է երկարատև խաղաղության ժամանակաշրջան, սկսած մ.թ.ա. 40-րդ հազարամյակից մինչև մ.թ.ա. 3-րդ հազարամյակի կեսը, երբ նոր ձևավորված Բաբելոնի զորքերը Բելի գլխավորությամբ եկան Հայաստանը գրավելու: Դա առաջին մեծ պատերազմն էր աշխարհում, որը տեղի էր ունեցել Վանա լճի մոտակայքում: Այս բանակը (հսկաների) ջախջախվեց առաջին կազմակերպված հայկական բանակի կողմից կեսար Հայկի ղեկավարությամբ (մ.թ.ա. 2492թ.), երբ Հայկը սպանեց Բելին:

Այսպիսով, երկար ժամանակամիջոցում, մ.թ.ա. 40-ից մինջև 3-րդ հազարամյակը հայերն զբաղված էին միայն ստեղծագործ աշխատանքով. գյուղեր ու քաղաքներ էին կառուցում, զբաղվում էին անասնապահությամբ ու հողագործությամբ, գիտելիքների, մշակույթի և առաջին գրերի զարգացմամբ (պատկերաին, խորհրդանշային, հիերոգլիֆիկ): Իսկ ավելի քան 10 հազար տարի առաջ հայերն ունեցել են արդեն տառեր (այբուբեն), որոնց մեծ մասն անփոփոխ են մնացել մինչ այժր (տես ՄԱՍ 2): Ինչպես նաև սկսել են կատարել Արևի, Լուսնի և աստղերի աստղագիտական դիտումները մոտ 25 հազար տարի առաջ: Սկսվել էր երկնքի (աստղերի) համաստեղությունների բաժանման պրոցեսը: Հայտնաբերվեցին առաջին զոդիակալ (Կենդանակերպի) համաստեղությունները և կազմվեց առաջին արևային օրացույցը: Այդ աշխատանքները Հայաստանում ավարտվեցին մ.թ.ա. 8 – 3-րդ հազարամյակների ընթացքում (տես ՄԱՍ 1):

Առաջին հայկական օրացույցը (ԱՀՕ) սահմանվել է, ըստ երևույթին, մ.թ.ա.

* Գ. Վարդանյան – Պ. Հերունի, անձնական նամակագրություն, Սիսիան – Երևան, 2006թ.:

23-րդ հազարամյակի վերջում: Նրա սկիզբը եղել է մոտավորապես մ.թ.ա. 22946 Արեգի 1-ին (Մարտի 21), այսինքն 2492 + 14 Հայկական շրջան (2492 + 14 x 1461 = 22946 տարի): Դա աշխարհում առաջին օրացույցն էր: Այն արևի (արևային) օրացույց էր տարում 365 օրով, այնպես որ դա այսպես կոչվող “շարժական օրացույց” էր: Ավելի ճշգրիտ “անշարժ” օրացույց 365.25 օրով տարվա մեջ ծագել է Հայաստանում մոտ 8 հազար տարի առաջ (տես Գլուխ “Օրացույց” ՄԱՍ 1):

Հին ժամանակաշրջանում (մ.թ.ա. 50 – 20-րդ հազարամյակներում) ծագել ու զարգացել են նաև երգեր, ներբողներ, պոեմներ ու պարեր (ծիսական և ժողովրդական): Ըստ առասպելների առաջին օրացույցի հետ միաժամանակ ծնվել է Վահագն Աստվածը, գուցե մ.թ.ա. 22946 Արեգի 1-ին: Նա եղել է ժողովուրդի կողմից սիրված գեղեցիկ երիտասարդ Աստված, ով ոչնոացնում էր չարը և վիշապներին:

Հռչակավոր հայ պատմաբան Մովսես Խորենացին (մ.թ. 5-րդ դար) իր “Հայոց պատմություն” գրքում [22] պահպանել է մեզ համար 11 տող շատ հին ներբողից կամ էպոսից, տողեր Վահագն Աստծո ծնունդի մասին: Այդ տողերը գրաբարով են, բայց հասկանալի են նաև արդի հայերենով:

Ահա այդ սքանչելի բանաստեղծությունը (որը այս գրքի բնօրինակի համար են փորձել են թարգմանել անգլերեն).

*Երկնէր երկին, երկնէր երկիր,
Երկնէր և ծովն ծիրանի,
Երկն ի ծովուն ունէր և զկարմրիկն եղեգնիկ.*

*Ընդ եղեգան փող ծուխ ելանէր,
Ընդ եղեգան փող բոց ելանէր,
Եւ ի բոցոյն վազէր խարտեաշ պատանեկիկ.*


*Նա հուր հեր ունէր,
Բոց ունէր մօրուս,
Եւ աչքունքն էին արեգակունք:*

Մովսես Խորենացին գրում էր նաև, որ ինքը լսել է, թե ինչպես են հին աշուղներն այդ բանաստեղծությունը երգում որպես երգ:

Հայ բանաստեղծ և հրապարակախոս Լևոն Միրիջանյանը համեմատել է այդ տողերը հին հայկական “խորհուրդ մեծ և սքանչելի” շարականի հետ, որի բառերը

Մովսես Խորենացին է գրել ու որը մինչ այժմ ավանդաբար կատարվում է Հիսուս Քրիստոսի Ծննդյան առիթով: Նա գտել է, որ “Վահագնի ծնունդի” բանաստեղծության վանկերի քանակը համընկնում է “Խորհուրդ մեծ և սքանչելի”-ի վանկերի քանակի և մեղեդու հետ: Այնպես որ մեծն Մովսես Խորենացին կարողացել է մեզ համար պահպանել “Վահագնի ծնունդի” ոչ միայն բառերը, այլ նաև մեղեդին [83]:

Մովսես Խորենացու արձանը, (որը կանգնեցված է Երևանում, Մատենադարանի մոտ), պատկերված է Նկ. 79-ում:



Նկ. 79. Մովսես Խորենացու արձանը Երևանում

Մ.թ.ա. 23 – 20-րդ հազարամյակների ժամանակաշրջանից սկսած, հայերն տարածվել են Մեծ Հայքից (Արարատ սարի շուրջը, Հայկական Լեռնաշխարհ, Հարավային Կովկաս) դեպի Սև, Միջերկրական և Կասպից ծովերը, Ուրմիա լիճը, Միջագետք և Փոքր Ասիա: Այն ժամանակ ամենուրեք նրանք եղել են միակ բնակչությունը:

Ասված հսկա տարածքները այն ժամանակ հնարավոր չէր կառավարել մեկ մայրաքաղաքից: Այդ պատճառով Մեծ Հայքի շուրջը գոյացել էին մի շարք այլ հայակական թագավորություններ. Հայկական (կամ Հյուսիսային) Միջագետքը, հին Շումերը (սամեր), Կոմագենը, Ծովքը, Կապադովկիան, Փոքր Հայքը, Կիլիկիան, Փյունիկիան և այլք: Այդ բոլոր նոր թագավորությունների բնակչությունը, իհարկե, միայն հայեր էին, որոնք խոսում էին հայերեն, ապա գրում էին՝ օգտագործելով հայոց այբուբենը:

ՁԼՈՒՆ 3.4. ՄԵԾ ՀԱՅՔԸ մ.թ.ա. 40 – 23-րդ ՀԱԶԱՐԱՄՅԱԿՆԵՐՈՒՄ

Մեծ (Մայր) Հայսատանը, հայերի բնօրրանը, գտնվել է Արարատ սարի շուրջը, Հարավային Կովկասի և Հայկական Լեռնաշխարհի տարածքներում, այսինքն հյուսիսային լայնության 35⁰ – 41⁰ սահմաններում, Քուռ գետից հարավ, Սև և Կասպից ծովերի միջև և երկայնությամբ՝ Եփրատ գետից դեպի արևելք, ներառյալ Սևան, Վան և Ուրմիա լճերը: Ներառյալ նաև Կիլիկիան:

Մեծ Հայքի մեջ էին մտնում նաև Տայքի, Գուգարքի՝ Ջավախքով, Ուտիքի և Արցախի (հյուսիս-արևելյան մասում); Բարձր Հայքի, Կիլիկիայի և Ծովքի՝ Սասունով (արևմտյան մասում); Սյունիքի ու Փայտակարանի (արևելյան մասում), Այրարատի՝ Արագածոտնով և Տուրուբերանով (կենտրոնը, Սևան և Վան լճերի միջև); Ջարոնի (Վանից արևմուտք), Մոկքի (Վանից դեպի հարավ); Վասպուրականի ու Շիրականի (Վանի և Ուրմիայի միջև); Աղձնիքի, Արուստանի և Կորչայք - Կորդուքի (հարավային մասում)* տարածքները:

Նկար 80-ում և 81-ում ներկայացված են Սևանա լճի տեսարանները և Նկ. 82-ում՝ Վանա լճի տեսարանը:

Գլխավոր քաղաքներն էին. Արտաշատը, Երվանդաշատը, Արմավիրը, Վաղարշապատը, Էրեբունի - Երևանը, Բագարանը (Այրարատում); Նախիջևանը Կարինը (Էրզրում), Բաբերթը և Տրաբզոնը (Բարձր Հայքում); Վանաձորը

* Բոլոր տարածքների անունները բերված են, իհարկե, այն ձևով, ինչպես որ մեզ են հասել:

(Գուգարքում); Շուշին (Արցախում); Գանձակը, Տիգրանակերտը (Ուտիքում); Աշտիշատը, Բիթլիսը և Մուշը (Տարոնում); Վանը (Վասպուրականում); Արշամաշատը (Ծոփքում); Տիգրանակերտը (Աղձնիքում); Արդահանը և Կարսը (Տայքում); Սիսը (Կիլիկիայում) և ուրիշներ:

Հին ժամանակներից Մեծ Հայքում ամենուր ծագել ու զարգանում էին քնարերգությունը (պոեզիան), երգը և պարերը, որոնց հիմքում էին ինչպես Գլխավոր ԱՐ-Հայր Աստծուն նվիրված ծիսական, այնպես էլ ժողովրդական ավանդույթները:

Հնագույն ժամանակներից Մեծ Հայքում են ապրել արմենոիդ ռասայի արիացիները, այսինքն՝ հայերը և ստեղծել ու զարգացրել են իրենց ազգային մշակույթը, գիտելիքները, քաղաքները, իրենց պետականությունը (թագավորական տներն իրենց դինաստիաներով) դեռ 40 հազարամյակ մեր թվարկությունից առաջ:

Դժբախտաբար, մարդկության հին պատմության մեջ այս բոլորը սարսափելիորեն աղավաղված է և ասվում է, որ հայ ժողովուրդը ծագել է այսպես կոչվող Ուրարտուից հետո մ.թ.ա. 5-րդ դարում (ընդամենը) հայասա, արմենների, հուրիտների, հալդերի և այլ ցեղերից, ու նրանց առաջին թագավորությունը գոյացել է մ.թ.ա. 2-րդ դարում (այդքա՛ն ուշ): Այդ բոլորը մեծ սուտ է, որը հնարված է միայն նրա համար, որ հայերը և Հայաստան բառերը չօգտագործվեն: Այդ ամենը հարկավոր է ուղղել:

3.4(1). ՄԻՋԱԳԵՏՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Միջագետքի հին հայկական անունը եղել է Պաղամ Արամ: Պաղամ = “պա • դ • ամ = քայլ դեպի կրտսերը”, այնպես որ Պաղամ Արամ նշանակում է “Կրտսեր Արամ կամ Արամի (Աղամի) կրտսեր ճյուղը” - հայկական հնագույն առաջին թագավորի և դինաստիայի անունը:

Հայկական (կամ Հյուսիսային) Միջագետքի հայկական թագավորությունը կոչվում էր նաև Միտանիա (մ.թ.ա. 22 – 13-րդ դարեր), ինչը նշանակում է “մի • տան • իա = միևնույն թագավորական տան երկիր”: Այստեղ ապրում էին հայ-հուրիտները:

Պաղամ Արամ հայկական թագավորությունը, որը այլ անուններ էլ ուներ. Հարանի, հետո՝ Էդեսայի թագավորություն, գոյություն է ունեցել մոտավորապես մ.թ.ա. 23-րդ հազարամյակից մինչև մ.թ. 8-րդ դարը:

Մայրաքաղաքը եղել է Արհանը (ար • հ • ան = արևապաշտների քաղաք), որը

հետագայում կրել է. Արհա (Ուրհա, Ուրֆա), Օորան (“օրորոց”) և Էդեսիա (էդ • Ես • Իա = այդ իմ երկիրն է) անունները: Այժմ քաղաքը կրում է Ուրֆա անունը (Թուրքիայում): Հետագայում Օորանին նմանեցնելով, երկիրը կոչել են Օսրոն:

Այլ մեծ քաղաքներ են եղել Հարրանը (հ • ար • ան = Արևին պաշտողների քաղաք), Սծբինը (մ • ծ • բ • ին = նրանք մեր հաջորդ բարի ժողովուրդն են) և Նինվեն (ն • ին • վ • Ե = նրանք մեր նման մարդ են), որը հետագայում դարձել է Ասորեստանի մայրաքաղաքը:

Հարանը շատ հին ու մեծ քաղաք է եղել, գտնվել է Արևելքից Արևմուտք և Հյուսիսից Հարավ տանող ուղիների խաչմերուկում: Համաձայն Աստվածաշնչի սեմիտների նախահայր Աբրահամը իր հոր՝ Ֆարայի հետ եկել է Հարան Հալդական Ուրից*: Դա եղել է մոտավորապես մ.թ.ա. 1680թ.* [36]: Թաղելով իր հորը Հարանում, Աբրահամը (75 տարեկան հասակում) իր կնոջ՝ Սառայի հետ գնում է Հանահան:

Արհանը (Ուրֆան, Էդեսիան) նույնպես հայերն են հիմնադրել հին ժամանակներում (Հարանի հետ) Մեծ Ջրհեղեղից շատ առաջ: Բայց նրա հին պատմությունը դեռ գրեթե անհայտ է: Մ.թ. մոտավորապես 3 թվականին թագավոր Աբգար IV Երվանդունին վերակառուցեց Էդեսիան, դարձնելով այն մեծ ամրոց՝ Մեծ Հայքի եկրորդ մայրաքաղաքը, Եփրատի կողմից հռոմեական զորքերից պաշտպանվելու համար: Միևնույն ժամանակ Էդեսիան (և երկիրը) հռչակվել էին աշխարհում, որպես առաջին անգամ քրիստոնեություն ընդունողները: Անգլիացի պատմաբան Ադրիան Ջիլբերտը համաձայն է ասվածի հետ: Նա կրկնում է. “Էդեսիան Միջագետքի աչքն է” արտահայտությունը [36, էջ 213] ու գրում է. “...Այսպիսով Էդեսիան դարձավ աշխարհում առաջին հիրավի քրիստոնեական քաղաքը” [36, էջ 227]: Սակայն նա չի ասում, որ Էդեսիան հայկական մայրաքաղաք էր, ու երկիր հայ բնակչությամբ, և որ Աբգար անունով թագավորները Մեծ Հայքի Երվանդունի դինաստիայից էին:

Համաձայն սիրիական տարեգրության “...մինչև մ.թ.ա. 130թ. (երբ հայկական զորքը ջախջախեց Անտիոք Սուրենի բանակը, և որից հետո սելևկիդներն այլևս երբեք չէին փորձում անցնել Եփրատի արևելյան ափը) արիացիների դինաստիան նորից գահակալեց Էդեսիայում”: Իրոք, դա եղել է մ.թ.ա. 163թ., երբ կարճ ընդմիջունից հետո Էդեսիայի գահին վերադարձավ Երվանդունի-Աբգարյան

* Ա.Ջիլբերտը գրում է, որ Աբրահամը մ.թ.ա.1680թ. Հարան է եկել, հնարավոր է, ոչ թե հալդական Ուրից (հայերեն՝ Ար, Պ.Հ.), այլ Էդեսիայից, և ինքը հուրիտ է եղել [36, էջ 392, 394], (այսինքն՝ հայ, Պ.Հ.): Ա.Ջիլբերտը կարծում է նաև, որ իսկական Հալդական Ուրը Ուրհան է (այսինքն՝ Արհանը, Էդեսիան), [36, էջ 252]:

դինաստիան, որը Երվանդունիների դինաստիայի (Մեծ Հայքի թագավորների) փոքր ճյուղն էր:

Էդեսիայի Աբգար II թագավորին մ.թ.ա. 63թ. Հռոմը ընդունեց որպես Էդեսիայի (Հայոց Օսրոյեն երկրի) թագավոր: Նա կարևոր դեր խաղաց, երբ Հռոմի եռապետ Մարկ Կրասը մեծ բանակով մտել էր Հռոմի Սիրիական արվարձանը մ.թ.ա. 54թ., Պարսկաստանն ու Հայաստանը զավթելու նպատակով: Աբգար II գայթակղեց հռոմեացիներին մտնել հայկական Հարան քաղաքը, ուր Պարսկաստանի ու Մեծ Հայքի միացյալ բանակները ջախջախեցին նրանց (մ.թ.ա. 353 թ.) և Կրասն էլ սպանվեց:

Մեծ Հայքի կեսար Աբգար V, որը ուներ արքայաց արքա տիտղոսը (մ.թ. 12-50թթ.), գտնվելով Էդեսիայում և տեղեկանալով, որ Հիսուս Քրիստոսը Երուսաղեմումն է, գրեց նրան իր հռչակավոր նամակը ու պատասխան ստացավ Նրանից 32-33թթ.: Այդ նամակների տեքստերը կան Մովսես Խորենացու “Հայոց պատմություն” գրքում [22, էջ 85-86; 84, էջ 177-178]:

Աբգար V նամակը Հիսուս Քրիստոսին

“Աբգար Արշամի որդի, աշխարհի իշխան, բարերար և փրկիչ Հիսուսիդ, որ Երուսաղեմացոց աշխարհում երևեցար, ողջույն:

Լսել եմ քո մասին և այն բժշկությունների մասին, որ կատարվում են քո ձեռքով առանց դեղերի և արմատների, որովհետև, ինչպես ասում են, դու կույրերին տեսնել ես տալիս, կաղերին քայլեցնում ես, բորոտներին մաքրում ես, չար ոգիները և դևերը հանում ես և առհասարակ երկարատև հիվանդություններով չարչարվողներին բժշկում ես, նաև մեռածներին կենդանացնում ես:

Երբ այս ամենը քո մասին լսեցի, մտքումս դրի այս երկուսից մեկը – կա՞մ որ դու աստված կլինես, որ երկնքից իջել ես և այս բաներն անում ես, կամ աստծու որդի կլինես, որ այդ անում ես:

Այս պատճառով քեզ գրեցի աղաչելով որ նեղություն կրես, գաս ինձ մոտ և բժշկես իմ ունեցած հիվանդությունը:

Նաև լսեցի, թե հրեաները քեզանից տրտնջում են և ուզում են քեզ չարչարել, բայց ես մի փոքր և գեղեցիկ քաղաք ունեմ, որ երկուսիս էլ բավական է:”

Հիսուս Քրիստոսի նամակը Աբգար V

“Երանի նրան, ով ինձ հավատում է, թեպետ ինձ տեսած չլինի, որովհետև իմ

* Այս տեքստերը նույնպես կան [36, էջ 222-223], [85, էջ 40-41] և այլ հրապարակումներում:

մասին այսպես է գրված, թե որոնք ինձ տեսնում են, ինձ չեն հավատա, իսկ որոնք չեն տեսնում, կհավատան և կյանք կգտնեն:

Իսկ որ դու ինձ գրեցիր, որ գամ քեզ մոտ, ես այստեղ պետք է կատարեմ այն բոլորը, որի համար ուղարկված եմ: Երբ այս բոլորը կկատարեմ, կհամբառնամ նրա մոտ, որ ինձ ուղարկեց և երբ համբառնամ, քեզ մոտ կուղարկեմ իմ այս աշակերտներից մեկին, որ քո ցավերը բժշկե և կյանք շնորհե քեզ և քեզ հետ եղողներին”:

Հարցն այն է, թե որ լեզվով են եղել այս կարևոր նամակները: Կարծիք կա, որ դա եղել է այսպես կոչվող արամեերենը: Սակայն դա սխալմունք է: Ինչպես ես հիմնավորել եմ Գլուխ 2.15-ում, այսպես կոչվող արամեացիներ, արամեական սեմիտական լեզվով և այբուբենով, երբեք գոյություն չեն ունեցել: Իրականում դա հայերենն է եղել իր այբուբենով: Եվ հայոց թագավոր Արտաշեսը, որը Աբգար V թագավորից երկու հարյուր տարուց ավել առաջ է ապրել, նույնպես հայերեն էր գրում: Այնպես որ այդ երկու նամակը, իհարկե, գրված են հայերենով, օգտագործելով հայոց այբուբենը, ինչպես արել են բոլոր հայոց թագավորները:

Ի՞նչ կատարվեց Հիսուս Քրիստոսի նամակից հետո: Նրա Հարությունից հետո, մ.թ. 33 թ. Թադևոս առաքյալը եկավ Էդեսիա հայոց թագավոր Աբգար V մոտ ու բուժեց նրա հիվանդությունը (զլխացավերը), ինչպես խոստացել էր Հիսուս Քրիստոսը, ինչպես նաև բուժեց Էդեսիա քաղաքի բոլոր բնակիչներին: Իր հրաշագործ բուժումից հետո Աբգար թագավորը իր ողջ ընտանիքով և Էդեսիայի բնակիչներով Քրիստոնեություն ընդունեցին մ.թ. 33թ.: Աբգար V դարձավ աշխարհում ամենաառաջին քրիստոնյա թագավորը, իսկ Էդեսյան Հայաստանը դարձավ առաջին քրիստոնեական երկիրը: Այնպես որ ես համոզված եմ, որ Աբգար V Երվանդունին արժան է “Մեծ”- ի տիտղոսին:

Այն ժամանակ Իսրայելը Հռոմի կայսրության Պաղեստինյան գավառի կազմում էր, և Աբգար V մի այլ նամակ էլ Հռոմ ուղարկեց:

Աբգար V նամակը Հռոմի կայսր Տիբերիին

“Աբգար, հայոց թագավոր, իմ տիրոջ, Հռոմեացիների Տիբերիոս կայսեր ողջույն:

Թեպետ գիտեմ, որ թագավորությունից ոչ մի բան չի ծածկվի, բայց իբրև քո մտերիմ՝ ավելին քեզ իմաց եմ տալիս գրով: Որովհետև պաղեստինացիների գավառներում բնակվող հրեաները ժողովվելով Քրիստոսին խաչեցին առանց որևէ հանցանքի, փոխանակ նրա մեծամեծ երախտիքներին, որ նրանց մոտ կատարեց – հրաշքներ և սքանչելի գործեր, մինչև անգամ մեռած մարդկանց

կենդանացնել: Պետք է գիտենաս, որ սրանք սոսկական մարդու գորություններ չեն, այլ աստծու: Որովհետև հենց այն ժամանակ, երբ նրան խաչեցին, Արեգակը խավարեց, երկիրը շարժվեց ու տատանվեց և ինքն էլ երեք օրից մեռած տեղից հարություն առավ և շատերին երևաց: Եվ այժմ ամեն տեղ նրա անունը նրա աշակերտների միջոցով մեծամեծ սքանչելիքներ է կատարում, ինչպես ինձ վրա հայտնի ցույց տվեց: Արդ՝ այսուհետև քո տերությունը գիտե, թե ի՞նչ է պետք հրամայել հրեա ժողովրդի վերաբերմամբ, որոնք այն բանը գործեցին, և բոլոր աշխարհին գրել, որ Քրիստոսին երկրպագեն իբրև ճշմարիտ աստծու: Ողջ մնաս:”

Հռոմի կայսր Տիբերիի նամակը Աբգար V

“Տիբերիոս Հռոմացիների կայսր, Հայոց Աբգար թագավորին ողջույն:

Քո մտերմության թուղթը կարդացին իմ առաջ*, նրա համար մեր կողմից շնորհակալություն: Թեպետ և առաջուց մենք շատերից էինք այդ լսել, բայց և Պիղատոսը ստուգապես մեզ հայտնեց նրա հրաշքների մասին և թե հարությունից հետո շատերը հավատացին, թե նա աստված է: Ուստի և ես ևս կամեցա անել այն, ինչ որ դու մտածել ես... Բայց մենք հրաման տվինք, որ ամեն ոք, ով կամենա, Հիսուսին էլ թվի աստվածների թվում, և մահ սպառնացինք նրանց, ովքեր քրիստոնյաների վրա կչարախոսեն: Իսկ հրե ժողովրդի վերաբերմամբ, որոնք հանդգնեցին նրան խաչել, որի մասին լսում եմ, թե չէր արժանի խաչի և մահվան, այլ պատվի և երկրպագության, նրանց գործը կքննեմ և արժանավոր (պատիժը) կհատուցեմ...”

Տիբերիի այս նամակը սկիզբ դրեց Հռոմում քրիստոնեությունն ընդունելու գործընթացին:

Աբգար V Տիբերիին գրած երկրորդ նամակից

“Աբգար, Հայոց թագավոր, իմ տիրոջ՝ Հռոմայեցիների Տիբերիոս կայսեր ողջույն: Բայց դու, տեր, բարեհաճիր ուրիշ մարդ ուղարկել Երուսաղեմ Պիղատոսի տեղ, որպեսզի նա անարգանքով հեռացվի այն իշխանությունից, որ դու նշանակել ես, որովհետև նա հրեաների կամքը կատարեց և Քրիստոսին անմեղ տեղը խաչեց առանց քո հրամանի: Ողջ եղիր”:

Հայտնի է, որ Պիղատոսին պաշտոնանկ էին արել:

* “Կարդացվեց ինձ համար” արտահայտությունը առում է այն մասին, որ Աբգար V նամակը Տիբերիոսին նույնպես հայերեն է եղել:

Աբգար V նամակը Ասորեստանի ու Բաբելոնի թագավոր՝ Ներսեհին

“Աբգար, Հայոց թագավոր, իմ որդի Ներսեհին ողջույն:

Քո ողջույնի գիրը տես, Պերոզին կապանքներից արձակեցի և հանցանքը ներեցի, և եթե կամենաս, նշանակիր նրան Նինվեի վերակացու (Ասորեստանի մայրաքաղաք, Պ.Հ.), ինչպես ուզում ես:

Գալով քո գրածին, թե ինձ մոտ ուղարկիր այդ բժշկին, որ այդ հրաշքները գործում է և քարոզում է մի ուրիշ աստված, որ հրից ու ջրից էլ վեր է, որպեսզի նրան տեսնեմ ու լսեմ, – նա բժիշկ չէ մարդկային արվեստով, այլ աշակերտ էր աստծու որդու, հրի և ջրի ստեղծողի, և նա ուղարկվեց Հայաստանի կողմերը, ինչպես նրան վիճակ է ընկել:

Բայց նրա գլխավոր ընկերներից մեկը, Սիմոն անունով, ուղարկված է այդտեղ, Պարսկաստանի կողմերը, նրան փնտրի՛ր, գտի՛ր և նրանից կլսես, ինչպես և քո Արտաշես հայրը: Նա բոլոր հիվանդությունները կբժշկե և ցույց կտա կյանքի ճանապարհը:”

Աբգար V թագավորի նամակը Իրանի թագավորին

“Աբգար, Հայոց թագավոր, իմ եղբայր պարսից Արտաշես թագավորին ողջույն:

Գիտեմ, որ դու արդեն լսած կլինես Հիսուս Քրիստոսի, աստծու որդու մասին, որին հրեաները խաչեցին և որ մեռած տեղից հարություն առավ և իր աշակերտներին ուղարկեց բոլոր աշխարհը՝ ամեն տեղ ուսուցանելու:

Նրա գլխավոր աշակերտներից մեկը, Սիմոն անունով, քո տերության կողմերումն է: Արդ՝ փնտրի՛ր, գտի՛ր նրան և նա կբժշկե ձեզ մոտ բոլոր ախտերն ու հիվանդությունները և կյանքի ճանապարհ ցույց կտա:

Դու հավատա նրա խոսքերին, դու և քո եղբայրներդ և բոլորը, որ կամովին հնազանդում են քեզ: Որովիետև ինձ ախորժելի է, որ դուք, մարմնով իմ ազգականներս, նաև հոգով իմ մտերիմ հարազատները լինեք:”

Աբգար V վերը բերված նամակների տեքստերը կան Մովսես Խորենացու նույն գրքում [84, էջ179-182]: Խորենացին գրում է նաև, որ Աբգար V պահպանել է բոլոր (այս 7) նամակները Էդեսիայի իր արխիվներում: Հետագայում նրա արխիվները տեղափոխվել են Եվրոպա:

Մովսես Խորենացին գրում է նաև, որ իր նամակը Հիսուս Քրիստոսին Աբգարն ուղարկել է Երուսաղեմ իրեն նվիրված քարտուղար Անանիի հետ, (որն ըստ

ամենայնի, նաև շնորհալի նկարիչ էր, կամ նրա հետ լավ նկարիչ կար*): Էդեսիա վերադառնալով Անանը բերեց Հիսուս Քրիստոսի պատասխան նամակը, ինչպես նաև Նրա դիմանկարը [84, էջ 178], այսպես կոչվող “Մանդիլիոնը”, Հիսուս Քրիստոսի հռչակավոր ու միակ դիմանկարը: Հետագայում այդ դիմանկարից կոպիաներ են արվել, որոնցից մեկը պահվում է Բրիտանական թանգարանում:

Այսպիսով, Աբգար V աշխարհում առաջին քրիստոնեական թագավորն է եղել և հսկայական դեր է խաղացել քրիստոնեության ընդունման ու տարածման գործում: Էդեսիայում գտնվելով, նա եղել է նաև Մեծ Հայքի թագավորը (մ.թ. 12-50), նա եղել է Հայոց “Արքայաց արքա” Տիգրան II Մեծի եղբոր՝ Արշամի որդին: Աբգար V մահացել է մ.թ. 50թ. [36, էջ 227]:

Աբգար V Հայոց թագավորը, իրոք, արժանի է կոչվելու Աբգար V Մեծ:

Սուրբ մասունքները, այսինքն Հիսուս Քրիստոսի նամակն ու Նրա դիմանկարը (և Աբգար V բոլոր արխիվները) պահպանելու համար հայերը դրանք թաքցնում են Էդեսիայի քաղաքային դարպասի քարե պատի մեջ (մ.թ. մոտ 220), ուր նրանք գտնվում էին մինչև մ.թ. 525թ., երբ տեղի ունեցավ մեծ ջրհեղեղ և սուրբ մասունքները նորից գտնվեցին [36, էջ 227]:

Աբգար V-ից հետո Էդեսիայի գահին բարձրացավ նրա տղան՝ Անանը (մ.թ. 50-53թ.թ.), իսկ նրա զարմիկ Սանատրուկը դարձավ Մեծ Հայքի թագավորը (մ.թ. 50-64):

Անանիից հետո Էդեսիայի գահին մ.թ. 53թ. բարձրանում է Աբգարի հաջորդ որդին, Մանուկ VI (մ.թ. 53-60), որը չէր ընդունում քրիստոնեությունը և մ.թ. 57թ. վերադարձավ հին աստվածների: Բայց Էդեսիայի (և ողջ Օսրոյենի) հայկական բնակչությունը հավատարիմ մնացին քրիստոնեությանը:

Քրիստոնեությունը վերստին ընդունվեց Հայկական Միջագետքում (Էդեսիայում) մ.թ. 207թ. Աբգար VIII Մեծ թագավորի կողմից (մ.թ. 177-212):

Համաձայն Ա.Ջիլբերտի Աբգար VIII Մեծը կրում էր նաև “Արքայաց արքա” տիտղոսը և մ.թ. 197թ. արժանացել է փառավոր ընդունելության Հռոմում [36, էջ 221]:

* Այն ժամանակ թագավորական պալատներում կային լավ նկարիչներ:

3.4(2). ԿՈՄԱԳԵՆԱ, ԾՈՊՔ, ԿԱՊԱՂՈՎԿԻԱ, ՓՈՔՐ ՀԱՅՔ

Այս չորս երկրները (տարածքները) եղել են հայկական թագավորություններ սկսած մ.թ.ա. մոտավորապես 23-րդ հազարամյակից և ժամանակ առ ժամանակ ունեցել են ընդհանուր թագավորներ: Հին ժամանակներում Կոմագենան և Կապադովկիան եղել են Մեծ Հայքի ավելի մեծ տարածքի՝ Ծոփքի կազմում:

ա. Կոմագենա

Կոմագենան գտնվում էր Օսրոենից (Էդեսիա) դեպի արևմուտք, Եփրատ գետի աջ ափին:

Գլխավոր քաղաքը (մայրաքաղաքը) Սամոսատն էր Եփրատի աջ ափին: Սամոսատի հին անունը եղել է գուցե Սաղմ(ոս)ատ, այսինքն՝ “սաղմ • ոս • ատ = առանձին սուրբ երգ կամ խորալ”: Սամոսատում (ինչպես և Էդեսիայում) կային մեծ գրադարաններ:

Լինելով Եփրատի արևմտյան ափին՝ Կոմագենան երբեմն պաշարվում էր արևմուտքից, հատկապես այն ժամանակաշրջանում, երբ առաջացան Հռոմի կայսրությունը և Բյուզանդիան:

Կոմագենայի թագավորները եղել են Մեծ Հայքի Երվանդունիների դինաստիայից:

բ. Ծոպք

Ծոպք անունը սեպագրերում Ծուպ է, իսկ հին աղբյուրներում՝ Սոֆենա է:

Ծոպքը (նաև Շաունին) գտնվում էր Օսրոենից (Էդեսիա) հյուսիս և Տարոնից արևմուտք: Տարոնը Մեծ Հայքի տարածքներից էր, այն գտնվում էր Վանա լճից արևմուտք մինչև Եփրատ գետը և տարածվում էր Արածանիի (Եփրատի վտակը) երկայնքով: Ավելի ուշ ժամանակներում Ծոպքը նաև Սոֆենա է կոչվել:

Թույլ տվեք այստեղ մեջբերել Ծոպքի որոշ թագավորների համառոտ անվանացանկը, որոնք (ինչպես և Էդեսիայում), հանդիսացել են Մեծ Հայքի Երվանդունիների դինաստիայի կրտսեր ճյուղը.

Սամոս (մ.թ.ա. 3-րդ դարի կես),

Արշամ (մ.թ.ա. 240-220),

Կսեռքս (մ.թ.ա. 3-րդ դարի վերջ),

Ջարեհ (մ.թ.ա. 190-175),

Արկաթիաս (մ.թ.ա. 2-րդ դարի կես),

Մերուժան (մ.թ.ա. 2-րդ դարի վերջ),

Արթաննես (մ.թ.ա. 2-րդ դարի վերջ – մ.թ.ա. 94 թ.):

Շոպրուն գտնվում են մեծ քաղաքներ. Խարբերթը կամ Քարբերթը = քար • բերդ = քարե բերդ, որի ավելի հին անվանումը եղել է Քարպուտ = Քար • պ • ու • տ = քարե պարիսպ ունեցող տեղ*:

գ. Կապադովկիա

Կապադովկիան գտնվում է Եփրատից դեպի արևմուտք (Փոքր Ասիայում), հյուսիս-հարավ ուղղությամբ՝ Փոքր Հայքի և Կիլիկիայի միջև: Կոնստանդինյան արևմտյան մասում մի մեծ լիճ կա, որի անունը թուզ է: Կապադովկիայի հին անունը Քամիրք է եղել, այսինքն՝ գա • միրգ = “պտղաբեր”:

Կապադովկիայի գլխավոր և հնագույն քաղաքի հին անվանումը եղել է Մաջիակ (կամ՝ Մշակ), ինչը նշանակում է մա • գ • ալ = “ուժի և կյանքի աղբյուր”: Հետագայում, ավելի ուշ ժամանակաշրջանում քաղաքը վերանվանվել է Կեսարիա, որը նույնպես գալիս է հին հայերենից՝ կես • ԱՐ = “կես • Աստված” (հայոց թագավորների հինավուրց տիտղոսը) և -իա վերջավորությունը, որը տեղ, երկիր է նշանակում: Այսինքն Կեսարիա նշանակում է “թագավորանիստ վայր”:

Կապադովկիայի սրբավայրի մասին ասվել է Բաժին 3.2(3).-ում, (տես նաև Ակ. 59, 73-77):

Ըստ Մովսես Խորենացու հին Քամիրքի թագավորները եղել են Մեծ Հայքի կեսար Արամի (Արևի որդի) դինաստիայից:

դ. Փոքր Հայք

Փոքր Հայքը գտնվել է Սև ծովի հարավից մինչև Կապադովկիան ներառյալ Եփրատի վերին տարածքները: Փոքր Հայքի և Մեծ Հայքի միջև գտնվում է “Բարձր Հայք” լեռնաշղթան:

Մայրաքաղաքը Անի-Կամախն էր: Փոքր Հայքի մյուս գլխավոր քաղաքը եղել է նավահանգիստ Տրաբզոնը (Տրապիզոն): Այդ անունը նշանակում է “տր • ա • բ • գ • ո • ն = “տալիս է սկիզբը կառուցողական կյանքի”: Մի այլ մեծ քաղաքի անվանումը Սեբաստիա էր = սե • բ • աստ • իա = “սիրո և բարության տիեզերական վայր”: Եղել են նաև հին քաղաքներ. Արդասա = “Արևին ուղղված սիրուն կյանք” և Նիկոպոլիս = ն • իկ (ա) • ո • պոլիս = “սա դարձավ սրբազան քաղաք”:

Հետագայում Փոքր Հայքի հյուսիսային մասում (կարճ ժամանակով) գոյացել է

* “Պուտ”- ը պահպանվել է հնդեվրոպական լեզուներում որպես “հավաքել” – հայերենում, “to set, put place, stand” – անգլերենում:

Պոնտական թագավորությունը, որը կախման մեջ էր Մեծ Հայքից:

Թուրքիայում հայերի ցեղասպանությունից հետո (1915-1920) Փոքր Հայքի բնակչության գերակշռող մասը (Տրաբզոնից և այլ քաղաքներից) տեղաշարժվեց Աև ծովի արևելյան ափը՝ Սուխումի (Աբխազիա), Սոչի (Ռուսաստան) և այլ կողմեր:

3.4(3). ԿԻԼԿԻԱ

Կիլիկիա = Կ • ի • լի • Կ • իա = “կեսը մարդկանց ջրի (ափին) կեսը՝ (լեռնային) երկրում”:

Կիլիկիան մեծ հայկական պետություն (թագավորություն) է եղել մ.թ.ա. մոտավորապես 22-րդ հազարամյակից մինչև մ.թ.ա. 1-ին դարը և հետո՝ մ.թ. 11-ից մինչև 14-րդ դարերը (մ.թ.1080-1375): Կիլիկիայի լեռնային մասերը եղել են հայկական տարածքներ մինչև մ.թ. 18-րդ դարի վերջերը [68, էջ 28], երբ Թուրքիայում սկսվեց հայոց ցեղասպանությունը:

Կիլիկիան գտնվում է Միջերկրական ծովի հյուսիս-արևելյան ափին ներառյալ Կիպրոս կղզին: Կիլիկիան ընդգրկում է Միջերկրական ծովի հյուսիս-արևելյան մասի Հայկական ծոցը ու տարածվում է ծովից դեպի հյուսիս մինչև Կապադովկիան և դեպի արևմուտք՝ մինչև Փոքր Ասիայի (Անատոլիա) կեսը, այսինքն մինչև արևելյան երկայնության 30⁰:


Կիլիկիայի բնական պայմանները երկիրը բաժանում են երկու մասի. Լեռնային Կիլիկիա, ուր արևմուտքից արևելք ձգվում է Հայկական Տավրոսի լեռնաշղթան և Դաշտային Կիլիկիա, որը տարածվում է ծովափի երկայնքով:

Տաք կլիման և բնական այլ պայմանները բարենպաստ են մարդկանց կյանքի, մշակույթի ու տնտեսական կառուցվածքի զարգացման համար: Ոռոգման համար օգտագործվել են լեռնային Պիրամ, Սար, Կիդն, (Թարս) և Կալիկադն գետերը:

Սուտքը դեպի Կիլիկիա հնարավոր է միայն որոշ լեռնանցքներից, ինչպիսիք են Կիլիկիան դարպասը (Նկ. 89) և Սիրիական դարպասը: Այդ լեռնանցքները (ու ողջ տարածքը) պաշտպանված են եղել Լամբրոնի, Վախի, Կորիկոսի, Լեվոնկլայի (Նկ. 90 ա, բ, գ, դ), Կապան, Բերդուս, Անագարբա, Հռոմկլա ամրոցներով:

Կիլիկիայի մայրաքաղաքը եղել է Սիսը, ուր եղել է Կիլիկիայի հայոց կաթողիկոսի նստատեղը (այժմ տեղափոխված է Անթիլիաս):

Այլ հին ու մեծ քաղաքներից են նաև. Թարսը, Անագարբան, Հաճնը, Դազարկը, Կապանը, Ջեյթունը (Ուլնիա), Բերդոսը, Մարաշը, Սկեվերան, Մուսալեռը և ուրիշներ:



Նկ. 80. Սևան լիճը



Նկ. 81. Սևան լիճը: Արևածագ: Նկարիչ՝ Պ. Հերունի



Նկ. 82. Կան լիճը Սիփան սարով (այժմ Թուրքիայում)



Նկ. 83. Սասունցի Ղափիթ: Արծան Երևանում:
Քանդակագործ՝ Ե. Քոչար




Նկ. 84. Հայկական հին մեծ ամրոց Անբերդը
Արագած լեռան վրա




Նկ. 85. Հայկական ավանդական կանաչի արծաթե գուտի
(մ.թ. XVI դար): Սկարիչ՝ Պ. Հերունի



Նկ. 86. Արիս (խոյ): ԱՐ-ի հին հայոց խորհրդանիշը (Առյուծի և Արծիվի հետ միասին): Բրոնզե արձանիկ մ.թ.ա. XIII դար: Պեղված է Առիճ գյուղի մոտ (Արագած լեռ) հնագետ Թ.Խաչատրյանի կողմից



Նկ. 87. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին (կառուցվել է
մ.թ. 301 - 304թթ.)



Նկ. 88. Սուրբ Հռիփսիմեի տաճարը (մ.թ. 618): Էջմիածին

Նավահանգիստներն են. Հայասը և Ալեքսանդրետան (Հայկական ծոցի ափին), Ադանան (Սար գետի վրա), Կորիկոսը, Սելեվկիան, Կոլոնոպը (ծովափին):



Նկ. 89. Կիլիկիայի դարպասը Հայկական Տավրոսի լեռնաշղթայում



ա) Լանժրոն



բ) Վախսա



գ) Կորիկոս



դ) Լեվոնկա

Նկ. 90. Կիլիկիայի բերդերը

Կիլիկիան եղել է ծովային մեծ երկիր: Կիլիկիացիներն, օգտագործելով անտառների մայրիները, կառուցում էին մեծ ծովային նավեր (նույնիսկ մինչև հինգ տախտակամած ունեցող) և փյունիկյացիների հետ միասին (հայկական մի այլ մեծ ծովային երկիր) հին ժամանակներում կտրում էին ծովերն ու օվկիանոսները, լողալով դեպի հեռավոր անհայտ երկրներ (“terra incognita”), ընդհուպ մինչև Ամերիկա: Վերջերս Եգիպտոսի ավազներում Գիզի և Ալեքսանդրիայի մոտ հայտնաբերվել է մեծ, հինգ տախտակամածով հնագույն մի նավ, որը առաջացրել է մեծ զարմանք, քանի որ հայտնի չի, թե ովքեր են այն ստեղծել:

Մեզ են հասել կիլիկիացիների հին հայկական որոշ չքնաղ երգեր: Պրանցից երկուսը, օրինակ, “Կիլիկիան” և “Նավավարն” են:

“Կիլիկիա” երգում հեղինակը պատմում է, թե ինչքան չքնաղ է Հայոց երկիր Կիլիկիան, երկիր, որն իրեն տվել է արև (այսինքն կյանք): Լինելով հեռու իր երկրից ու կարոտելով նրան, նա ուզում է վերադառնալ ու նորից տեսնել Կիլիկիան:

“Նավավար” (նավ • ա • վար) երգը ձկնորսական նավի նավավարի մասին է, մի խիզախ մարդու մասին, որն անվախ գնում է ծովի փոթորկին հանդիման, ու չի վախենում, քանի որ ինքը ծովափին է ծնվել ու իր ողջ կյանքն անց է կացրել ծովում, ինչպես իր հայրն ու եղբայրները:

Կիլիկիացիները հայեր են եղել և իհարկե օգտագործել են հայոց լեզուն և հայոց այբուբենը*, երբ այն ծագեց**։ Նույնը վերաբերվում է նաև փյունիկիացիներին: Այնպես որ Մ. Ռիմշնայդերի [65] կարծիքն այն մասին, որ հույները փյունիկյան այբուբենը փոխառել են Կիլիկիայից (տես ՄԱՍ 2), միանգամայն ճշմարտացի է, որովհետև Կիլիկիան ավելի մոտ է Հունաստանին, քան Փյունիկիան:

Հնագիտական պեղումներ Կիլիկիայում գրեթե չեն կատարվել, այնպես որ նրա հին ժամանակների պատմության մասին մենք իրական տեղեկություն չունենք: Ավելի ուշ ժամանակաշրջանի Կիլիկիայի երկու հայկական դինաստիաների՝ Ռուբինյանների (մ.թ. 1080-1225) և Հեթումյանների (մ.թ.1226-1375) բոլոր թագավորները հատնի են (տես Հայոց թագավորների աղյուսակը): Կիլիկիայի վերջին թագավոր Լևոն VI (մ.թ. 1374-1375) վախճանվել է 1393թ., Փարիզում և թաղված է Սեն-Ղենի բազիլիկում (գերեզման № 55), որի վրա գրված է . “Լևոն VI, Հայոց թագավոր, 1393”:

* Այդ հաստատում են նաև Կիլիկյան թագավորների փողերի վրա հայերեն տառերով կատարված գրությունները:

** Սկսած 10 հազար տարի մեզանից առաջ (տես ՄԱՍ 2):

3.4(4). ՓՅՈՒՆԻԿԻԱ (ԵՎ ՀԱՐԻՆԵՐԸ)

Փյունիկիա նշանակում է. փ • յ • ուն • ի • կ • ի • ա = “հավասար ես ունեմ. իմ (ծովային) կեսը և կյանքը (ցամաքը)”:

Փյունիկիան եղել է հայկական պետություն (թագավորություն) մ.թ.ա. մոտավորապես 20-րդ հազարամյակից մինչև մ.թ.ա. 1-ին դարը:

Փյունիկիան գտնվել է Միջերկրական ծովի արևելյան ափին այժմյան Սիրիայի, Պաղեստինի, Լիբանանի և Իսրայելի տեղում:

Գլխավոր հին քաղաքներն էին.

Տիրո (տ • ի • ր = “մարդկանց տեղ անող”),

Սիդոն (ս • ի • դ • ո • ն = “նա սուրբ տեղ մարդուն մոտիկ”),

Բիբլ (բ • ի • բ • լ = “լավ բարիք մարդուն բերող”),

Երուսաղեմ (հ • ար • ի • սա • դ • ե • մ = “Արևը պաշտող մարդկանց էության սա մեծ կենտրոն”):

Երուսաղեմը մ.թ.ա. 6-րդ հազարամյակում հիմնադրել են հայ հարիները (հ • ար • ի = “Արևը պաշտող մարդիկ”), որոնք եկել են Մեծ Հայքից և ապրել են Փյունիկիայի հարավի մի տարածքում, որը կոչվել է Հարիտ = “արևապաշտ ժողովրդի տեղ”: Այնպես որ նրանց հարիտներ կամ հուրիտներ անվանելը ճիշտ չի: Հարկավոր է նրանց անվանել հարիներ (արիացիներ), այսինքն հայեր, որոնք ապրել են Հարիտում:

Փյունիկիան և Կիլիկիան եղել են հայկական ծովային մեծ երկրներ: Նրանց խիզախ ծովայինները ու գիտնականները, օգտագործելով մեծ ծովային նավեր, հետազոտել են ծովից այն կողմ գտնվող հեռավոր երկրները, նույնիսկ Ամերիկան և Անտարկտիդան, մ.թ.ա. դեռ 8 – 6-րդ հազարամյակներում: Կենտրոնական Ամերիկայում նրանք տեղի ցեղերին կրթել են, կուլտուրա են սովորեցրել, կառուցել են այնտեղ Արևի Աստծուն նվիրված տաճարներ և զիկուրատի տեսակի բուրգեր (տես Բաժին 3.7(2).):

Ավելի ուշ փյունիկյացիները կառուցել են նաև հռչակավոր Կարթագենը Միջերկրական ծովի աֆրիկյան ափին: Հետագայում այդ քաղաքը իր հողերով աճեց, վերածվելով մեծ երկրի: Կարթագեն բառը նշանակում է. քար • թ • ա • գ • ե • ն = “քարի պես հավերժ ու գեղեցիկ եղավ նա”:

Փյունիկյացիներն (ու հարիները), ինչպես և կիլիկիացիները հայեր են եղել և, իհարկե, խոսել են հայերեն ու օգտագործել են հայոց այբուբենը: Այն կարծիքը, որ աշխարհի բոլոր այլ այբուբենները սկիզբ են առել Փյունիկյան այբուբենից, ճիշտ է,

բայց ավելի ճիշտ կլիներ ասել որ բոլոր այբուբենները ծագել են Հայոց այբուբենից, որովհետև Փյունիկյանը եղել է նույն հայկական այբուբենը, իսկ Փյունիկիան եղել է հին Հայաստանի միայն մի մասը (տես Գլուխ 2.14, Աղյուսակ 18):

Հայաստանի հին պատմությունը դուրս է նետված համայն մարդկության հին պատմությունից: Այդ պատճառով մարդկության հին պատմությունը լի է բազմաթիվ հանելուկներով, ուր առկա են փաստեր, որոնք չունեն բացատրություն:

Այդ հանելուկների թվին են պատկանում նաև շատ հին տաճարների ու բուրգերի փլատակները Կենտրոնական Ամերիկայում և Մաչու-Պիկչուի նման քաղաքները, որոնց տարիքը 6 հազար տարուց ավել է (այսինքն շատ ավելի հին են, քան մայայի, ացտեկների և ինկերի քաղաքակրթությունները):

ԳԼՈՒՆ 3.5. ՄԵԾ ՀԱՅՔԸ մ.թ.ա. 23 – 10-րդ ՀԱԶԱՐԱՄՅԱԿՆԵՐՈՒՄ 3.5(1). ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

Մեր թվարկությունից առաջ 23 – 10-րդ հազարամյակների ժամանակաշրջանում հայերն ունեին արդեն բավականին զարգացած գիտություն, տեխնոլոգիաներ և մշակույթ:

Աստղագիտություն

Արևը, Լուսինը, աստղերը երկնքում ու նրանց շարժումները գրավում էին բանական մարդկանց ուշադրությունը դեռ ամենասկզբից՝ մ.թ.ա. 50-40 հազար տարի առաջ: Քայլ առ քայլ նրանց գիտելիքները կուտակվում էին և աճում:

Հայկական քաղաքակրթությունը սկիզբ է առել մ.թ.ա. մոտավորապես 40-րդ հազարամյակից: Հազարամյակների ընթացքում կուտակված գիտելիքները, մոտավորապես մ.թ.ա. 23-րդ հազարամյակում, արդեն հնարավորություն են տվել, օգտագործելով պարզ աստղագիտական գործիքներ, որոշել, որ Արևի ծագման կետը շարժվում է հորիզոնով, վերադառնալով նույն կետին 365 օրվա ընթացքում, այդ տևողությունը անվանել են մեկ տարի, որով և հիմնադրվել է աշխարհում առաջին հայոց օրացույցը (տես Գլուխ 1.17): Մենք կարող ենք ենթադրել, որ որպես տարեսկիզբ ընտրված է եղել գարնանային գիշերահավասարի օրվա (մարտի 21-ի) Արևի ծագման պահը (ժամը 6): Սա առավել հավանական

տարբերակն է: Կարող ենք ենթադրել նաև, որ մեկ տարին բաժանվել է 12 ամիսների և Արևի աստղային ճանապարհը կիսվել է 12 մասի (այսինքն 12 համաստեղությունների):

Մենք կարող ենք ենթադրել, որ այս բոլոր իրադարձությունները հայտնի են դարձել արդեն մ.թ.ա. 22946 թվականին, հաշվելով 14 Հայկական ցիկլ (1461-ական տարով) նախքան Կեսար Հայկի հաղթանակը մ.թ.ա. 2492 թվականին ($14 \times 1461 + 2492 = 22946$):

Հայ աստղագետները, որոնք հազարամյակների ընթացքում ուսումնասիրել են երկինքը, նկատել են, որ Արևը դանդաղորեն փոխում է իր դիրքը աստղերի նկատմամբ (գտնվելով 2160 տարի Կենդանակերպի յուրաքանչյուր համաստեղության մեջ), այսինքն նրանք իմացել են Երկրագնդի առանցքի պրեցեսիայի երևույթի մասին մ.թ.ա. դեռ 11-րդ հազարամյակում (տես Գլուխ 1.22):

Տեխնոլոգիաներ

Հայերը մեծ առաջընթաց են ունեցել տների, բնակավայրերի և քաղաքների կառուցման, քարի մշակման և օգտագործման տեխնոլոգիաների մեջ, տներ և տաճարներ կառուցելիս: Նրանք հիանալի գործիքներ էին պատրաստում քարից, փայտից, կավից և այլ նյութերից: Նրանք սկսել էին օգտագործել նաև մետաղները երկնաքարերից, բոլիդներից ու լեռնային հանքերից ստացված: Այդ գործիքները շատ ավելի բարձր որակի էին, քան պեղված հազարավոր քարե գործիքները, որոնք 300-50 հազար տարվա տարիք ունեն:

Հայերը հայտնագործել և օգտագործել են հզոր վերամբարձ կռունկներ ծանր քարերը բարձրացնելու համար և զարգացրել են տների ու տաճարների շինարարության տեխնոլոգիաները:

Ջարգացած էին նաև սննդի և հագուստի արտադրության տեխնոլոգիաները:

Գյուղատնտեսություն

Բացի խնձորի, խաղողի (գինու), ծիրանի մշակումից հայերը սկսեցին ցորենի կուլտիվացումը և ունեին հաց թխելու տեխնոլոգիան: Հաց թխելու նպատակով նրանք օգտագործում էին՝ կավից պատրաստած ու թրծած թոնրի, հողի մեջ թաղված շիկացրած ներքին պատերը: Եվ այս ամենը աշխարհում առաջին անգամ էր արվում:



Ուշագրավ է, որ Հայաստանում մինչ օրս էլ աճում են վայրի ցորենի աշխարհում հայտնի չորս տեսակներից երեք տեսակը: Այնպես որ Հայաստանը ցորենի հայրենիքն է:

Տնային կենդանիներ

Բացի ոչխարներից, հավերից, շներից հայերը ընտելացրել են նաև ծիուն, կովին, գոմեշին, այծին, խոզին, կատվին և այլն: Այդ ամենը տեղի է ունեցել առաջին անգամ աշխարհում, քանի որ այլ քաղաքակրթություններ դեռ գոյություն չեն ունեցել:

Հայերն օգտագործել են ձիերին և գոմեշներին որպես լծկան իրենց գյուղական տնտեսություններում և տնաշինարարության մեջ: Հայստանի սարերում շատ ժայռապատկերներ կան (սկսած մ.թ.ա. 8-րդ հազարամյակից և ավելի վաղ), ուր պատկերված են գոմեշներ՝ լծած չորս անիվանի սայլերին (Նկ.58): Հետագայում, մ.թ.ա. 5 – 1-ին հազարամյակներում օգտագործվել են ավելի կատարելագործված սայլեր (Նկ. 91):

Սկսած մ.թ.ա. 3 – 2-րդ հազարամյակներից, երբ առաջացան պատերազմները, հայկական հեծյալ գործը հայտնի էր ամենուրեք որպես լավագույնը: Իրանը և այլ երկրներ տարեկան տասնյակ հազարավոր գլուխ ձի էին գնում Հայաստանից: Այնպես որ Հայաստանը ընտելացված ձիերի հայրերնիքն է:



Նկ. 91. Սևան լճի մոտ կատարված պեղումների ժամանակ հայտնաբերված մ.թ.ա. 3 – 2-րդ հազարամյակների կատարելագործված սայլեր

Գիր

Մ.թ.ա. մոտավորապես 23-22 հազարամյակներում Հայաստանում ծագել են առաջին գրերը (նկարներ, խորհրդանիշեր, հետո՝ հիերոգլիֆներ), որոնք մ.թ.ա. 10-րդ հազարամյակից հետո օգտագործվել են նաև (այբուբենին զուգահեռ)

երկար ժամանակվա ընթացքում մինչև մ.թ.ա. 3-րդ հազարամյակը այն ձևով, ինչպես որ պահպանվել են ժայռերին Մեծամորում՝ մեծ մետաղագործական կենտրոնում (մ.թ.ա. 3600թ.) [97], որը գտնվում է Արարատյան դաշտավայրում Երևանից 25կմ հեռավորության վրա:

Հայոց այբուբեն

Հայոց այժմյան այբուբենի 19 տառերը ծագել են արդեն մ.թ.ա. 12 – 10-րդ հազարամյակներում: Ես հայտնաբերել են այբուբենի այդ 19 տառերը:

Ամեն նոր տառ ծագել է ըստ համապատասխան հնչյունի, որոնց հերթականությունը պայմանավորված է եղել հնարավոր չափով նոր բառեր արտասանելու կամ գրելու համար (տես Գլուխ 2.11): Ես շարեցի այդ տառերը երկու տողով՝ 10 և 9 տառ յուրաքանչյուրում (Աղյուսակ 15) և շատ զարմացա, արդյունքում ստանալով երկու հնից եկող նախադասություն և հայտնաբերելով տառերի ու թվերի ձևերի նմանությունը: Այս երկու արդյունքը նշանակում են, որ.

- Նախնական այբուբենի 19 տառերի հայտնաբերումը ճիշտ է,
- 1, 2, 3, ... 9, 0՝ հայկական թվեր են, որոնք գալիս են հին Նախնական այբուբենից (մ.թ.ա. 10-րդ հազարամյակ):

Քարահունջի ժամանակներում մ.թ.ա. 7 – 6-րդ հազարամյակներում հայոց այբուբենը զարգացել էր և բաղկացած էր 34 տառից (տես ՄԱՍ 1 և 2):

Մշակույթ

Շատ հին ժամանակներից սկսել են զարգանալ հայ բանաստեղծական արվեստը, երգերն ու պարերը:

Մեր թվարկությունից առաջ մոտավորապես 23-րդ հազարամյակում ծագել է (նաև երգի ձևով) հայկական էպոսը չարի ու վիշապների դեմ պայքարող Վահագն Աստծո մասին: Գլուխ 3.3-ում բերված են տասնմեկ տող այդ էպոսից Վահագնի ծնունդի մասին:

Մենք կարող ենք երթադրել, որ մոտավորապես մ.թ.ա. 10-րդ հազարամյակում է ծագել հռչակավոր “Սասունցի Դավիթ” հայկական էպոսը Հայաստանը պաշտպանող հերոսի մասին: Նկար 83-ում նրա արձանն է Երևանում: Այդ էպոսի սկզբում հայոց թագավորի Ծովինար (Ծով • ի • նար = “ծովային ժողովրդի առաջնորդ”) անունով աղջիկը խնում է ծովի հատակի աղբյուրից երկու բուռ ջուր ու ծնում է երկու հերոս տղա. Սանասարին ու Բաղդասարին:

Հետագայում (և առ այսօր) հայ պոեզիան, երաժշտությունը, երգերն ու պարերը շատ են զարգացել Հայաստանում և փոխառվել են բազմաթիվ այլ

ժողովուրդների կողմից: Օրինակ, հին հնդկական “Ռամայանա” էպոսը սկսվում է նույնպես, ինչպես հիշատակված հայկական լեգենդը Ծովինարի մասին; շոտլանդական, իռլանդական և Ռուելի ժողովրդական երաժշտությունը, երգերն ու պարերը մոտ են հայկականներին; Եվրոպական հոգևոր և դասական երաժշտության ակունքները բխում են հայկական հոգևոր և ժողովրդական երաժշտությունից:

Շատ հին ժամանակներից են գալիս ԱՐ Աստծո պաշտամունքի հետ կապված հայ մարդկանց անունները, որոնք օգտագործվում են մինչ այսօր.

- Արամ – Ար-ի (Արևի) որդի
- Արման – Արևի մարդ
- Արա – Արևի կյանք (մարդ)
- Արիս – Արևի իսան (մարդ)
- Արտուր – Արևի տուն ունի անողը (կառուցողը)
- Արշակ – Արևի հորդ աղբյուր
- Արևատ – Արևի լիություն
- Արտակ – Արևի տան ակունք
- Արև – Ծագած Արև
- Արուս – Բարձր հասուն Արև
- Արևիկ – Փոքրիկ Արև
- Արփիկ – Փոքրիկ Արև
- Արմինե – Արևի մի նա էակ
- Արմիկ – Արևի մի (նման) կյանք

և ուրիշներ:

Ակներև է, որ աշխարհի քաղաքակրթությունների հետագա արագ աճն ու զարգացումը կատարվել է հնագույն հայկական քաղաքակրթության ազդեցության ներքո, ներառյալ աստղագիտությունը, մաթեմատիկան, տեխնոլոգիաները, գյուղատնտեսությունը, մշակույթն, ինչպես նաև պետականությունը (թագավորությունը)՝ իր օրենքներով ու կարգ ու կանոնով, որոնք շատ զարգացած էին հին Հայաստանում:

3.5(2). ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՒՄԵՐ (ԿՐՏՍԵՐ ԱՐԱՄԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ)

Մեր թվարկությունից առաջ մոտավորապես XIV հազարամյակում (և ավելի վաղ) հայերը եկել են հարավային Միջագետք ու հիմնել են Փոքր Արամի թագավորությունը (կամ Հայկական Սումերը), որը համառոտ կոչել են նաև Սումեր (սու • մեր = “սա մերն (է)”)։ Նրանք զբաղվում էին գյուղատնտեսությամբ, շատ տնային կենդանիներ ունեին և քաղաքներ էին կառուցում։

Ջ.Հենրոքը պատմում է մի շատ հին ավանդություն, ուր համաձայն հայդական պատմիչ Բերոսի ասվում է, որ “Վաղնջական ժամանակներում բարձրանիստ լճերի աստվածները եկել են Սումեր երկիրը։ Նրանց առաջնորդի անունը Օաննեշ է եղել։ Նա շումերներին գիտելիքներ է տվել գրերի, գիտությունների և տարբեր արվեստների մասին։ Նա նրանց սովորեցրել է տներ ու տաճարներ կառուցել, օրենքներ սահմանել, բացատրել է երկրաչափական գիտելիքների հիմունքները։ Նա սովորեցրել է նրանց գյուղատնտեսություն և մարդասիրություն։ Նրա տված գիտելիքներն այնքան բազմակողմանի էին (ունիվերսալ), որ այն ժամանակվանից անհրաժեշտություն չի ծագել որևէ շոշափելի, բան ավելացնել” [26, էջ 77-78]։

Այստեղ կարող են ավելացնել, որ Օաննեշ անունը հայկական Հովաննես անունն է, որը նշանակում է. հ • ո • վան • ես = “ես աղոթող եմ սուրբ Վանից”։

Ռուս հնագետներ Վ.Բացաեվը և Ա.Վարակինը գրում են, որ սումերական քաղաքների պեղումները ցույց են տալիս, որ նրանց կուլտուրան հիմնվում է մի այլ, ավելի զարգացած նախորդ ազգի մշակույթին, որոնք սումերներ չէին և որոնց բարձր մշակույթը համաձայն հայտնի անգլիացի հնագետ Լ.Վուլին գոյություն է ունեցել դեռ մինչև Մեծ Ջրհեղեղը [87, էջ 19]։ Լ.Վուլին գրել է այդ հին ժողովրդի մասին. “Դա եղել է նրանց մշակույթը, ովքեր ապրել են մինչև Մեծ Ջրհեղեղը... Բազմաթիվ այլ արժեքների հետ մեկտեղ նրանք սումերներին պատմել են նաև լեգենդը Մեծ Ջրհեղեղի մասին” [87, էջ 19]։

Ովքե՞ր են եղել այդ բարձր քաղաքակրթության տեր մարդիկ։ Վ.Բացաեվը և Ա.Վարակինը գրում են նաև. “Միջագետքի նախաշումերյան բնակիչները կարողացել են հասցնել շումերներին նրանց պրիմիտիվ վիճակից մինչև բարձր քաղաքակրթություն։ Այդ նրանք էին, որ քարե գործիքները փոխարինեցին մետաղից պատրաստածներով ու ստեղծեցին շքեղ առարկաներ... Այսօր մենք հաստատ գիտենք, որ այդ մարդիկ շումերներ չէին ու որ շումերական քաղաքների անունները՝ Ուր, Էրիդու, Լարակ, Արուկ, Հիպպուր, Կիշ շումերական չեն։ Այդ

անունները բացարձակապես այլ լեզվից են... Հին Շումերում շումերական չէին նաև մասնագիտությունների անունները՝ հողագործ, հյուսն, առևտրական”:

Իսկապես, ո՞վ էին այդ բարձր քաղաքակրթության տեր մարդիկ, և ի՞նչ լեզու էին նրանք օգտագործում: Նրանք միայն հայեր կարող էին լինել, որովհետև այն ժամանակ միայն հայերն ունեին քաղաքակրթության անհրաժեշտ բարձր մակարդակ և որովհետև բոլոր 7 շումերական քաղաքների անունները հեշտությամբ բացատրվում են հայերեն: Թույլ տվեք ինձ ցույց տալ այդ (տես Աղյուսակ 10).

- Ուր = Ար = Արև (Սումերի մայրաքաղաքը),
- էրիդու = Արիդու = Ար • ի • դ • ու = “Արևի մարդկանց վայրը”,
- Լառակ = Լ • ար • ակ = “Արևով լի ակունք”,
- Լառսա = Լ • ար • սա = “սա լավ Արև (-ոտ) է”,
- Արուկ = Ար • ակ = “Արևի աչք”,
- Նիպպուր = Ն • ի • պ • ար = “նա (սա) մարդու համար արևոտ տարածք է”,
- Կիշ = Կ • ի • շ = “շատ մարդկանց կերակրողը”:

Մենք տեսնում ենք, որ սումերական քաղաքների անվանումների թարգմանությունը հայերեն ոչ միայն տառացի է, այլ նաև բացահայտում է Սումերերկրի բնական առանձնահատկությունները՝ այն, որ շատ արևոտ տեղ է եղել, հացաշատ տեղ (հնարավոր է եղել տարվա մեջ երեք բերք հավաքել): Յոթ քաղաքներից վեցի անվանման մեջ կա ԱՐ բառը (Արև): Մենք արդեն գիտենք, որ հայերը արևապաշտ են եղել և ունեցել են գյուղատնտեսական ավանդական բարձր տեխնոլոգիաներ:

Թույլ տվեք ինձ ասել նաև, որ քաղաքների անվանումների այս թարգմանության օրինակը նույնպես ակներև է դարձնում պարբերաբար կրկնվող մի սխալ. շատ գիտնականներ սումերական, ուրարտական և այլ բառերում “ա” հնչյունի փոխարեն “ու” են օգտագործում (արտասանում), իսկ “ս”-ի փոխարեն “շ” և այլն: Այս խախտումը պատճառ է դառնում այնպիսի մի սխալի, ինչպիսին է “Արարատի” փոխարեն “Ուրարտու” կարդալը և այլն: Հնարավոր է, դա տեղի է ունենում այն պատճառով, որ հնագույն բառերը (այդ թվում նաև հայկականները) հայերեն կարդալու փոխարեն ասորերեն են կարդում:

Այստեղ եկեք հիշենք անգլիացի բանաստեղծ լորդ Բայրոնի բառերը, որն ասել է. “Հնարավոր չի ուսումնասիրել Արևելքի պատմությունը առանց գիտենալու հայկականը”: Ապրելով սուրբ Ղազար կղզում գտնվող հայկական միաբանությունում, նա սովորել է հայերենը և կազմել է առաջին Անգլերեն-հայերեն բառարանն ու քերականությունը:

Հայ գիտնական Վ.Սաֆարյանը հաջողությամբ հայերեն է կարդացել նաև հին շումերական պիկտոգրաֆիկ տեքստերը (պատկերագրերը) և համարում է, որ դրանց ճիշտ ընթերցումը հնարավոր է միայն հայերեն լեզվով [88]:

Ըստ երևույթին հայերը (որոնք արդեն ունեին այբուբեն) սումերների հետ բացատրվելու նպատակով օգտագործել են պատկերագրեր:

Սումերական էպոսը, որը աշխարհում ամենահիններից մեկն է, պարունակում է ինն էպիկական երգ, որոնց հիմքում ընկած են մ.թ.ա. 28 – 27-րդ դարերի պատմական իրադարձությունները: Նրանցից հինգի մեջ “Արատտա” բառը կա՝ այն երկրի անունը, որտեղից եկել էին շումերների նախնիները: Որտե՞ղ էր Արատտան: Կարծիքներ կան, որ այն եղել է Իրանում, Ավղանստանում կամ Հայկական Լեռնաշխարհում: Հայ պատմաբան Ա.Մովսեսյանը համոզիչ կերպով ապացուցում է, որ Արատտան Արարատ է նշանակում և Արատտա երկիրը հենց Հայկական Լեռնաշխարհն է, նրա մի մասը Վանա լճից հարավ-արևելք, որը Հարիտն է, հարիների երկիրը (հուրիտների), այսինքն հայերի, որոնք այն ժամանակ (մ.թ.ա. 3-րդ հազարամյակի վերջ) ունեին, ինչպես հայտնի է, իրենց սեփական (այսինքն հայկական) այբուբենը [89]:

Այսպիսով, Մեծ Ջրհեղեղից առաջ (այսինքն մինչև մ.թ.ա. 10-րդ հազարամյակը) հայերը եկել են սումերների հողը (հարավային Միջագետք) մ.թ.ա. մոտավորապես 14-րդ հազարամյակում (կամ ավելի վաղ) և նոր թագավորություն են ստեղծել, կառուցելով նոր քաղաքներ, զբաղվելով գյուղատնտեսությամբ և այլն:

Հայերի նոր հոսք դեպի Սումեր եղավ Մեծ Ջրհեղեղից հետո, ըստ ամենայնի, մ.թ.ա. 9 – 8-րդ հազարամյակներում, նրանք պատմում էին տեղի ցեղերին Հայաստանի մասին, Մեծ Ջրհեղեղի մասին, սովորեցնում էին նրանց մշակույթ, գիտություն, գյուղատնտեսություն, ճարտարապետություն, Արևի բարի կրոնը: Վերը հիշատակված յոթ քաղաքները կառուցվել են իրենց հին տեղերում տիղմի հաստ (19 մ) շերտի վրա, որը գոյացել էր Մեծ Ջրհեղեղից հետո: Ավելի ուշ, հնարավոր է, այդ հայերը մասամբ ձուլվել են տեղի ցեղերի հետ և գոյացել է սումերա-բաբելոնա-հայկական ժողովուրդ:

Այժմ հասկանալի է դառնում, ինչու սումերները, որոնք ապրել են Մեծ Ջրհեղեղից հազարամյակներ հետո, լեգենդներ են ունեցել Մեծ Ջրհեղեղի մասին: Պատմաբաններ Ջ.Սմիթը (1872թ.) և Ա.Փեբելը (1914թ.) ապացուցել են, որ սումերները (և բաբելոնացիները) Մեծ Ջրհեղեղի մասին լեգենդը ունեցել են Աստվածաշնչից մի քանի հազարամյակ առաջ [87, էջ18]:

3.5(3). ՀԱՅԵՐԸ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ

Մեր թվարկությունից առաջ 15 – 2-րդ հազարամյակների ընթացքում հայերն ուսումնասիրել են մոտիկ և հեռու երկրները ու ծովերը, ամենուր տարածելով քաղաքակրթություն, գիտելիքներ և հավատը դեպի բարի ԱՐ Աստվածը: Բնիկներն ամենուրեք աստվածացնում էին նրանց մարդասիրության, բարձր գիտելիքների ու բարության համար: Հայերն այլ ազգերին շնորհում էին հազարամյակների ընթացքում կուտակած բարձր գիտելիքները, բարությունը, հնդեվրոպական կուլտուրան և լեզուն նույնքան առատածեռն ու անշահախնդիր, ինչպես իրենց ԱՐ Հայր Աստվածը նվիրում էր իրենց կյանք, լույս ու ջերմություն:

Հայերը գիտելիքներ կուտակելու համար (ասենք, մինչև Քարահունջի մակարդակի), ծախսել են մոտ 30 հազար տարի, այն ժամանակ, երբ այլ ժողովուրդներին (մ.թ.ա. 3-րդ հազարամյակում և ավելի ուշ) գիտելիքների նույն մակարդակին հասնելու համար անհրաժեշտ եղավ ընդամենը մոտ հազար տարի, գուցե և ավելի քիչ՝ շնորհիվ հայերի: Դրա հիմնական պատճառն այն է, որ հայերը 30 հազար տարիների ընթացքում միայնակ են եղել և որևէ ուսուցիչներ չեն ունեցել:

Մ.թ.ա. մոտավորապես 11-րդ հազարամյակում հայերն առաջին անգամ եկան Եգիպտոս (որտեղ այն ժամանակ, բնականաբար, որևէ պետություն դեռ չկար): Հայերի հիմնական նպատակը երկրների ուսումնասիրությունը և հսկայական հուշարձանի կառուցումն էր ի պատիվ իրենց կողմից կատարված մեծ գիտական հայտնագործության՝ երկրագնդի առանցքի պրեցեսիայի երևույթի հայտնաբերմանը: Ու նրանք կառուցեցին Մեծ Սֆինքսը՝ հսկայական մի առյուծ, առյուծի մոլորով, հայացքն ուղիղ դեպի հորիզոնի արևելյան կեսը, որտեղից այն ժամանակներում տարին երկու անգամ գիշերահավասարի օրերին Արևը ծագում էր Առյուծի համաստեղությունում: Ավելի մանրամասն այս մասին կարող եք կարդալ Գլուխ 1.35-ում՝ “Մեծ Սֆինքս” (ՄԱՍ 1):

Մեծ Ջրհեղեղից հետո Եգիպտոսում տեղի ունեցած երաշտի ժամանակաշրջանում հայերը նորից են Եգիպտոս եկել մ.թ.ա. 3500-3000թթ., և համախմբելով այնտեղի տարբեր ցեղեր՝ հիմնադրել են առաջին Եգիպտական պետությունը: Հնագույն պատմության գրքերում ասվում է, որ առաջին Եգիպտական թագավորի անունը Մենես կամ Մին է եղել: Այդ երկու անունները շատ նման են հայկական Մինաս անվանը, որը հայերեն նշանակում է. մ • ի • ն • ա • ս = “մեծ մարդը նա առաջին, այսինքն, առաջին կեսար (կամ փարավոն)”:

Այստեղ շատ կարևոր է նշել, որ հայերը չեն զավթել Եգիպտոսը, այլ

հիմնադրել են Եգիպտոսում Եգիպտական առաջին պետությունը: “Եգիպտ(ոս)” բառը հայերեն նշանակում է. ե • գ • ի • պ • տ = “եկան խելացի մարդիկ ընտրած տեղը”: Տեղի բնակիչները սիրալիք ընդունում էին հայերին և աստվածացնում էին նրանց բարության ու բարձր գիտելիքների համար: Եգիպտագետ Սետա Տերիանը (ԱՄՆ) կարդացել է հայերեն բուրգերից մեկի գրերը, ուր գրած է. “Եթե ուզում ես գնաս դրախտ, արի այստեղ և ասա ՀԱՅԿ”:

Եգիպտացիները ընդօրինակել էին հայերից նաև գլխավոր բարի Աստված ԱՐ-ի (ՐԱ) և ՍԵԹԱ-ի (ՍԵԹ) իմացության և գիտության Աստվածուհու պաշտամունքը: Սեթա (Ջեթ) այն ժամանակ եղել է նաև Հայկի համաստեղության Հայկի գոտու ամենապայծառ աստղի անունը (այժմ այն Օրիոնի համաստեղության Ալնիտակ աստղն է):

Հայկական ԱՐ Աստծուն նվիրված ամենահին հիմներից մեկը պահպանվել է Եգիպտոսում: Ահա մի քանի տող այդ մեծ հիմնից.

Օ Դու, որ գեղատեսիլ ես առավոտյան և երեկոյան,

Օ Դու, Տեր, որ կաս և արարում ես,

Օ, իմ Տեր:

Օ Դու, որ թագակիր թագավորն ես աստվածների մեջ:

Օ, Տեր Աստվածների մեջ,

Օ Դու ես միակը... [93]

Մինասից սկսած, բոլոր Եգիպտական կեսարները (փարավոնները) և բարձր խավը (դասը) երկար ժամանակաշրջանի ընթացքում՝ I - XVIII դինաստիան հայեր են եղել, այսինքն, մ.թ.ա. մոտավորապես 3100թ. մինչև մ.թ.ա. 1600թ.:

Եգիպտոսի պատմությունը բաժանված է մի քանի ժամանակաշրջանի:

Վաղ ժամանակաշրջան (մ.թ.ա. 3000-2800), երբ հիմնադրվել էր առաջին Եգիպտական պետության I դինաստիան՝ կեսար Մինասի գլխավորությամբ, հետո գալիս է II դինաստիան:

Հին ժամանակաշրջան (մ.թ.ա. 2800-2300), երբ տիրում էր III դինաստիայի կեսար Ջեսերը = ջ • ե • սեր = “եկավ սքանչելի սերը”: Մ.թ.ա. 2490-2480 Եգիպտոսում տիրել է Հայոց կեսար Հայկը (մ.թ.ա. 2493-2444), որը հիմնադրել է IV Եգիպտական դինաստիան և կառուցել է Մեծ Բուրգը (տես Գլուխ 1.34):

Առաջին միջանկյալ ժամանակաշրջան (մ.թ.ա. 2300-2000), երբ Եգիպտոսում տիրում էին հուրիտ-արիացիների VII-X դինաստիաները, (հարի-հայերը, մ.թ.ա. 2200-1800):

Միջին ժամանակաշրջան (մ.թ.ա. 2000-1800), երբ տիրում էին XI և XII դինաստիաները, իսկ կեսար էր Արմեննին և այլոք:

Երկրորդ միջանկյալ ժամանակաշրջան (մ.թ.ա. 1800-1600), երբ տիրել են XIII-XVIII դինաստիաները, երբ Եգիպտոսում եղել են հայեր-հիբսոսները, որոնք կառուցեցին Ավարիս մայրաքաղաքը:

Նոր ժամանակաշրջան (մ.թ.ա. 1600-1100), երբ տիրել են XIX, XX դինաստիաները:

Ուշ ժամանակաշրջան (մ.թ.ա. 11 – 6-րդ դարեր):

Օկուպացման ժամանակաշրջան, պարսիկների կողմից՝ (մ.թ.ա. 6 – 4-րդ դարեր), Ալեքսանդր Մակեդոնացու կողմից՝ (մ.թ.ա. 332թ.), հետո՝ Պտղեմեի կողմից (կամ Հելլենական ժամանակաշրջան՝ մ.թ.ա. 4 – 1-ին դարեր), Հռոմի կողմից՝ (մ.թ.ա. 30թ. – մ.թ. 395թ.), Բյուզանդիայի կողմից՝ (մ.թ. 395-639) և արաբների կողմից՝ (մ.թ. 639թ. մինչ այժմ):

Եգիպտացիների ժամանակակից հետնորդները (այսպես կոչվող կոպտերը), որոնք այժմ բնակվում են արաբական Եգիպտոսում, քրիստոնյաներ են, ընդունել են հայկական (մոնոֆիզիթական) քրիստոնեություն:

Այսպիսով, հենց ամենասկզբից, սկսած առաջին թագավոր Մինասից (5500-5000 տարի առաջ) ու մինչև XVIII դինաստիայի վերջը (մ.թ.ա.1600թ.), այսինքն մոտ 2000 տարի, Եգիպտոսի թագավորները հայեր են եղել: Միևնույն ժամանակ նրանք եղել են նաև Եգիպտոսի գերագույն քրմերը, այսինքն կեսարներ էին: Սկսած մ.թ.ա. 16-րդ դարից՝ կեսար բառի փոխարեն Եգիպտոսում կիրառվեց “փարավոն” բառը: Հայերեն այն մեկնաբանվում է. փ • ար • ա • վ • ո • ն = “Նա սուրբ ուղիղ (կյանք) մարդ (է) Արևի չափ”: Հիշեցնեմ, որ “կեսար” բառը նշանակում է “կես Արև” կամ “Արևի նման”:

Հետաքրքիր է նաև, որ շատ փարավոնների անուններ (հատկապես “հայկական դինաստիաների”) հայերեն մեկնաբանություն ունեն (նշանակություն): Օրինակ.

Տուտմոս II (մ.թ.ա. 16-րդ դար) = S • ու • տ • մ(ոս) = “Մեծ տանը ունի տեղ”:

Ամենհոտեպ IV (մ.թ.ա. 14-րդ դար) = “Նա եղավ մեծ կյանքի նշան, սուրբ տեղն եկավ տիրեց”:

Ռամզես II (մ.թ.ա. 13-րդ դար) = “Արևը մեծ մոտիկ ելավ ինձ”:

Էխնատոն (մ.թ.ա. 13-րդ դար) = է • խ • նա • տ • ո • (ն) = “Էակ է բարձրաստիճան նա և տան սուրբ հոգի”: Նա արևապաշտ էր և պարտադրում էր նույնը բոլորին:

Նեֆերտիտի (մ.թ.ա. 13-րդ դար) = “նա տան տիրոջ թիկունքն եղավ” (նա եղել

է էխնատոնի կինը): Ըստ երևույթին նա ևս հայուհի է եղել, որովհետև հայտնի է, որ նա հյուսիսային երկրներից էր և իր հորը ուղարկված նամակում խնդրում է իր օժիտի մի մասը տալ (ուղարկել) մետաղով:

Եգիպտերենում նաև շատ բառեր կան, որոնք հայերենում նույնն են: Օրինակ վարդ, հաց, (սեր), սիր, աստ (տիեզերք, տեղ):

Մեծ Հայքի կեսար Հայկը (մ.թ.ա. մոտավորապես 2544-2444, որը կեսար էր մ.թ.ա. 2493-2444), Բաբելոնի Բուրգի (Աշտարակի) կառուցումից հետո, մ.թ.ա. մոտավորապես 2526-2495 գալիս է Եգիպտոս և կառուցում է Մեծ Բուրգը (Գիզայում) մ.թ.ա. մոտավորապես 2490-2480 (տես ՄԱՍ 3): Եգիպտացիների համար նա եղել է ԱՐ-ի (ՐԱ-ի) որդին, նա եղել է երկնքում որպես Հայկ-արիացու (ավելի ուշ՝ Օրիոնի) համաստեղությունը, նա է եղել Օսիրիս Աստվածը (և Քեոպսը, Հու - ֆուն):

Ջ.Հենրոքն ու Ռ.Բոուելը իրենց “Սֆինքսի ուղերձը” գրքում գրում են, որ եգիպտագետ Սելիմ Հասանը 1930-40թթ. իր պեղումների ընթացքում “...վկայություններ է հայտնաբերել այն մասին, որ օտարերկրացի “կանանիտների” գաղութ է բնակված եղել Եգիպտոսի այդ ներքևի մասում մ.թ.ա. 2-րդ հազարամյակի սկզբում: Նրանք սրբազան քաղաք Հարանից էին... և, ըստ ամենայնի, կարող էին ուխտագնացներ լինել: Համենայն դեպս, քարե հուշասյունը և գտնված իրերը ապացույցն են այն բանի, որ նրանք ապրել են անմիջապես Սֆինքսի մոտ, պաշտել են նրան որպես Աստված, անվանելով Հըվըլ [100, էջ 4]”:

Թույլ տվեք ավելացնեմ, որ “Կանանիտները (հարանիտները) հայեր էին սուրբ քաղաք Հարանից” հայկական հռչակավոր Հարան = հ • ար • ան = “արևապաշտների քաղաքից”: Իսկ “Հըվըլ” բառը (Սֆինքսի հին անունը) հայերեն մեկնաբանվում է. հ • վ • լ = “լույսը, (այսինքն Արևը) պաշտող”:

Մեծ Բուրգը և Ստոունհենջը և ավելի ուշ՝ նաև Քարնակը, Ստոունհենջեր II և III, Քալենիչը և Ամոն-Րայի տաճարը հնագույն եգիպտական աստղադիտարանով այժմյան Ասուանի մոտ Եգիպտոսում կառուցվել են հայերի կողմից մ.թ.ա. 3-րդ հազարամյակի մոտավորապես կեսին (և վերջին) ի պատիվ հայ հին գիտնականների կատարած մեծ գիտական հայտնագործության՝ Երկրի գնդաձև լինելու մասին (ու նրա չափերի): Հայտնագործությունը կատարվել է Հայաստանի աստղադիտարաններում, Արև-Աստծո տաճարներում, համալսարաններում, ինչպես և Քարահունջում 7500-ից մինչև 2000 տարի առաջ (տես ՄԱՍ 1, Գլուխ 1.34):

3.5(4). ՀԱՅԵՐԸ ԵԹՈՎՊԻԱՅՈՒՄ

Եթովպիա հայերը եկել են մոտավորապես նույն ժամանակաշրջանում ինչ Եգիպտոս (Մեծ Զրիեղեղից հետո): Հնարավոր է, սկզբում Եթովպիան եղել է նոր հիմնադրված Եգիպտական պետության կազմում և միայն ավելի ուշ դարձել է անկախ երկիր:

Համենայն դեպս, հայերի գերիշխող ազդեցությունը եթովպացիների վրա և նրանց միջև գոյություն ունեցած կապերը ակնհայտ են:

Մինչև այժմ եթովպացիներն օգտագործում են մի այբուբեն, որի տառերը գրեթե նույնն են, ինչ հայերեն տառերը:

Մեծ Հայքում հինավուրց ժամանակներից մինչև ուշ միջնադար եթովպացի կանայք համարվել են լավագույն կաթ ունեցողները, ապրում էին հայոց շատ թագավորների և իշխանների պալատներում ու ամրոցներում ու կերակրում էին երեխաներին:

Եթովպացիները հնագույն ժամանակներից սերտ կապի մեջ էին նաև շատ այլ հայկական թագավորությունների հետ, օրինակ, Փյունիկիայի: Նրանք ապրում էին նաև Կարթագենում, որը կառուցել էին փյունիկյացիները (հիմնադրված է մ.թ.ա. 825 և քանդված է հռոմեացիների կողմից մ.թ.ա. 146):

3.5(5). ՀԱՅԵՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԵՎ ՍԵՎ ԾՈՎԻ ԱՓԵՐԻՆ

Մինչև Մեծ Զրիեղեղը հայերը Մեծ Հայքի կենտրոնից տարածվել էին դեպի հյուսիս և ապրում էին Վիրքում, Կոլխիդայում, Հյուսիսային Կովկասում և Սև ծովի ափերին:

Վիրք կամ Վերին Հայաստան

Վիրքը կամ Վերին Հայաստանը Մեծ Հայքի հյուսիսային մասն էր, գտնվում էր Քուռ գետից դեպի հյուսիս և հյուսիս-արևմուտք, ուր այժմյան Վրաստանն է: Հայերեն Վիրք նշանակում է վերին իսկ վրացի՝ Վիրքի բնակիչ: Ժամանակակից հայերենով “վրացի” ասելով՝ մենք հասկանում ենք ազգություն, որն ինքնըստինքյան սխալ է, քանի որ ժամանակակից վրացիները Վիրք եկել են շատ ավելի ուշ և եղել են Վիրքի բնակչության մի փոքր մասը (10% մ.թ. 1921թ.) [90, էջ 4]:

Համաձայն գրականության նույնիսկ մ.թ. 6-րդ դարում [90, էջ 33], [91, էջ 38],

Մեծ Հայքի հյուսիսային մասը անցել է Կովկասյան լեռների գագաթներով: Բոլոր ժամանակներում Վիրքի իշխանները եղել են հայեր: Մեր թվարկության 1001թ. Հայոց Արքայաց Արքա Գագիկ I Բագրատունու (մ.թ. 989-1020) եղբայր, Վիրքի իշխան Գևորգ Բագրատունին հայտարարեց իրեն Վիրքի թագավոր (Մեծ Հայքի Արքայաց Արքայի իշխանության տակ գտնվող տարբեր հայկական աշխարհների մոտավորապես 10 հայկական թագավորներից մեկը):

Կոլխիդա

Հայերը Մեծ Հայքից, Փոքր Հայքից և Վիրքից Սև ծովի ափով եկել են դեպի հյուսիս՝ Կոլխիդա (կ • ո • լ • հ • ի • դ • ար = “սրբազան Աստված Արևին պաշտող ժողովուրդի մաս”): Մեր թվարկությունից առաջ 6 – 2-րդ դարերում է ծագել Կոլխիդայի թագավորությունը [92, էջ 605]: Հայտնի է, որ մ.թ. 1001թ. Գևորգ Բագրատունու (Վիրքի թագավորի) տղան, Բագրատ Բագրատունին դարձավ Կոլխիդայի թագավորը, որն այժմ Աբխազիա է կոչվում Սուխումի մայրաքաղաքով [90, էջ 39]: 1812թ. Նապոլեոնի արշավի ժամանակ Կուսուգովի գեներալներից Բագրատիոնը Հայոց Բագրատունիների ցեղիցն էր:

Այսօր Աբխազիայի հայկական բնակչությունը կազմում է բնակիչների ընդհանուր թվի մոտ 60%: Այդքան բարձր տոկոսը բացատրվում է նաև 1915թ. եղեռնից հետո հայերի ներգաղթով բոլոր հայաբնակ տարածքներից, ներառյալ նախկին Փոքր Հայքից (Տրապիզոն քաղաքից և այլ տեղերից):

Հյուսիսային Կովկաս և Սև ծովի ափերը

Հայերը, շարժվելով առաջ Սև ծովի ափով դեպի հյուսիս ու հետո՝ ծախ և աջ ուղղություններով, եկան նաև Հյուսիսային Կովկասի հողերը և Ղրիմ թերակղզին: Նրանք կառուցեցին քաղաքներ ու տաճարներ (ավելի ուշ՝ նաև քրիստոնեական եկեղեցիներ) ու մինչ այժմ բնակվում են այդ վայրերում: Այժմ բազմաթիվ հայկական հին եկեղեցիներ կան նաև Հյուսիսային Կովկասում և Սև ծովի ափերին:

Հայերը մ.թ. 1 – 2-րդ դարերում, գալով հայկական էդեսիայի թագավորությունից, հիմնադրել են Օդեսա քաղաքը Սև ծովի հյուսիսային ափին: Օդեսայում պահպանվել են 7 հայկական քրիստոնեական հին եկեղեցիներ:

3.5(6). ՀԱՅԵՐՆ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

Մեծ Զրիեղեղից առաջ հայերը տարածվել են ոչ միայն դեպի Հարավ (Սումեր, Փյունիկիա, Եգիպտոս, Եթովպիա) և դեպի Հյուսիս (Կոլխիդա, Հյուսիսային Կովկաս, Ղրիմ), այլ նաև դեպի Արևելք (Իրան, Հնդկաստան, Միջին Ասիա) և դեպի Արևմուտք՝ ողջ Փոքր Ասիա (Փոքր Հայք, Կապադովկիա, Կիլիկիա, Հեթիթիա, Լիդիա, Տրոյա):

Ամենուրեք հայերը տեղի բնակիչներին սովորեցրել են իրենց մշակույթը, գիտելիքները, հայոց լեզուն (այսինքն հնդեվրոպականը), քարոզել են բարություն և Արևի կրոնը, արգելել են մարդկային զոհաբերությունները աստվածներին: Հայերը կարևոր դեր են խաղացել նաև բոլոր այդ երկրների պատմության, մշակույթի գիտության մեջ (այդ թվում նաև արևմտյան երկրների):

3.5(7). ՀԱՅԵՐՆ ԻՐԱՆՈՒՄ

Իրանը Մեծ Հայքի արևելյան սահմանակիցն է: Իրանի հայկական անունը եղել է Արան = Ար • ան = “Արևի (արևոտ) երկիր”: Ավելի ուշ Իրանի ժողովուրդը դարձավ արիացիների՝ հնդեվրոպական ժողովուրդների մի ճյուղը:

Մ.թ.ա. 3-րդ հազարամյակում ձևավորվել է առաջին իրանական պետությունը: Մ.թ.ա. 2-րդ հազարամյակում ձևավորվել են հին պարսկական, ավեստական և սկիթական լեզուները: Սկսած մ.թ.ա. 9 – 8-րդ դարերից գոյացել են նոր իրանական (հնդեվրոպական) լեզուները. պարսկերենը, ֆարսին (դարին), տաջիկերենը, ավղաներենը (պուշտու), քրդերենը, պամիրերենը, օսեթերենը, թալիշերենը և այլք:

Մեծ Հայքը գրեթե բոլոր ժամանակներում սերտ հարաբերությունների մեջ է գտնվել Իրանի հետ: Մինչ այժմ էլ Իրանում բնակվում են շատ հայեր, քանի որ հայերն ու իրանացիները բարեկամ (արիացի) ժողովուրդներ են: Որոշ ժամանակ երկու երկրների թագավորները անգամ եղել են միևնույն (պարթևների) դինաստիայից. Արշակիդներն՝ Իրանում (մ.թ.ա. 250 մինչև մ.թ. 224) և Արշակունիները՝ Հայաստանում (մ.թ. 62-428):

3.5(8). ՀԱՅԵՐԸ ՀՆՂԿԱՍՏԱՆՈՒՄ

Հայերն առաջին անգամ գնացել են Հնդկաստան, ըստ ամենայնի, դեռ մինչև Մեծ Զրիեղեղը, սովորեցրել են տեղի ցեղերին բարություն, հումանիզմ, բարձր գիտելիքներ: Դրանով սկիզբ է դրվել հնդեվրոպական ռասաի ձևավորմանը Հնդկաստանում (հայեր + տեղական ցեղերի վերին խավը՝ կաստան): Ավելի ուշ, մ.թ.ա. 3 – 2-րդ հազարամյակներում հայերը նորից են եկել Հնդկաստան, իրենց հետ բերելով արիական աշխարհընկալումն ու քաղաքակրթությունը, էպոսների հետ մեկտեղ: Մ.թ.ա. 1-ին հազարամյակում Հնդկաստանի հյուսիսային մասում գոյացավ առաջին Հնդկական պետությունը, և մ.թ.ա. 8 – 7-րդ դարերում հայկական այթուբենի հիման վրա ծագեց Բրահմայական գիրը: Նույն հիմքի վրա մ.թ.ա. 4–1-ին դարերում ծագում է սանսկրիտը (հայոց գրաբարի փոքր քույրը), որը կարևոր դեր է խաղում Հնդկաստանում մինչև մ.թ. 19-րդ դարը:

Հնդկական գլխավոր հին (ինչպես նաև ժամանակակից) հինդի լեզվով (հնդեվրոպական լեզուների ընտանիքի հնդ-արիական խումբ) Հնդկաստանին ասում են Բհարատ, ինչը հայերեն նշանակում է. Բ • հ • ար • ա տ = “ԱՐ-ի բարի երկրագույների կյանքի վայրը”:

Ինդի գետահովտի հնագույն քաղաքակրթությունը կոչվել է Հարապյան քաղաքակրթություն (մ.թ.ա. 3 – 2-րդ հազարամյակներում): Այս բառը հայերեն նշանակում է Հարավի քաղաքակրթություն, ինչպես նաև սերում է հին հայկական մեծ քաղաք Հարանի (Հայկական Լեռնաշխարհում) անունից, ինչը հայերեն նշանակում է. Հ • ար • ան, Հ • ար • ապ = “ԱՐ-ին երկրագողների քաղաք, վայր”:

Հնդկաստանի նախավեդական մշակույթը գենետիկորեն կապված է նախահարապյան մշակույթի հետ [110]: Մեծ երկրներ Մահաթհան և այլք գոյացել են Հնդկաստանում մ.թ.ա. 1-ին հազարամյակի երկրորդ կեսում:

Մեր թվարկության 19-րդ դարում Հնդկաստանը եղել է Բրիտանական գաղութ: 1950թ. հիմնադրվել է Հնդկաստանի անկախ հանրապետությունը: Անկախության համար մարտերի զորավարներից շատերը եղել են հայեր:

Հին հնդկական “Ռամայանա” էպոսը սկսվում է ճիշտ այնպես, ինչպես հայկական “Սասունցի Դավիթ” էպոսը, ուր Ծովինար արքայադուստրը երկու կում ջուր է խմում ծովում բխող աղբյուրից ու ծնում է երկու ուժեղ որդիներ՝ Սանասարին ու Բաղդասարին:

Հայերը մինչ այժմ ապրում են Հնդկաստանում (հիմնականում՝ Կալկաթայում), ինչպես և այլ արևելյան երկրներում:

Նկար 92-ում պատկերված է Արևի Աստված Կոնարքի տաճարի ֆասադը

Օրիսայուն: Հայերեն (կ • օ • ն • ար • ք մեկնաբանվում է “կես-սուրբ, Արևի կես, մաս”): Հետաքրքրական է, որ այստեղ ներկայացված Արևը նույնն է, ինչպես հայկական հին ժայռապատկերներում (անիվի նման), տես Նկ. 53:



Նկ. 92. Արև Աստվածը: Կոնարքի տաճարի ֆասադը Օրիսայուն, Հնդկաստան

Ահա մի քանի հետաքրքիր փաստ:

Մեր թվարկության 15-րդ դարի վերջում Մեծ Մոնղոլների դինաստիայի կեսար Ակբարը ամուսնացել էր հայ ազնվականուհի Մարիամ Ջամանի Բեգումի հետ (թագուհի): Կեսարի արքունիքում շատ հայեր կային, ինչպես օրինակ, Ակբարի հոգեորդի Միրզա-Ջուլ-Քարնայինը, որը ականավոր բանաստեղծ էր ու երգիչ: տիկին Ջուլիանան, որը բժիշկ էր արքունիքում (ավելի ուշ ամուսնացել է Նավարայի թագաժառանգ Ֆիլիպ Բուրբոնի հետ): Արդուլ Հայը արդարադատության գլուխ է կանգնած եղել: Դոմինգո Պիրեսը եղել է թարգմանիչ և ուրիշներ [107]:

Մեր թվարկության 17-րդ դարում Շահ Ջահանը Մեծ Մոնղոլների դինաստիայից (վերը հիշատակված Ակբարի թոռը) ամուսնանում է հայ ազնվականուհի Հեղինեի հետ*, որի մահվանից հետո Շահ Ջահանը նրա հիշատակին կառուցում է ամբողջ աշխարհին հայտնի Թաջ Մահալ դամբարանը, ուր հետագայում իրեն էլ են թաղում [108, էջ 213]: Հայտնի է նաև, որ Թաջ Մահալը կառուցել են հայ ճարտարապետն ու վարպետները:

* Նա ավելի հայտնի է Մամթագ Մահալ անունով:

3.5(9). ՀԱՅԵՐԸ ՄԻՋԻՆ ԱՍԻԱՅՈՒՄ

Միջին Ասիա հայերը եկել են հին ժամանակներում: Բայց այդ մասին շատ քիչ տեղեկություններ կան: Հայտնի է, որ.

1. Եղել է Բակտրիա անունով հին պետություն: Այս բառը հայերեն հիմք ունի: Բ • ա կ • տ • ր • ի ա = “բարի ակունք տվող երկիր”:

2. Բակտրիացիները կամ տոհարները մ.թ.ա. 2-րդ դարում կործանել են Մակեդոնացու հունական պետությունը Բակտրիայում:

3. Մ.թ.ա. 1-ին հազարամյակից սկսած Միջին Ասիայի հարավային տարածքները (այժմյան Տաջիկստանի, Ուզբեկստանի հարավն ու Ավղանստանի հյուսիսը) կոչվել են Տոհարստան:

4. Տոհար ժողովուրդը ապրել է Միջին Ասիայում մ.թ.ա. 2-րդ դարից սկսած մինչև մ.թ. 1-ին հազարամյակը:

5. Տոհար հայերեն նշանակում է. տ • ո • հ • ա ր = “Ար-ին երկրպագողների որդիների վայր (երկիր)”:

6. Այդ երկու բառը՝ Բակտրիա և Տոհար ունեն հայկական մեկնաբանություն, որը ցույց է տալիս, որ այդ ժողովուրդը դրսից է եկել (արևապաշտների երկրից, այսինքն՝ Հայաստանից):

7. Տոհարերենը պատկանում է հնդեվրոպական լեզվաընտանիքի մեռած լեզուների խմբին: Պահպանվել են մ.թ. 5 – 8-րդ դարերի տոհարական ձեռագրեր: Հնարավոր է, որ այժմյան տաջիկներն ու ավղանացիները տոհարներից (հայերից) և իրանացիներից են ծագել:

Հայերը հին Միջին Ասիայում ապրել են լեռնային վայրերում, ինչպես նաև օազիսներում, ուր հնագետները գտել են զարգացած հին բնակավայրեր ու ոռոգման ջրանցքներ:

Միջին Ասիայում հայերի ներկայության մասին վկայում են նաև հին ձարտարապետական հուշարձաններ, ինչպիսիք են, օրինակ, “Արկ” ամրոցը (հայերեն՝ կես Արև) Բուխարա քաղաքում (Բ • ու • հ • ա ր = “բարիք ունի ԱՐ-ին պաշտողը”), Սամարկանդ քաղաքը, որը հայտնի է մ.թ.ա. 329 թվականից որպես Մարկանդ (մ • ա ր • կ • ա ն • դ = “նա դեպի մեր Արևը ծագող (նա մեր Արևելքումն է)”), միջնադարյան (մ.թ. 1428) աստղադիտարանը Սամարկանդի մոտ և պատմական այլ հուշարձաններ:

ԳԼՈՒԽ 3.6. ՄԵԾ ԶՐՀԵՂԵՂ

Մեծ Զրհեղեղի և Երկրագնդի վրա մի շարք այլ երևույթների գլխավոր պատճառը հանդիսանում է Երկրի առանցքի թեքության ε անկյան դանդաղ փոփոխությունը: Այդ անկյունը, (որը հիմա հավասար է 23.44°), փոփոխվում է $23.3^\circ \pm 1.2^\circ$ սահմաններում, այսինքն 24.5° -ից դեպի 22.1° (ու հետ) 41000 տարիների ընթացքում:

Նկար 39 (Գլուխ 1.20, ՄԱՍ 1) բերված է Երկրի առանցքի թեքության փոփոխությունը և դարաշրջանների էվոլյուցիան ժամանակի ընթացքում: ε անկյան փոփոխության լրիվ (բացարձակ) արժեքը 2.4° է: Դա այնքան էլ նկատելի չի ազդում Երկրագնդի արևադարձային գոտիների եղանակի վրա, սակայն ավելի զգալի է բևեռային տարածքների համար, ուր արևի ճառագայթներն ավելի սուր անկյան տակ են ընկնում: Այնպես որ ε անկյան նվազեցման հետ Երկրագնդի բևեռային գոտիների սառցե ծածկույթի մակերեսն ընդլայնվում է, և սառույցները պակասում են (հալչում են), երբ ε -ն ավելանում է:

Վերջին սառույցյալ շրջանի սկիզբը եղել է 34500 տարի առաջ: Հետզհետե ջերմաստիճանը իջել է և 32500 տարի առաջ Եվրոպայի, Ռուսաստանի և Կանադայի հյուսիսային մասերը ծածկվել են սառույցներով: Սառցի առաջխաղացմանը զուգընթաց մարդիկ ու կենդանիները տեղափոխվում էին դեպի հարավ:

Սառցե շրջանը տևել է երկար ժամանակ՝ 18500 տարի, մինչև $32500 - 18500 = 14000$ տարի առաջ սկսվել է սառույցների հալվելու շրջանը: Հետո սկսվեց սառույցների արագ հալքի շրջանը՝ 2000 տարիների ընթացքում, որի արդյունքում եղավ Մեծ Զրհեղեղը (մ.թ.ա. 10-րդ հազարամյակում) 12000 տարի առաջ: Արդյունքում ջրով էին ծածկվել հսկայական տարածություններ, շեշտակիորեն աճել էին խոնավությունը, ջրերի գոլորշիացումը, ամպամածությունը և սկսել էին տեղատարափ ուժեղագույն անձրևներ: Բոլոր գետերը (այդ թվում նաև նոր գոյացածները), դուրս էին եկել ափերից՝ տանելով դեպի ծովերը և օվկիանոսները ջրի հսկայական զանգվածներ: Արդյունքում համաշխարհային օվկիանոսի մակարդակը 100 մետրով բարձրացել էր:

Բոլոր ցածրադիր վայրերը ծածկված էին ջրի հաստ շերտով, շատ մարդիկ (ցեղեր), կենդանիներ ու բույսեր կորստի մատնվեցին, ցածրադիր վայրերի բոլոր բնակավայրերն ու քաղաքները ոչնչացան: Հետագայում այդ վայրերը ծածկված էին տիղմի հաստ շերտով, մասնավորապես՝ Միջագետքում:

Մեծ Զրհեղեղի մասին տարբեր ժողովուրդների շատ հին լեգենդները,

մասնավորապես Սումերի և Հնդկաստանի լեգենդները, մեզ են հասել 3-րդ հազարամյակից:

Մեծ Ջրհեղեղի տեղի ունենալու առաջին փաստացի ապացույցը հիմնավորել է անգլիացի հնագետ Լ.Վուլփն: Պեղելով սումերական քաղաքները, նա շարունակել է պեղումները, խորանալով ևս 19 մետր, հայտնաբերել է ավելի հին քաղաքներ: Տիրմի այդ 19 մետրանոց շերտն ապացուցեց, որ Մեծ Ջրհեղեղն իսկապես տեղի է ունեցել, և այդ նոր հայտնաբերված հին քաղաքները Մեծ Ջրհեղեղից առաջ են կառուցված եղել: Գլուխ 3.4-ում ես նշում եմ, որ այդ հին քաղաքները հայկական են եղել: Այսպիսով մենք կարող ենք ենթադրել, որ հայերը Մեծ Ջրհեղեղից հետո Սումեր վերադառնալով, “նոր” սումերներին պատմել են Մեծ Ջրհեղեղի մասին ու նրանց բազմաթիվ գիտելիքներ են հաղորդել: Այդ “նոր” սումերները, փաստորեն, եղել են հայերի ու տեղաբնակ ցեղերի խառնուրդը:

Հաջորդ Մեծ Ջրհեղեղը տեղի կունենա 29000 տարի հետո (մ.թ. 31000), տես Նկ. 39 ՍԱՍ 1: Դրանից առաջ հաջորդ սառուցյալ ժամանակաշրջանի սկիզբը Երկրագնդի բևեռային շրջաններում պետք է գա 6500 տարի անց ու հետո ինտենսիվ սառցակալումից հետո հաջորդ սառուցյալ ժամանակաշրջանը կգա 8500 տարի հետո և կտևի 18500 տարի: Դրանից հետո սկսվելու է սառուցյաների հալման շրջանը (2000 տարվա ընթացքում) և $41000 - 12000 = 29000$ տարի հետո տեղի կունենա հերթական Մեծ Ջրհեղեղը:

Ի՞նչ էր տեղի ունենում Մեծ Հայքում անցյալ Մեծ Ջրհեղեղի ժամանակ 12000 տարի առաջ: Ոչ մի սարսափելի բան: Հայոց լեռնաշխարհը չի ծածկվել ջրով, որովհետև Հայկական Լեռնաշխարհի միջին բարձրությունը կազմում է 1700մ, և լեռնահովիտների նվազագույն բարձրությունն այստեղ 600մ է (համաշխարհային օվկիանոսի մակարդակը բարձրացել էր ընդամենը 100մ): Իհարկե, Հայաստանի երկինքը շատ անպամած է եղել, քամիներ էին փչում, ամպրոպային անձրևներ էին տեղում, և ուժեղ կայծակներ էին ժայթքում, որոնցից վախենում էին բոլոր կենդանիները և անգամ մարդիկ: Վայրագ գետերը բազալտային ժայռերում մեծ կիրճեր էին բացում: Սակայն բնակչությունն իր մշակույթով, բոլոր կենդանիները և բույսերը չոչնչացան: Այնպես որ Մեծ Հայքի ողջ տարածքը դարձավ ասես խորհրդանշական Նոյան տապան, ուր բոլոր մարդիկ, կենդանիներն ու բույսերը փրկվեցին: Ահա թե ինչու հայերը Մեծ Ջրհեղեղի մասին լեգենդ չունեն:

Հայաստանում Ջրհեղեղի ժամանակ բնական տարերքից վախեցած (կայծակներ և այլն) ձիերը, գոմեշները, այծերը, մոտենում էին մարդկանց ու նրանց բնակավայրերին, պատսպարվելու, պաշտպանվելու, ու ընտանի էին

դառնում:

Քարայծը (խոյը), այդ գեղեցիկ ու խոշոր լեռնային կենդանին, բարձրանում էր սարերի ու բլուրների սուր գագաթներին, նայում էր կայծակներին ու չէր վախենում նրանցից: Այդ պատճառով մարդիկ նրան ընդունեցին որպես ԱՐ-ի երրորդ խորհրդանիշը (Առյուծից ու Արծվից հետո), անվանելով նրան Արիս (“Իմ Արևը”), և այդ անունով անվանում են նաև Կենդանակերպի առաջին համաստեղությունը: Կենդանակերպի առաջին համաստեղության հնուց եկած այդ անվանումը պահպանվել է աստղագիտության մեջ մինչև այսօր “Արիես” ձևով: Խոյի եղջյուրների պարույրային ձևը դարձավ հիանալի ճարտարապետական զարդանկար հայերի գեղարվեստական ավանդույթում (տես Նկ. 48):

Քանի որ Խոյը, ԱՐ-ի խորհրդանիշը լինելով, Մեծ Ջրհեղեղից հետո (կամ ժամանակ) պաշտամունքի առարկա էր, բայց նրա արծանը բացակայում է Կապադովկիայի արծանախմբում, (տես Նկ. 59, 73-75), մենք կարող ենք ենթադրել, որ այդ արծանախումբը (ԱՐ, Կեսար, Անահիտ, Տիր, Վահագն, Առյուծ և Արծվ) ստեղծվել է մինչև Մեծ Ջրհեղեղը, ավելի քան 12000 տարի առաջ (տես 3.2(3).):

ԳԼՈՒՄ 3.7. ՄԵԾ ՀԱՅՔԸ մ.թ.ա. 10 – 5-րդ ՀԱԶՐԱՄՅԱԿՆԵՐՈՒՄ

Մեր թվարկությունից առաջ 10 – 5-րդ հազարամյակներում Մեծ Հայքը դեռ մնում էր աշխարհի միակ պետությունը (մյուս հայկական թագավորությունների հետ համատեղ) և հայերը՝ միակ քաղաքակիրթ ազգն էին իրենց բարձր մշակույթով, գիտելիքներով և այբուբենով:

Մեծ Հայքը գտնվում էր Անդրկովկասի (Հարավային Կովկասի) տարածքում, Սև և Կասպից ծովերի միջև, Քուռ գետի զույգ ափերին, Արարատ և Արագած սարերի, Սևան, Վան և Ուրմիա լճերի շուրջը, ողջ Հայկական Լեռնաշխարհում և Միջագետքում (էդեսիայի թագավորություն)*:

Մեծ Հայքի շուրջը գոյություն են ունեցել այլ հայկական թագավորություններ՝ Կիլիկիայում, Փյունիկիայում, Փոքր Ասիայում և Միջագետքում*:

Անգլիացի պատմաբան Ա.Ջիլբերտը գրել է, որ բուրգերի կառուցումից շատ վաղ և հրեաների նախահայր Աբրահամի Հալդական Ուրից (ավելի ճիշտ կլինի ասել Հայկական Արից, Պ.Հ.) խեղրոն (Չեկրոն) ճանապարհվելուց առաջ, արդեն

* Հիշենք Գլուխ 3.1.-ի սկիզբը. “Անտրոպոլոգիական տվյալներ”:

գոյություն ունեն հնդեվրոպական ծագում ունեցող մի ազգ, որը պարսիկների ու եվրոպացիների նախնին էր և ուներ թագավորական դինաստիաներ [36]: Ինձ թվում է, որ Ա.Ջիլբերտը գիտի, բայց ինչ-որ պատճառով իսկությունը չի ասում այն մասին, որ դա հայոց ազգն է:

Գերմանացի պատմաբան Մ.Ռիմշնայդերը գրում է, որ հունական ամբողջ մշակույթը վերցված է կիլիկիացիներից, փյունիկյացիներից, հեթիթներից ու հալդերից, որոնք ուրարտացիներ էին այսինքն Արարատյան թագավորության բնակիչները [65]:

Ռուս մտավորական Վ. Բրյուսովը գրում է. “Նախ և առաջ պետք է հիշել, որ Տիգրան Մեծի ժամանակից Հայաստանը մեծ պետություն էր և առանց գիրգրականության չէր կարող վարել կառավարության գործերը: Հայ պատմիչները հաճախ են հիշատակում գրագիրներ (քարտուղարներ), ինչպիսին էր, օրինակ, Ագաթանգեղոսը Տրդատ Մեծի օրոք: ...Մենք գիտենք նաև, որ հայաստանում կազմակերպված էր ճիշտ դատավարություն: Ժամանակ առ ժամանակ կատարվում էր մարդահամար: Ղարծյալ դժվար է ենթադրել, որ բոլոր այսպիսի դեպքերում դիմեին որևէ օտար լեզվի:”

“Վերջապես այն բոլոր հայ հեղինակները, որոնք խոսում էին Մեսրոպի կողմից տառեր գտնելու մասին, ընդունում են, որ առաջ արդեն գոյություն ունեին հայկական տառեր, ... որ հնարված էին հնագույն ժամանակներում...” [127]

Այլ ժողովուրդներ, պետություններ և քաղաքակրթությունները՝ Սումերում, Եգիպտոսում, Բաբելոնում, Իրանում և այլն, հայերի միջնորդությամբ են սկսել ձևավորվել մ.թ.ա. 3-րդ հազարամյակում և ավելի ուշ:

Հայերը երբեք ագրեսիվ չեն եղել ու չեն ունեցել շոփինիստական և իմպերիալիստական միտումներ: Լինելով աշխարհի առաջին քաղաքակիրթ ժողովուրդը, նրանք ազնիվ էին, իմաստուն ու բարի: Նրանք ի վերուստ կոչված էին քաղաքակրթել մոտիկ ու հեռու բոլոր ցեղերն ու ժողովուրդները: Նրանք գալիս էին այլ հողեր, որ օգնեն տեղի ցեղերին պետություններ ստեղծել, ինչպես այդ եղավ Եգիպտոսի, Սումերի, Բաբելոնի, Եթովպիայի, Հնդկաստանի, Միջին Ասիայի և այլ դեպքերում:

Սակայն հայերը հերոսաբար պաշտպանել են իրենց հայրենիքը, անգամ թշնամուց ավելի սակավ ուժեր ունենալով:

3.7(1). ԱՇԽԱՐՀԻ ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՆԵՆՈՒԿԸ

Հայաստանի հին պատմությունը դուրս է նետված համաշխարհային հին պատմությունից: Այդ պատճառով հին աշխարհի պատմությունը լի է հանելուկներով ու առեղծվածներով, քանի որ շատ փաստեր ու հարցեր կան, որոնք բացատրություն չունեն: Թույլ տվեք այստեղ ներկայացնել այդ հանելուկներից մի քանիսը:

Հարցեր

1ա. Ո՞վ է կառուցել Մեծ Բուրգը 4500 տարի առաջ և շատ ավելի վաղ՝ Մեծ Աֆինքսը:

1բ. Ինչու՞ են նրանք կառուցվել: Ի՞նչ նպատակով:

1գ. Ինչու՞ են նրանք կառուցված հենց այդ, իրենց տեղում (վայրում): Հանուն ինչի՞ է կատարվել այդքան մեծ աշխատանքը:

2ա, բ, գ. Նույն հարցերը ծագում են Ատոունհենջի, Նյու-Գրենջի, Քարնակի և այլ մեծ հին մոնումենտների վերաբերյալ (4500-4000 տարի առաջ):

3. Ո՞վ և ինչու՞ է կառուցել բուրգերն ու տաճարները Կենտրոնական Ամերիկայի արևադարձային անտառներում ավելի քան 6000 տարի առաջ:

4. Աշխարհագրական քարտեզների հանելուկը: Կան մի քանի միջնադարյան քարտեզներ, որոնց վրա պատկերված են տարբեր երկրամասեր, որոնք կատարված են այն ժամանակների համար աներևակայելի բարձր ճշտությամբ: Այդ քարտեզներին պատկերված են նույնիսկ այն երկրամասերը, որոնք այն ժամանակներում դեռ չէին հայտնաբերված:

Օրինակ, գոյություն ունի մ.թ. 1513 թվագրված այսպես կոչվող ադմիրալ Պիրի Ռեյսի քարտեզը, որի վրա ներկայացված է մ.թ. 1818 հայտնաբերված Անտարկտիդան, այսինքն, ավելի քան 300 տարի նրա հայտնաբերումից առաջ: Ադմիրալը այդ քարտեզի եզրին գրանցել է, որ ինքը այդ քարտեզը կրկնօրինակել է, օգտագործելով ավելի հին աղբյուրներ, որոնք չեն պահպանվել: Առավել հետաքրքիրն այն է, որ այդ քարտեզի վրա Անտարկտիդան պատկերված է առանց այժմյան սառցե ծածկույթի: Համաձայն գեոֆիզիկական տվյալների դա եղել է ավելի քան 6000 տարի առաջ: Ավելին, այդ քարտեզը իր ճշտությամբ կարող է մրցակցել միջազգային գիտարշավի կողմից սեյսմագրաֆիայի ժամանակակից մեթոդների օգտագործմամբ 20-րդ դարում պատրաստված Անտարկտիդայի մայր հողի քարտեզի հետ [26, էջ 9-17]:

Խնդիրն (համար 4) այն է, թե ո՞վ, ինչու՞ և ինչպե՞ս է 6000 տարուց ավել առաջ պատրաստել այդ քարտեզը, որը ապշեցուցիչ ճշտությամբ համընկնում է

ժամանակակից քարտեզի հետ: Պիտնականների եզրակացությունը մեկն է. նախապատմական ժամանակներում բարձր զարգացածություն ունեցող մի քաղաքակրթություն է եղել Երկրագնդի առայժմ անհայտ տեղում, որը ուսումնասիրել է գրեթե ողջ մոլորակը և իրենց գիտելիքները հաղորդել է այլ ազգերի [26]:

Նման զարմանալի այլ հին քարտեզներ էլի կան, որոնք կատարված են բարձր ճշտությամբ [26]:

Պատասխաններ

Հիմնական և գլխավոր պատասխանը Քարահունջի գոյությունն է, որը այլ փաստերի հետ մեկտեղ (այդ թվում նաև լեզվաբանական տվյալները) թույլ են տալիս ասել, որ այն ժամանակներում անհրաժեշտ գիտելիքներ, սարքավորումներ և տեխնոլոգիաներ ունեցել են միայն հայերը:

Ավելի մանրամասն պատասխանները վերը առաջադրված հարցերին տրված են գրքի 1 և 2 մասերում: Այստեղ մենք կարող ենք միայն համառոտ կրկնել դրանք:

1ա և 2ա հարցերի պատասխանն այն է, որ Մեծ Բուրգը, Ստոունհենջը և շատ այլ հուշարձաններ կառուցել են հայերը Սկզբնային Ուղեղի կենտրոնում (Գլուխ 1.34), մասնավորապես, հայոց կեսար Հայկի կողմից (Գլուխ 1.30):

1բ և 2բ հարցերի պատասխանն այն է, որ Մեծ Բուրգը և Ստոունհենջը կառուցել են հայերը որպես աստղադիտարաններ և մոնումենտներ, որ հեռավոր ապագա սերունդների համար տեղեկություններ պահպանվեն այն մեծ գիտական հայտնագործության մասին, որ Երկիրը գնդաձև է (Գլուխ 1.28): Մեծ Աֆինքսը կառուցվել է, որպեսզի տեղեկություն պահպանվի ապագայի հեռավոր սերունդներին մի այլ մեծ հայտնագործության՝ Երկրի առանցքի պրեցեսիայի երևույթի մասին (Գլուխ 1.22 և 1.35):

1գ և 2գ հարցերի պատասխանն այն է, որ Երկրի գնդաձև լինելը ապացուցելու համար Քարահունջից (ըստ լայնության) հավասար հեռավորության լայնություններում կառուցվել են որոշ մոնումենտներ: Օրինակ, Ստոունհենջը և Մեծ Բուրգը գտնվում են Քարահունջի լայնությունից մոտ $\pm 10^\circ$ տարածության վրա: Քալենիշը (Շոտլանդիայում) և Ամոն-Ռաի (Արևի) հնագույն աստղադիտարանն ու տաճարը՝ Եգիպտոսում (այժմյան Ասուանի մոտակայքում) գտնվում են Քարահունջի լայնությունից $\pm 16^\circ$ լայնությունների վրա:

3-րդ հարցի պատասխանն այն է, որ հայերը մ.թ.ա. 15-2 հազարամյակների ժամանակամիջոցում ուսումնասիրել են գրեթե ողջ մոլորակը: Նրանց մեծ առաքելությունն է եղել ամենուրեք կրթել տեղի ցեղերը, տարածել գիտելիքներ,

բարություն, մարդասիրություն և Արևի ԱՐ Աստծո բարի կրոնը: Այդ են վկայում նաև տարբեր տեղերում ապրող տարբեր ազգերին պատկանող միևնույն լեգենդները: Համաձայն այդ լեգենդների հինավուրց ժամանակներում նրանց երկրներ են եկել ճերմակամորթ, մեծ թավ մորուքով (արմենոիդ ռասային պատկանելու հիմնական հատկանիշները) աստվածներ, որոնք ամեն ինչ իմանում էին ու փոխանցել էին նրանց իրենց բարությունը և իրենց գիտելիքները: Այսպիսի լեգենդներ ունեն ոչ միայն սումերները, հնդիկները և այլն, այլ նաև Կենտրոնական Ամերիկայի բոլոր ժողովրդուները (Պերու, Բոլիվիա, Չիլի, Մեքսիկա և այլն):

4-րդ հարցի պատասխանը հետևյալն է. այդքան ճշգրիտ բարտեզներ կարող էին պատրաստել միայն մաթեմատիկա, երկրաչափություն (ներառյալ սֆերիկ երկրաչափություն և եռանկյունաչափություն) իմացող գիտնականները, որոնք ունեին շատ ճշգրիտ գործիքներ՝ տեղի լայնությունն ու երկայնությունը չափելու համար պետք է ունենային նաև օվկիանոսային մեծ նավեր: Նման աստղագիտական և այլ գործիքներ ունեցել են Քարահունջի ժամանակներում (7500 տարի առաջ) հայ գիտնականները: Քարահունջը վկայում է այն մասին, որ նրանք իմացել են նաև մաթեմատիկա, երկրաչափություն, եռանկյունաչափություն և ճշգրիտ չափումների մեծ փորձ են ունեցել (30 աղեղնային վայրկյան կամ ժամանակի 2 վայրկյան ճշտությամբ): Կիլիկիացի և փյունիկցի հայերը այն ժամանակներում արդեն ունեցել են մեծ օվկիանոսային նավեր ու ծովագնացությանը վերաբերող գիտելիքների բարձր մակարդակ (նավ, նավիգացիա միջազգային բառերը հայերենից են վերցված): Այսպիսով, 6000 և ավելի տարի առաջ այս ամենին անհրաժեշտ գիտելիք ու հնարավորություններ ունեցել են միայն հայերը:

3.7(2). ՀԱՅԵՐՆ ԱՄԵՐԻԿԱՅԻՆ

Կենտրոնական Ամերիկայի հին պատմության մեջ կան շատ հանելուկներ, որոնք գալիս են բազում հազարամյակների խորքից, այսինքն նախքան մայայի և ացտեկների (Մեքսիկա) և ինկերի (Պերու, Բոլիվիա, Չիլի) քաջ հայտնի ժամանակաշրջանի մշակույթները մ.թ.ա. 2-ից մ.թ. 2-րդ հազարամյակների միջև: Այդ հանելուկները պարունակում են բոլոր թվարկված երկրների ժողովուրդների միևնույն հին լեգենդների առկայությունը և հին քաղաքների, տաճարների ու զիկուրատի տիպի (սանդղածև) բուրգերի առկայությունը, ինչպես որ նրանք եղել են Բաբելոնում, Ուրում (Ար՝ հայերեն) և Եգիպտոսում:

Զ.Հենթոքը գրում է, որ ինկերի հին լեգենդները Մեծ Զրիեղեղից հետո նրանց ծագման մասին հայտնի են դարձել մեզ իսպանացի գիտնական և հոգևորական Խոսե դե Ակոստայի (մ.թ. 16-րդ դար) գրքից. “Տիտիկակա լճից եկավ Վիրակոչա աստվածը... և սկսվեց մարդկային ցեղի աճը”: Լեռնային Անդերի բնակիչների այլ լեգենդներում ասվում է, որ Վիրակոչան եղել է սպիտակամորթ, մորուքավոր միջահասակ տղամարդ: Մարդկանց նա անվանում էր “իմ որդիներ ու դուստրեր”: Նա ճանապարհորդում էր ու հրաշքներ գործում, բուժելով “մեկ հայւմով”, շատ բարի էր, մարդկանց սովորեցնում էր բժշկություն, մետաղածուլություն, հողագործություն, անասնապահություն, հնարամտության արվեստին (որը հետագայում մոռացության տրվեց), բացատրում էր տեխնիկայի ու շինարարության կոմպլեքս հիմունքները [26, էջ 48, 49, 54]: Շատ լեգենդներ վկայում են, որ Վիրակոչան ու նրա մարդիկ մեկնեցին ծովով, շարժվելով օվկիանոսում (Խաղաղ) թիակներ չունեցող նավերով [26, էջ 88]:

Զ.Հենթոքը պատմում է նաև, որ Տիտիկակա լճի ավազանի Տիաուանակո քաղաքում տեղի հնդկացիների այմարա ժողովուրդը մինչև հիմա, արդեն մոտ 10000 տարի, խոսում է Վիրակոչայի հին լեզվով: Որոշ լեզվաբանների կարծիքով այմարա լեզուն ամենահինն է աշխարհում և ունի հարուստ շարահյուսական կառուցվածք [26, էջ 87]:

Հետաքրքիր է, որ հայերեն Տիտիկակա նշանակում է. տ • ի • կա = “այնտեղ մարդու տունն է”, իսկ այմարա նշանակում է. հայ • մար • ա = “հայեր ծովից” կամ՝ “մայր-Հայաստանից”: Վիրակոչա անունը հայերեն նշանակում է. վիր • ա • կոչ = “վերեն կոչված”: Հայ բանասեր, բ.գ.թ. Մ.Սարգսյանն ապացուցում է, որ այմարա լեզուն շատ նման է հայերենին, որովհետև անգլերեն-այմարերեն բառարանի այմարերեն 600 բառերից 54-ը համընկնում են հայերեն բառերի հետ և իմաստով, և հնչեղությամբ [106]:

Ըստ Զ.Բուշնելի Վիրակոչան ուներ նաև Պաչաքամակ (Պաչա քամակ) անունը [128], որը ուղղակի հայերեն է:

Զ.Հենթոքը նկարագրում է մի հին տաճար Տիաուանակոյում (Բուլվիա) Վիրակոչայի մեծ արձանով, “Արևի դարպասով” և Կալասասայա անունով հրապարակով: Կալասասայա այմարերեն նշանակում է. “Ուղղահայաց կանգնած քարերի տեղ” [26, էջ 72]: Հայերեն Կալասասայա բառը նշանակում է. Քար • սաս • հայա = “մեծ կանգնած քարեր Հայերի”, կամ. Քար • սաս • իա = “կանգնած մեծ քարերի տեղ”: Այս և ուրիշ օրինակները նշանակում են, որ այմարա և հայերեն լեզուները իսկապես նման են մեկը մյուսին: Այդ տպավորությունն ավելի համոզիչ է դառնում, եթե հաշվի առնենք, որ ըստ Զ.Հենթոքի Կալասասայան հին, 15-17

հազարամյա աստղադիտարան և քարե օրացույց է եղել [26, էջ 74]: Իհարկե, այն այդքան բարձր զարգացածության աստղադիտարան չէր, ինչպես Քարահունջը, որովհետև Կալասասայայի կանգնած քարերը անցքեր չունեն, այնպես որ դիտումների ճշտությունը այնքան բարձր չէր: Բայց այդ ամենը համաձայնեցվում է մեր ենթադրության հետ այն մասին, որ Հայաստանում առաջին աստղադիտարանները կառուցվել են 23 հազար տարի առաջ (տես Գլուխ 1.17):

Մայա և ացտեկների նախնիներից եկած նույն լեգենդներն ունեն նաև Մեքսիկայի ժողովուրդները: Զ.Հենքոքը մի լեգենդ է պատմում իսպանացի ժամանակագիր՝ Խուան դե Տորկվեմադայի (մ.թ. 16-րդ դար) գրառումներից Կեցալկոատլի (Կիրակոչայի մեքսիկական տարբերակը) մասին, որը “մի տղամարդ էր ծաղկուն տարիքում երկար մորուքով... Նա վիթխարի կազմվածքի սպիտակամորթ մարդ էր բարձր ճակատով, խոշոր աչքերով ու մեծ մորուքով... Նա մեղադրում էր նրանց, ովքեր աստվածներին մարդկային զոհաբերումներ էին անում, խրախուսելով միայն մրգեր ու ծաղիկներ բերելը: Նա հայտնի էր որպես խաղաղության Աստված...”: Այդ իմաստուն ուսուցիչը “եկել էր ծովի այն կողմից ինքնաշարժ, առանց թիերի նավով... Նա մարդկանց սովորեցրեց օգտվել կրակից... Նա տներ կառուցեց և մարդկանց սովորեցրեց ապրել զույգերով, ընտանիքով, որպես ամուսիններ...” [26, էջ 97]:

Ըստ Զ.Հենքոքի, մայայի լավագույն գիտակ՝ Ս.Գ.Մոթլին գրում է, որ հենց այդ նույն “Մայայի պանթեոնի Մեծ Աստվածը... եղել է մեծ կազմակերպիչ, քաղաքներ հիմնադրող, օրենքների և օրացույցի հեղինակ... Նրա բնավորության հիմնական գծերն ու կենսագրությունն այնքան ռեալիստական են, որ լիովին հնարավոր է, որ նա իրականում եղել է պատմական անձ, գլխավոր օրենսդիր... ինչը հիմք է ծառայել նրա աստվածացմանը”: Այստեղ Զ.Հենքոքը գրում է, որ “Բոլոր լեգենդները որոշակիորեն հաստատում են, որ Կեցալկոատլը եկել է Կենտրոնական Ամերիկա հեռվից (մյուս կիսագնդից, “Արևելքի ծովով”) ու հետագայում էլի լողալով, գնացել է նույն ուղղությամբ...” [26, էջ 96, 97]:

Այս բոլոր և այլ լեգենդները հաստատում են, որ “աստվածները” վաղնջական ժամանակներում եկել են Կենտրոնական Ամերիկա, տեղի բնակիչների հետ կառուցել են մեծ քաղաքներ, շատ երկար ճանապարհներ (մոտ 15000կմ), տաճարներ ու բուրգեր: Որպես հին զարգացած քաղաքների առկայության պայծառ օրինակ մենք կարող ենք բերել Պերուի գեղատեսիլ սարերում գտնվող Մաչու-Պիկչուն: Այդ քաղաքը կառուցվել է ճանապարհներից շատ հեռու բարձր լեռներում, այնպես որ Զ.Հենքոքը գրում է, որ. “Ով էլ որ լիներ այդ եկվորը... որը կառուցել է Մաչու-Պիկչուն այստեղ, նա այդ անելու համար շատ ծանրակշիռ

պատճառներ պետք է ունենար” [26, էջ 57]:

Մաչու-Պիկչուն աստղագիտական կողմնորոշում ունի և կառուցված է երկգագաթ մեծ սարի ստորոտին, որը շատ նման է Մեծ ու փոքր Արարատին (տես Նկ. 93): Քաղաքը կառուցվել է ինկերի քաղաքակրթությունից շատ վաղ [26, էջ 36-53]: Պոտոլամի համալսարանի աստղագիտության պրոֆեսոր Ռ.Մյուլերը հայտնաբերել է, որ Մաչու-Պիկչուի շենքերի ու կառույցների էլեմենտները աստղագիտական կողմնորոշում ունեն: Օգտագործելով Երկրի առանցքի պրեցեսիայի օրենքները, նա հաշվարկել է, որ քաղաքը կառուցվել է մ.թ.ա. 4000 և 2000թթ. միջև, այսինքն, մոտ 6000 տարի առաջ [26, էջ 60]:



Նկ. 93. Մաչու-Պիկչու, հին քաղաք Կենտրոնական Ամերիկայում [26]

Կուսկո քաղաքում (Պերու) կա Արևի հին տաճար, որի անունն է Կոզիկանչա Վիրակոչայի պատկերներով [98, էջ 355]: Այդ անունը մոտ է հայերեն “քարի կանչ”-ին, որը գրեթե նույնն է նշանակում, ինչ որ Քարահունջը (խոսող քարեր):

1927-1930թթ. հին քաղաքների տարիքի աստղագիտական թվագրում է կատարվել, մասնավորապես, Տիաուանակոյի, նրա Արևի տաճարով, Արևի դարպասով, բուրգով և Կալասասայա հրապարակով գիտնականներ՝ Լա-Պասի համալսարանի պրոֆեսոր Ա.Պոզնանսկու, “Սպեկյուլա Կատիկանիկա”-ից՝ դոկտոր Ֆ.Բեկերի, Բոննի համալսարանի պրոֆեսոր Ա.Կուզուտեռի կողմից: Նրանք բոլորը պնդում են, որ Տիաուանակոն մոտ 17000 տարեկան է [26, էջ 76]:

Արդյո՞ք մենք բավարար հիմքեր ունենք ասելու, որ հին ժամանակներում Կենտրոնական Ամերիկայում այդ ամբողջ մեծ գործունեությունը հայերն են ծավալել: Կարծում եմ, այո, որովհետև.

1. Կենտրոնական Ամերիկայի բոլոր երկրներն ունեն միևնույն լեզենդներն այն մասին, որ հին ժամանակներում Արևելքից եկել են բարի, խելացի “աստվածներ” բարձր գիտելիքներով ու հետո, էլի ծովով, ետ են վերադարձել դեպի Արևելք: Այս գիրքն էլ նույնպես ի հայտ է բերում այն, որ հայերը հին ժամանակներում (17 - 4 հազար տարի առաջ) նույնպես եղել են բարի և ունեցել են բարձր գիտելիքներ:

2. “Աստվածները” եղել են սպիտակամորթ, մորուքավոր, բարձր ճակատով ու խոշոր աչքերով, ինչը մատնացույց է անում նրանց արմենոիդ ռասային պատկանելը:

3. Հին ժամանակներում հայերը շատ օտար ցամաք ու ծով են գնացել և ամենուրեք տեղի բնակչությունը աստվածացրել է նրանց, շնորհակալ լինելով, նրանց բարության, բարձր գիտելիքների և օգնության հասնելու պատրաստակամության համար: Նրանք արգելում էին մարդ գրհաբերել, գիտելիքներ էին տարածում, սովորեցնում էին լեզուն, շինարարության արվեստը և հավատքն բարի Արև Աստվածուն: Տեղական ցեղերի գլխավոր Աստվածը նույնպես Արևն էր:

4. “Աստվածների” լեզուն հայերենն էր, քանի որ քաղաքների, կառույցների և “աստվածների” (ինչպես Վիրակոչան) բազմաթիվ հին և նույնիսկ ժամանակակից անունները, ինչպես նաև շատ բառեր որոշ լեզուներում (ինչպես այմարերենում), ունեն հայերեն մեկնաբանություն:

5. “Աստվածները” կառուցեցին քաղաքներ, ճանապարհներ, Արև Աստծուն նվիրված տաճարներ ու բուրգեր զիկուրատների տեսքով, որոնք ունեին աստղագիտական կողմնորոշում: Նրանք ունեին մեծ օվկիանոսային նավեր, գերձզգրիտ նավարկային սարքավորում և գործիքներ, որոնք ունեին միայն հայերը:

3.7(3). ՀԱՅԿԱԿԱՆ ՓՈՔՐ ԱՍԻԱՆ: ՀԵԹԻԹԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ՓՐԻԳԻԱ, ԼԻԴԻԱ

Հայտնի է, որ հայկական ռասայի ներկայացուցիչները եղել են Փոքր Ասիայի միակ բնակիչները հին ժամանակներից ի վեր: Փոքր Ասիայում գտնվում էին մի քանի հին հայկական թագավորություններ: Կոմագենայի, Ծոպքի, Կապադոկիայի և Փոքր Հայքի թագավորությունների մասին ասվել էր Բաժին 3.4(2)-ում: Կիլիկիայի

մասին ասված է Բաժին 3.4(3)-ում: Տրոյայի (Իլիոնի) մասին կասվի հաջորդ Բաժին 3.7(4)-ում: Այս Բաժին 3.7(3)-ը Հեթիթական թագավորության, Փոհգիայի և Լիդիայի մասին է:

Հեթիթական թագավորություն

Հայտնի է, որ Հեթիթական պետությունը մ.թ.ա. 17 – 12-րդ դարերում գտնվում էր Փոքր Ասիական թերակղզու կենտրոնական մասում, և հեթիթերենը (հաթիթին) հնդեվրոպական լեզու էր [92]: Սակայն ի՞նչ էր եղել մինչև անվանված դարերը: “Հին քաղաքակրթություններ” գրքում ասվում է. “Ըստ ամենայնի, Հաթիթի-և Հաթթուշ քաղաքի շուրջ սփռված տարածքի նախնական, շատ հին անունն է... Այդ տարածքի բնակիչները մ.թ.ա. դեռ 3-րդ հազարամյակում հաթիթերեն էին խոսում ու այդ պատճառով կրում էին “Հաթիթ” անունը, քանի դեռ չէին խառնվել հետագա թագավորությունների բնակչությանը, որոնց մայրաքաղաքը Հաթթուշն էր” [98, էջ 111]:

Թե ինչ է եղել մինչև մ.թ.ա. 3-րդ հազարամյակը, հայտնի չի: Եկեք այստեղ հիշենք անտրոպոլոգիական տվյալները (տես Բաժին 3.1(1).) այն մասին, որ 10 հազար տարի առաջ ողջ Փոքր Ասիան բնակեցված էր միայն արմենոիդ ռասայի ներկայացուցիչներով, այսինքն, միայն հայերով, որոնցից ծագել են հնդեվրոպացիները և հնդեվրոպական լեզուները: Մոտավորապես մ.թ. 20-րդ դարի կեսից ամենուրեք սկսեցին ասել, որ հեթիթական լեզուն սեմիտական է: Բայց հեթիթական մայրաքաղաք Հաթթուշի ու նրա մեծ գրադարանի պեղումներից հետո ապացուցվեց, որ հեթիթական լեզուն պատկանում է հնդեվրոպական լեզվաընտանիքին: Իսկ այժմ հայտնի է, որ հեթիթական և հայկական շատ բառեր (նաև քերականությունը) նույնն են կամ շատ նման են [68] և այս այժմ ընդունված է ամենուրեք:

Հայտնի է նաև, որ հեթիթների երկիրը (պետությունը, հետագայում՝ կայսրությունը) սերտ կապի մեջ էր Մեծ Հայքի և այլ հայկական թագավորությունների հետ, մասնավորապես, Կիլիկիայի հետ, և դրանց թագավորները մի ժամանակ եղել են հեթիթական թագավորների եղբայրները (միևնույն դինաստիայից): Նրանք ստանում էին Մեծ Հայքից շատ ապրանք, զարդեղեն ու զենք:

Փոհգիա

Տրոյայի անկումից հետո (մ.թ.ա. 13-րդ դար) նրա տարածքի հյուսիս-արևմտյան մասը հետագայում սկսել են անվանել Փոհգիա (Գորդիան

մայրաքաղաքով): Ըստ պատմական տվյալների Փրիզիան գոյություն է ունեցել սկսած մ.թ.ա. 10 – 8-րդ մինչև մ.թ. 2 – 3-րդ դարերում: Նրա լեզուն իրենից ներկայացնում է լեզուների հնդեվրոպական ընտանիքի առանձին ճյուղ (ինչպես և հայերենը): Լեզուն ներկայացված է գրերով, բառապաշարով ու անձնական անուններով [75, էջ 376; 1986]: Ակներև է, որ այդ գրերը հնարավոր է կարդալ հին հայերենով:

Լիդիա


Լիդիան գտնվել է Փոքր Ասիայի հարավ-արևմուտքում ու ինչպես Փրիզիան և այլ փոքրասիական երկրները, նախկինում մտնում էին այլ հայկական թագավորությունների կազմի մեջ (ինչպիսիք էին Կիլիկիան, Հեթիթիան, Տրոյան և այլք): Մ.թ.ա. 7 – 6-րդ դարերում Լիդիան անկախ երկիր է եղել: Լեզուն եղել է հնդեվրոպական:

3.7(4). ՀԱՅԿԱԿԱՆ ՏՐՈՅԱ

Մեր գիտելիքները Տրոյայի և Տրոյայի թագավորության մասին գալիս են Հոմերի “Իլիականից” (մ.թ.ա. 9 – 8-րդ դարեր) և գերմանացի հնագետ Հ.Շլիմանի 1870-1890թթ. Դարդանելի նեղուցից մոտ 6կմ հեռավորության վրա գտնվող բլուրին կատարած պեղումների արդյունքներից: Պեղումները շարունակեցին Վ.Դորաֆելդը, իսկ հետագայում, 1932-1938թթ.՝ ամերիկացիներ Վ.Սենպլի ու Կ.Բլեզենի գիտարշավը:

Տրոյան բազմաթիվ բնակավայրերով շրջապատված մեծ հին քաղաք էր, որի հիմնադրման տարիքի մասին այժմ չատ են վիճաբանում (մ.թ.ա. 2500-1900) [98, էջ 144]: Ըստ այլ աղբյուրների Տրոյան գոյություն է ունեցել մ.թ.ա. 4-րդ հազարամյակում ու գտնվել է հին ծոցի ափին [102, էջ 25,144,145; 103]: Տրոյական պատերազմը եղել է մ.թ.ա. 13-րդ դարում:

Տրոյայի պեղումների քարտեզը պատկերված է Նկ. 94 [98, էջ142] և Նկ.95ա-ում տիկին Շլիմանն է տրոյական գարդերով [98, էջ143]:



Նկ 94. Տրոյա: Պեղումների քարտեզը [98].



Նկ. 95. Տիկին Շլիմանը տրոյական գարդերով [98].

Մեզ համար կարևոր է իմանալ Տրոյաի ծագման իրական ժամանակը: Ես համոզված եմ, Տրոյան ծագել է ավելի քան 10 հազար տարի առաջ, քանի որ հայերը (արմենոիդ ռասան) այնտեղ ապրել են այդ ժամանակ, և այն հայկական երկիր (թագավորություն) է եղել շատ ավելի մեծ տարածքով, քան հետագա ժամանակաշրջանում: Համոզված եմ, որ այդ կապացուցվի նոր պեղումներով, և որ տրոյական բոլոր ինն գրերը հարկավոր է կարդալ հայերեն (ինչպես և ինն

եգիպտականները, սումերականները, բաբելոնականները և այլն):

Մեր թվարկությունից առաջ 13-րդ դարում, երբ տեղի է ունեցել տրոյական պատերազմը, հույները որպես մի ազգ և մի պետություն դեռ չէին ձևավորվել: Հոմերը նրանց աքեացիներ ու դանայացիներ է անվանում: Դրանք առանձին քաղաք-պետություններ և կղզի-պետություններ էին: Ջարգացմանը զուգընթաց հույները առևտրական ճանապարհների կարիքն ունեցան, հատկապես՝ դեպի Արևելք, ներառյալ Սև ծովի ավազանը (Արևմուտքը դեռ զարգացած չէր): Սակայն դեպի Արևելք տանող ճանապարհին (ծովային ու ցամաքային) Դարդանելի նեղուցի մոտ գտնվում էր Տրոյական թագավորությունը: “Դարդանը” հին բառ է, որը հայերեն նշանակում է. դ • ար • դ • ան = “ճանապարհ դեպի ԱՐ-ը, դեպի Նա (Աստվածը)”:

Հոմերը Տրոյան Իլիոն է անվանում, դա հայկական անուն է (Իլիոն - Արիան = Ար • ի • ան = “Արևի ժողովուրդի քաղաք”): Դեպի նոր հողեր տանող ուղիներ զավթելու համար հունական մանր պետությունները առաջին անգամ համախմբվեցին մի միասնական բանակում ու Ագամեմնոնի առաջնորդությամբ (փոքր թագավորներից մեկը), օգտագործելով հարյուրավոր նավեր, եկան, որ տիրեն Տրոյան: Արևելյան մի շարք երկրներից միացյալ զորքեր եկան, որ օգնեն տրոյացիներին պաշտպանվելու: Հայաստանից եկել էր Նաիրի երկրի թագավոր՝ Ջայրմայրը (զ • այր • մայր = “մոր առաջին զավակը”), որը հետագայում գոհվեց Տրոյական պատերազմում:

Փաստորեն, դա առաջին համաշխարհային պատերազմն էր՝ զարգացող Արևմուտքի (Հունաստան) և Արևելքի միջև, որը տևեց 10 տարի: Հույները չէին կարողանում հաղթել, բայց ի վերջո դիմեցին խորամանկության, որի համար հետագայում պատժվեցին սեփական աստվածների կողմից: Բայց իհարկե, Տրոյան մնաց կանգուն: Դա մեծ երկիր էր հզոր բանակով: Տրոյաի գոյությունը հիշատակվում է նաև միջնադարում: Օրինակ, պատմաբան Կ.Վասիլեվը իր “Â...z " 3 · y#š – • • ¶ “ « 3 · z < , · · ” [129] գրքում գրում է, որ, ըստ լեգենդի, տրոյացի զորավար Բրուտը, գալով Տրոյաից, հիմնադրել է Լոնդոնը: Նշենք, որ Բրուտ հայերեն է, նշանակում է խեցեգործ, կամ Բ • ր • ու • տ = “ունևոր տան բարի անողը”:

Տրոյական պատերազմի պատմությունը հայտնի է դարձել Հոմերի “Իլիականից”:

Հարց. արդյո՞ք “Իլիականը” հունական էպոս է (կամ պոեմ): Իհարկե ոչ, որովհետև.

1. “Իլիականի” ամենասկզբում աքեա-դանայական (հունական) գլխավոր

հերոսները, Աքիլեսն ու Ագամեմնոնը, բացասաբար են ներկայացված: Նրանք անդադար վիճում ու հայհոյում են իրար, միմյանց սրիկա անվանելով և այլն: Արդյունքում Աքիլեսը հրաժարվում է պատերազմին մասնակցելուց (մի տարի) և ասում է Ագամեմնոնին, որ ինքը տրոյացիների՝ ձիեր վարժեցնողների (այսինքն հայերի) դեմ բնավ ոչինչ չունի: Աքիլեսը սպանեց Հեքտորին, կապեց նրա մարմինը իր ձիու պոչին ու քարշ տվեց գետնի վրայով: Հեկտորի հայրը, ծեր ձերմակահեր Պրիամը, Տրոյայի թագավորը, եկավ ու ծնկաչոք աղաչեց Աքիլեսին տալ իր որդու դիակը, որ թաղեն: Սակայն Աքիլեսը մերժեց: Հոմերոյ բազմաթիվ այլ բացասական պահեր է նկարագրում հույների գործողությունների մեջ: Սակայն Տրոյայի հերոսներին նկարագրելիս, նա այլ որոշիչներ է օգտագործում. ազնիվ Պրիամը, ազնիվ Հեկուբան և այլն:

Արդյո՞ք հնարավոր է, որ որևէ մի ժողովրդական էպոսում սեփական հերոսներին անվանեն “կեղտոտ սրիկաներ”, իսկ հակառակորդներին (տասը տարվա թշնամիներին) անվանեն “ազնիվ”: Կարծում եմ, հնարավոր չի:

2. Հենց իրենց հունական աստվածները չեն սիրում հունական հերոսներին: Գլխավոր աստվածներ Ջևաը և Պոսեյդոնը անտարբերություն են ցուցաբերում հույների նկատմամբ: Միայն Աթենաս-կռվարարն է (որը սաղավարտով ծնվել է Ջևաի գլխից) հովանավորում հույներին: Տրոյացիների (հայերի) հովանավորողը, իհարկե, Արև-Աստվածն էր՝ Ապոլոնը:

3. Երբ տասնամյա անհաջող պատերազմից հետո հույները չկարողացան հաղթել և որոշել էին ետ վերադառնալ, Վոդիսեսը խորամանկելով՝ հորինեց փայտե մեծ ծին, ինչի միջոցով հույները կարողացան գիշերով կոտորել տրոյացիներին և այրել Տրոյան, երբ նրանք քնած էին:

Այդ անպատիվ ու նենգ հաղթանակի համար աստվածները խիստ պատժեցին հույներին: Տուն դառնալու ճանապարհին Պոսեյդոնը նրանց վրա մեծ փոթորիկ ուղարկեց և հունական նավերի կեսից ավելը խորտակվեցին: Ագամեմնոնը, վերադառնալով իր քաղաքը, տեսավ, որ այնտեղ ուրիշ թագավոր է իշխում: Վոդիսեսին Ջևաը արգելելեց տուն վերադառնալ, դատապարտելով նրան 20 տարվա տարագրության, և այլն:

4. Տրոյայի հերոսների անունները մեկնաբանվում են հայերեն. Պրիամ թագավորը (Ղարդան Աստված-թագավորի հետնորդը) – “ժողովրդի առաջնորդ”; նրա կինը՝ Հեկուբան – “նվիրված ու առատածեռն”; նրանց որդին՝ Հեկտորը – “հայրենիքի նվիրյալ պաշտպան”; նրանց որդին՝ Պարիսը – “Ար աստծո շրջապատի մարդ”; նրանց դուստրը՝ Կասանդրան – “նա պարոնի դուստր է, նրա կյանքին նվիրված”:

5. Մինչ այժմ հստակ հայտնի չի, թե ո՞վ էր Հոմերը ազգությամբ և իր ծագմամբ: Հունական 7 քաղաքների հնուց վիճում են, ասելով, որ նա իրենց քաղաքից էր:

Հույն փիլիսոփա Լուկիանոսը (մ.թ. 2-րդ դար) գրում է, որ ինքը երազում տեսել է Հոմերին, ու իր հարցին. “Որտեղի՞ց ես և ի՞նչ է քո իսկական անունը”, նա պատասխանում է, որ ինքը արևելյան բաբելոնյան երկրներից է (հին հույները Արևելքի հետ կապված գրեթե ամեն ինչը “բաբելոնյան” էին անվանում), ու իր անունն այնտեղ Տիգրան է եղել [104, էջ 398, 399]: Հայտնի է, որ Տիգրանը (հնում էլ, հիմա էլ) տարածված հայկական անուն է (Տիգրան = “այր, որն ստեղծում է հիանալի տուն (կյանք) մարդկանց համար”): Տիգրան անունը կրել են նաև Մեծ Հայքի որոշ թագավորներ:

Այս ամենն ապացուցում է, որ “Իլիականը” հայկական (տրոյական) էպոս է և Հոմերը (Տիգրանը) հայ բանաստեղծ է եղել:

3.7(5). ՄՇԱԿՈՒՅԹԸ ՄԵԾ ՀԱՅՔՈՒՄ

Պեղումներ Հայկական Լեռնաշխարհում

Հայկական պատմական քաղաք Արհանի մոտ (այժմ՝ Երզանի, Դիարբեքիի շրջակայքում, Թուրքիա) անցյալ դարի 80-ական թվականներին պեղվել է հին բարձր մշակույթ ունեցող քաղաք, որի տարիքը 9500 տարի է [96]: Այդ քաղաքի մոնումենտալ շենքերը կառուցված են եղել համաձայն միասնական գլխավոր նախագծի: Հայտնաբերվել են բազմաթիվ պղնձե գործիքներ, սարքավորումներ ու գենք և բարձր զարգացած գյուղատնտեսության հետքեր:

Անկասկած, Արհանը հայկական քաղաք է եղել (ար • հ • ան = “Արին երկրպագողների քաղաք”), այնպես որ պղնձե դարը Հայաստանում սկսվել է մոտ 10 հազար տարի առաջ կամ ավելի քան 5000 տարի առաջ, քան ընդունված է համարել:

Այժմյան Հայաստանի տարածքը

Քարահունջի աստղադիտարանը, ամենահինն աշխարհում, կառուցվել ու գործել է ավելի քան 7500 տարի առաջ (տես ՄԱՍ 1): Այն եղել է մեծ ու զարգացած աստղադիտարան բազմաթիվ աստղագիտական քարե գործիքներով, որոնք ունեն բարձր ճշգրտություն: Հայ հին գիտնականները ունեին շատ բարձր գիտելիքներ: Նրանք գիտեին, որ Երկիրը գնդաձև է, չափում էին Երկրագունդը:

Նրանք գիտեին, որ Երկիրը պտտվում է իր առանցքի շուրջը և Արեգակի շուրջը, գիտեին մաթեմատիկա, կոսմոգոնիա, ունեին այրուբեն և գիր: Նրանք նախագծել էին ու կառուցել այլ մեծ մոնումենտներ տարբեր լայնություններում, ինչպես Մեծ Բուրգն ու Ստոունհենջը:

Գիտությունը, անկասկած, կապված է մշակույթի ու արվեստի հետ: Օրինակ, հայ շեքսպիրագետ Է.Վարդանյանը համարում է, որ հայկական թատրոնը ծագել է մոտ 8000 տարի առաջ [112]:

Ջարգագած հայկական մշակույթը (այսպես կոչվող Քուռ-Արաքսյան մշակույթը), սկսած 8000 տարի առաջ և ավելի վաղ ժամանակներից մինչև մ.թ.ա. 2-րդ հազարամյակը, ներկայացված է ժամանակակից Հայաստանի տարածքում Քուռ և Արաքս գետերի միջև (Շենգավիթ, Շաննիդար, Մոխրաբլուր, Վանաձոր, Լեհաշեն, Ագարակ և այլուր) կատարված բազմաթիվ պեղումների արդյունքներով: Գտածոները պատրաստված են քարից, փայտից, պղնձից, ոսկուց, արծաթից, ապակուց և ավելի ուշ (մ.թ.ա. 3 – 2-րդ հազարամյակներում)՝ երկաթից ու պողպատից: Ղրանք ամենատարբեր գործիքներ, առարկաներ են. արձանիկներ, զարդեր, ափսեներ և այլն: Մ.թ.ա. 3 – 2-րդ հազարամյակներին վերաբերող բազմաթիվ նման իրեր են հայտնաբերվել նաև այլ երկրներում, մասնավորապես, Եվրոպայում:

Քուռ-Արաքսյան Հայոց երկրի բնակիչները միշտ հայեր են եղել: Ինչու՞ պետք է ոմանք այդ մշակույթը անվանեին Քուռ-Արաքսյան, իսկ իրենց լեզուն՝ “հուրիտուրարտական” հայկականի փոխարեն: Այդ հեղինակները օգտագործում են ցանկացած բառեր, միայն թե չարտասանեն “Հայաստան, հայկական, հայեր”: Ինչու՞:

Նկար 86-ում ներկայացված է խոյի բրոնզե մի արձանիկ (մ.թ.ա. 14 – 13-րդ դարեր), որը հայտնաբերել է հնագիտության պրոֆեսոր Թ.Խաչատրյանը Արագած սարի հյուսիսային լանջին գտնվող Առիճ գյուղի պեղումների ժամանակ: Խոյը կանգնած է խարսխի վրա, որն անհրաժեշտ է եղել սայլին ամրացնելու համար: Խոյի արձանիկը փուչ է, իսկ ներսում մետաղե գնդիկներ կան: Երբ սայլը գնում էր, այդ զանգակը զնգզնգում էր և վանում “չար ոգիներին”: Մասնագետներն ասում են, որ նման արձանիկ ծուլելու համար անհրաժեշտ էր տիրապետել շատ բարձր տեխնոլոգիաների:

Մեծամորը եղել է մեծ հին մետաղագործական գործարան, որը իր թանգարանով գտնվում է Արարատյան դաշտավայրում, Երևանից մոտավորապես 30 կմ հեռավորության վրա: Այստեղ, սկսած մ.թ.ա. 5-րդ հազարամյակից, մեծ քանակությամբ մետաղ է ծուլվել: Նախ դա եղել է պղինձ, ոսկի, արծաթ, քրոնգ,

իսկ հետո, ավելի ուշ, (սկսած մ.թ.ա. 3 – 2-րդ հազարամյակներից), երկաթ ու պողպատ, ինչպես նաև իրեր գունավոր ապակուց: Մեծամորի գործարանի արտադրանքը մեծ քանակությամբ արտահանվում էր արտասահման: Մեծամորում շատ պեղումներ են կատարվել [97]:

ԳԼՈՒԽ 3.8. ՄԵԾ ՀԱՅՔԸ մ.թ.ա. 5 – 1-ին ՀԱԶԱՐԱՄՅԱԿՆԵՐՈՒՄ

Մինչև մ.թ.ա. 3 – 2-րդ հազարամյակները աշխարհում պատերազմներ չեն եղել, քանի որ գլխավոր ուժը այն ժամանակ Մեծ Հայքի և հայկական այլ թագավորությունների ձեռքում էր: հայերը ագրեսիվ չէին, երբեք չէին ձգտում զավթել այլ երկրներ և տիրել այլ ժողովուրդների: Նրանք շատ անգամ են գնացել օտար հողեր մարդասիրություն ու բարին տարածելու միակ ազնիվ նպատակով ու առաքելությամբ, այլ ժողովուրդներին գիտելիք տալու և օգնելու նրանց կազմավորել իրենց առաջին պետությունները:

Բայց գիտելիք ստանալով, շատ այլ ազգեր սկսեցին գենք ստեղծել, սպանել իրար, պատերազմներ սանձազերծել և օտար հողեր զավթել: Համընդհանուր ազնվության ժամանակաշրջանը երկրի վրա ավարտվել էր ու եկել էր ազահության ժամանակաշրջանը. հարստանալու, հզորանալու, բոլորին գերիշխելու ձգտումը դարձել էր սովորական բան: Ցավոք, այդ ժամանակաշրջանը շարունակվում է առ այսօր:

Հայաստանի վրա էլ էին հարձակումներ կատարվում, և արդյունքում Հայաստանը շատ էր տառապում բոլոր կողմերից եկող ճնշումից: Սակայն Հայաստանում քաղաքացիական պատերազմներ երբեք չեն եղել:

Առաջին պատերազմն աշխարհում սկսվել է մ.թ.ա. 3-րդ հազարամյակի կեսին, երբ հսկաների բանակը Բաբելոնից Բելի առաջնորդությամբ եկել էր Հայաստանը տիրելու: Բայց Բելին սպանեց Հայոց կեսար Հայկը մ.թ.ա. 2492 թվականի ձակատամարտում և բաբելոնյան զորքը հեռացավ (տես Գլուխ 1.18 և 1.30):

Այստեղ ես ցանկանում եմ բերել այլ հեղինակների կարծիքը հայերի մասին:

Գերմանացի գիտնական Մագդա Նոյմանը գրում է. “Ամենքին, ով ծանոթ է Հայաստանի պատմությանը, հայտնի է, որ դա աշխարհում միակ երկիրն է եղել, ուր քաղաքական ինքնաձևանաչման ակունքներից առ այսօր երբեք գոյություն չեն ունեցել կաստաներ, ճորտատիրություն ու ճորտեր; հայերը երբեք չեն ունեցել որևէ ստորին դասի կոնցեպցիա” [95, էջ 88]: “Բոլոր օտարերկրացիները, որոնք

գերի էին ընկնում պատերազմի ժամանակ, կամ Հայաստան էին գալիս իրենց բարի կամքով, Հայաստանի տարածքում ստանում էին լիակատար ազատություն և հայերին հավասար իրավունքներ” [95, էջ 89]:

“Հայկական պետությունը բաղկացած էր չորս դասից. վերնախավը (տոհմիկ դաս, ազնվականություն), քրմերը, քաղաքացիները, գյուղացիները: Նրանք միմյանց հետ գտնվում էին բնականոն հարաբերությունների մեջ ու պահպանում էին փոխադարձ և ընդհանուր շահագրգռվածությունը” (էջ 89):

“Կինը Հայաստանում հատուկ ինչ-որ պաշտամունքի առարկա չի եղել, սակայն տանը նա շատ պատվավոր տեղ է գրավել: Հայաստանում երբեք հետերաներ չեն եղել: Համաձայն մոնոգամիայի (միակնության) սրբազան ավանդույթի հայ կինը միշտ եղել է ամուսնու հավատարիմ ընկերը և ընտանեկան օջախի հարգարժան պահապանը” (էջ 89):

Ռուս պատմաբան Ս.Գլինկան իր “Հայ ժողովրդի պատմության ակնարկ” գրքում (1832, Սանկտ-Պետերբուրգ) գրում է. “Հայերը երբեք չեն կռվել միայն կռվելու համար: Նրանք կռվել են հանուն Հայրենիքի, որն ապրում էր նրանց սրտերում ու պատկերված էր նրանց հին վահանների վրա, կամ էլ նրանք կռվել են հանուն անկախության, որը գնահատել են սեփական կյանքից ավելի բարձր: Պետության կարևորագույն խնդիրները լուծվել են համատեղ, համաժողովրդական հավաքներին” [94]:

Այո, հայերը երբեք ագրեսիվ չեն եղել: Բայց իրենց հայրենիքը պաշտպանելու անհրաժեշտության դեպքում միշտ գործել են հերոսաբար, ընդհուպ մինչև զոհաբերվելու աստիճան:

– Հիշենք Տիգրան Մեծի հայոց հզոր բանակի փայլուն հաղթանակները Մեծ Հայքը և այլ հայոց երկրները պաշտպանելու, ազատագրելու և միավորելու հարցերում: Նա միացնում էր Մեծ Հայքին այն տարածքները, որտեղ ժողովուրդը խոսում էր հայերեն:

– Հիշենք, թե ինչպես Մեծ Եղեռնի տարիներին հայկական շատ քաղաքների, ինչպիսիք են Վանը, Մուսալեռը, Հաճնը և շատ ուրիշներ, անգն հայ բնակչությունը, կազմելով ջոկատներ, 1-2 տարի հերոսաբար դիմադրել էր թուրքական կանոնավոր բանակին:

– Հիշենք, թե ինչպես հայ ժողովուրդն իր սիրված գորավարներ Նժդեհի և Անդրանիկի գլխավորած հայոց կամավոր բանակների հետ միասին փրկեցին թուրքերից Զանգեզուրը և ազատագրեցին Նախիջևանը:

– Հիշենք, թե ինչպես 1918թ. Հայաստանի Առաջին Հանրապետության նորաստեղծ բանակը հայ ժողովուրդի հետ միասին ջախջախեցին Երևանը

զավթելու եկած թուրքական կանոնավոր բանակը երեք մեծ ճակատամարտերում՝ Սարդարապատի, Ապարանի և Վանաձորի մոտ:

- Հիշենք, երբ 1990-1991թթ. ազատության ծգտող հայկական Լեռնային Ղարաբաղի վրա հարձակվեց ադրբեջանական բանակը: Ղարաբաղը վաղնջական ժամանակներից բնիկ հայկական տարածք է հայ բնակչությամբ, որը սովետական տարիներին, 1920-ական թվականներին (Նախիջևանի տարածքի հետ մեկտեղ) ստիպողաբար, առանց Հայաստանի հետ համաձայնեցնելու հանձնվել է Ադրբեջանին (թուրքերին): Ողջ հայ ժողովուրդը ուղքի կանգնեց և Հայաստանի Երրորդ Հանրապետության նորաստեղծ բանակի հետ միասին դուրս շարտեցին ադրբեջանական զորքը Լեռնային Ղարաբաղից և հարակից տարածքներից: Այս ճակատամարտերին հերոսաբար մասնակցում էին նաև սիյուռքի հայերը: Արդեն 15 տարի է, որ Հայոց Եռագույն Դրոշը ծածանվում է անկախ Ղարաբաղի մայրաքաղաք Ստեփանակերտի վրա:

3.8(1). ՀԱՅՈՑ ԿԵՍԱՐ ՀԱՅԿԸ

Ըստ Աստվածաշնչի (նաև ըստ Մովսես Խորենացու [22, էջ12]), հայոց կեսար Թորգոմը, Հայկի հայրը, Նոյան որդի Հաբեթից հետո երրորդն էր: Կեսար Թորգոմի անունով Հայաստանը (երբեմն մինչ այսօր էլ) կոչվում է “Թորգոմա տուն”:

Մ.թ.ա. 3-րդ հազարամյակի կեսին Թորգոմի որդին՝ արքայորդի Հայկը իր ընտանիքով, լավագույն գիտնականներով ու վարպետներով (ավելի, քան 300 մարդ) գնացին դեպի հարավային հողերը ու սկսեցին տեղի ցեղերի մասնակցությամբ կառուցել այնտեղ բուրգ (աշտարակ) զիկուրատի տեսքով:

Շուտով այդ հսկա շինության շուրջը քաղաք գոյացավ, որը հետագայում կոչվեց Բաբելոն՝ հայ զորավար Բաբի անունով (բ • ա • բ = “բարի կյանք բերող”), որն ավելի ուշ դարձավ Բաբելոնի առաջին թագավորը:

Երբ Աշտարակի մեծ մասը կառուցված էր, Հայկի ու տեղի զորավար Բելի (աստվածաշնչյան Նեմրովդի, որը Նոյի որդի Քամից հետո երրորդն էր) միջև կոնֆլիկտ ծագեց և աշտարակի շինարարությունը դադարեցվեց: Հայկն իր մերձավորների հետ վերադարձավ Հայաստան:

Մ.Խորենացին գրում է, որ Հայաստանում, հետ դարձի ճանապարհին դեպի Արարատյան հողերը, Հայկը հանգիստ առավ Վանա լճի մոտ, կառուցեց տոհմական մի ամրոց ու տվեց այն իր թոռ Կադմոսին, կարգելով նրան որպես

Վանա հողերի իշխան:

Հետո Հայկը եկավ Արարատյան աշխարհի ու դարձավ հայոց կեսար (թագավոր և գլխավոր քուրմ) իր հայր Թորգոմից հետո: Այդ ժամանակ Հայկն արդեն չորս որդի ուներ, վեց դուստր ու շատ թոռներ:

Մ.Խորենացին Հայկի մասին գրում է. "...անվանի և քաջ նախարար հաստ աղեղով և հզոր նետածիգ" [22, էջ 18; 84, էջ 109]: Նա Հայկին "հայերի նախահայր" չի անվանում: Սակայն այժմ, նրա մասին խոսելիս հաճախ օգտագործում են "մեր նահապետը", ինչը ճիշտ չի: Նախ • արար = "նախապես ստեղծված (մարդ)", այսինքն մարդ, որը մնացածներից առաջավոր է, վեր է դասվում, այսինքն՝ թագավոր, գերագույն քուրմ, այսինքն, երկրում բարձրագույն ադմինիստրատիվ (և կղերական) կոչումը կրող, ինչը համապատասխանում է հայկական հնագույն "կեսար" բառին: "Նախարար" բառը հասել է մեզ Մ.Խորենացուց ու ժամանակակից Հայաստանում կիրառության մեջ է մտել "մինիստր" բառի նշանակությամբ: Այնպես որ Հայկին ավելի ճիշտ կլինի անվանել կեսար կամ թագավոր (այլ ոչ թե նահապետ):

Երբ Հայկը հեռացավ Բաբելոնից, զորավար Բելը այնտեղ իրեն սկսեց պահել որպես թագավոր, բայց Բաբելոնի առաջին պաշտոնական թագավորը, Բաբն է եղել (Բելի մահվանից հետո):

Բելը նամակ է ուղարկում Հայկին (իր որդու միջոցով), ուր ասվում է. "Ղու ապրում ես սարսափելի ցուրտ երկրում, սակայն... ենթարկվիր ինձ ու հանգիստ ապրիր իմ երկրում այնտեղ, ուր կկամենաս": Հայկը կոշտ մերժումով է պատասխանում, ասելով, որ չի ուզում Բաբելոն վերադառնալ [22, էջ 19]:

Այդ ժամանակ Բելը տեղի ցեղերից հսկաների հետիոտն մեծ բանակ է հավաքում ու արշավում է Հայաստանը տիրելու: Երբ նրանք հասնում են Վանա լճի ափերին, Կադմոսը (Հայկի թոռը), շտապ գալիս է Արարատյան հողերն ու Հայկին տեղեկացնում է Բելի բանակի գալու մասին:

Կեսար Հայկը շտապ զորք է հավաքում և գնում է Բելին ընդառաջ: Բանակները հանդիպում են Հայոց ծորում Վանա լճից հյուսիս:

Ճակատամարտն սկսվում է՝ լցնելով շրջակայքը սարսափելի աղմուկով: Հայկը խիզախների մի ջոկատով Բելի բանակի դիրքերը պատռելով, հասնում է այն բարձունքը, ուր կանգնած էր Բելը իր զորավարների խմբի հետ: Բելի գլխին երկաթ սաղավարտ կար, կրծքին ու մեջքին՝ հաստ պղնձե զրահ, ոտքերն ու ձեռքերը՝ նույնպես զրահապատ: Նա զինված էր երկսայր թրով ու շատ երկար նիզակով:

Հայկն առաջ է գալիս, բարձրացնում է իր հսկա աղեղը, ու նրա եռագլուխ* նետը պատռում է գրահները, Բելի մարմինը, անցնում նրա թիակների արանքով ու խրվում հողի մեջ: Բելն ընկնում է բերանքսիվայր ու մահանում: Նրա գորքը ջախջախվում է ու Հայաստանից դուրս քշվում [22, էջ 19-23]:

Այդ ճակատամարտը եղել է մ.թ.ա. 2492 թվականին: Հայկը հրամայել է ամեն տարի տոնել այդ հաղթանակի օրը և սահմանել է նոր տոմար (ՀԲՏ) (տես Գլուխ 1.18), որի սկիզբը այդ հաղթանակի օրն է (այժմյան օրացույցով դա օգոստոսի 11 է, և այդ օրը նշվում է մինչ այժմ հայ ժողովուրդի կողմից՝ “Նավասարդ” անունով):

Հայ ժողովուրդն աստվածացրել է կեսար Հայկին: Հայ հին աստղագետները Հայկի անունով են անվանել երկնքի ամենապայծառ համաստեղություններից մեկը (այժմ՝ Օրիոն), իսկ նրա Հայկ անունը դարձել է տարածված հայկական անուն: Հայկի արձանը Երևանում հսկա նետ-աղեղով պատկերված է Նկ. 71:

Հայկից հետո հայոց կեսար է դառնում նրա որդի Արամանյակը:

Թորգոմի, Հայկի և ուրիշ թագավորների կյանքի ու գործունեության տարեթվերը մենք կարող ենք մոտավորապես հաշվարկել՝ օգտագործելով ներքոշարադրյալ հայտնի տվյալները:

1. Արամանյակը Հայկի որդին է, ծնվել է Բաբելոնում:
2. Թորգոմը եղել է երրորդը Հաբեթից հետո, որը Նոյի որդին էր:
3. Բելը եղել է երրորդը Քամից հետո, որը Նոյի որդին էր:
4. Բաբելոնից տունդարձի ճանապարհին Հայկը կանգ է առնում Վանա լճի մոտակայքի հայկական հողերում և Արամանյակի որդի՝ իր թոռ Կադմոսի համար ամրոց-պալատ է կառուցում:

5. Հայկի ու Բելի ճակատամարտը եղել է մ.թ.ա. 2492թ.:

Բացի այդ մենք կարող ենք ասել նաև հետևյալը:

1. Թորգոմը 30 տարեկան էր, երբ ծնվեց Հայկը (մ.թ.ա. 2544):
2. Բելը Հայկից 15 տարով մեծ էր:
3. Արամանյակը 17 տարեկան էր, երբ ծնվեց Կադմոսը (մ.թ.ա. 2509):
4. Կադմոսը դարձավ Վանի իշխանը երբ 15 տարեկան էր, և 2495թ. նա 17 տարեկան էր:

5. Թորգոմը, Հայկն ու Արամանյակը ապրել են 100-ական տարի:

Օգտագործելով այս հայտնի պատմական փաստերը ու մեր կռահումները, հիմա կարող ենք հաշվարկել ու մոտավորապես որոշել, որ.

1. Թորգոմը ծնվել է մ.թ.ա. 2574թ. (իսկ Բելը՝ մ.թ.ա. 2559):

* Հայկի նետը եռագլուխ էր, որովհետև գլխավոր Աստված ԱՐ-ը ուներ երեք խորհրդանիշ. Առյուծը Արծիվը և Արիսը (Խոյը):

2. Հայկը ծնվել է մ.թ.ա. 2544 (երբ Թորգոմը 30 տարեկան էր):

3. Հայկը Բաբելոնի երկիրն է եկել մ.թ.ա. 2526թ., երբ եղել է 18 տարեկան (այդ ժամանակ Թորգոմն արդեն 48 տարեկան էր, իսկ Բելը՝ 33):

4. Հայկը մեկնել է Բաբելոնից մ.թ.ա. 2495թ., երբ 49 տարեկան էր (Թորգոմը 79 էր, Բելը՝ 64): Նա եղել է Բաբելոնում և կառուցել է աշտարակը 31 տարիների ընթացքում:

5. Հայկը Հայաստան է վերադարձել (նախ՝ Վան) մ.թ.ա. 2494թ., երբ 50 տարեկան էր (Թորգոմն արդեն 80 էր, իսկ Բելը՝ 65):

6. Հայկը դառնում է Հայաստանի կեսար մ.թ.ա. 2493թ., երբ 51 տարեկան էր:

7. Բելը զորքով Բաբելոնից դուրս է գալիս 2493թ., երբ 66 տարեկան էր:

8. Հայկի ու Բելի պատերազմը տեղի է ունեցել մ.թ.ա. 2492թ., երբ Հայկը 52 տարեկան էր (Թորգոմը՝ 82, Բելը՝ 67, Արամանյակը՝ 34, Կադմոսը՝ 17):

9. Արամանյակը ծնվել է մ.թ.ա. 2526թ.:

10. Կադմոսը ծնվել է մ.թ.ա. 2509թ. (երբ Արամանյակը 17 տարեկան էր) ու Վանի իշխանն է դարձել մ.թ.ա. 2494թ. 15 տարեկան հասակում:

Այս հաշվարկները հեշտ կլիմի հասկանալ սկսելով առաջինից մինչև վերջին (9 և 10) կետերը:

Այսպիսով, մենք կարող ենք գրել նաև հետևյալը.

Թորգոմ – ապրել է մ.թ.ա. 2574-2474թթ. և թագավորել է մ.թ.ա. ?-2493թ.:

Հայկ – ապրել է մ.թ.ա. 2544-2444թթ., կեսար է եղել մ.թ.ա. 2493-2444թթ.:

Արամանյակ – ապրել է մ.թ.ա. 2526-2426թթ., կեսար է եղել մ.թ.ա. 2444-2426թթ.:

Կադմոս – ապրել է մ.թ.ա. 2509-2409 թթ.:

Բել (Նեմրոդը) – ապրել է մ.թ.ա. 2559-2492 թթ.:

Բաբելոնի աշտարակը կառուցվել է մ.թ.ա. 2526-2495 թվականների ընթացքում:

Կարող ենք ենթադրել նաև հետևյալը:

1. Եգիպտոս Հայկը մեկնել է մ.թ.ա. մոտավորապես 2490թ. ու կառուցել է Մեծ բուրգը մոտ 10 տարվա ընթացքում (հնարավոր է, որ շինարարությունն ավարտվել է Հայկի գնալուց հետո): Իր բարության ու բարձր գիտելիքների համար նա եգիպտացիների կողմից աստվածացվել է, փարավոն է դարձել և հիմնել է եգիպտական փարավոնների IV դինաստիան: Եգիպտոսից նա մեկնել է մ.թ.ա. 2480թ. և, հնարավոր է, եգիպտացիներին խոստացել է ետ վերադառնալ, բայց չի կարողացել այդ անել: Այնպես որ հնարավոր է, որ եգիպտացիները սպասել են

նրան ու նույնացրել են Օսիրիս Աստծո հետ, որը պարբերաբար մահանում ու նորից կենդանանում էր: Եթե այդ ամենը եղել է, արդեն պարզ է դառնում, թե ինչու Մեծ Բուրգում ոչ ոք չի թաղվել, չնայած սարկոֆագը (նաև կնոջ համար) պատրաստված էր:

2. Հայաստան վերադառնալուց մեկ-երկու տարի հետո՝ մ.թ.ա. 2477թ. Հայկը ճանապարհվեց Ֆրանսիա (Բրետան) և Մեծ Բրիտանիա (նախկինում՝ Ալբիոն), ուր մնաց մոտ 10 տարի, հիմնեց պարզ աստղադիտարաններ՝ այժմյան Քարնակի, որը Բրետանում է, Ստոունհենջի, որը Մեծ Բրիտանիայում է, Նյու-Գրենջի՝ Իռլանդիայում և Քալենիչի՝ Շոտլանդիայում, նախնական, պարզ տեսակները: Նրանք գրեթե նույնանման էին Քարահունջին Հայաստանում, բայց ավելի ուշ վերակառուցվել են, ստացել իրենց այժմյան տեսքը, օգտագործվելով այլ նպատակների համար (օրինակ, պաշտամունքային): բացառությամբ Քալենիչից (“Քալենիչ”, այսինքն՝ “Քարե միշ”), որը մինչև հիմա նույնանման է Քարահունջին:

3. Հայաստան Հայկը վերադարձել է մոտավորապես մ.թ.ա. 2467 թվականին, երբ 77 տարեկան էր: Նրա մահվանից հետո (մ.թ.ա. մոտավորապես 2444) Հայաստանի կեսար դարձել է նրա որդի Արամանյակը (մինչև մ.թ.ա. մոտ 2426):

3.8(2). ՀԱՅԵՐԸ ԲԱԲԵԼՈՆՈՒՄ

Քաղաք և պետություն Բաբելոնը առաջացել է հարավային Միջագետքում Հայոց կեսար Հայկի կողմից Բաբելոնի աշտարակի կառուցման ընթացքում մոտավորապես մ.թ.ա. 2526-2495թթ. ժամանակաշրջանում, երբ այդտեղ շատ բանվորներ էին բնակվել:

Այդ երկրում վաղ ժամանակներից շատ հայեր էին ապրում: Այդ երկրի առաջին թագավորը եղել է հայ Բաբը (մ.թ.ա. 2492 սկսած): Բաբ հայերեն թարգմանվում է “բարի կյանք բերող”: Նրա անունով այդ երկիրը կոչվել է Բաբելոն, ինչը հայերեն նշանակում է “եկավ Բաբը, որն ունի մեծ հոգի”, կամ. “Եկավ բարի Բաբը”:

Բաբելոնը հնուց բարեկամական հարաբերություններում էր Մեծ Հայքի հետ, Հայկական Կիլիկիայի ու Լիդիայի հետ: Բաբելոնի ծաղկունքի ժամանակաշրջանը եղել է Քամուրապիի թագավորելու ժամանակ (մ.թ.ա. 18-րդ դար), որի անունը հայերեն մեկնաբանությամբ նշանակում է “ուժեղ հայր”:

Մեր թվարկությունից առաջ 626-538թթ. և ավելի ուշ Բաբելոնն անվանում էին

Հալդական (կամ Նորբաբելոնական) թագավորություն, որի թագավորները եղել են այսպես կոչվող հալդերը կամ հալդեացիները, որոնք բարձր գիտելիքներ ունեցող հայեր էին: Շատ երկրներում “հալդ” բառը շատ հին ժամանակներից (երբեմն մինչ այժմ) օգտագործվում էր (նշանակում էր) “իմաստուն” և հայերեն մեկնաբանվում է որպես. հ • ալ • դ = հ • ար • դ = “արևապաշտ”:

Համաձայն պատմական աղբյուրների Հալդեական թագավորության ծաղկման շրջանը եղել է Նաբուխոդոնոսոր II (մ.թ.ա. 605-562) օրոք: Նրա անունը խիստ աղավաղված է տարբեր մասերի ավելացմամբ: Գլխավոր մասը առաջինն է՝ “Նաբ”, որը հայերեն նշանակում է. նա • բ = “նա բարի (է)”:

Ղ.Րեգերի և Ե.Չեռկաստվալի “Հին աշխարհի պատմություն” գրքում ասված է. “Հետագայում “Բաբելոնացի” և “Հալդեացի” տերմինները դարձան հոմանիշներ”:
 “Հալդերի դինաստիայի կողմից կառավարվող Բաբելոնը վերստին հասավ իր ծաղկմանը” [121, էջ 231]:



Նկ. 96. Հայտնի ամենահին (Բաբելոնյան) քարտեզը (մ.թ.ա. 6-րդ դար), ուր ցույց են տրված Հայաստանն ու հայկական մեծ քաղաք Հարանը

Աստվածաշնչում հիշատակվում է “Ուր Հալդեական” քաղաքը: Ավելի ճիշտ կլինի կարդալ այդ անվանումը որպես “Ար հայկական”:

Շատ հին քարտեզներ կան, ուր պատկերված է Հայաստանը: Բրիտանական պատմաբան Ռուբեն Գալիջյանի գրքում ներկայացված են ավելի քան 120 այդպիսի քարտեզներ [113]: Դրանցից ամենահինը (մեզ հասածներից) մ.թ.ա. 6-րդ դարով թվագրված բաբելոնյան քարտեզն է կավե սալիկի վրա, որի սխեման բերված է Նկ. 96:

Այստեղ ներկայացված են

Հայաստանն ու Հայկական Հարանը, ինչպես նաև Հայկական Լեռնաշխարհը (նաև Բաբելոնը և Ասորեստանը) [113, էջ 36]:

Ասորեստանը, որը գոյություն է ունեցել ընդամենը մոտ 3 դար, շատ ազդեցիկ երկիր է եղել ու իր շուրջը գտնվող բոլոր երկրների հետ պատերազմելու մեծ

սիրահար: Մ.Նոյմանը գրում է, որ Ասորեստանը շարունակ հարձակվել է Հայաստանի վրա, ինչի պատճառով հայոց բանակը միդիական և բաբելոնական բանակների հետ համատեղ գրոհեցին ու վերցրին Ասորեստանի մայրաքաղաք Նինվեն մ.թ.ա. 605թ.: Եվ Ասորեստանը կործանվեց [95, էջ 63]:

3.8(3). ԲԻՀԱՅՆԱ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Պատմության շատ դասագրքերում ասված է, որ Մեծ Հայքի տարածքում 4300-4200 տարի առաջ ապրում էին հուրիտների (կամ հայասների) ցեղեր: Ռա սխալ է, որովհետև դրանք ցեղեր չեն եղել և այդպիսի անուններ չեն կրել: Նրանք հայ-արիացիներ էին, արիացիներ, որոնք միշտ, բոլոր ժամանակներում բնակվել են Մեծ Հայքի թագավորությունում:

Հայաստանում միշտ ապրել են հայեր: Ու կարիք չկա այլ անուններ հորինել Հայաստանի բնակիչների համար:

Մեծ Հայքում մ.թ.ա. 13 – 6-րդ դարերի ժամանակաշրջանում գոյություն է ունեցել Բիհայնա հայկական թագավորությունը, որը բաղկացած է եղել երկու մասից. Նաիրիի թագավորություն (որը հայտնի է եղել մ.թ.ա. 15 – 9-րդ դարեր) Վան մայրաքաղաքով (հիմնվել է մոտավորապես մ.թ.ա. 35-րդ հազարամյակում) և Արարատյան թագավորությունը շատ հին ժամանակներից, որը սխալմամբ անվանում են “Ուրարտու” մ.թ.ա. 9 – 6-րդ դարերի ժամանակաշրջանում: Մինչև մեր թվարկությունից առաջ 9-րդ դարը Արարատյան թագավորության մայրաքաղաքը եղել է Մանազկերտը (հիմնադրվել է մ.թ.ա. մոտավորապես 25-րդ հազարամյակում):

Մեր թվարկությունից առաջ 9-րդ դարում Նաիրին միավորվել է Արարատյան թագավորության հետ Վան մայրաքաղաքով Արամ թագավորի (կեսարի) թագավորության ժամանակաշրջանում (մ.թ.ա. 860-840):

Այս միացյալ հայկական թագավորությունը անվանվել է Բիհայնա, ինչը հայերեն նշանակում է. Բի • հայ • նա = “նա կրկնակի հայկական (երկիր է)”:

Արարատյան թագավորության “ուրարտական” ժամանակաշրջանը լավ է ուսումնասիրված: Այդ նշանակում է, որ մ.թ.ա. 9 – 6-րդ դարերի կարճ ժամանակամիջոցում ոչ մի “Ուրարտու” գոյություն չի ունեցել, այլ շատ երկար ժամանակ գոյություն է ունեցել հայկական Արարատյան թագավորությունը, որը հայկական Նաիրի թագավորության հետ մ.թ.ա. 9 – 6-րդ դարերում կոչվել է Բիհայնա:

Մ.թ.ա. 9 – 6-րդ դարերի բոլոր թագավորների անունները հայտնի են (տես

ներքո՝ Թագավորների Աղյուսակ 22-ը):

Հայաստանի այժմյան մայրաքաղաք Երևանը մ.թ.ա. 782 թվականին հիմնադրել է Արգիստ I թագավորը (մ.թ.ա. 788-764): Ժամանակակից Երևանի տարածքում պեղվել ու մասամբ վերականգնվել է հիմնավորը “Էրեբունի” քաղաք-բերդը: Այստեղ հայտնաբերվել է մի քար Արգիստ I թագավորի սեպագիր տառերով (այն ժամանակներում հայերը զուգահեռ օգտագործել են և այբուբեն, և սեպագրեր) Էրեբունի-Երևանի հիմնադրման մասին հետևյալ տեքստով. “Ես, Մենուայի որդի Արգիստս, Հալդ Աստծո կամքով կառուցել եմ այս չքնաղ քաղաքը ի փառս և ի հզորացումն Բիհայնա երկրի...” (տես Նկ. 97): Այնպես որ “ուրարտական” թագավորները սեփական երկիրը Բիհայնա էին անվանում: Նկար 84 պատկերված է մի այլ մեծ հին բերդ “Ամբերդը” Արագած սարի վրա:



Նկ. 97. Երևանի հիմնադրման մասին Բիհայնա երկրի Արգիստ թագավորի սեպագիր քարը (մ.թ.ա.782 թվական)

Ուրարտուի գոյությունը ժխտվում է բազմաթիվ փաստերով:

1. Ըստ կեղծ պատմաբանների նա ծագել է հանկարծակի (մ.թ.ա. 9-րդ դարում և գոյություն է ունեցել մինչև 6-րդ դար), ուենալով սեմիտական լեզու բուն Հայաստանի կենտրոնում (Արարատյան դաշտավայրում) հայերից առաջ, ունենալով արդեն բարձր զարգացած մշակույթ (նրանք կարողանում էին ծուլել պողպատ): Հայտնի չի, որտեղ է նա ծագել և զարգացել մինչ այդ աստիճանը և ուր է անհայտացել մ.թ.ա. 6-րդ դարում:

2. Հայաստանի տարածքում “նախաուրարտական”, “ուրարտական” և

“հետուրարտական” ժամանակաշրջանների մշակույթը միևնույնն է, ինչը ապացուցվում է բազմաթիվ հնագիտական պեղումներով. գարդերը, ամանեղենը, հագուստը, սայլերը, նետերի մետաղե գլխիկները և պեղված բոլոր այլ իրերը նույնն են և հայկական են:

3. Պնդում են նաև, որ հայերը եկել են այստեղ մ.թ.ա. 5 դարում (այդ թվում՝ Բալկաններից, այսինքն եկվորներ են): Սա հակասում է անտրոպոլոգիայի և հնագիտական հանրահայտ տվյալներին, որ հայերը (և միայն հայերը) բնակվել են այստեղ դեռ ավելի քան 10 հազար տարի առաջ:

4. Պատմության ֆալսիֆիկատորները, պաշտպանելով Ուրարտուի առկայության կեղծ վարկածը, պնդում են, որ իբր ուրարտական թագավորների անունները հայկական չեն: Սա հերքվում է հեշտությամբ հետևյալ աղյուսակով (տես նաև Աղյուսակ 10).

1. Արամ – Ար • ամ = Արևի որդի
2. Սարքար – Սար • քար = Սարի (պես) ամուր (քար)
3. Իսպոնի – Ի • ս • պ • ո • ն • ի = Իմ սիրելի ընտրյալ հոգով նա մարդ
4. Մինա(ս) – Մ • ի • նա(ս) = Նա Մեծ մարդ է(սիրված)
5. Արգիստ – Ար • գ • ի • ս • տ = Արի գեղեցիկ մարդու սիրո տուն
6. Ռուսա – Ռ • ուս • ա = Բարձր ուսերով (բարձրահասակ) մարդ
7. Արմեն – Ար • մեն (Ար • ման) = Արևի մարդ (զավակ)

Թագավորների թիվը 13 է, բայց նրանց անուններից երեքը կրկնվում են մի քանի անգամ (տես Հայոց թագավորների Աղյուսակ 22):

5. Պարսկաստանի թագավորները իրենց արձանագրություններում Հայաստանը միշտ անվանել են Արմինա:

3.8(4). ՀԱՅԵՐԸ ՍԻՐԻԱՅԻՆ, ԼԻԲԱՆԱՆԻՆ ԵՎ ՊԱՂԵՍՏԻՆԻՆ

Ժամանակակից Սիրիայի, Լիբանանի և Պաղեստինի տարածքներում հայեր եղել են ամենավաղ ժամանակներից (մինչև Մեծ Ջրհեղեղը), որտեղից հետագայում ուղեվորվել են դեպի Եգիպտոս: Նրանք կարևոր դեր են խաղացել տեղի ժողովուրդների ձևավորման և զարգացման գործում:

Տեղի բնակիչներին հայերը գիտելիքներ են բերել, սովորեցրել են տնաշինության ու քաղաքաշինության արվեստը, սովորեցրել են պաշտել բարի ԱՐ Աստծուն և այլ հայկական աստվածներին:

Պաղեստինում, օրինակ, հայերը հիմնադրել են Երուսաղեմ քաղաքը (նախքան մ.թ.ա. 3-րդ հազարամյակը), ու հին Պաղեստինի բնակիչները պաշտել են հայկական աստվածներին, մասնավորապես, Վահալ Աստծուն (Վահագնին) ու Աստարտա Աստվածուհուն (Աստղիկին):

Լիբանանում հայերի թիվն աճեց 1915թ. Թուրքիայում (նաև Կիլիկիայում) կատարված հայերի ցեղասպանությունից հետո, երբ շատ հայեր Կիլիկիայից և այլ տեղերից եկան հարևան Լիբանան: Այժմ այնտեղ, ծովամերձ մասերում շատ հայկական գյուղեր կան:

Այսպիսով, Պաղեստինում, Լիբանանում և Սիրիայում հիմա էլ ապրում են շատ հայեր և հայերին մոտիկ այլ քրիստոնյաներ:

3.8(5). ՀԱՅԵՐՆ ՈՒ ՀՐԵԱՆԵՐԸ

Մեր թվարկությունից առաջ 586թ. Երուսաղեմը պաշարվեց Բաբելոնի կաղմից և հրեաների մի մասը բռնի վերաբնակեցվեց Բաբելոնում (Բաբելոնյան գերություն մ.թ.ա. 586-539):

Քանի որ հրեությանը սպառնացող վտանգը դեռ կար, հրեական մարգարե Յերեմիան կոչ արեց իր ժողովրդին կանչել հայերին օգնության. “Պարզեք դրոշները, հնչեցրեք շեփորները ազգերի միջև, զինեք ազգերը նրա դեմ (Բաբելոնի), նրա դեմ հանեք Արարատյան, Մինեական և Ասքանազյան* թագավորությունները [114]:

Մեծ Հայքի թագավոր Տիգրան Երվանդունին (մ.թ.ա. 560-535) Իրանի թագավոր Կիրի հետ եկան ու գրոհեցին Բաբելոնը, ոչնչացրին բաբելոնյան թագավորությունը մ.թ.ա. 539 և ազատեցին հրեաներին [95, էջ 64]:

